

ԱՃԹՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

30 օգոստոսի 2018

Պատրաստվել է

ՀԱՀ-ի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի կողմից

Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ բազմաշահառու խմբի
համար

«Աջակցություն Հայաստանի կարողությունների բարելավմանը՝ ԱՃԹՆ իրագործելու և ընդերքօգտագործման թույլտվությունների ու պայմանագրերի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման նպատակով» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Երևանում Բրիտանական դեսպանատան կողմից

Բովանդակություն

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ	3
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
1. ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ և ՀԱՐԿԱՅԻՆ ՌԵԺԻՄՆԵՐԸ.....	5
2. ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ և ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ	10
3. ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՐԿԵՐԻ ՏԵՍՔՈՎ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ԿԱՏԱՐՎՈՂ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ և ՀԱՐԿԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՎԱՔԱԳՐՎԱԾ ՀԱՐԿԵՐԻ /ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՀԱՐԿԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՊԱԳՐԵԳԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ/ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ	16
4. ՀԵՏԱԴԱՐՁ ՈՒԺԻ ԽՆԴԻՐԸ ՆԱԽՈՐԴ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	19
5. ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ)	20
6. ԱԶԴԱԿԻՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ	23
7. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂԻ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ և ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	29
8. ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ	32
9. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ	38
9.1. ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԵՋ	38
9.2. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ և ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԲԱՅԵՐԸ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	43
9.3. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐ, ՈՐՈՒՔ ՆԵՐԱՌՎԱԾ ՉԵՆ ՍՈՒՅՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ	77
9.4. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱԽՆԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵՋ.....	78
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	83
Հավելված 1. ՀԱՀ-ի ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ և ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՌՈՅԱԼԹԻ ՀԱՐԿԱՏԵՍԱԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ.....	84
Հավելված 2. ԸՆԴԵՐՔԻ ԵՎ Հ ԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԵՐՈՒՄ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑ ԱԿՑ ՈՒԹՅ ԱՆ ՊԱՇՏ ՊԱՆՈՒԹՅ ԱՆ ՄԱՍԻՆ ԵՎ Տ ԵՂԱԿԱՆ ԻՆՔԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ԼՐԱՑ ՈՒՄ ԿԱՏ ԱՐԵԼ ՈՒ ՄԱՍԻՆ Հ ԱՅ ԱՍՏ ԱՆԻ Հ ԱՆՐԱՊԵՏ ՈՒԹՅ ԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅ ՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ	98
Հավելված 3. ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ ԸՆԴԵՐՔԻ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԵՐՈՒՄ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ	102
Հավելված 4. ԱՃԹՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ.....	105
Հավելված 5. ՏԻՄ-ԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ԿԱՐԾԻՔՆԵՐ ԵՎ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՃԹՆ-Ի և ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	112

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը իր երախտագիտությունն է հայտնում Հայաստանի Հանրապետությունում Մեծ Բրիտանիայի դեսպանությանը սույն ուսումնասիրության կատարումը հովանավորելու կապակցությամբ: Դեսպանատան աշխատակիցներ Արտաշես Դավթյանը և Օքսաննա Աբրահամյանը մեծապես ուղղորդել են ծրագրի կառավարումը:

Նմանապես, կենտրոնը ցանկանում է շնորհակալություն հայտնել Հայաստանի ԱՃԹՆ-ի գործընթացի շրջանակներում ձևավորված բազմաշահառու խմբի անդամներին, տեղական փորձագետներին, ոլորտի ակտիվ հասարակական կազմակերպություններին՝ իրենց դիտողությունների, առաջարկների, վերլուծությունների և մեր կողմից բարձրացված հարցերի շուրջ հայտնած տեսակետների առնչությամբ: Այս զեկույցի մշակման մեջ անգնահատելի ներդրում կատարած հայաստանյան փորձագետներն են Կարլ Ուլբրիխտը, Դավիթ Հակոբյանը, Ծովինար Սողոմոնյանը և Նաիրուհի Ավետիսյանը:

Կցանկանանք նշել Հայաստանի ԱՃԹՆ-ի գործընթացի հայաստանյան քարտուղարության աշխատակիցներ Լիլիա Շուշանյանի, Դավիթ Շինդյանի և Լուսինե Թովմասյանի անգնահատելի աջակցությունը:

Կենտրոնը վկայակոչում է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների աշխատանքը, ովքեր պատասխանում էին մեր հարցադրումներին, տալիս բացատրություններ և աջակցում ոլորտի օրենսդրական բացերը և գործնական թերությունները բացահայտելու հարցում:

Հետազոտության մշակմանը մասնակցել է բրիտանացի փորձագետ Քրիս Նըրսը իր արժեքավոր դիտարկումներով, ինչի կապակցությամբ Կենտրոնը հայտնում է իր խորին շնորհակալությունը:

Ալեն Ամիրխանյան

Տնօրենի ժ/պ, ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն
Հայաստանի ամերիկյան համալսարան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտությունը պատվիրվել է Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնին, որը հանդիսանում է Բրիտանական դեսպանատան կողմից քննարկվող ոլորտում Հայաստանի կարողությունների բարելավմանն աջակցության ծրագրի շնորհառու:

Հետազոտության շրջանակները սահմանափակվում են ԱՃԹՆ-ի որոշ ստանդարտների իրականացման նպատակով հետևյալ հարցերի վերաբերյալ մասնագիտական վերլուծությամբ և դրանց վերաբերյալ մասնագիտական կարծիքի և առաջարկության ներկայացմամբ՝

- Հանքարդյունաբերության ոլորտը կարգավորող իրավական և հարկային ռեժիմների նկարագրությունը,
- Ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման գործընթացի և պայմանագրերի թափանցիկություն,
- Ընկերությունների կողմից հարկերի տեսքով պետությանը կատարվող վճարումների և հարկերի հավաքագրման ոլորտում լիազոր մարմին հանդիսացող պետական կառավարման մարմնի կողմից հավաքագրված հարկերի (այդ թվում՝ հարկերի վերաբերյալ ապաագրեագցված տեղեկատվության) հրապարակայնություն,
- Հետադարձ ուժի խնդիրը նախորդ ժամանակաշրջանի վերաբերյալ հրապարակվող տվյալների վերաբերյալ,
- Արտաբյուջետային հաշիվներ (այդ թվում՝ համայնքային),
- Սոցիալական ծախսեր, ազդակիր համայնք հասկացության բացահայտումը,
- Ընդերքօգտագործողների սոցիալ-տնտեսական պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողության արդյունավետությունը,
- Իրական շահառուի բացահայտումը:
- Պատասխանատու հանքարդյունաբերության զարգացման ուղղված հիմնախնդիրների վերլուծություն: Այստեղ ուսումնասիրվում են ծախսեր-օգուտ վերլուծության կիրառումը պետական կառավարման համակարգի տարբեր ոլորտներում, մասնավորապես օրենսդրական նախագծերի մշակման, հարկային արտոնություններ սահմանելիս, ներդրումային ծրագրեր ընտրելիս և այլն: Ներկայացվում են ծախսեր-օգուտ վերլուծության գործառույթի իրականացման տարբեր մոդելներ՝ առաջարկելով այն վերապահելով պետական կառավարման որևէ մարմնին, մասնավոր սեկտորի մաս կազմող ներդրումային ընկերություններին, միևնույն ժամանակ վերհանելով բոլոր այն օրենսդրական փոփոխությունները, որոնք անհրաժեշտ են ծախսեր-օգուտ վերլուծության իրականացումը հանքարդյունաբերության ոլորտում թույլտվություններ տրամադրելիս պարտադիր դարձնելու համար: Պատասխանատու հանքարդյունաբերության շրջանակներում ուսումնասիրվում են նաև բնապահպանական, համայնքային և հանրային առողջության, շրջակա միջավայրի, համայնքների և հանրային առողջության մոնիտորինգի վերաբերյալ Հայաստանում գործող կանոնակարգերը, ինստիտուցիոնալ կարողությունները, ինչպես նաև ստուգումներ իրականացնող մարմինները և նրանց գործունեությունը կարգավորող իրավական հիմքերը: Պետք է նշել, որ կան հարցեր, որոնք վերաբերում են պատասխանատու հանքարդյունաբերությանը, բայց ուղակիորեն կապված չեն վերոնշյալ երեք թեմաների հետ: Այս լրացուցիչ թեմաներից մի քանիսը նշված են այս զեկույցի 9.3 ենթաբաժնում: Ապագա վերլուծությունները պետք է անդրադառնան այս լրացուցիչ թեմաների ուսումնասիրությանը:

Հետազոտության ծավալի մանրամասն նկարագրության վերաբերյալ տես Հավելված 4. Հարկ է նկատել, որ ուսումնասիրությունը կատարվել է 2017 հուլիս-2018 օգոստոս ամիսներին: Առանձին առաջարկներ ներկայացվել են նաև Նախնական ուսումնասիրության շրջանակներում և հիմք հանդիսացել, մասնավորապես, 2018 թվականի մարտին ընդունված օրենսդրական փոփոխությունների փաթեթի համար: Այս ուսումնասիրության շրջանակում մենք հղում ենք անում նաև այլևս չգործող օրենսդրական ակտերին, հաշվի առնելով, որ ԱՃԹՆ-ի շրջանակում անկախ ադմինիստրատորը իր առաջին զեկույցում անդրադառնում է 2016-2017 թվականներին:

1. Հանքարդյունաբերության ոլորտը կարգավորող իրավական և հարկային ռեժիմները

Հանքարդյունաբերության ոլորտը կարգավորող հիմնական օրենսդրությունը ներառում է ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրքը, Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենքը, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, Թափոնների մասին ՀՀ օրենքը, այլ օրենսգրքեր և օրենքներ: Ընդերքօգտագործման հարկաբյուջետային ոլորտը կարգավորվում է, մասնավորապես, Բնապահպանական և բնօգտագործման վճարների, Բնապահպանական վճարների դրույքաչափերի, Հարկերի, Շահութահարկի մասին ՀՀ օրենքներով, ՀՀ ընդերքի օրենսգրքով: Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին ՀՀ օրենքը կարգավորում է ընկերությունների կողմից վճարված բնապահպանական վճարներից համայնքային բյուջեներ մասհանումներ կատարելու կարգը: 2018 թվականի հունվարի 1-ից լիարժեք ուժի մեջ մտավ ՀՀ հարկային օրենսգիրքը, որը կողմնակցորեն հարկային դաշտում գործող մի շարք օրենքներ: Հարկային օրենսգրքով նախատեսվել է բնապահպանական հարկատեսակը և բնօգտագործման վճարը: Այսպես, բնապահպանական հարկը բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով պետական բյուջե վճարվող հարկ է: Բնօգտագործման վճարը պետական սեփականություն համարվող բնական պաշարների արդյունավետ և համալիր օգտագործման, ինչպես նաև բնական պաշարների օգտագործումը փոխհատուցելու նպատակով այդ պաշարների օգտագործման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող վճար է, իսկ ռոյալթին հանդիսանում է բնօգտագործման վճարի տեսակ, որը մետաղական օգտակար հանածոների օգտագործումը փոխհատուցելու նպատակով, ինչպես նաև մետաղական օգտակար հանածոների և դրանց կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի օտարումից ստացվող շահութաբերության համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող վճար է:

Հաշվի առնելով, որ ԱՃԹՆ շրջանակներում, որոշվել է, որ անկախ ադմինիստրատորի գործունեության առարկա է կազմում 2016-2017 թվականները, հետևաբար անդրադարձ է կատարվել նաև մինչև հարկային նոր օրենսգրքի ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությանը: Հանքարդյունաբերության ոլորտի ֆիսկալ ռեժիմը և բնապահպանական վճարները կարգավորող օրենսդրության մաս են կազմում նաև մեծ թվով ենթաօրենսդրական ակտեր:

Ընդերքօգտագործումը թույլատրվում է հետևյալ երկու նպատակներով՝

1. Երկրաբանական ուսումնասիրություն
 - ա) ուսումնասիրություն (հետախուզում),
 - բ) օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրություն,
2. Օգտակար հանածոյի արդյունահանում

Երկրաբանական ուսումնասիրության թույլտվությունները, անկախ ընդերքի ընդհանուր երկրաբանական կամ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ուսումնասիրություն իրականացրած լինելու հանգամանքից, տրվում են 3 տարի ժամկետով և ենթակա են երկարաձգման: Երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործման իրավունքը տրամադրվում է երկրաբանական ուսումնասիրության համաձայնության (ընդերքի ընդհանուր երկրաբանական ուսումնասիրությունների) կամ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվության, պայմանագրի, հաստատված աշխատանքային ծրագրի հիման վրա:

Դիմումները ներկայացվում են ՀՀ ԷԵԲՊՆ Ընդերքի գործակալություն, որն աշխատում է «մեկ պատուհան»-ի սկզբունքով՝ ըստ անհրաժեշտության ապահովելով այլ կառույցների հետ համակարգումը: ԸՕ 51 հոդվածի 8 կետի համաձայն *փորձաքննական դրական եզրակացությունները ստանալուց հետո լիազոր մարմինը դիմումի գրանցման օրվանից հետո մինչև*

180-օրյա ժամկետում, որոշում է ընդունում դիմումի վերաբերյալ, որի մասին գրավոր ծանուցում է դիմումատուին: ԸՕ 51 հոդվածի 10 կետի համաձայն, եթե երկու կամ ավելի անձ օգտակար հանաձոյի արդյունահանման իրավունք հայցելու դիմում է ներկայացրել ընդերքի միևնույն տեղամասի կամ ընդերքի այնպիսի տեղամասերի համար, որոնք ունեն ընդհանուր մաս, ապա նախապատվությունը տրվում է «արտոնյալ դիմումատուին», որն իրականացրել է երկրաբանական ուսումնասիրություն այդ տեղամասում: Մինչդեռ, եթե երկու կամ ավելի անձ դիմում են ներկայացրել ընդերքի միևնույն տեղամասի համար օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք ստանալու նպատակով, ապա նախապատվությունը տրվում է այն դիմումատուին, ով առաջինն է գրանցվել:

Օգտակար հանաձոյի արդյունահանման իրավունքը շնորհվում է առավելագույն 50 տարի ժամկետով և ենթակա է երկարաձգման: Ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերն են.

1. ընդերքօգտագործման թույլտվություն (երկրաբանական ուսումնասիրության պարագայում՝ համաձայնություն),
2. լեռնահատկացման ակտ,
3. հաստատված արդյունահանման նախագիծ և
4. պայմանագիր ՀՀ ԷԵԲՊՆ հետ:

Ֆինանսական առաջարկները և ընդերքօգտագործման վճարները, հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորությունները, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունները, բնապահպանական կառավարման պլանը, ինչպես նաև թափոնների կառավարման (և/կամ վերամշակման) համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքները համարվում են պայմանագրի մաս հավելվածների տեսքով: Այստեղ հարկ է նկատել, որ ԲՇԽ անդամի կողմից բարձրացվեց այն հարցը, որ թեև ասենք բնապահպանական պլանին անդրադարձ է կատարվում նաև ՇՄԱԳի շրջանակներում, սակայն, քանի որ վերջինս պայմանագրի բաղկացուցիչ մաս է կազմում, դրանցում հետագայում կատարվող փոփոխությունները գործնականում արվում են առանց լրացուցիչ ՇՄԱԳ-ի անցկացման:

ՀՀ ԷԵԲՊՆ Ընդերքի գործակալությունը վարում է ընդերքօգտագործման իրավունքների հաշվառման կենտրոնացված մատյան, որտեղ հաշվառվում են այդ իրավունքներին առնչվող տեղեկությունները, այդ թվում՝ վերոնշյալ փաստաթղթերի օրինակները, ինչպես նաև իրավունքների փոփոխությունները, փոխանցումները, գրավը, զգուշացումը և դադարեցումը: Ընդերքօգտագործման իրավունքների հաշվառման կենտրոնացված մատյանից տեղեկատվություն ստանալու կարգը սահմանվում է ՀՀ կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 6-ին ընդունված N 1147-Ն որոշման համաձայն¹:

Ընդերքօգտագործման իրավունքը փոխանցելի է: Ընդերքօգտագործման իրավունքի փոխանցումն իրականացվում է լիազոր մարմնի համաձայնությամբ: Նմանապես, պահանջվում է լիազոր մարմնի համաձայնությունը, երբ իրավաբանական անձի՝ բաժանման կամ առանձնացման ձևով վերակազմակերպման դեպքում իրավահաջորդության կարգով բաժանիչ հաշվեկշռի հիման վրա ընդերքօգտագործման իրավունքը փոխանցվում է նորաստեղծ ընկերությանը: Այս առումով հարկ է նկատել, որ միացման կամ միաձուլման դեպքում ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման համար լիազոր մարմնի համաձայնությունը չի պահանջվում:

Ընդերքօգտագործման իրավունքի օտարման, ինչպես նաև իրավաբանական անձի միացման կամ իրավաբանական անձանց միաձուլմամբ պայմանավորված ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման դեպքերում հնարավոր է առաջանա համակենտրոնացման հարց: Տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացում է համարվում համաձայն Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենքի 8 հոդվածի տնտեսավարող սուբյեկտի կողմից այլ տնտեսավարող սուբյեկտի ակտիվների ձեռքբերումը, եթե դրանց արժեքն ինքնին կամ ձեռք բերողին արդեն

¹ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=78175>

պատկանող ակտիվների արժեքի հետ միասին կազմում է այդ տնտեսավարող սուբյեկտի ակտիվների արժեքի 20 տոկոսը կամ ավելին: Այս կապակցությամբ հարկ է նկատել, որ Ընդերքօգտագործման իրավունքը, որպես այդպիսին, հաշվեկշռային արժեք չունի: Հետևաբար, ՀՀ օրենսդրության տեսանկյունից միայն ընդերքօգտագործման իրավունքի օտարումը չի առաջացնում տնտեսական մրցակցության պաշտպանության մասին ՀՀ օրենքով նախատեսված սահմանափակումներ:

Ընդերքօգտագործման իրավունքը կարող է հանդիսանալ գրավի առարկա: Այս դեպքում ընդերքօգտագործողի և գրավառուի միջև գրավի պայմանագիրը կնքվում է լիազոր մարմնին տեղեկացնելուց հետո: Ընդերքօգտագործման իրավունքի հարկադիր օտարումն իրականացնելու նպատակով կազմակերպված հրապարակային սակարկություններին մասնակցելու համար, իրավաբանական անձինք պետք է ստանան լիազոր մարմնի համաձայնությունը: Հարկ է նկատել, որ ԸՕ նախատեսում է, որ ընդերքօգտագործման իրավունքի իրացումը իրականացվում է բացառապես հրապարակային սակարկությունների միջոցով, ինչը ենթադրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249 հոդվածով նախատեսված գրավ դրված գույքի վրա առանց դատարան դիմելու բռնազանձում տարածելու կարգը չի կարող կիրառվել ընդերքօգտագործման իրավունքի գրավադրման դեպքում:

Ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման բարդացված կարգի սահմանումը խոչընդոտում է որպեսզի այս իրավունքը դառնա տնտեսական շրջանառության ակտիվ օբյեկտ: Ավելին, փոխանցման համաձայնությունը ստանալու նպատակով ներկայացվելիք տեղեկատվությունը վերաբերում է օտարելու ցանկություն ունեցող ընկերությանը և վերջինիս գործունեությանը: Ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման բարդացված կարգի սահմանումը կարող է հանգեցնել նրան, որ ֆինանսական դժվարություններ ունեցող ընկերություններին թույլ չտրվի փոխանցել ընդերքօգտագործման իրավունքը երրորդ անձին, և հետագայում այդ իրավունքը կդադարեցվի, զրկելով ներդրողին ստանալ ինչ-որ հատուցում իր կատարած ներդրումների դիմաց:

Հարկ է նկատել, որ ընդերքօգտագործման իրավունքը տնօրինող ընկերության բաժնեմասերի կամ բաժնետոմսերի փոխանցման դեպքում որևէ սահմանափակում չի նախատեսվում ընկերության և լիազոր մարմնի փոխհարաբերությունների տեսանկյունից: Անգամ լիազոր մարմինը կարող է տեղյակ չլինել ընկերության բաժնեմասերի կամ բաժնետոմսերի սեփականատերերի փոփոխության մասին, այլ կերպ ասած՝ ՀՀ օրենսդրությունը որևէ իրավական հետևանք չի նախատեսում այսպես կոչված «վերահսկողի փոփոխության» (change of control) դեպքում ընդերքօգտագործման իրավունքի նկատմամբ կիրառելի իրավական ռեժիմի տեսանկյունից:

Մետաղական հանքարդյունաբերության ոլորտում հիմնական ուղղակի հարկատեսակներն ու վճարներն են՝

- ռոյալթիներ
- շահութահարկ (շահույթի 20%-ի չափով),
- անձնական եկամտային հարկ
- պետական տուրք - ԱՏԳ ԱԱ 26 ապրանքային խմբին դասվող հանքաքարերի արտահանման սերտիֆիկատ տալու համար (յուրաքանչյուր անգամ արտահանվող հանքաքարի տվյալ ծավալում մետաղի պարունակության և դրա միջազգային շուկայական միջին գնի հիման վրա հաշվարկված արժեքի 3 տոկոսի չափով

2016 և 2017 թվականների համար այս հարկերի ու վճարների համար հիմք են ծառայել հետևյալ օրենքները.

- Հարկերի մասին ՀՀ օրենք
- Շահութահարկի մասին ՀՀ օրենք
- Եկամտային հարկի մասին ՀՀ օրենք, և
- Բնօգտագործման և բնապահպանական վճարների մասին ՀՀ օրենք (տույն օրենքով կարգավորվում է բնօգտագործման վճարների, իսկ մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման պարագայում՝ ռոյալթիների հաշվարկումը):

- Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին ՀՀ օրենք
- Թափոնների մասին ՀՀ օրենք
- Պետական տուրքի մասին ՀՀ օրենք

ՀՀ նոր Հարկային օրենսգիրքն ընդունվել է 2016 թվականին, սակայն հիմնական դրույթներն ուժի մեջ են մտել 2018 թվականի հունվարի 1-ից: Օրենսգիրքը մեկ փաստաթղթում համախմբում է հարկման ոլորտը կարգավորող դրույթները: Ընդերքօգտագործման ոլորտի հարկման դրույքաչափերը հիմնականում մնացել են նույնը: Հարկային ռեժիմը մանրամասն քննարկվել է ՀՀ 2018 թվ-ի Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության զեկույցի համար կատարված Նախնական ուսումնասիրության շրջանակներում, սակայն կցանկանայինք հատկապես անդրադառնալ 2017 թվականի մարտին կատարված փոփոխությանը, որի արդյունքում ընկերություններին տրվեց LME գներից 20%-ով շեղվելու հնարավորություն:

Այս առնչությամբ ՀԱՀ ՊՀԿ դիմեց ՀՀ վարչապետին և, մասնավորապես, ներկայացրեց ՀՀ-ում հանքարդյունաբերական ոլորտի հարկման հիմնախնդիրների առնչությամբ ՀԱՀ ՊՀԿ-ի ֆինանսական և հարկային խնդիրներով խորհրդական Մեթյու Գենացիի տեսակետները: Բարձրացվեցին հիմնականում հետևյալ հարցադրումներ/առաջարկները.

- Արդյոք շեմի այս նվազեցումը հիմնված է ռոյալթիի չափը նվազեցնելու ցանկության, թե այն փաստարկի վրա, որ 90% շեմը պատշաճ կերպով չի ներկայացնում խտանյութում պարունակող մետաղի հաշվարկված LME գնի և կատարված վաճառքների միջև տարբերությունը: Այլ կերպ ասած՝ պետք է արդյոք դիտարկել այս փոփոխությունը ռոյալթիի բեռի փոփոխության միջոց առանց ռոյալթիի տոկոսադրույքները փոփոխելու:
- Առաջարկվեց ռոյալթիի բազան սահմանել LME գինը՝ հանած սահմանված վերամշակման մարժան:
- Առաջարկվեց նաև ներդնել որևէ փոփոխական մեխանիզմ, որը կարտացույցի օգտակար հանաձոնների գների կտրուկ տատանումների փաստը, մասնավորապես կաճի օգտակար հանաձոնի բարձր գների ժամանակ և ավտոմատ կերպով կնվազի ցածր շահույթի պարագայում:

Հավելված 1-ում ներկայացվում են փորձագետի դիտարկումները և ՀՀ ֆինանսների և տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություններից ստացված պատասխանները:

Վերը նշված Նախնական ուսումնասիրության շրջանակներում մանրամասն ներկայացվում է ոլորտը կարգավորող իրավական շրջանակը: Ինչպես ներկայացվել է Նախնական ուսումնասիրության շրջանակում վերջին տարիներին Հայաստանը մի շարք նախաձեռնություններ է իրականացրել հանքարդյունաբերության ոլորտի բարեփոխման ուղղությամբ: Կարևոր օրենսդրական փոփոխությունները վերաբերել են ընդերքօգտագործման թափոնների կառավարմանը, ռոյալթիների բազայի հաշվարկմանը, մշակվել են նախագծեր Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ և այլն: Ավելին, Համաշխարհային բանկը պատվիրել է «Հայաստան. Հանքարդյունաբերության ոլորտի ռազմավարական կայունության գնահատում» խորագրով զեկույցը՝ «... օգնելու ՀՀ կառավարությանը ավելի լավ պատկերացում կազմել Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտում առկա սոցիալական և բնապահպանական հիմնական մարտահրավերների և ապագայի հնարավորությունների մասին, և աջակցելու հանքարդյունաբերության ոլորտի ռազմավարության մշակմանը, որը համահունչ կլինի միջազգային լավագույն փորձին և կնպաստի կայուն զարգացմանը» Զեկույցի հիմնական առաջարկությունն է մշակել «հանքարդյունաբերության ոլորտի կայուն զարգացման համապարփակ քաղաքականություն», որը պետք է համահունչ լինի երկրի՝ ԱՃԹՆ շրջանակներում թափանցիկության և մասնակցության ավելի բարձր աստիճանի ապահովմանն ուղղված ջանքերին: Զեկույցում նաև առաջարկվում է նախաձեռնել մի շարք նեղ ուսումնասիրություններ հայեցակարգային լուծումների համար տեղեկատվական հիմք ապահովելու նպատակով:

Ինչպես տեղեկացել ենք այդպիսի ուսումնասիրություններից երկուսը՝ բնապահպանական և սոցիալական հարցերի ուսումնասիրությունը և տնտեսական ու ֆինանսական հարցերի ուսումնասիրությունը, կպատրաստվի 2018 թվ-ին: Ակնկալվում է նաև, որ 2019 թվականին կառավարության կողմից կիրականացվի հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության և ռազմավարության մշակումը: Այս կապակցությամբ հարկ է նկատել, որ առավել տրամաբանական կլինի մշակել հստակ քաղաքականություն, ամրագրել ոլորտի կառավարումը ուղղորդող սկզբունքներ, ապա միայն կատարել օրենքների և ենթաօրենսդրական ակտերի փոփոխություն և մշակում, որոնք միասին կձառայեն մշակված քաղաքականության իրականացմանը և ամենակարևորը կհետևեն ոլորտում որդեգրված հիմնարար սկզբունքներին: Հակառակ դեպքում, ունենում ենք բազմաթիվ օրենսդրական նախաձեռնությունները, որոնք կրում են քառասյին բնույթ և չեն տեղավորվում եմ մեկ ռազմավարության շրջանակում, ինչը բարդացնում է նաև կանխատեսել ոլորտի զարգացման հեռանկարները և հնարավոր օրենսդրական զարգացումները: Զեկույցում առաջարկվում է զերծ մնալ օրենսդրական ոչ հրատապ հանդիսացող փոփոխություններից, քանի դեռ նոր քաղաքականությունը չի մշակվել: Այլ կերպ ասած ռազմավարության մշակմանը պետք չէ սպասել, եթե խոսքը վերաբերում է կանխել այնպիսի պրակտիկաներ, ինչպիսիք են ասենք մարդկանց առողջության համար վտանգ ներկայացնող իրավիճակների կանխումը:

2. Ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման գործընթացի և պայմանագրերի թափանցիկություն

Ըստ Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի՝ Ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերն են՝

- ընդերքօգտագործման թույլտվությունը,
- ընդերքօգտագործման համաձայնությունը (երկրաբանական ուսումնասիրության դեպքում),
- հաստատված աշխատանքային ծրագիրը (լիազոր մարմնի հետ համաձայնեցված փաստաթուղթ՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման վերաբերյալ) կամ
- արդյունահանման նախագիծը (օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների իրականացման նպատակով մշակված և օրենսդրությամբ սահմանված կարգով փորձաքննություններ անցած փաստաթուղթ),
- լեռնահատկացման ակտը (օգտակար հանածոյի արդյունահանման համալիրի տեղադրման նպատակով տրամադրվող ընդերքի տեղամասի եզրակետերի կոորդինատներն ամրագրող՝ լիազոր մարմնի կողմից ընդերքօգտագործողին տրվող փաստաթուղթ, որն ընդերքօգտագործման իրավունքի անբաժանելի մասն է) և
- պայմանագիրը (լիազոր մարմնի և ընդերքօգտագործողի միջև կնքված գրավոր համաձայնություն, որով սահմանվում են տվյալ ընդերքօգտագործման (երկրաբանական ուսումնասիրությունների կամ օգտակար հանածոների արդյունահանման) իրավունքի տրամադրման պայմանները, կողմերի իրավունքներն ու պարտականությունները):

Հարկ է նկատի ունենալ, որ վերոնշյալ Օրենսգրքի 4-րդ հոդվածով սահմանվում են ընդերքի օգտագործման և պահպանության հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորման հիմնադրույթները: Ընդ որում, նույն հոդվածով որպես հիմնադրույթ է հռչակված ընդերքօգտագործման հետ կապված գործունեության հրապարակայնությունը:

Խնդիր 1. Սակայն պետք է նշել, որ ոչ Օրենսգրքով և ոչ էլ որևէ այլ իրավական ակտով պարզաբանված չէր թե ինչ է հասկանում օրենսդիրը «ընդերքօգտագործման հետ կապված գործունեության հրապարակայնություն» արտահայտություն, քանի որ դրա շրջանակները պարզաբանված չեն: Օրենսգրքում առկա էր հրապարակայնությանը վերաբերող միայն մեկ հոդված՝ 9-րդ հոդվածը, համաձայն որի ընդերքօգտագործման հետ կապված գործունեության վերաբերյալ տեղեկատվության տրամադրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

Պետք է նկատի ունենալ, որ ընդերքօգտագործման հետ կապված գործունեության հրապարակայնության ապահովումը, որպես գործառույթ, նախատեսված է նաև ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կանոնադրությամբ, որում սակայն կրկին պարզաբանված չեն հրապարակայնության շրջանակները (15.22.2008թ. թիվ 654-Ն որոշում):

Առաջարկ 1. Օրենսդրական հստակեցման նպատակով առաջարկվեց Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու միջոցով ամրագրել ընդերքօգտագործման հետ կապված գործունեության հրապարակայնության շրջանակները, որոնք կներառեն թույլտվությունների տրամադրման գործընթացի և պայմանագրերի հրապարակմանն առնչվող դրույթներ:

Սույն հետազոտության շրջանակներում իրականացված ուսումնասիրությունը ցույց տվեց, որ թեպետև ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման գործընթացում որոշակի առումով առկա էր տվյալների հրապարակայնություն, սակայն դրանց իրավական հիմքերը հասկանալի չէին, ինչպես նաև առկա չէր համապատասխան տեղեկատվության հրապարակման

համակարգվածություն կամ սկզբունքայնություն: Բացի այդ, չէին հրապարակվում տրամադրված պաշարների քանակի, արդյունահանման ծավալների վերաբերյալ տեղեկատվությունը:

ԱՃԹՆ 2.3 ստանդարտով պետությունները պարտավոր են վարել հանրությանը հասանելի գրանցամատյան կամ կադաստրի համակարգ (համակարգեր), որը (որոնք) կպարունակի հետևյալ արդիական և համակողմանի տեղեկությունները՝ ԱՃԹՆ-ի զեկույցում ներառված ընկերություններին տրամադրված լիցենզիաներից յուրաքանչյուրի վերաբերյալ.

- Լիցենզառուն (լիցենզառուները),
- Որոշված լինելու դեպքում՝ լիցենզավորված տարածքի կոորդինատները: Այն դեպքում, երբ կոորդինատները որոշված չեն, կառավարությունը պարտավոր է ապահովել, որ լիցենզիայի տարածքի չափերի և տեղադիրքի մասին տվյալները բացահայտվեն լիցենզիաների գրանցամատյանում և կոորդինատները կառավարության համապատասխան գործակալությունից հանրության համար հասանելի լինեն առանց անհիմն վճարների և սահմանափակումների: ԱՃԹՆ-ի զեկույցը պետք է պարունակի ցուցում այն մասին, թե ինչպես կարող են այդ կոորդինատները հասանելի դառնալ, ինչպես նաև, առկայության դեպքում, դրանք ձեռք բերելու արժեքը: ԱՃԹՆ-ի զեկույցում պետք է նաև արձանագրվեն այն ծրագրերը և ժամանակացույցը, որոնց համաձայն այս տեղեկատվությունը կարող է ազատ և էլեկտրոնային եղանակով հասանելի դառնալ լիցենզիաների գրանցամատյանի միջոցով:
- Հայտի ներկայացման ամսաթիվը, լիցենզիայի շնորհման ամսաթիվը և տևողությունը:
- Արտադրության լիցենզիաների դեպքում արտադրվող ապրանքատեսակը²:

Ակնկալվում է, որ լիցենզիաների գրանցամատյանը կամ կադաստրը պարունակի տեղեկություններ բոլոր տրված լիցենզիաների մասին, այդ թվում՝ ԱՃԹՆ-ի զեկույցում չներառված ընկերությունների վերաբերյալ, ում վճարումները համաձայնեցված էականության շեմից ցածր են: Նման համակողմանի բացահայտմանը խանգարող բոլոր էական իրավական կամ գործնական խոչընդոտները պետք է արձանագրվեն և բացատրվեն ԱՃԹՆ-ի զեկույցում՝ ներառելով տեղեկատվություն այդպիսի խոչընդոտները հաղթահարելուն ուղղված կառավարության ծրագրերի և ցանկալի արդյունքներին հասնելու կանխատեսվող ժամանակացույցի մասին:

Հարկ է նկատել, որ ՊՀԿ կողմից ներկայացված առաջարկությունները մեծապես ընդունվեցին և իրացվեցին «Ընդերքի մասին» օրենսգրքի 9-րդ հոդվածում, որը խմբագրվել է 2018 թվականի մարտի 21-ին: Մասնավորապես, «Ընդերքի մասին» օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ հրապարակման ենթակա տեղեկատվություն են հանդիսանում ընդերքի տեղամասի ծայրակետերի կոորդինատները և ընդհանուր մակերեսը, տրամադրված օգտակար հանածոյի մարվող պաշարների քանակը՝ ըստ հիմնական և ուղեկից բաղադրիչների, հանքի տարեկան արտադրողականությունը: Միաժամանակ, լիազոր մարմինն իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է նաև մետաղական օգտակար հանածո արդյունահանող ընդերքօգտագործողների հետ կնքված ընդերքօգտագործման պայմանագրերը և դրանցում կատարվող փոփոխությունները:

Ըստ ՀՀ ԸՕ-ի ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերն են ընդերքօգտագործման թույլտվությունը կամ համաձայնությունը (երկրաբանական ուսումնասիրության դեպքում), հաստատված աշխատանքային ծրագիրը կամ արդյունահանման նախագիծը, լեռնահատկացման ակտը և պայմանագիրը: Ներկայումս, ընդերքօգտագործման իրավունքի տրամադրումից հետո վերոնշյալ բոլոր փաստաթղթերը հաշվառվում են, և դրանց պատճենները արխիվացվում են ՀՀ ԷԵԲՊՆ Ընդերքի գործակալությունում: Ընդերքի գործակալությունը վարում է ընդերքօգտագործման իրավունքների գրանցամատյան (ոեեստր): Գրանցամատյանում պահվող տեղեկատվությունը ամփոփ ներկայացվում է հանրությանը ՀՀ ԷԵԲՊՆ (<http://minenergy.am/en/page/422>), Կառավարության (<https://www.e-gov.am/lists/>), ինչպես նաև

² Այստեղ հարկ է նշել, որ ԱՃԹՆ ստանդարտը պահանջում է հրապարակել արտադրվող ապրանքատեսակը: Դա միշտ չէ, որ համընկնում է լիցենզիայում նշված ապրանքատեսակի հետ: Հնարավոր են դեպքեր, երբ ասենք ընդերքօգտագործողը ունիպղինձ արդյունահանելու լիցենզիա, սակայն հետագայում հյատնաբերում է առևտրային նշանակության քանակի պղինձ: Թեև ընդերքօգտագործող տեղեկացրել է լիազոր մարմին, սակայն դեռևս համապատասխան փոփոխությունը հնարավոր է արված չլինի լիցենզիայի մեջ: Հետևաբար, լիազոր մարմնի պարտավորությունը հրապարակելու ապրանքատեսակները, միշտ չէ որ համընկնում է լիցենզիայում նշված ապրանքատեսակների հետ:

Գեոֆոնդի վերջերս ստեղծված կայքերում՝ <https://www.geo-fund.am/hy/>՝ Microsoft Word և PDF ձևաչափերով: Հանրությանը հասանելի տեղեկատվությունը թարմացվում է եռամսյակային կտրվածքով: Այդուհանդերձ, փաստաթղթերի պատճենները կամ դրանց ամբողջական բովանդակությունը դեռևս չեն հրապարակվում, բացառությամբ աշխատանքային կամ արդյունահանման նախագծի, որոնց նախնական տարբերակները հրապարակվում են ՀՀ ԲՆ ինտերնետային կայքում՝ ՇՄԱԳ հանրային լուսման շրջանակներում (<http://www.mnp.am/?p=315>):

Հանրությանը հասանելի ընդերքօգտագործման թույլտվությունների գրանցամատյանում երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման իրավունքների մասով ներկայացվում է հետևյալ տեղեկատվությունը.

- Ընդերքօգտագործման թույլտվությունը ստացող իրավաբանական անձի անվանումը,
- Թույլտվության համարը,
- Թույլտվության տրամադրման ամսաթիվը,
- Թույլտվության գործողության ժամկետը,
- Գործունեության իրականացման վայրը (սակայն տարածքը նշվում է առանց կոնկրետ կոորդինատների, թեև կոորդինատների մասին ինֆորմացիա պահվում է Ընդերքի գործակալությունում),
- Գործունեության իրականացման նպատակը,
- Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, պայմանագրի գործողության ժամկետը,
- Այլ տեղեկություններ՝ «Ծանոթություններ» բաժնում (այն է՝ թույլտվությունների երկարաձգման մասին տեղեկություններ և այլն):

Վերջին շրջանում ՀՀ ԷԲՊՆ³ կայքէջում տեղադրվում են նաև ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի կողմից ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման հրամանները (http://minenergy.am/legislation/browse/cat_id/4):

ՇՄԱԳ զեկույցները, որոնք ներկայացվում են ՀՀ ԲՆ փորձաքննության, պետական փորձաքննության եզրակացությունների հետ մեկտեղ տեղադրվում են ՀՀ ԲՆ ինտերնետային կայքում (<http://old.mnp.am/?p=200>): Առաջարկվող աշխատանքային ծրագիրը կամ արդյունահանման նախագիծը, ինչպես նաև ազդեցության նախնական գնահատման հայտը հրապարակվում են ՀՀ ԲՆ կայքէջում՝ նախքան ՇՄԱԳ-ի հանրային լուսման գործընթացի մեկնարկը, սակայն կայքում տեղադրված փաստաթղթերը չեն թարմացվում այնպես, որ արտացոլեն ՇՄԱԳ հանրային լուսման ընթացքում ստացված դիտողություններն ու առաջարկությունները և դրանց համապատասխան արձագանքը: ԲՇԽ որոշ անդամների դիտարկումների համաձայն շատ դեպքերում աշխատանքային ծրագրերը կայքում չեն դրվում, կամ վերջիններս չեն համապատասխանում ՇՄԱԳ-ին: ՇՄԱԳ փորձաքննության եզրակացությունները կայքում դրվում են աշխատանքային ծրագրի հաստատվելուց հետո, կամ առհասարակ չեն դրվում: ՇՄԱԳ մասին ՀՀ օրենքի պահանջ է նաև, որ հանրային լուսման արձանագրությունները հրապարակվեն ՀՀ ԲՆ կայքէջում, սակայն ներկա պահին այդ կայքում առկա են միայն 2015թ.-ի արձանագրություններ:

Հանքավայրերի և հանքերակումների համառոտ նկարագրերը (որոնք կոչվում են անձնագրեր) ևս առկա են առցանց և ներբեռնված են ՀՀ ԷԲՊՆ և Գեոֆոնդի ինտերնետային կայքերում, սակայն դրանցում առկա չեն հանքավայրերի և հանքերակումների կոորդինատները: Բացի այդ պետք է նշել, որ անձնագրերը, որոնք կան կամ կազմվում են, չեն համապատասխանում ներկայիս անձնագրավորման կարգի պահանջներին և թարմացման կամ վերանայման կարիք ունեն: Այսինքն, անձնագրային տեղեկատվության կիրառումը, որպես արժանահավատ տեղեկատվություն ԱՃԹՆ գործընթացում, անձնագրերի ներկայիս տեսքով չի կարող իրականացվել:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ թույլտվությունների մասով ԱՃԹՆ ստանդարտի կողմից պահանջվող հրապարակման ենթակա տվյալներից ներկայումս հանրությանը հասանելի չեն

- լիցենզավորված տարածքի կոորդինատները,
- հայտի ներկայացման ամսաթիվը,

³ http://minenergy.am/legislation/browse/cat_id/4

- արտադրության լիցենզիաների դեպքում արտադրվող ապրանքատեսակը:

Կարծում ենք, որ ԱՃԹՆ-ի սկզբունքներին համապատասխանության, թույլտվությունների տրամադրման գործընթացի և պայմանագրերի թափանցիկության տեսանկյունից հատկապես կարևորվում է հետևյալ տեղեկատվության հրապարակումը.

- Տնտեսվարող սուբյեկտի անվանումը
- թույլտվության հերթական համարը, տրման տարին, ամիսը, ամսաթիվը և ժամկետը
- Ընդերքի տեղամասի ծայրակետերի կոորդինատները
- Օգտակար հանածոյի անվանումը,
- Տրամադրված պաշարների քանակ
- հանքի տարեկան արտադրողականությունը
- Արդյունահանման պլանավորված ծավալ

Վերոնշյալ 1-ին և 2-րդ կետերով նախատեսված տեղեկատվությունը հրապարակվում էին նաև մինչև Ընդերքի օրենսգրքի 2018 թվականի մարտի փոփոխությունները, ուստի դրանց հրապարակայնության հնարավոր խոչընդոտներին անդրադառնալու կարիք չկա:

Գտնում ենք, որ վերոնշյալ հարցադրման, ԱՃԹՆ ստանդարտների և հասարակական վերահսկողության տեսանկյունից կարևոր է հատկապես տրամադրված պաշարների քանակի, հանքի տարեկան արտադրողականության և արդյունահանման ծավալների վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնության հետ կապված խոչընդոտների վերհանումը:

Խնդիր II. Մինչև Ընդերքի օրենսգրքի 2018 թվականի մարտի փոփոխությունները 9-րդ հոդվածի (նախկին խմբագրությամբ) մեկնաբանությունը առաջացնում էր իրավական հարց՝ արդյոք տրամադրված պաշարների քանակին, հանքի տարեկան արտադրողականության և արդյունահանման պլանավորված ծավալին վերաբերող տեղեկատվությունը կարող է հանդիսանալ առևտրային գաղտնիք:

«Քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածի համաձայն տեղեկատվությունը առևտրային գաղտնիք է, եթե՝

- Ա. այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք,
- Բ. չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն.
- Գ. տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար:

Առևտրային գաղտնիքին վերաբերող որոշ դրույթներ առկա են նաև «Քաղաքացիական օրենսգրքի այլ հոդվածներով ևս: Մասնավորապես, Օրենսգրքի 68-րդ գլուխը վերաբերում է չբացահայտված տեղեկատվությանն ու դրա պաշտպանությանը: Օրենսգրքի 1164-րդ հոդվածի համաձայն այդպիսիք են համարվում տեխնիկական, կազմակերպչական կամ առևտրային տեղեկատվությունները: Պետք է նկատի ունենալ, սակայն, որ «Քաղաքացիական օրենսգրքի վերոնշյալ դրույթները ընդգրկված են Օրենսգրքի մտավոր սեփականությանն առնչվող բաժնում, ուստի գտնում ենք, որ դրանց վերաբերյալ կարգավորումները կիրառելի չեն քննարկվող հարաբերությունների նկատմամբ:

Չբացահայտվող տեղեկատվության պաշտպանությանն անդրադարձել է նաև «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքը: Այս օրենքով չբացահայտված տեղեկատվությունը առավել տարածական ձևակերպում է ստացել, ուստի ֆորմալ առումով կարծում ենք, որ տրամադրված պաշարների քանակին, հանքի տարեկան արտադրողականությանը և արդյունահանման ծավալին վերաբերող տեղեկատվությունը կարող է հանդիսանալ չբացահայտված «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի տեսանկյունից: Այսպես, Օրենքի 16-րդ հոդվածի համաձայն չբացահայտված տեղեկատվության առարկա կարող են լինել արտադրության եղանակները, քիմիական բանաձևերը, գծագրերը, փորձնական նմուշները,

ապրանքի վաճառքի և բաշխման եղանակները, պայմանագրի ձևերը, գործարար ծրագրերը, պայմանագրային գների մանրամասնությունները, սպառողների մասնագիտական գործունեության ոլորտները (պրոֆիլները), գովազդման ռազմավարությունը, մատակարարների կամ հաճախորդների ցուցակները, համակարգչային ծրագրային ապահովումները, տվյալների հիմնապաշարները (բազաները) և այլն:

Հաշվի առնելով հստակ ամրագրված առևտրային գաղտնիքի հասկացության սահմանման բացակայությունը ՀՀ օրենսդրությունում, սույն հետազոտության շրջանակներում փորձ արվեց առևտրային գաղտնիքի հասկացության մեկնաբանությունը գտնել տեսական գրականության միջոցով: Արդյունքում՝ առևտրային գաղտնիքը սովորաբար մեկնաբանվում է, որպես տեղեկատվության գաղտնիության ռեժիմ, որը թույլ է տալիս տեղեկությանը օրինաչափ տիրապետողին առկա կամ հնարավոր հանգամանքներում ավելացնել եկամուտները, խուսափել չարդարացված ծախսերից, պահպանել դիրքը ապրանքների, աշխատանքների, ծառայությունների շուկայում կամ ստանալ այլ առևտրային օգուտ: Առևտրային գաղտնիք կազմող տեղեկություններ դրանք մեկնաբանվում են որպես ցանկացած բնույթի տեղեկություններ (արտադրական, տեխնիկական, տնտեսական, կազմակերպական կամ այլ) այդ թվում գիտատեխնիկական բնագավառում մտավոր գործունեության արդյունքների մասին, ինչպես նաև մասնագիտական գործունեության իրականացման միջոցների մասին տվյալներ, որոնք, երրորդ անձանց անհայտ լինելու ուժով, ունեն իրական կամ հնարավոր առևտրային արժեք, օրենքի ուժով հասանելի չեն երրորդ անձանց և որոնց նկատմամբ (այդ տեղեկությունների իրավատիրոջ կողմից) սահմանված է առևտրային գաղտնիքի ռեժիմ:

Ուսումնասիրությունը ցույց է տվել նաև, որ որոշակի տեղեկատվությունը գաղտնիք համարելն, ըստ էության, կազմակերպության իրավունքն է: Այս իրավունքը պատկանում է իրավատիրոջը պայմանով, որ նա չի խախտում օրենքով սահմանված սահմանափակումները: Տնտեսվարող սուբյեկտն իրավունք ունի իր գործունեությանը, արտադրության կազմակերպմանը, տեխնոլոգիական գործընթացներին, տեխնիկային վերաբերող ցանկացած տեղեկատվություն (բացառությամբ օրենքով արգելվածների) համարել առևտրային գաղտնիք և պահպանել այն բացահայտումից:

Այսինքն, տեղեկատվությանը տիրապետողն ինքն է որոշում ինչպիսի տեղեկատվությունը համարել առևտրային գաղտնիք և ինքն էլ սահմանում է դրա պահպանության կանոնները: Սակայն, քննարկվող իրավագործությունը անսահմանափակ չէ: Ցանկացած պետություն իրավունք ունի պետական և հանրային շահերի պաշտպանության նպատակով պետական և ռազմական անվտանգության ապահովման համար, ինչպես նաև անբարեխիղճ մրցակցությունը կանխելու և սպառողների շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով սահմանել տեղեկատվության այն տեսակները, որոնք, առևտրային կամ այլ գաղտնիք համարվել չեն կարող:

Պարզաբանում ¹ Ամփոփելով վերոգրյալը գտնում ենք, որ տրամադրված պաշարների քանակը կամ հանքի տարեկան արտադրողականությունը ինքնին առևտրային գաղտնիք հանդիսանալ չեն կարող, քանի որ դրանք հանդիսանում են պետության ընկերությանը տրամադրվող որոշակի իրավունք և դրանք որևէ առնչություն չունեն տնտեսվարող սուբյեկտի, արտադրության կազմակերպման կամ տեխնոլոգիական գործընթացների հետ: Ուստի, թե ՀՀ օրենսդրության, և թե տեսական գրականության մեկնաբանությունների լույսի ներքո վերոնշյալ տեղեկությունները առևտրային գաղտնիք դիտարկելը վիճահարույց է:

Ինչ վերաբերում է արդյունահանման ծավալներին, ապա կարծում ենք, որ վերջինս կարող է մեկնաբանվել, որպես ընկերությունների արտադրական գործունեությանն անմիջականորեն առնչվող գործընթացներ և տեղեկատվության տնօրինողի կողմից որակվել որպես առևտրային գաղտնիք: Սակայն հարկ է նկատի ունենալ, որ արդյունահանման ծավալները ուղղակիորեն կապված են նաև այդ արդյունահանմամբ պայմանավորված հարկային մուտքերի քանակի հետ, բացի այդ արդյունահանման ծավալների վերաբերյալ տեղեկատվությունն անհրաժեշտ է տրամադրված պաշարների և հանքի տարեկան արտադրողականության հետ համեմատելու նպատակով: Այս

առումով կարծում եմ, որ պետությունը կարող է ամրագրել արդյունահանման ծավալների հրապարակայնության պահանջ՝ ոլորտում հանրային վերահսկողությունը վեր դասելով որևէ ընկերության տնտեսական գործունեությունից:

Պարզաբանում II. Ինչ վերաբերում է Պայմանագրով նախատեսված այլ տեղեկատվությանը, մասնավորապես (i) ընդերքօգտագործողի կողմից օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ֆինանսական առաջարկները, (ii) շրջակա միջավայրի դրամագլուխ և օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների վճարներ, (iii) հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորություններ, (iv) համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորություններ, (v) Ընդերքօգտագործման թափոնների կառավարման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններով նախատեսված միջոցառումների և դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքներ և այլն, ապա կարծում եմ, որ սրանք ևս չեն կարող դասվել առևտրային գաղտնիքի շարքին, քանի որ նախ դրանք անմիջականորեն չեն առնչվում ընկերությունների արտադրական պրոցեսներին, բացի այդ հանդիսանում են պետության հանդեպ ստանձնած պարտավորությունների երաշխիքներ կամ առնչվում են բնակչության անվտանգության և առողջության ապահովմանը, որոնք օրենքի ուժով չեն կարող լինել գաղտնիք: Առևտրային գաղտնիք եզրույթի վիճահարույց կիրառումը բացառելու նպատակով ՊՀԿ առաջարկությամբ, 2018 թվականի մարտի 21 ընդունված փոփոխություններով պաշարների քանակը և հանքի տարեկան արտադրողականությունը օրենքով պաշտպանվող գաղտնիք չէ, ընդհակառակը, այն օրենքի ուժով ենթակա է հրապարակման:

Ինչ վերաբերում է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 12-րդ և 13-րդ հոդվածին, ապա հարկ է նկատի ունենալ, որ վերջինս խոսում է առհասարակ երկրաբանական տեղեկատվության տրամադրման կարգի մասին: Կարծում եմ, որ ԱՃԹՆ-ի տեսանկյունից երկրաբանական տեղեկատվության գաղտնիության բացարձակ բացահայտում չի նախատեսվում, ուստի քննարկվող հոդվածը չի խոչընդոտում ԱՃԹՆ-ի պահանջների ամրագրմանը, քանի դեռ առկա չէ ընդերքօգտագործման թույլտվություն:

Այսինքն, հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրահանգման, որ ԱՃԹՆ-ի շրջանակներում հետաքրքրություն է ներկայացնում բացարձակապես այն երկրաբանական տեղեկատվության բացահայտումը, որն առկա է օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման ժամանակ: Գտնում եմ, որ երկրաբանական տեղեկատվություն գաղտնիությունը, քանի դեռ առկա չէ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թույլտվություն, չի խոչընդոտում ԱՃԹՆ-ի գործընթացներին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է 13-րդ հոդվածում գաղտնիության մասով կատարել բացառություն, սահմանելով օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման թույլտվությունների շրջանակներում բացահայտման ենթակա երկրաբանական տեղեկատվությունը:

Առաջարկ II. Այնուամենայնիվ, օրենսդրության տարակարծիք մեկնաբանություններից խուսափելու նպատակով առաջարկվել է փոփոխություններ նախատեսել բացի Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքից, նաև «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում և ՀՀ կառավարությունը 22 մարտի 2012 թվականի N 437-Ն որոշման մեջ՝ հստակ սահմանելով քննարկվող պայմանագրերի և թույլտվությունների հրապարակման պահանջ: Հարկ է նկատել, որ այս մեր առաջարկը ևս ընդունվեց:

3. Ընկերությունների կողմից հարկերի տեսքով պետությանը կատարվող վճարումների և հարկերի հավաքագրման ոլորտում լիազոր մարմին հանդիսացող պետական կառավարման մարմնի կողմից հավաքագրված հարկերի /այդ թվում՝ հարկերի վերաբերյալ ապաստանագրված տեղեկատվության/ հրապարակայնություն

Ա. Ընկերությունների կողմից հարկերի կամ պարտադիր վճարումների տեսքով պետությանը կատարվող հարկացումների հրապարակայնությունը.

Քննարկվող հարցադրման տեսանկյունից ուշագրավ է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածը, որով ամրագրված է, որ խոշոր կազմակերպությունը պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունները:

Ընդ որում, օրենքի իմաստով խոշոր կազմակերպություն է համարվում այն կազմակերպությունը, որը բավարարում է հետևյալ ցուցանիշներից առնվազն մեկին՝

- ա) Հաշվետու տարվա (որի համար պետք է կազմվեն ֆինանսական հաշվետվությունները) գործունեությունից հասույթը գերազանցում է մեկ միլիարդ դրամը.
- բ) Հաշվետու տարվա (որի համար պետք է կազմվեն ֆինանսական հաշվետվությունները) վերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է մեկ միլիարդ դրամը:

Ֆինանսական հաշվետվությունները կարող են հրապարակվել մամուլում, ինտերնետով կամ տարածվել գրքույկների ձևով: Կազմակերպությունների կողմից հրապարակվող ֆինանսական հաշվետվությունները հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն պարտադիր ներառում են նաև վերջիններիս կողմից վճարված հարկերն ու վճարումները՝ յուրաքանչյուր հարկատեսակի մասով առանձին-առանձին: Որպես օրինակ կարող է հանդիսանալ «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից հրապարակվող ֆինանսական հաշվետվության ուսումնասիրությունը՝ հետևյալ հղմամբ http://vm.am/uploaded/Documents/Teghout_FS_2015-ARM.pdf:

Առաջարկ III. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մետաղական հանքարդյունաբերության ոչ բոլոր ընկերությունները կարող են մշտապես հանդիսանալ խոշոր կազմակերպություններ, առաջարկում ենք Հաշվապահական Հաշվառման մասին, կամ Բաժնետիրական ընկերությունների և Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին ՀՀ օրենքներում ամրագրել հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն ծավալող ընկերությունների ֆինանսական հաշվետվությունների պարտադիր հրապարակման պահանջ:

Բ. հարկերի հավաքագրման ոլորտում լիազոր մարմին հանդիսացող պետական կառավարման մարմնի կողմից հավաքագրված հարկերի /այդ թվում՝ հարկերի վերաբերյալ ապաստանագրված տեղեկատվության/ հրապարակայնություն

Հարկերի հավաքագրման ոլորտում լիազոր մարմին հանդիսացող պետական կառավարման մարմինը ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեն է: Վերջինս Հարկային օրենսգրքի համաձայն պարտավոր է հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել՝

- 1) Մինչև հարկային տարվան հաջորդող հարկային տարվա հուլիսի 1-ը ներառյալ՝
 - ա. Հարկային տարվա արդյունքներով հարկային վնասներ հայտարարագրած և ապառքներ կուտակած հարկ վճարողների ցանկերը,
 - բ. Աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցած հարկ վճարողների ցանկերը,
 - գ. Հարկային տարվա արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 50 միլիոն դրամ և ավելի շահութահարկ վճարած հարկ վճարողների ցանկերը,

- դ. Հարկային տարվա արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 10 միլիոն դրամ և ավելի եկամտային հարկ վճարած հարկային գործակալների ցանկերը,
 - ե. Օրենսգրքի 384-րդ հոդվածի համաձայն՝ գործունեությունը կասեցված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ցանկը,
 - զ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ տեղեկություններ.
- 2) Մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը ներառյալ առաջին 1000 խոշոր հարկ վճարողների ցանկերը և հարկային տարվա սկզբից նրանց վճարած հարկերի մեծությունները՝ հաշվարկված աճողական կարգով:

Այսինքն, եթե քննարկվող հետազոտության շրջանակներում հետաքրքրություն ներկայացնող ընկերությունը չի բավարարում վերոնշյալ ցանկերում ընդգրկվելու որևէ պայմանի, ապա հարկային մարմինը վերջինիս մասով տեղեկատվություն հրապարակվելու որևէ պարտավորություն չունի:

Ընդ որում, վերոնշյալ տեղեկատվության հրապարակման կարգը ՀՀ կառավարության կողմից սահմանվել է սույն թվականի հուլիսի 6-ի թիվ 783-Ն որոշմամբ: Սույն որոշմամբ սահմանվում են նաև տեղեկատվության հրապարակման ձևերը, որից ակնհայտ է դառնում, որ տեղեկատվությունն, ըստ էության, հրապարակվում է ապաագրեգացված՝ առանձին-առանձին շահութահարկի, եկամտային հարկի, ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և այլ հարկերի և վճարների վերաբերյալ:

Առաջարկ IV. Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում էինք, որ մինչև 2018 թվականի մարտի 21-փոփոխությունները գործող օրենսդրությունը հնարավորություն չէր ընձեռում հրապարակել մետաղական հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն իրականացվող բոլոր ընկերությունների վերաբերյալ տեղեկությունները, եթե վերջիններս չեն բավարարում Հարկային Օրենսգրքի 308-րդ հոդվածով սահմանված պահանջներին: Մետաղական հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն իրականացնող բոլոր ընկերությունների վերաբերյալ տեղեկատվության պարտադիր հրապարակման պահանջ կարող է սահմանվել բացառապես Հարկային Օրենսգրքի 308-րդ հոդվածում համապատասխան լրացում կատարելու պարագայում, որից հետո փոփոխություններ պետք է կատարվի նաև ՀՀ կառավարության 06.07.2017թ. թիվ 783-Ն որոշման մեջ:

Անհրաժեշտ է իրականացնել

- Հարկային օրենսգրքի փոփոխություններ, որոնք կսահմանեն Պետական եկամուտների կոմիտեի պարտականությունը՝ հրապարակելու (կամ, գոնե, ԱՃԹՆ-ի անկախ ադմինիստրատորին ներկայացնելու) նախանշված հաշվետու ընկերություններից յուրաքանչյուրից ստացված՝ եկամտային հոսքերի ապաագրեգացված տվյալները: Պետք է ապաագրեգացվեն ինչպես եկամտային հոսքերը, այնպես էլ հանքարդյունաբերական ծրագրերը, եթե իրավաբանական անձը մեկից ավելի ծրագիր է իրականացնում: Ներկայումս ՀՀ օրենսդրությունը նման հնարավորություն չի ընձեռում: Հարկ է լրջորեն քննարկել՝ արդյոք այդ փոփոխությունը պետք է կատարվի ՀՀ հարկային օրենսգրքում և/կամ ՀՀ հարկերի մասին օրենքում, որն ուժի մեջ է եղել քննարկվող ժամանակահատվածում:
- Օրենսդրական փոփոխություններ (ըստ նախնական վերլուծության՝ Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքում և/կամ հարկային օրենսդրության մեջ), որոնք կսահմանեն տեղական ինքնակառավարման մարմինների պարտականությունը՝ հրապարակելու (կամ, գոնե, անկախ ադմինիստրատորին ներկայացնելու) ապաագրեգացված տվյալներ հողի հարկի, գույքահարկի և այլ եկամտային հոսքերի վերաբերյալ, որոնք ստացվել են նախանշված հաշվետու ընկերությունների կողմից:
- ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի փոփոխություններ, որոնք կսահմանեն ՀՀ բնապահպանության նախարարության պարտականությունը՝ հրապարակելու (կամ, գոնե, անկախ ադմինիստրատորին ներկայացնելու) ապաագրեգացված տվյալներ՝ ընկերությունների կողմից Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին վճարված

գումարների վերաբերյալ: Անհրաժեշտ է հայտնել, որ Հարկային օրենսգրքի 308-րդ հոդվածը լրացվել է 2018 թվականի մարտի 21-ին նոր ենթակետով, որի համաձայն՝ հարկային մարմինը հարկ վճարողների իրազեկման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ձևով և կարգով հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է՝ մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործող հարկ վճարողների՝ տարվա արդյունքներով վճարած հարկերի և վճարների ցանկերը, արտահանած ապրանքների ցանկերը՝ արժեքային, բնափրային և քանակական չափերով:

Ընկերությունների կողմից կատարվող վճարումների ներկայացում

- Փոփոխություններ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում, որոնք կսահմանեն հաշվետու ընդերքօգտագործող ընկերությունների պարտականությունը՝ հրապարակելու (կամ, գոնե, անկախ ադմինիստրատորին ներկայացնելու) ապագաբեգացված տվյալներ՝ հետևյալ մարմիններին վճարված հարկերի և այլ վճարումների վերաբերյալ. այդ մարմիններն են՝
 - Ա) Պետական եկամուտների կոմիտեն,
 - Բ) տեղական համայնքներ,
 - Գ Բնապահպանության նախարարություն (Շրջակա միջավայրի պահպանության դրամագլուխ):

Ապագաբեգացումը պետք է կատարվի ըստ եկամտային հոսքերի և ըստ հանքարդյունաբերական ծրագրի, այն դեպքերում, երբ իրավաբանական անձն ունի մեկից ավելի ծրագիր:

4. Հետադարձ ուժի խնդիրը նախորդ ժամանակաշրջանի վերաբերյալ հրապարակվող տվյալների վերաբերյալ

Քննարկվող հարցի տեսանկյունից հատկանշական է ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածը, որի համաձայն անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն: Անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով: Նույն տրամաբանությամբ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի համաձայն հետադարձ ուժ չի կարող տրվել իրավաբանական կամ ֆիզիկական անձանց իրավունքները կամ ազատությունները սահմանափակող, դրանց իրականացման կարգը խստացնող կամ պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող կամ պարտականություններ սահմանող կամ պարտականությունների կատարման կարգ սահմանող կամ խստացնող, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կարգ սահմանող կամ խստացնող, ինչպես նաև նրանց իրավական վիճակն այլ կերպ վատթարացնող իրավական ակտերին: Այս կարգավորումները, ըստ էության, չեն փոխվել նաև նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքով:

Պարզաբանում III. Կարծում ենք, որ քննարկվող ոլորտին վերաբերող ընկերությունների, ինչպես նաև հարկային մարմնի կողմից ընկերությունների՝ նախորդ տարիների վերաբերող հաշվետվությունների հրապարակման պահանջ սահմանելը /թեպետև հարկային մարմնի պաշտոնական կայքում, ինչպես նաև որոշ ընկերությունների կայքերում հրապարակված են նաև նախորդ տարիների տվյալներ/ *ինքնին չի կարող հանդիսանալ անձի իրավական վիճակը որևէ կերպ վատթարացնող կամ իրավունքներն ու ազատությունները սահմանափակող կամ պարտականությունները խստացնող դրույթ:*

5. Արտաբյուջետային հաշիվներ (այդ թվում՝ համայնքային)

ԱՃԹՆ ստանդարտի 4 պահանջն է իրականացնել ընկերության կողմից կատարված վճարների և կառավարության ստացած եկամուտների համապարփակ համադրում: Ինչ վերաբերում է, արտաբյուջետային հաշիվներին, դրանք պետք է բացահայտվեն համաձայն ԱՃԹՆ ստանդարտի 4.1 (b) (viii) և 4.6 պահանջների որպես կառավարության և տեղական ինքնակառավարման մարմիններ կատարած այլ ցանկացած վճարում: Հետևաբար, դրանց էական լինելու պարագայում բազմաշահառու խմբի պահանջով այդ տեղեկատվությունը ենթակա է հրապարակման:

Արտաբյուջետային հաշիվների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «ՀՀ բյուջետային համակարգի մասին» և «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքներով: Ընդ որում, նշված օրենքներով սահմանվում են նաև արտաբյուջետային հաշիվ բացելու դեպքերը: Ըստ հիշյալ օրենքի արտաբյուջետային հաշիվները կարող են բացվել և՛ պետական, և՛ համայնքային հիմնարկների անվամբ: Դրանք բացվում են՝

- ա) Առանձին դեպքերում նպատակային բյուջետային մուտքերի և դրանց հաշվին կատարվող ելքերի կատարման և առանձնացված հաշվառման համար.
- բ) Օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը ապրանքային տեսքով տրամադրված վարկերի և դրամաշնորհների դրամայնացումից առաջացող միջոցների կուտակման համար.
- գ) Դատական, նախաքննական և դատական ակտերի հարկադիր կատարման մարմինների անվամբ դատավարական և կատարողական վարույթի նորմերի հիմքերով իրավաբանական և ֆիզիկական անձանցից բռնագանձվող, բռնագրավվող, առգրավվող, ի պահ վերցվող կամ գրավադրվող դրամական (նաև արտարժույթային) միջոցների ստացման և դրանք օրենքի հիման վրա որոշված ստացողներին հետագա փոխանցումն ապահովելու համար.
- դ) Պետական լիազորված մարմնի անվամբ՝ բյուջեների ժամանակավորապես ազատ միջոցների ավանդադրման, առևտրային կազմակերպություններում պետական բաժնեմասի մասնավորեցումից (սեփականաշնորհումից) առաջացող միջոցների հավաքագրման և ավանդադրման համար.
- ե) Պետական կամ համայնքային հիմնարկի անվամբ՝ սակարկությունների կազմակերպման հետ կապված նախավճարների գանձումը և վերադարձն ապահովելու համար.
- զ) Պետական հիմնարկների անվամբ՝ իրավաբանական անձանց վճարահաշվարկային սպասարկման համար.
- է) Պետական մարմինների անվամբ՝ որոշակի ոլորտներում առանձին տնտեսավարող սուբյեկտների կողմից իրականացվող տնտեսական գործունեության արդյունքում առաջացող բացասական հետևանքների վերացման և ռիսկերի կառավարման հետ կապված ծախսերի ֆինանսավորման նպատակով այդ սուբյեկտների կողմից կատարվող վճարների կամ մասհանումների տեսքով ստացվող միջոցների կուտակման համար.
- ը) Պետական և համայնքային հիմնարկների անվամբ՝ օրենքով կամ կառավարության (համայնքի ավագանու) որոշմամբ նախատեսված աղբյուրներից այլ նպատակներով միջոցների կուտակման համար:

Գործող օրենսդրությունում առկա են վերոնշյալ հիմքերով բացված մի շարք արտաբյուջետային միջոցների հաշիվներ, օրինակ՝

- Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության «Բնապահպանական նպատակային ֆոնդ» արտաբյուջետային հաշիվ.
- Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Դատաիրավական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին սպասարկող Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետական ստորաբաժանումում բացված արտաբյուջետային հաշիվը՝ Միացյալ Թագավորության արտաքին գործերի նախարարության կողմից «Աջակցություն Հայաստանի կառավարությանը, հակակոռուպցիոն

ռազմավարության իրականացման միջոցով՝ բարելավելու օրենսդրական և կարգավորիչ դաշտը՝ աջակցելու ազդարարների արդյունավետ պաշտպանության համակարգի ստեղծմանը» ծրագիրն իրականացնելու նպատակով տրամադրվող դրամաշնորհային միջոցների տնօրինման համար.

- «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության արտաբյուջետային ֆոնդ և այլն:

Արտաբյուջետային հաշիվներ ունենալու հնարավորություն ունեն նաև համայնքները: Որպես Օրինակ կարող է հանդիսանալ աղբահանության վճարը, որը գանձվում է համայնքի արտաբյուջե:

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի համաձայն համայնքի ավագանու որոշմամբ արտաբյուջետային միջոցները ենթակա են ներառման համապատասխանաբար պետական կամ համայնքի բյուջե, իսկ այդ միջոցների շրջանառությունը և բյուջեների կատարման հաշվետվություններում արտացոլումն իրականացվում է «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքով: Նույն Օրենքի համաձայն համայնքային հիմնարկների անվամբ բացված արտաբյուջետային հաշիվները տնօրինում են տեղական ինքնակառավարման մարմինները: Հայաստանի Հանրապետության և համայնքների ակտիվների ու պասիվների հաշվառման նպատակով գանձապետարանն ապահովում է Հայաստանի Հանրապետության բյուջետային հատվածի վերաբերյալ պետական մարմիններից պետական հիմնարկների հաշվեկշիռների (ակտիվների ու պասիվների), ֆինանսական հոսքերի (ներառյալ՝ արտաբյուջետային միջոցների գոյացման ու տնօրինման) մասին հաշվետվությունների ստացումը, ամփոփումը, վերլուծությունը:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն համայնքի բնակչության կենսաապահովման խնդիրները լուծելու նպատակով մատուցվող ծառայությունների՝ ջրամատակարարման, ջրահեռացման, ոռոգման, ջեռուցման, աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման, բազմաբնակարան շենքերի սպասարկման և օրենքով սահմանված դեպքերում այլ ծառայությունների իրականացման համար համայնքի ավագանին կարող է սահմանել համայնքի բյուջե մուտքագրվող վճարներ: Ընդ որում, եթե այդ ծառայություններն իրականացնում են համայնքային հիմնարկները, ապա գանձված գումարն ուղղվում է համայնքի բյուջե, իսկ եթե ծառայությունների մատուցումն իրականացվում է առևտրային կազմակերպությունների կողմից, ապա դրանք ուղղում համայնքի բյուջեի բաղկացուցիչ մաս կազմող արտաբյուջետային միջոցների հաշվին:

Նույն օրենքի 92-րդ հոդվածի համաձայն համայնքին ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից նվիրաբերության կամ վարկի տեսքով տրամադրվող դրամական միջոցներն այդ անձանց պահանջով պետական լիազորված մարմնի համաձայնությամբ և համայնքի ավագանու որոշմամբ կարող են տեղադրվել գանձապետարանի արտաբյուջետային միջոցների հաշիվներում կամ որևէ բանկում:

Պարզաբանում IV. Համայնքի համար ՀՀ օրենքներով չկա սահմանված որևէ պարտականություն հրապարակելու արտաբյուջետային հաշիվների միջոցների նախահաշիվները: Այս առումով հարկ ենք համարում կրկին անդրադառնալ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքին: Նշված օրենքի համաձայն համայնքի ավագանու որոշումները ՀՀ իրավական համակարգի մաս են և պարտադիր ենթակա են հրապարակման Համայնքի իրավական ակտերի տեղեկագրում»: Սակայն, պարտադիր հրապարակման պահանջ ամրագրված է միայն նորմատիվ ակտերի համար, մինչդեռ արտաբյուջետային հաշիվ միջոցների նախահաշիվներ կարող են հաստատվել համայնքի ավագանու անհատական որոշմամբ, իսկ անհատական որոշումների հրապարակման պարտադիր պահանջ առկա չէ ՀՀ օրենսդրությամբ: Հարկ է նկատել, որ իրավական ակտերի մասին օրենքի գործողությունը դադարել է:

Առաջարկ VI. Որպես խնդրի լուծում, առաջադրվում են փոփոխություններ կատարել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներում և հրապարակման պահանջ նախատեսել անհատական իրավական ակտերի տեսքով հաստատվող համայնքների արտաբյուջետային հաշիվ միջոցների նախահաշիվների համար:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել նաև, որ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության պաշտոնական կայքում հրապարակվում է ամփոփ տեղեկատվություն ՀՀ համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի վերաբերյալ, որը սակայն վերոնշյալ հարցադրումներին պատասխան չի տալիս:

ՑԱՆԿ**

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ

- Ընդերքի մասին ՀՀ օրենսգիրք
- ՀՀ Հարկային Օրենսգիրք
- «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք
- «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք
- «Բաժնեդիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք
- «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք
- «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք
- ՀՀ կառավարության 06.07.2017թ. թիվ 783-Ն որոշում
- ՀՀ կառավարությունը 22 մարտի 2012 թվականի N 437-Ն որոշում

***Նշված ցանկում ներառված որոշ հրավական ակտերում փոփոխությունների կատարումը ոչ թե անհրաժեշտություն է այլ քննարկման ենթակա հարց:*

Ընդերքի և հարկային օրենսգրքերում, տնտեսական մրցակցության պաշտպանության և տեղական ինքնակառավարման մասին օրենքներում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքների փոփոխությունների նախագծերը ներկայացված են Հավելված 3-ում, իսկ դրանց կատարման հիմնավորումը Հավելված 3-ում:

6. Ազդակիր համայնքներ

Այս բաժնում դիտարկվում է «ազդակիր համայնք» հասկացությունը սահմանելու հարցը, որն ունի երկու կողմ.

- համայնքներ, որոնք ներառված են այն ընկերությունների ՇՄԱԳ փաստաթղթերում, որոնք նախատեսում են զբաղվել հանքարդյունաբերությամբ,
- համայնքներ, որոնք դոտացիայի դիմելու իրավունք ունեն 2001թ.-ին ընդունված՝ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով⁴:

Համայնքներ, որոնք ներառված են այն ընկերությունների ՇՄԱԳ փաստաթղթերում, որոնք նախատեսում են զբաղվել հանքարդյունաբերությամբ

Ներկայումս «ազդակիր համայնք» սահմանումը տրված է ՇՄԱԳ օրենքի 4-րդ հոդվածի 20-րդ կետում. այն է՝

շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի կամ նախատեսվող գործողության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք:

Այնուհետ՝ ՇՄԱԳ օրենքի նույն հոդվածում «հիմնադրությամբ փաստաթուղթ» հասկացությունը սահմանված է հետևյալ կերպ.

շրջակա միջավայրի վրա ազդեցություն ունեցող փաստաթղթի (քաղաքականություն, ռազմավարություն, հայեցակարգ, ուրվագիծ, բնական ռեսուրսների օգտագործման սխեմա, ծրագիր, հարակագիծ, ծրագրային փաստաթուղթ) նախագիծ⁵:

ՀՀ օրենսդրությամբ հստակ չեն տարբերակվում ազդակիր և ոչ ազդակիր համայնքները: Ըստ էության, ինքնաբերաբար, որոշիչ գործոն է դառնում ՇՄԱԳ հիմնադրությամբ փաստաթղթում համայնքի՝ որպես «ազդակիր» նշված լինելու հանգամանքը: Դրա վառ օրինակն է Ամուլսարի հանքարդյունաբերական ծրագիրը: Ընկերության ՇՄԱԳ փաստաթղթերում Ջերմուկն ի սկզբանե չի նշվել որպես ազդակիր համայնք, թեև Ջերմուկն առողջարանային կենտրոն է, ունի 5000 բնակիչ, գտնվում է հանքից ընդամենը 12 կմ հեռավորության վրա: Հետագայում, ընկերությանն ու կառավարությանը հասցեագրված բողոքների, ինչպես նաև ակտիվիստների կողմից հարուցված դատական վարույթի արդյունքում ընկերությունը վերանայեց ՇՄԱԳ-ը՝ Ջերմուկը ներառելով ազդակիր համայնքների ցանկում:

Երբ դիտարկում ենք «ազդակիր համայնք» հասկացության վերաբերյալ առկա միջազգային փորձը՝ պարզ է դառնում, որ կամայական որոշումներից խուսափելու համար պետք է հաշվի առնել մի շարք գործոններ: Սովորաբար, խնդիրն ի հայտ է գալիս համայնքի զարգացման համաձայնագրերի (ՀՀՀ) հետ կապված: Համայնքի՝ ՀՀՀ-ում ընդգրկված լինելու հանգամանքը վկայությունն է առ այն, որ տվյալ համայնքը ենթակա է նախատեսվող զարգացման ազդեցությանն այնքանով, որքանով իրականացնող ընկերության համար նպատակահարմար է զարգացման նախաձեռնություններ ձեռնարկել տվյալ համայնքում:

2011 թվականին Քվինսլենդի համալսարանի Սոցիալապես պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի հրատարակած աշխատության⁶ մեջ սահմանված են մի շարք չափանիշներ, որոնք կիրառվում են համայնքը՝ ՀՀՀ-ում ներառելու կամ չներառելու որոշումը կայացնելիս: Հարցերից մեկն այն է, թե որքանով է տվյալ համայնքը ենթարկվում ծրագրի

⁴ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 2017 թվականի դեկտեմբերի 21-ի ՀՕ-269-Ն օրենքով «վճարներ» բառն օրենքի վերնագրում և տեքստում փոխարինվել է «հարկ» բառով:

⁵ Հարկ է նկատել, որ հիմնադրությամբ փաստաթղթերը ենթակա չեն ՇՄԱԳ-ի, այլ համաձայն Շմագ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի՝ ենթակա են ռազմավարական գնահատման և փորձաքննության

⁶ Հաջողված աշխատակարգի հղում. Համայնքի զարգացման համաձայնագրեր՝ հրապարակված Քվինսլենդի համալսարանի սոցիալապես պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի կողմից, տեղադրված է հետևյալ կայքում http://www.eisourcebook.org/cms/files/csr/good_practice_notes_on_cdas_document_final_260911.pdf

ազդեցությանը: Աշխատության մեջ նշվում է, որ սա ազդեցության նշանակալիության հարցն է, և նշանակալիության ցուցիչներ կարող են լինել՝

- հողը կամ հողի հասանելիությունը կորցնելը,
- ապրուստի միջոցից զրկվելը,
- ազդեցությունը բնության գեղեցկության վրա,
- տնտեսական փոփոխությունը,
- մշակութային փոփոխությունը,
- ներգործությունը առողջության վրա, և
- փոփոխությունները սոցիալական դինամիկայի և ուժերի հարաբերակցության վրա:⁷

Այնուհետ, ընդունելով, որ ներգործությունների հանրագումարային դիապազոնը կարող է պայմանավորել համայնքի՝ ազդակիր համարվելու հանգամանքը, աշխատության մեջ միաժամանակ կարևորվում է նաև յուրաքանչյուր ազդեցության աստիճանը և նշվում, որ

- «Ազդեցությունների մասշտաբը, բնույթն ու տևողությունը և, ըստ այդմ, լուծման ենթակա խնդիրները, կարող են նշանակալիորեն տարբեր լինել «ազդեցության միևնույն գոտում» գտնվող համայնքներում:
- Ազդակիր համայնքը, հնարավոր է, լինի խիտ բնակեցված տարածք, որտեղ պաշարների արդյունահանման տվյալ ծրագիրը տվյալ տարածքի վրա ներգործող տնտեսական գործունեության տեսակներից և տնտեսվարող սուբյեկտներից մեկն է:
- Ազդակիր համայնքը կարող է գտնվել տվյալ ծրագրից շատ հեռու: Օրինակ, Հարավային Աֆրիկայում հանքափորների ընտանիքները հաճախ բնակվում են հարյուրավոր կիլոմետրեր հեռու գտնվող գյուղերում»:⁸

Աշխատության մեջ այնուհետ դիտարկվում են կիրառվող տարբեր մոտեցումները. որոշ դեպքերում նկատվում է ազդակիր համայնքներին տրամադրվելիք օժանդակության աշխարհագրական շրջանակը սահմանափակելու ցանկություն, և այդպիսի դեպքերում ՀՀ-երը, հնարավոր է, առաջարկվեն միայն այն համայնքներին, որոնք գտնվում են ծրագրի անմիջական հարևանությամբ, կամ այն համայնքներին, որոնք ենթարկվել են վերաբնակեցման կամ ունեն հողի հասանելիության խնդիրներ: Մյուս դեպքերում կարելի է կիրառել առավել լայն մոտեցում՝ հաշվի առնելով «համայնքների կամ մարզերի վարչական սահմանները կամ բնական սահմանները, օրինակ՝ հովիտները, գետերը կամ կղզիները»:⁹

Աշխատության մեջ նշվում է նաև, որ ընկերությունները կարող են որդեգրել երկակի մոտեցում՝ մեղմացման միջոցառումներ առաջարկելով այն համայնքներին, որոնք ավելի մոտ են գտնվում հանքին և/կամ խիստ ազդեցություն են կրում, միաժամանակ տվյալ տարածաշրջանի ավելի մեծ թվով համայնքներում իրականացնելով ընդհանուր զարգացման ծրագրեր:

Հետաքրքրական է այն հանգամանքը, որ այս աշխատությունը ներառման սահմանագծման հարցի որևէ իրավական լուծում չի քարոզում: Այդուհանդերձ, ՇՄԱԳ-ում ազդակիր համայնքների նախանշման հարցն ավելի ընդգրկուն է, քան ՀՀ-ում ընդգրկվելիք համայնքներն ընտրելու հարցը: Առաջին դեպքում համայնքի՝ ՇՄԱԳ-ում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքը կարող է ազդել այն գնահատականի վրա՝ արդյոք ծրագիրը պետք է շարունակվի, թե, ընդհակառակը, ազդեցության աստիճանն ու ազդակիր բնակչության թիվն այնպիսին է, որ ծրագիրը պետք է մերժվի կամ, որպես նվազագույն միջոցառում, ընդլայնի երաշխիքները:

⁷ Ibid, էջ 3. Հետաքրքրական է, որ մեկ այլ հետազոտական աշխատություն («A two-stage approach to defining an affected community based on the directly affected population and the sense of community» («Երկաստիճան մոտեցում ազդակիր համայնքների սահմանմանը՝ հաշվի առնելով անմիջական ազդակիր բնակչությունն ու համայնքային զգացողությունը»), Rick Wylie, Stephen Haraldsen & Joe M. Howe, սեպտեմբեր 2014թ.) առաջարկում է, որ անմիջական ազդակիր համայնքները պետք է հաշվի առնեն, որ «որոշ համայնքների վրա ազդեցությունն ավելի շատ է, քան մյուսների՝ պայմանավորված շինարարության հետևանքով առաջացած ֆիզիկական ներգործության պայմաններում ապրելու կամ ընկալված վտանգի հետ ասոցացված վախով»: Այստեղ «ընկալված վտանգ» հասկացությունը հատկապես ակտուալ է Ջերմուկի պարագայում:

⁸ Ibid, էջ 5

⁹ Ibid, էջ 5

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Անհրաժեշտ է մշակել ՇՄԱԳ-ում համայնքները ներառելու ուղեցույց, այդ ուղեցույցին տալով իրավական կարգավիճակ¹⁰: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր համայնք պետք է դիտարկել առանձին-առանձին: Ընկերությունը պետք է հաշվի առնի սահմանված չափանիշները և կոնկրետ համայնքները չներառելու վերաբերյալ ներկայացնի գրավոր հիմնավորում: Ասենք, սահմանվի «հանքից 20 կմ շառավղի սահմաններում գտնվող բոլոր համայնքներ» չափանիշը: Մյուս կողմից, անհրաժեշտ է յուրաքանչյուր դեպքում հաշվի առնել տվյալ վայրի տեղագրությունը (տոպոգրաֆիան) և հիմնավորել տվյալ համայնքը չներառելու որոշումը: Հարկ է նկատել, որ Գեղարքունիքի մարզպետարանը սույն ուսումնասիրության հետ կապված ներկայացրած իր կարծիքում ամրագրել է, որ չկա հստակ սահմանում ազդակիր համայնքի որոշման համար, որի սահմանման դեպքում պետք է հաշվի առնել բոլոր այն հանգամանքները, որոնք առաջ կբերեն տվյալ համայնքի վարչական տարածքի էկոհամակարգի ցանկացած փոփոխություն և կազդեն բնակչության առողջական վիճակի վրա: Այս պարագայում ճշգրտել ազդակիր համայնքին տրվելիք դոտացիաների չափի հաշվարկների հիմնավորումը:

Առաջարկվում է ներառել որևէ համայնք ՇՄԱԳ-ում չներառելու ընկերության որոշումը՝ պետության կողմից վերանայելու և, անհրաժեշտության դեպքում, չեղարկելու մեխանիզմ: Հիմնավորումն այն է, որ պետության կողմից ընկերության ՇՄԱԳ փաստաթղթին տրվող գնահատականը ամբողջական չի լինի, եթե համայնքը ներառված չէ ՇՄԱԳ-ում:

Համայնքներ, որոնք դոտացիայի դիմելու իրավունք ունեն 2001թ.-ին ընդունված՝ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով

Օրենքում, 2001 թվականին ընդունվելուց հետո, ընդամենը երկու անգամ է փոփոխություններ և լրացումներ կատարվել: Օրենքի գործող տարբերակում թվարկված են 18 ընկերություններ՝ նշելով, որ համապատասխան տարածքների համայնքները, որոնց վրա բացասական է ազդում տվյալ ընկերությունների գործունեությունը իրավունք ունեն ստանալու պետական դոտացիաներ՝ այդ ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների հաշվին:

¹⁰ Բնապահպանության նախարարությունից ստացված գրության համաձայն ՀՀ բնապահպանության նախարարությունը հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության և ՀՀ մարզպետարանների ներկայացրած առաջարկությունները, կազմում և ՀՀ ֆինանսների ու ՀՀ տարածքային կառավարման ու զարգացման նախարարություններ, ինչպես նաև ՀՀ մարզպետարաններ է ներկայացվում «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածում նշված ընկերություններից յուրաքանչյուրի գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների ցանկը (այն դեպքում, երբ ընկերության գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների թիվը մեկից ավելի է, նաև ընկերության կողմից վճարվող բնապահպանական վճարի գումարի՝ այդ համայնքների միջև բաշխման համամասնությունները և դրանց հաշվարկման սկզբունքները): Հաշվարկման սկզբունքներն են՝

- մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման մասով համայնքների միջև բնապահպանական հարկի գումարի բաշխման համամասնությունները (%-ով ընդհանուրի նկատմամբ) որոշվում են աղտոտվածության գծով տարածքային նորմավորման նախնական արդյունքների հիման վրա: Համամասնությունները ազդակիր համայնքների միջև բաշխվում են՝ հիմք ընդունելով աղտոտվածության ծավալները և բնակչության թվաքանակը:
- ջրային ռեսուրս վնասակար նյութերի և (կամ) միացությունների արտահոսքերի մասով և ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնները հատուկ հատկացված տեղերում տեղադրման կամ պահման մասով համայնքների միջև բնապահպանական հարկի գումարի բաշխման համամասնությունները սահմանելիս հիմք են ընդունվում համապատասխան համայնքների բնակչության թվաքանակը և նրանց վարչական տարածքում ջրային ռեսուրսի աղտոտման ծավալները:
- համայնքների միջև բնապահպանական վճարի գումարի բաշխման համամասնությունները սահմանվել են՝ հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով մի շարք համայնքների խոշորացումը:

Ինչպես քննարկվել է Նախնական ուսումնասիրության մեջ, օրենքից չի բխում պետական դոտացիա ստանալու ավտոմատ իրավունք: Խամայնքները պարտավոր են մշակել ծրագրեր և դիմել ֆինանսավորման: Օրենքում ասվում է, որ ամեն տարի Խամայնքների ցանկն ու դոտացիայի չափն ամրագրվում է տարեկան բյուջեով: Ըստ էության, Խամայնքները նախապես դիմում են ֆինանսավորման, և եթե հաջողում են, ապա դա արտահայտվում է հաջորդ տարվա բյուջեում նրանց ներառմամբ:

Հետևաբար, ակնհայտ է, որ, ըստ էության, գործ ունենք Խամայնքների ընտրության երկփուլ գործընթացի հետ: Առաջին փուլի հիմքում ընկած է ընկերությունների ցանկը: Ինչպես նշվեց վերը, օրենքում 01.08.2018 դրությամբ թվարկված են 18 ընկերություններ, սակայն դրանցից միայն 5-ն է (Ջանգեզուրի պղնձամուխրեթենային կոմբինատ, Ագարակի պղնձամուխրեթենային կոմբինատ, Դինո Գոլդ (Կապանում Շահումյանի հանքի նախկին շահագործող), Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ, ԳեոՊրոՄայնինգԳոլդ) մետաղական հանքավայր: Սա հակասում է այն հանգամանքին, որ 2017 թվականին որպես ակտիվ հանքարդյունաբերական գործունեություն իրականացնող ներկայացվել է 9 տնտեսվարող սուբյեկտ:¹¹ Թեև այս ցանկում ընդգրկված են գրեթե բոլոր խոշոր հանքերը, սակայն դուրս է մնացել Թեղուտը: Ընկերությունների ցանկն օրենքով ամրագրելու պահանջը դժվարակիր է, քանի որ նոր հանքերի ի հայտ գալու կամ հանքի սեփականատերերի կազմում փոփոխության պարագայում օրենքում համապատասխան փոփոխություն կատարելը կարող է ամիսներ կամ տարիներ տևել: Օրինակ, Թեղուտի հանքը իսկզբանե պատկանել է Արմենիան Քափր Փրոգրամ ՓԲԸ-ին, սակայն հետագայում այն շահագործում է Թեղուտ ՓԲԸ, մինչդեռ այս փոփոխությունը որևէ կերպ ամրագրված է չէ նշված օրենքում: Այս դրությունը հարկ է փոխել՝ գնահատելով ընկերությունների ցանկում փոփոխություն կատարելու առավել ճկուն մեթոդ (օր.՝ կառավարության որոշում) կիրառելու հնարավորությունը:

Հարկ է նկատել, որ 2017 թվականին շրջանառվել են նշված օրենքի և զուգահեռ նաև կառավարության որոշումների նախագծեր, որոնցով փորձ է արվել ցանկը որոշելու լիազորությունը փոխանցել կառավարությանը¹²:

Երկրորդ փուլը այն գործընթացն է, որի միջոցով Խամայնքները ներկայացնում են իրենց ծրագրերը պետական բյուջեում ներառելու համար: Այդուհանդերձ, Խամայնքների իրավունքի հիմքը հստակ չէ: Ի պատասխան պարզաբանում տալու խնդրանքի՝ ԲՊՆ-ը գրավոր հայտնել է, որ «ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկերից մասհանումներ կատարվում և

¹¹ 7 ընկերություն ներկայումս արդյունահանում են իրականացնում մետաղական հանքերում. մեկ ընկերությունը (Լիդիան Արմենիա) շինարարության փուլում է, իսկ Հայաստանի պղնձի ծրագիր ընկերությունը չունի ընդերքօգտագործման թույլտվություն: շահագործում է Ալավերդիի ծովարանը, որը ըստ էության ունի ազդագիր Խամայնքների վրա ազդեցություն: Հստակ չէ, թե նշված օրենքում Արմենիան Քափր Փրոգրամ ՓԲԸ ներառվել է որպես Թեղուտ հանքի շահագործող, թե իբրև Ալավերդիի ծովարանի օպեկատոր:

¹² ՀՀ բնապահպանության նախարարության կողմից մշակվել և 2017 թվականի մայիսի 3-ին արդարադատության նախարարության իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական www.e-draft.am կայքում տեղադրվել է «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվում է, որ Խամայնքների տարածքում շրջակա միջավայրի վրա իրենց գործունեությամբ վնասակար ազդեցություն թողնող ընկերությունների ցանկը, ինչպես նաև մասհանումներ ստացող ազդակիր Խամայնքների (բնակավայրերի) որոշման և միևնույն ընկերության գործունեության հետևանքով վնասակար ազդեցության ենթարկվող մեկից ավելի Խամայնքների (բնակավայրերի) միջև օրենքով սահմանված մասհանումների գումարների բաշխման համամասնությունների հաշվարկման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Հետևաբար, նոր հանքերի ի հայտ գալու կամ հանքի սեփականատերերի կազմում փոփոխության պարագայում համապատասխան իրավական ակտում փոփոխություն կատարելը երկար ժամանակ չի պահանջի: Օրենքի նախագիծն զուգահեռ ներկայացված են «Խամայնքների տարածքում իրենց գործունեությամբ շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցություն թողնող ընկերությունների ցանկը սահմանելու մասին» և «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկերի նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով մասհանումներ ստացող ազդակիր Խամայնքների որոշման և միևնույն ընկերության գործունեության հետևանքով վնասակար ազդեցության ենթարկվող մեկից ավելի Խամայնքների միջև սույն օրենքով սահմանված մասհանումների գումարների բաշխման համամասնությունների որոշման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծերը: «Խամայնքների տարածքում իրենց գործունեությամբ շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցություն թողնող ընկերությունների ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծում, բացի «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով սահմանված ցանկում ներառված ընկերություններից, ընդգրկված են նաև «Թեղուտ», «Լիդիան Արմենիա», ՓԲԸ-ները, «Կավաշեն» ՍՊԸ-ն և այլ ընկերություններ: Նախագիծերը ներկայումս գտնվում են լրամշակման փուլում:

առանձին տողով արտացոլվում են այն համայնքների բյուջեներում, որոնց տարածքում նշված ընկերությունների գործունեությունը շրջակա միջավայրի վրա թողնում է վնասակար ազդեցություն»¹³:

Այսպիսով, պարզ չէ՝ արդյոք յուրաքանչյուր հանքի մասով իրավունք ունեցող համայնքների ցանկի հիմքում ընկած է ՇՄԱԳ-ում նշված ազդակիր համայնքների ցանկը թե ոչ, կամ արդյոք ԲՊՆ-ը որևէ այլ ցանկ կազմում է թե ոչ: ԲՊՆ-ից ստացված գրության մեջ թվարկված են այն համայնքները, որոնք գումարներ են ստացել 2016 և 2017 թվականներին: Այս տեղեկատվությունը հրապարակային հասանելի է տարեկան բյուջեի կազմման գործընթացում: 2017 թվականի համար, օրինակ, համայնքների և ծրագրերի ցանկը սահմանված է 2017թ. պետական բյուջեի մասին օրենքի հավելված 5-ում, որտեղ ներառված են 8 համայնքներ Լոռու մարզից, 3 համայնք՝ Սյունիքից, և 3-ը՝ Տավուշից: Գեղարքունիքից, որտեղ գտնվում է Սոթքի հանքավայրը (որը շահագործում է ԳեոՊրոՄայնինգ Գոլդը) որևէ համայնք ընդգրկված չէ: ԲՊՆ-ը պնդում է, որ չի եղել որևէ դեպք, որ համայնքները դիմած լինեն և չընդգրկվեն:

Համաձայն Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին ՀՀ օրենքի 3 հոդվածի ծրագրի նախագիծը մշակվում է համայնքի ղեկավարի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված տվյալ մարզի կամ համայնքի զարգացման (սոցիալ-տնտեսական զարգացման) կամ շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների ծրագրերի կամ այլ ծրագրային կամ ռազմավարական նշանակության փաստաթղթերի հիման վրա: Ծրագիրը հրապարակում է համայնքի ղեկավարը, որոնց վերաբերյալ հրապարակումից տասնհինգօրյա ժամկետում համայնքի ղեկավարին գրավոր առաջարկություններ կարող են ներկայացնել իրավաբանական և ֆիզիկական անձինք: Նախատեսվող միջոցառումների իրականացման առաջնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները համաձայնեցվում են բնապահպանության և առողջապահության բնագավառներում լիազորված պետական մարմինների հետ: Միմիայն համաձայնեցված ծրագրերն է համայնքի ղեկավարը ներկայացնում համայնքի ավագանու հաստատմանը:

Անհրաժեշտ է ծրագրերի ընտրության, ստացված առաջարկները մերժելու, ընտրված ծրագրերի իրականացման գործընթացը դարձնել հնարավորինս հրապարակային: Համայնքի ղեկավարը պետք է հրապարակի ծրագրերի հետ կապված երրորդ անձանցից ստացված գրավոր առաջարկությունները, ներկայացնի դրանք նաև լիազոր մարմիններին, ինչպես նաև հրապարակի երրորդ անձանցից ստացված ծրագրերի առաջարկները մերժելու հիմքերը և հրապարակային դարձնի հաստատված ծրագրերի իրականացման գործընթացը, մասնավորապես ներգրավված կազմակերպությունների ցանկը, դրանց իրական շահառուները, ընտրության կարգը և այլն: Մինչդեռ այս պահին գործող հրապարակայնության դաշտը ավելի սահմանափակ է¹⁴:

Հստակ չէ նաև, թե ինչպես են կայացվում յուրաքանչյուր համայնքին տրվող դոտացիայի չափի վերաբերյալ որոշումները: 2017 թվականին ամենամեծ գումարը կազմել է 30,051,000 ՀՀ դրամ (Հազվի), իսկ ամենափոքր գումարը՝ 509,800 ՀՀ դրամ (Կողբ):

- Որոշումների հիմքում կարող են ընկած լինել տարբեր չափանիշներ, օրինակ՝
- տվյալ համայնքում՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության ծանրությունը
 - համայնքի բնակչության համեմատական մեծությունը:

Ընտրության գործընթացի երկրորդ փուլն ունի որոշակի, թեև չամրագրված, հիմնավորում: Այն հանգամանքը, որ իրավունք ունեցող յուրաքանչյուր համայնքին լրացուցիչ գումար տրամադրելու

¹³ ԲՊՆ նամակը ՀԱՀ ՊՀԿ-ին՝ թվագրված 2017թ.-ի նոյեմբերի 21-ով:

¹⁴ ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի N 197-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի՝ մինչև ծրագրի նախագծային փաստաթղթերի հաստատումը՝ համապատասխան մարմինը 15 օրվա ընթացքում իրազեկում է հասարակությանը՝

- զանգվածային լրատվության (այդ թվում էլեկտրոնային) միջոցներով (տեղական և հանրապետական ռադիո, հեռուստատեսություն, լրագիր)։
- ծրագրերի և նախագծերի ցուցադրման միջոցառումներով, հրապարակումներով, ինտերնետային կայքերում տեղադրմամբ։
- հասարակական քննարկումներով։

փոխարեն, որը տվյալ համայնքը կարող է օգտագործել իր ցանկությամբ, համայնքների ղեկավարներից պահանջվում է ներկայացնել ծրագրեր, ապահովում է, որ դոտացիաներն օգտագործվեն բացառապես բնապահպանական կամ մեղմացման միջոցառումների համար: Բայցևայնպես, սա ունի նաև ոչ այնքան ցանկալի հետևանքներ: Նախ՝ անգործունյա ղեկավար ունեցող անհաջող ծրագրեր ներկայացրած համայնքների բնակիչները հայտնվում են դատարկածեռն վիճակում: Եվ երկրորդ՝ բնապահպանական վճարներից ստացված ոչ բոլոր եկամուտներն են օգտագործվում բնապահպանական ծրագրերի իրականացման համար:

Ամփոփելով վերն ասվածը՝ կարելի է ասել, որ առկա են հետևյալ թերությունները.

- չկան «ազդակիր համայնք» որոշելու կանոններ կամ ուղենիշներ,
- իրավունք ունեցող համայնքների ցանկը 2001թ.-ի օրենքում չկա,
- չկա որևէ դրույթ, որը կապահովի պետության ստացած և 2001թ. օրենքով նախատեսված բնապահպանական վճարների ընդհանուր գումարի ծախսումը բնապահպանական ծրագրերի վրա,
- չկա որևէ հանրամատչելի չափանիշ՝ կապված յուրաքանչյուր համայնքին տրվող դոտացիաների չափի հետ:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Դիտարկել ֆինանսավորման այլընտրանքային սխեմաներ ունենալու տարբերակը.

- իրավունք ունեցող համայնքների ամբողջական ցանկի ապահովում, որտեղ կնշվի բնապահպանական վճարների ընդհանուր գումարի բաշխվածությունը (որը կարելի է արտահայտել նախորդ ֆինանսական տարվա ընթացքում հավաքագրված վճարների ընդհանուր կազմում տվյալ համայնքի տոկոսային մասնաբաժնով - տոկոսը կարող է հաշվարկվել մի բանաձևով, որտեղ հաշվի կառնվեն համայնքի բնակչության թիվն ու շրջակա միջավայրի ազդեցության ենթակա լինելու աստիճանը)
- նախատեսել, որ յուրաքանչյուր իրավունք ունեցող համայնք իրավունքի ունի մասնաբաժին ստանալու տրամադրված դոտացիաներից, պայմանով, որ տվյալ համայնքը ներկայացնի ծրագրի առաջարկ, սակայն եթե տվյալ տարում այն համայնքը չի ներկայացնում ծրագրի առաջարկ, ապա այդ իրավունքը (այդ ծավալով) փոխանցվում է հաջորդ տարի:

7. Համայնքի սոցիալ-տնտեսական ոլորտում ընդերքօգտագործողի ստանձնած պարտավորությունների վերահսկողության իրավական հիմքերի և ինստիտուցիոնալ կարողությունների գնահատում

Հայաստանում սոցիալական և տնտեսական ծախսերի մասով տեղեկատվության առկայության հարցն ունի երկու կողմ: Նախ՝ պայմանագրով կամ օրենքով սահմանված է սոցիալական և տնտեսական ծախսեր կատարելու պահանջ, և երկրորդ՝ կա նաև ընդերքօգտագործող ընկերությունների կողմից կամ նրանց անունից լրացուցիչ կամավոր սոցիալական ծախսերի կատարման պրակտիկա:

ՀՀ ԸՕ շրջանակներում ՀՀ կառավարության կողմից սահմանված պայմանագրի օրինակելի ձևում նախատեսվում է, որ արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործողը պետք է ամրագրի համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման մասով իր պարտականությունները: Պայմանագրի օրինակելի ձևի 3-րդ հավելվածում ներկայացված են այն գործողությունները, որոնք ընկերությունը պետք է իրականացնի՝ նշելով վերջնաժամկետներն ու ներդրվող գումարի չափը¹⁵: Այդուամենայնիվ, քանի որ պայմանագիրը հրապարակային փաստաթուղթ չէ, ո՛չ ազդակիր համայնքը, ո՛չ էլ քաղաքացիական հասարակությունը տեղեկացված չեն ընկերության ստանձնած պարտավորություններից: ՀՀ ԷԵԲՊՆ-ը ևս չի իրականացնում 3-րդ հավելվածով ընկերության ստանձնած պարտավորությունների կատարման մոնիթորինգ: Բնապահպանական և ընդերքի տեսչական մարմինը (այսուհետ՝ Տեսչական մարմին), որը ստեղծվել է ՀՀ կառավարության 2017թ.-ի ապրիլի 27-ի N 445-Ն որոշմամբ՝ ՀՀ ԷԵԲՊՆ ընդերքի տեսչության և ՀՀ ԲՆ բնապահպանական տեսչության միավորման արդյունքում, կոչված է, մասնավորապես, ապահովելու, որպեսզի երկրաբանական ու արդյունահանման աշխատանքներն իրականացվեն տնտեսվարողի և ՀՀ ԷԵԲՊՆ միջև կնքված պայմանագրերին, ինչպես նաև երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրերին և արդյունահանման նախագծերին համապատասխան: ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 19-ի N 1343-Ն որոշմամբ հաստատվել են ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից անցկացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը: Սակայն պետք է արձանագրել, որ առայսօր Ընդերքօգտագործման պայմանագրով նախատեսված սոցիալական ծախսերի կատարման ստուգումը չի կազմել տեսչության իրավասության մաս: Մինչդեռ, ԱՃԹՆ ստանդարտի համաձայն այն դեպքերում, երբ ընկերությունների կողմից կատարվող էական սոցիալական ծախսերը պահանջվում են օրենսդրությամբ կամ կառավարության հետ կնքված այնպիսի պայմանագրով, որով կարգավորվում է արդյունահանող ոլորտում ներդրումները, իրականացնող պետությունները պետք է բացահայտեն և հնարավորության դեպքում համաձայնեցնեն այդ գործարքները: Երբ այդ օգուտները տրամադրվում են բնափրային տեսքով, իրականացնող պետություններից պահանջվում է այդ բնափրային գործարքի բնույթի և ենթադրյալ արժեքի բացահայտում: Այն դեպքում, երբ սահմանված սոցիալական ծախսի շահառուն երրորդ կողմ է, այսինքն՝ կառավարության գործակալություն չէ, պահանջվում է շահառուի անվանման և գործառույթների բացահայտում:

Տեսչական մարմնի լիազորությունները սահմանվում են Տեսչական մարմինների մասին ՀՀ օրենքով, Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենքով, Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքով, այլ օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով: Տեսչական մարմինը իր գործունեությունը իրականացնում է ՀՀ օրենսդրության և իր Կանոնադրությանը համապատասխան:

¹⁵ 2012 թվականի մարտի 22-ի N. 437 որոշումը, որը սահմանում է մոդելային պայմանագրի ձևը, չի նախատեսում որևէ պահանջ, թե ինչպես պետք է լրացվի պայմանագրի հավելված 4-ը: Գործնականում, որոշ ընկերություններ իրենց պարտականությունները սահմանել են ոչ հստակ կերպով, այն է՝ ասենք վճարել 2-3 ուսանողի վարձը, առավել դժվարեցնելով այդ պարտականությունների կատարման նկատմամբ հսկողության իրականացումը: Առանձին դեպքերում, նախատեսված չեն շահառուների ընտրության մեթոդաբանությունը, ասենք՝ արդյոք ուսանողները պետք է ընտրվեն թափանցիկ և բաց մրցույթի միջոցով: Պետք է պահանջել, որպեսզի ընկերությունները ինչքան հնարավոր է հստակ սահմանեն իրենց պարտավորությունների էությունը և կատարման կարգն ու պայմանները:տտ.

Տեսչական մարմնի լիազորությունները կարելի է տարանջատել հետևյալ երկու հիմնական ուղղությունների՝

1. Վերահսկողություն և
2. Պատասխանատվության միջոցների կիրառում:

Հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից՝ Տեսչական մարմինը վերահսկողության և պատասխանատվության միջոցների կիրառումը իրականացնում է հետևյալ ոլորտների նկատմամբ՝

- շրջակա միջավայրի պահպանություն,
- բնական ռեսուրսների օգտագործում և վերարտադրություն և
- ընդերքօգտագործում:

Տեսչական մարմնի գործունեության հիմնական խնդիրներն են՝

1. Բնապահպանության և ընդերքօգտագործման ոլորտներում ռիսկերի կառավարումը և ՀՀ օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը,
2. Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների, բնական ռեսուրսների ոչ բանական օգտագործման կանխարգելիչ կամ նվազեցման միջոցառումների իրականացման վերաբերյալ վերահսկողության ապահովումը Երկրաբանական լիակատար և համալիր ուսումնասիրության հիման վրա ընդերքի կառուցվածքի, դրանում պարունակվող օգտակար հանածոների քանակի, որակի և այլ հատկությունների վերաբերյալ հավաստի տեղեկատվության ապահովումը:

Վերոնշյալ երեք խնդիրներն իրականացնելու նպատակով Տեսչական մարմինը, համաձայն իր Կանոնադրությանը և ՀՀ օրենսդրության, իրականացնում է վերահսկողություն հետևյալ ոլորտներում՝

1. Մթնոլորտային օդի պահպանություն,
2. Զրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն,
3. Հողերի օգտագործում և պահպանություն,
4. Ընդերքօգտագործում և պահպանություն,
5. Կենդանական և բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն,
6. Վտանգավոր նյութեր, արտադրության և սպառման թափոններ,
7. Փորձաքննության ենթարկված փաստաթղթերով ամրագրված պահանջների և միջոցառումների ապահովում և կատարում,
8. Բնապահպանական և բնօգտագործման վճարներ,
9. Վարչական վիճակագրություն:

Առկա խնդիրների վերլուծություն

Այսպիսով, ինչպես ամրագրված է Տեսչական մարմնի Կանոնադրությունում, վերջինս իրականացնում է վերահսկողություն ընդերքօգտագործման ոլորտի նկատմամբ, մասնավորապես ընդերքօգտագործման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ:

Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 54-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագիրը պետք է նախատեսի դրույթներ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների չափի և կատարման ժամկետների վերաբերյալ, որոնք ամրագրվում են ընդերքօգտագործման պայմանագրում: Մասնավորապես, համաձայն ՀՀ Կառավարության կողմից 2012թ. մարտի 2-ին ընդունված N 437-Ն որոշման, ընդերքօգտագործման պայմանագրի օրինակելի ձևը պետք է ունենա թվով չորս հավելված, որոնցից երրորդը վերաբերում է համայնքի սոցիալ-տնտեսական ոլորտում ընդերքօգտագործողի ստանձնած պարտավորություններին: Հավելվածում պետք է ամրագրվի հետևյալը՝

- Պարտավորությունների անվանումը,

- Պարտավորությունների կատարման ժամկետը,
- Ընդերքօգտագործողի կողմից համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում կատարվող ներդրումների չափը:

Նշենք, որ համաձայն Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործումը, առանց սահմանված կարգով պետական փորձաքննությունների ենթարկված նախագծի, արգելվում է: Իսկ ընդերքօգտագործման նախագիծը, համաձայն Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի նույն հոդվածի, պետք է ներառի ընդերքօգտագործման նախագծի սոցիալական ազդեցության գնահատականը, որն իր հերթին պետք է ընդգրկի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացի մասնակցության ապահովման երաշխիքներ:

Այսպիսով՝ համայնքի սոցիալ-տնտեսական ոլորտում ընդերքօգտագործողների պարտավորությունների պահանջը սահմանված է Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքով և ամրագրվում է պետության և ընդերքօգտագործողի միջև կնքվող պայմանագրի դրույթներում: Այստեղից հետևում է, որ Տեսչական մարմինը, ի լրումն իր բազմաթիվ գործառույթների, պետք է իրականացնի վերահսկողություն և պատասխանատվության միջոցների կիրառում համայնքում ընդերքօգտագործողի կողմից ստանձնած սոցիալ-տնտեսական պարտավորությունների պատշաճ կատարման նկատմամբ:

Ընդերքի պետական տեսչությունը նախկինում նման գործառույթ չի իրականացրել: Ներկայիս վերակազմավորված Տեսչական մարմնի լիազորությունների շրջանակում ներառված է պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողություն, սակայն փաստացի հաստիքացուցակով ներկայիս Ընդերքի վերահսկողության վարչությունում համապատասխան մասնագետի հաստիք ներառված չէ: Հաստիքացուցակով նախատեսված է հինգ ավագ տեսուչի և 3 տեսուչի աշխատանքային հաստիք: Ինչպես ավագ տեսուչի, այնպես էլ տեսուչի պարտավորությունների և գործառույթների ցանկում պայմանագրային պարտավորությունների մասով ներառված չէ համայնքի սոցիալ-տնտեսական ոլորտում ընդերքօգտագործողի ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման վերահսկողության գործառույթը:

Առաջարկություններ

Ելնելով վերոնշյալից՝ առաջարկում են հետևյալը.

- Վերանայել Տեսչական մարմնի ներկայիս հաստիքացուցակը և, անհրաժեշտության դեպքում, ավելացնել համայնքի սոցիալ-տնտեսական ոլորտում ընդերքօգտագործողի՝ պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտավորությունների կատարման վերահսկողության համար պատասխանատու մասնագետի կամ տեսուչի հաստիք:
- Եթե Տեսչական մարմնի Ընդերքի վարչության ներկայիս կարողությունները բավարարում են համայնքի սոցիալ-տնտեսական ոլորտում ընդերքօգտագործողի՝ պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտավորությունների կատարման վերահսկողություն իրականացնելու համար, ապա՝ ավելացնել նման գործառույթի կատարման պարտավորություն համապատասխան պաշտոնի անձնագրում:
- Մշակել համայնքի սոցիալ-տնտեսական ոլորտում ընդերքօգտագործողի՝ պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտավորությունների վերահսկման մեթոդաբանություն:
- Ներառել վերահսկողության արդյունքները Տեսչական մարմնի կողմից հրապարակման ենթակա տեղեկատվության մեջ:
- Կարողությունների բացի, ինչպես նաև նոր հաստիքի ֆինանսավորման անհրաժեշտության դեպքում տեղեկացնել լիազոր մարմնին:

8. Իրական շահառուների բացահայտում

Փողերի վաճառման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ օրենքը (ՓԼ/ԱՖ Օրենք) սահմանում է «իրական շահառու» հասկացությունը: Ընդ որում, ՓԼ/ԱՖ Օրենքով տրված սահմանումը ընդգրկում է, ներառում է որակյալ ազդեցության և/կամ հսկողության գրեթե ցանկացած դրսևորում: Այնուհետև, ՓԼ/ԱՖ Օրենքով շարադրված են իրական շահառուի բացահայտման մասնավոր դեպքեր:

Համաձայն Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին ՀՀ օրենքի 40 հոդվածի (այսուհետև՝ Իրավաբանական Անձանց Պետական Գրանցման Օրենք) Հայաստանի Հանրապետությունում սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասնակիցների վերաբերյալ տեղեկությունների գրանցումը ապահովում են ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը (այսուհետև՝ Գործակալություն): Նույն հոդվածը սահմանում է, որ Գործակալությունը չի վարում բաժնետիրական ընկերությունների ռեեստր: Համաձայն Արժեթղթերի շուկայի մասին օրենքի 175 և 176 հոդվածների, Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի 51 հոդվածի և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի 5/10 կանոնակարգի բաժնետոմսերի պահառությունը և դրան հարակից թողարկող ընկերությունների ռեեստրների վարումը իրականացնում է Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա բաց բաժնետիրական ընկերությունը (այսուհետև՝ Կենտրոնական Դեպոզիտարիա): Կենտրոնական Դեպոզիտարիան վարում է արժեթղթերի սեփականատերերի և անվանատերերի տվյալների ռեեստրը, ինչպես նաև պահպանում է վերջիններին պատկանող արժեթղթերի քանակի, տեսակի և դասի վերաբերյալ տեղեկատվություն՝ համաձայն թողարկողի հետ կնքած պայմանագրի: Կենտրոնական Դեպոզիտարիան և Գործակալությունը համաձայն ՓԼ/ԱՖ Օրենքի 3 հոդվածի հաշվետվություն տրամադրող անձինք են:

Սահմանափակ պատասխանատվության ընկերությունների դեպքում բաժնեմասերի սեփականատերերի գրանցումը իրականացնում է մեկ մարմին՝ Գործակալությունը: Բաժնետոմսերի հետ կապված կորպորատիվ գործողությունների և օտարման գործարքների գրանցման գործառույթը, թեև վերապահված է Կենտրոնական Դեպոզիտարիային, սակայն, ըստ էության, այն իրականացվում է մի շարք կազմակերպությունների՝ բանկերի և ներդրումային ընկերությունների կողմից, որոնք գործում են տարբեր կանոններով և իրենց գործարար հարաբերություններում պահանջում տարբեր ծավալի փաստաթղթեր:

Հաշվի առնելով ՓԼ/ԱՖ Օրենքի 3 հոդվածում տրված «իրական շահառու» եզրույթի պարզաբանումը՝ իրական շահառուին բացահայտելու նպատակով անհրաժեշտ է նախևառաջ պարզել բաժնետերերի կամ բաժնեմասերի սեփականատերերի կազմը և ուսումնասիրել ընկերության կառավարման մարմինների իրավասությունը: Այդ պատճառով տրամաբանական է ուսումնասիրել ընկերությունների տնօրենների խորհրդի ձևավորման կարգը և իրավասությունները, բաժնետերերի միջև կնքված համաձայնագրերը, որոնք կսահմանեն առանձին հարցերի վերաբերյալ բաժնետերերի կողմից քվեարկության որոշակի կարգ, ոչ կորպորատիվ ներդրումային ֆոնդերի դեպքում պետք է ուսումնասիրել ֆոնդերի կանոնները փայտատերերի իրավասությունների շրջանակը պարզելու նպատակով և այլն:

Երբեմն, գործարարների կողմից ընտրվում են ընկերության սեփականության խճճված սխեմաներ, ինչը խնդրահարույց է դարձնում հաշվետվություն տրամադրող անձանց համար իրական շահառուի բացահայտումը: Ընկերության տնօրենը չի կարողանում փաստաթղթային հիմքով տրամադրել շղթայի հաջորդական իրավաբանական անձանց իրական շահառուներին: Ավելին, մայր իրավաբանական անձը կարող է գրանցված լինել օֆշորում: Կենտրոնական բանկի կայքում «հաճախակի տրվող հարցեր» բաժնում Կենտրոնական բանկը պատասխանում է, թե ինչպես պետք

է վարվեն հաշվետվություն տրամադրող անձինք, երբ առկա է իրավաբանական անձանց «անվերջանալի շրջա»¹⁶: Կենտրոնական բանկը սահմանում է, որ նախ պետք է պարզել ընկերությունների կանոնադրական կապիտալում իրենց մասնակցության ուժով հսկողություն իրականացնող անձանց՝ ընկերության բաժնետերերին: Ապա, եթե պարզվեց, որ չկան այդպիսի բաժնետերեր կամ կան կասկածներ, որ այլ ֆիզիկական անձինք են հսկողություն իրականացնում տվյալ իրավաբանական անձի նկատմամբ, հաշվետվություն տրամադրող անձը պետք է բացահայտի այդ ֆիզիկական անձանց, որոնք բաժնետեր չեն, սակայն իրականացնում են իրավաբանական անձի նկատմամբ հսկողություն: Եթե առաջին երկու դեպքերում որևէ ֆիզիկական անձի հնարավոր չէ բացահայտել, ապա պետք է անդրադառնալ տվյալ ընկերության ավագ ղեկավար պաշտոններ ունեցող ֆիզիկական անձանց:

Ավագ ղեկավար պաշտոններ ունեցող անձինք ընկերությունների տնօրենների խորհուրդների և գործադիր մարմինների անդամներն են, որոնք պատասխանատու են ռազմավարական որոշումների համար, արձանատու և ազդեցություն ունեն բիզնեսի կամ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր ուղղության վրա կամ ֆիզիկական անձ/անձինք, ովքեր ղեկավար պաշտոն զբաղեցնելու միջոցով գործառնական հսկողություն են իրականացնում իրավաբանական անձի ամենօրյա կամ կանոնավոր գործունեության նկատմամբ:

ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Վերը նշված քայլերով իրական շահառուին բացահայտելիս հանդիպում ենք հետևյալ խոչընդոտների և/կամ առաջանում է որոշակի հիմնահարցերի պարզաբանման անհրաժեշտություն:

1. Եթե կիրառվել են ընկերությունների հիմնադրման բարդ սխեմաներ, ՀՀ օրենսդրությունը բոլոր դեպքերում չի պահանջում ընկերության լիազոր ներկայացուցչին փաստաթղթային հիմքով ապացուցել և բացահայտել ընկերության սեփականատերերի շրջան: Հաշվետվություն տրամադրող ներդրումային ընկերությունները կարող են բավարարվել ընկերության լիազոր ներկայացուցչի կողմից ներկայացրած հայտարարությամբ: Վերջինս նախազգուշացվում է իր կողմից կեղծ տեղեկատվություն ներկայացնելու դեպքում հնարավոր իրավական հետևանքների մասին:
2. ՓԼ/ԱՖ Օրենքը պարտավորեցնում է Կենտրոնական Դեպոզիտարիային և վերջինիս անունից հանդես եկող բանկերին ու ներդրումային ընկերություններին իբրև հաշվետվություն տրամադրող անձանց պարզել և նույնականացնել իրական շահառու հանդիսացող անձին: Սակայն, լինում են դեպքեր, երբ Ընկերության տնօրենը բացահայտում է իրական շահառուին, սակայն չունի հնարավորություն ներկայացնել նրա անձը հաստատող որևէ փաստաթուղթ, ինչը դժվարություններ է առաջացնում իրական շահառուին նույնականացնելիս: Նման պարագայում առկա են հակասություններ ՓԼ/ԱՖ Օրենքի և Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքների միջև: ՓԼ/ԱՖ Օրենքի 27 հոդվածի 1 և 2 կետերը պահանջում են դադարեցնել գործարար հարաբերությունը, տվյալ դեպքում դադարեցնել ռեեստրի վարման պայմանագիրը կամ բաժնետոմսերի պահառությունը, սակայն մյուս կողմից Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի 6 գլուխը պարտադիր է համարում նման պայմանագրերի առկայությունը և չի տալիս հնարավորություն այդ պայմանագրերը դադարեցնել:
3. Անձին նույնականացնելիս պետք է մատնանշել հաշվառման(առկայության դեպքում) և բնակության վայրը: Այստեղ ևս ՀՀ օրենսդրությամբ սահմանված չեն որևէ հստակ պահանջներ և հաշվետվություն տրամադրող անձինք բավարարվում են այդ կապակցությամբ ընկերության տնօրենի կողմից արված հայտարարությամբ: Մինչդեռ արտասահմանյան որոշ երկրներում (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա և այլն) պահանջվում են ներկայացնել տվյալ անձի կողմից կոմունալ ծառայությունների դիմաց կատարված վճարումների անդորրագրեր, որտեղ մատնանշված կլինի բնակության վայրը կամ բանկերի կողմից տվյալ հասցեով ուղարկված քաղվածքներ:

¹⁶ <https://www.cba.am/am/SitePages/fmchelporganizations.aspx>

Կայքը այցելել եմ 10.10.2017 դրությամբ

4. Բացակայում է Կենտրոնական Դեպոզիտարիայի անունից հանդես եկող կազմակերպությունների միջև բաժնետոմսերի օտարման, ընկերությունների ռեեստրի վարման, բաժնետոմսերի պահառության, արժեթղթերի հաշիվների բացման ժամանակ իրական շահառուի բացահայտման նպատակով պահանջվող փաստաթղթերի շրջանակի վերաբերյալ ունիֆիկացված մոտեցում: Ներդրումային որոշ ընկերություններ իրենց կանոններով պահանջում են, որ պետական գրանցման ենթակա որևէ փաստաթուղթ ներկայացվի միմիայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված պետական գրանցում ստանալուց հետո: Կենտրոնական դեպոզիտարիան նման պահանջ չի սահմանել Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության իր կանոններում: Ստացվում է, որ նույն գործառույթը իրականացնող մարմինները կարող են ներկայացնել տարբեր պահանջներ ընկերությունների նկատմամբ: Նմանապես, հաշվետվություն տրամադրող անձինք կարող են չունենալ իրական շահառու եզրույթի նկատմամբ միասնական մոտեցում: Այսպես, Ընկերության բաժնետերը հանդիսանում է բարեգործական հիմնադրամ և առաջանում է անհրաժեշտություն որոշելու բարեգործական հիմնադրամի իրական շահառուին: Արմենբրոկ ԲԲ ներդրումային ընկերությունը, ներքին աուդիտի պատասխանատուի վկայությամբ իբրև իրական շահառու դիտարկում է տվյալ հիմնադրամի կառավարման համար պատասխանատու անձին, այլ կերպ ասած՝ իրական շահառու կարող են լինել ինչպես նրանք, ովքեր օգտվում են ընկերության գործունեությունից, այնպես էլ նրանք, ովքեր պատասխանատու են ընկերության կառավարման համար:
5. Իրական շահառուի բացահայտմանն ուղղված մշտական մոնիթորինգի բովանդակությունը տարբեր է Գործակալության և Կենտրոնական Դեպոզիտարիայի դեպքում: Իրավաբանական Անձանց Պետական Գրանցման Օրենքի 66 հոդվածը սահմանում է այն դեպքերը, երբ իրավաբանական անձը ՓԼ/ԱՖ Օրենքով սահմանված կարգով պարտավոր է Գործակալություն ներկայացնել իրավաբանական անձի իրական շահառուի մասին հայտարարություն: Սպառիչ ցանկը ներառում է իրավաբանական անձանց պետական գրանցումը, կանոնադրական կապիտալի կամ մասնակիցների կազմի փոփոխումը: ՓԼ/ԱՖ Օրենքի 17 հոդվածի 2 կետի համաձայն Կենտրոնական դեպոզիտարիան պետք է իր սահմանած հաճախականությամբ թարմացնի հաճախորդի պատշաճ (այդ թվում հավելյալ կամ պարզեցված) ուսումնասիրության շրջանակում հավաքագրված տեղեկությունները՝ դրա արդիականության ու վերաբերելիության հարցում հավաստիանալու նպատակով: Հաճախորդի նույնականացման և ինքնության ստուգման արդյունքում ձեռք բերված տեղեկությունների թարմացման համար սահմանված հաճախականությունը պետք է լինի ոչ պակաս, քան տարին մեկ անգամ:
6. Հրապարակային և ոչ հրապարակային ոչ կորպորատիվ ներդրումային ֆոնդերի իրական շահառուների բացահայտումը: Տվյալ դեպքում «խաղացողները» երեքն են՝ ֆոնդի փայտերեր, կառավարիչ ընկերության բաժնետերեր և կառավարիչ ընկերության կառավարման համար պատասխանատու անձինք՝ տնօրեն, գործադիր մարմին, տնօրենների խորհուրդ: Կառավարիչ ընկերությունը ստանում է կառավարման պարզակազմար զուտ ակտիվների և/կամ դրանց աճի նկատմամբ կիրառվող որոշակի տոկոսի տեսքով: Փայտերերը ևս ուղղակիորեն շահում են զուտ ակտիվների աճից, քանի որ բարձրանում է իրենց փայտերի արժեքը: Փայտերը քվազի բաժնետեր է և ֆոնդի կանոններով որոշակի լիազորություններ տրված են փայտերերին, մասնավորապես, նրանք պետք է հավանություն տան ֆոնդի կանոններում կատարվող փոփոխություններին: Գերակշռող մոտեցումը ոչ կորպորատիվ պայմանագրային ֆոնդի իրական շահառու կառավարիչ ընկերության բաժնետերերին դիտարկելն է, ինչը վիճելի է, հաշվի առնելով, որ փայտերերին առանձին դեպքերում կարող են տրվել իրական լծակներ, և յուրաքանչյուր դեպքում պետք է ուսումնասիրել նաև ֆոնդի կանոնները:
7. Տնօրենների խորհրդի կազմի վերաբերյալ տեղեկատվական բազայի բացակայությունը: Կանոնադրությունները հստակ սահմանում են խորհուրդների ձևավորում, իսկ 50 և ավելի բաժնետեր ունենալու դեպքում խորհուրդների կազմավորումը պարտադիր է: Բաց բաժնետիրական ընկերությունների՝ ՀՀ-ում լայն տարածքում գտած տիպային կանոնադրության օրինակում խորհուրդների ընտրություններ նախատեսված է իրականացնել յուրաքանչյուր տարի, մինչդեռ այս պահանջը ոչ միշտ է պահպանվում:

Ստացվում է, որ ընկերությունների կառավարման եռաստիճան համակարգի մի ամբողջ օղակ չի ենթարկվում որևէ կարգավորման:

8. ՓԼ/ԱՖ Օրենքը բաժնետերերի կազմը բացահայտելու բացառություն սահմանում է միայն հաշվետու թողարկողների դեպքում: Սակայն գործնականում ընկերության տնօրենը կրկին պարտավոր է լրացնել հայտարարագիր ընկերության իրական շահառուի վերաբերյալ: Ըստ տնօրենների հավաստմամբ, վերջիններս «պարտադրված» են լինում նշել իրենց անունը: Ուստի ճիշտ կլիներ, որպեսզի հաշվետու թողարկողների դեպքում գործեր այլ իրավակարգավորում, հաշվի առնելով, որ ցուցակված ընկերությունները ենթարկվում են կորպորատիվ կառավարման կանոնակարգերի և համապատասխան կարգավորվող շուկաների կանոնների պահանջներին:
9. Բաժնետոմսերի օտարումը չի առաջացնում որևէ հարկային պարտավորություն, ինչը դյուրին է դարձնում դրաձո անձանց ներգրավումը, բազմաթիվ հաջորդական գործարքների միջոցով նրանց փոխարինումը մեկ այլ անձով:
10. Կենտրոնական Դեպոզիտարիայի անունից հանդես եկող մասնագիտացված հաշվի օպերատորների համար Գործակալության հրապարակման ենթակա տեղեկատվական բազային ծանոթանալու համար բարձր վարձավճարի սահմանումը: Կորպորատիվ գործողությունների գրանցումը իրականացվում է նախ Գործակալությունում, որտեղ գրանցվում է ընկերության կանոնադրության փոփոխությունը, որից հետո միայն օպերատորին է ներկայացվում վերջինիս կանոններով սահմանված փաստաթղթերի փաթեթը: Ընկերությունները կարող են ներկայացնել տարբեր տեղեկություններ և օպերատորներից շատերը չունեն հնարավորություն համադրելու իրենց ներկայացված փաստաթղթերը Գործակալության տեղեկատվական բազայի հետ:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Հաշվի առնելով մետաղական հանքարդյունաբերության ոլորտի առանձնահատկությունները իրական շահառուի բացահայտման նպատակով, առաջարկվում է դիտարկել հետևյալ քայլերը.

- Կիրառել արժեթղթերի շուկայի, ապահովագրության և ապահովագրական գործունեության, վարկային կազմակերպությունների, Բանկերի ու բանկային գործունեության մասին օրենքներով բանկերում, ներդրումային ընկերություններում և առհասարակ Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող այլ ընկերություններում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնության/ թույլտվության իրավակարգավորումը կամ համանման մեխանիզմ: Կենտրոնական բանկը փաստաթղթային հիմքերով է բացահայտում իրական շահառուներին, այլ ոչ թե բավարարվում ընկերության տնօրենի կողմից գրավոր արված հայտարարությամբ: Նման մոտեցումը կիրառվում է նաև օֆշորում գրանցված ընկերությունների իրական շահառուների բացահայտման դեպքում:
- Անհրաժեշտ է մանրամասնորեն ուսումնասիրել ընկերության հիմնադիր բոլոր փաստաթղթերը, մասնավորապես գործող կանոնադրությունը, բաժնետոմսերի հետ կապված կորպորատիվ գործողությունները՝ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման կարգ և պայմաններ, համախմբման կարգ, բաժնետոմսերի ձեռք բերման կարգ, բաժնետերերի միջև կնքված համաձայնություններ, ֆոնդերի կանոններ, բաժնետերերի ընդհանուր ժողովներում ընդունված որոշումներ (ասենք, դադարեցվում է խորհրդի լիազորությունները և գործառույթները բաշխվում ժողովի և տնօրենի միջև): Ի տարբերության ՌԴ բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի, ՀՀ օրենսդրությունը չի պահանջում բաժնետերերի միջև կնքված համաձայնագրերի հրապարակման որևէ մեխանիզմ: Այս փաստաթուղթը չի ներկայացվում հաշվետվություն տրամադրող անձանց, մինչդեռ դրանց ուսումնասիրումը կարող է մեծապես աջակցել իրական շահառուի բացահայտմանը: Անձը կարող է ունենալ 10 տոկոս բաժնեչափ, սակայն նման համաձայնագրի ուժով իրականում օժտված լինի վերահսկողության լայն լծակներով կամ նման համաձայնագրերը կարող են նախատեսել բաժնետոմսերի վաճառքի տարբեր սխեմաներ: Կանոնադրություններից բացի անհրաժեշտ է պարզել առկա են նման համաձայնագրեր և եթե այո, ապա դրանք ևս պետք է ներկայացվեն մասնագիտացված հաշվի օպերատորներին:
- Քսան տոկոսից ավել բաժնեչափ օտարելու դեպքում որոշակի ժամանակահատված առաջ տեղեկացնել իրավասու լիազոր մարմնին: Նման կարգավորում նախատեսվում է ՓՀԿ-երի

դեպքում: Սակայն իրավաբանական անձին բաժնեմաս կամ բաժնետոմս օտարելու դեպքում, պետք է պահանջել, որ ներկայացվի նաև վերջինիս իրական շահառուի վերաբերյալ տեղեկություն: ԷԵԲՆ նախարարության կողմից սույն ուսումնասիրության վերաբերյալ ներկայացված դիտողություններում առաջարկվեց, որպեսզի դիտարկել որևէ մեխանիզմի ընդունում, որպեսզի նախկինում ընդերքօգտագործման իրավունքի խախտում թույլ տրված իրավաբանական անձինք չեն կարող ձեռք բերել բաժնեմաս կամ բաժնետոմս կամ որևէ եղանակով մասնակցություն ունենալ ընդերքօգտագործող կազմակերպության կառավարմանը:

- Ձևավորել կենտրոնացված ռեեստր (ցանկալի է այդ գործառույթը տալ Գործակալությանը), որը կպարունակի ամփոփ տեղեկատվություն ընկերության վերաբերյալ, ներառյալ տնօրենների խորհրդի կազմի, վերջինիս նախագահի, քանակական կազմի, ընտրության կարգի, Ընկերության անշարժ և շարժական գույքի գրավադրման, լիցենզիաների, թույլտվությունների, դրանց պայմանների վերաբերյալ: Ավելին, ցանկալի է, որ Հաշվապահական հաշվառման մասին օրենքով խոշոր կազմակերպությունների կողմից հրապարակման ենթակա հաշվետվությունները ևս հանձնվեն այս ռեեստրին: Հակառակ դեպքում դրանք հրապարակվում են և անհրաժեշտ են ջանքեր գործադրել դրանք բացահայտելու համար: Պետք է սահմանել նաև խիստ տույժեր, ընդհուպ ամրագրելով օրենքով սահմանված այս պարտավորությունը իբրև տրվող լիցենզիաների, թույլտվությունների պայման, որպեսզի ընկերությունները չխուսափեն դրանք հրապարակելուց կամ անհարկի ձգձգեն դրանց հրապարակումը: Վերջապես, ներդրումային ընկերությունների և իրավաբանական գրասենյակներին պետք է տալ հնարավորություն օգտվել Գործակալության տեղեկատվական բազայից ավելի մատչելի պայմաններով: Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի կողմից ներկայացված նկատառումներում ևս կարևորվեց իրական շահառուների բացահայտման գործընթացում ՀՀ արդարադատության նախարարության (իրավաբանական անձանց պետական գրանցման գործակալություն) և իրավասու այլ մարմինների (ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն և այլն) ու կազմակերպությունների (Կենտրոնական դեպոզիտարիա) համագործակցության ձևաչափերի սահմանումը և դրանց կոնկրետացումը՝ կապված տվյալների փոխանցման հետ:
- Բաժնետոմսերի և բաժնեմասերի օտարման գործարքները բերել հարկային դաշտ, միևնույն ժամանակ յուրաքանչյուր ռեզիդենտի տրամադրել արտոնություն իր կյանքի ընթացքում որոշակի գումարի սահմաններում չվճարել իրեն պատկանող բաժնետոմսերի կամ բաժնեմասերի վաճառքից գոյացող հարկեր: Այս առնչությամբ ՀՀ կենտրոնական բանկից և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունից ստացվել են բացասական կարծիք, առ այն, որ առաջարկը հակասում է բաժնետոմսերի օտարման դաշտում ձևավորված հարկային քաղաքականությանը: Առաջարկը թողնում ենք, քանի որ արևմտյան աշխարհի երկրներում այս հարկատեսակը տարածված է և առաջարկը կարող է դառնալ քննարկման առարկա հարկային բարեփոխումների համատեքստում:
- Իրական շահառուի վերաբերյալ ակնհայտ կեղծ տվյալներ ներկայացնելը դիտարկել քրեորեն պատժելի արարք: Ընդ որում, հանցանքը համարվում է ավարտված ակնհայտ կեղծ տվյալներ ներկայացնելու պահից, անկախ նրանից առկա է արդյոք այլ հանցագործության տարրեր, թե ոչ (փողերի լվացում, ահաբեկչության ֆինանսավորում և այլն):
- Մշակել հարցաշարեր, որոնք կարող են օգնել հաշվետվություն տրամադրող անձանց բացահայտելու կամ իրավասու այլ մարմիններին ուղղորդեն դեպի իրական շահառուներ: Նման հարցաշարերը պետք է պարունակեն.

Ա. Երրորդ անձանցից ներգրավված փոխառությունների, վերջիններիս պայմանների մասին (անտոկոս, անժամկետ և այլն) հարցեր:

Բ. Մատնանշվեն տնօրենների խորհրդի կազմը: Ավելին, նշվեն այլ կազմակերպությունները, որտեղ քննարկվող ընկերության տնօրենների խորհրդի անդամը հանդիսանում է խորհրդի անդամ, անկախ անդամ, վերստուգիչ և/կամ գործադիր մարմնի անդամ:

Գ. Բ. կետում սահմանված բացահայտումը կիրառել նաև ընկերությունների տնօրենների և գործադիր մարմինների անդամների նկատմամբ:

Դ. Ընկերության կողմից կնքված վարձակալության, ենթավարձակալության, գույքի անհատույց օգտագործման պայմանագրերի հիմնական տարրերը, մասնավորապես նշելով թե ում/որ կազմակերպության հետ են կնքվել նման պայմանագրեր, վարձավճարի

առկայությունը և այլն: Փոխկապակցվածության մասին կարող է վկայել այլ կազմակերպության հետ նույն գրասենյակի կիսումը և այլն:

Ե. Հաշվապահական, ներքին աուդիտի, իրավաբանական ծառայությունները այլ, ոչ մասնագիտացված ընկերությանը աուտսորսի առկայությունը:

Զ. Առկա են արդյոք բաժնետոմսերի նկատմամբ փութ օպցիոններ (put options), բաժնետոմսերի ձեռք բերման խոստումներ, բաժնետոմսերի և ընկերությունների անշարժ և շարժական գույքի գրավադրում այլ անձանց օգտին ի ապահովում նրանց կողմից ընկերությանը տրված փոխառությունների, հատկապես եթե դրանք հանդիսանում են ֆիզիկական անձինք, որոնք չեն իրականացնում ձեռնարկատիրական գործունեություն:

Է. Արդյոք գրավադրել է ընկերությունը իր գույքը ի ապահովումն այլ կողմից կնքված փոխառությունների: Եթե այո, ապա որոնք են այդ ընկերությունները: Նմանապես, արդյոք երրորդ անձինք գրավադրել են իրենց պատկանող գույքը ի ապահովում տվյալ ընկերության կողմից կնքված փոխառությունների:

Ը. Երաշխավորություն տվել է արդյոք ընկերությունը ի ապահովումն երրորդ անձի կողմից կնքված փոխառությունների: Եթե այո, ապա որոնք են այդ ընկերությունները:

Ի. Ընկերության շրջանառության բարձր տոկոսը ընկնում է արդյոք որևէ մեկ ընկերությանը:

Դա կարող է վկայել հսկողության առկայության մասին:

Լ. Կան արդյոք բացառիկ էական պայմանագրեր, ասենք՝ հումքի մատակարարման, առանց որի հանքամշակող ընկերության գործունեությունը ենթակա է կոլապսի:

Թ. Եղել են արդյոք հարուցված վարույթներ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից, ինչը հնարավորություն կտա բացահայտելու ընդհանուր տնտեսական շահերի առկայությունը:

Ժ. Տվել է արդյոք ընկերությունը փոխառություններ երրորդ անձանց և/կամ իր բաժնետերերին: Երբ ընկերությունը ունի ամորտիզացման ենթակա գույք և մեծ գումարներ ծախսագրելու հնարավորություն, նվազում են բաժնետերերին վճարման ենթակա շահաբաժինները, չնայած որ առկա են դրամական միջոցներ: Տվյալ դեպքում կնքվում են բաժնետերերի կամ երրորդ անձի հետ փոխառության պայմանագրեր, որպեսզի դրամական միջոցները դուրս բերվեն ընկերությունից: Այդ գումարները տրվում են փոխառության տեսքով և տարիներ շարունակ մնում են չվերադարձված: Նման գործիքները կօգնեն բացահայտել իրական շահառուներին:

9. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի կողմից ընդունված աշխատակարգը սոցիալական և շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատվության մշակույթի ձևավորման խնդիր է սահմանում Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտում: Օրենսդրական և ինստիտուցիոնալ շրջանակի ուսումնասիրության և գործողությունների ծրագրի նպատակների իրականացման համար ԲՇԽ-ն հաստատել է հետևյալ կետերը՝ կապված պատասխանատու հանքարդյունաբերության հետ.

1. Քննարկել ոլորտի ազդեցությունը կայուն զարգացման վրա և թե որքանով են առկա դա գնահատելու համար անհրաժեշտ տվյալներ:
2. Վերլուծել ստորև նշված ոլորտները օրենսդրական և ինստիտուցիոնալ խոչընդոտների բացահայտման նպատակով.
 - ա) Հանքարդյունաբերական ծրագրերի տնտեսական գնահատումը՝ օգտագործելով ծախս օգուտ վերլուծության (ՇՕՎ) գործիքը
 - բ) Շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատման (ՇՄԱԳ-ի) գործընթացը (ներառյալ՝ սոցիալական ազդեցության գնահատումը)
 - գ) Շրջակա միջավայրի, համայնքներում հանրային առողջության և աշխատանքային անվտանգության մասին հաշվետվությունների ներկայացումը/մշտադիտարկումը:
3. Վերոնշյալ 3 կետերի համար (ծախսարդյունավետություն, ՇՄԱԳ գործընթաց, շրջակա միջավայրի, համայնքներում հանրային առողջության և աշխատանքային անվտանգության մասին հաշվետվությունների ներկայացում/մշտադիտարկում) առաջարկվում է պատասխանատու հանքարդյունաբերության նախնական ճանապարհային քարտեզ, որը կորոշակիացնի ընդերքօգտագործման օրենսդրական և ինստիտուցիոնալ շրջանակը, ինչպես նաև կոնկրետ իրավական և կանոնակարգող ակտերը (ընդգծելով առկա բացերը և անհրաժեշտ փոփոխությունները), որոնք պետք է ենթարկվեն լրացուցիչ մանրամասն վերլուծության: Սա հիմք կհանդիսանա նշված ոլորտներում հետագա բարեփոխումների իրականացման, օրենսդրական ակտերի նախագծերի մշակման կամ դրանցում լրացումներ կատարելու, ինչպես նաև ինստիտուցիոնալ շրջանակի վերլուծության և բարեփոխումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացման համար:

Պետք է նշել, որ կան հարցեր, որոնք վերաբերում են պատասխանատու հանքարդյունաբերությանը, բայց ուղղակիորեն կապված չեն վերոնշյալ երեք թեմաների (2.ա, 2.բ, և 2.գ-ի) հետ: Այս լրացուցիչ թեմաներից մի քանիսը նշված են սույն բաժնի 9.3 ենթաբաժնում: Ապագա վերլուծությունները պետք է անդրադառնան այս լրացուցիչ թեմաների ուսումնասիրությանը:

9.1. Հանքարդյունաբերության ոլորտի ներդրումը Հայաստանում կայուն զարգացման մեջ

Քաղաքականության հարցերով միջազգային քննարկումներում կայուն զարգացման լայնորեն ընդունված սահմանումը առնչվում է այն զարգացման հետ, որը հավասարակշռում է տնտեսական, սոցիալական և բնապահպանական կայունությունը:¹⁷ Մենք այս սահմանումը կկիրառենք

¹⁷ Այս 3 բաղադրիչները վերածվել են կայուն զարգացման 17 նպատակների (ԿՁՆ)՝ նպատակ ունենալով կայունությունը դարձնել ավելի գործնական: Միացյալ ազգերի կազմակերպությունն այս նպատակները հռչակել է 2015թ. -ին: Հայաստանը, միջազգային հանրության հետ միասին, հանձն է առել արդեն 2030թ. -ին հասնել իր կողմից ընտրված ԿՁՆ-ներին: Համաշխարհային տնտեսական ֆորումը մի շարք համաշխարհային գործընկերների հետ պատրաստել է համապարփակ զեկույց՝ «Հանքարդյունաբերության կապը կայուն զարգացման նպատակների հետ. ադլաս (2016)» (http://unsdsn.org/wp-content/uploads/2016/11/Mapping_Mining_SDGs_An_Atlas.pdf): Այս զեկույցը տրամադրում է 17 ԿՁՆ-ներից յուրաքանչյուրի վրա հանքարդյունաբերության ոլորտի ազդեցությունը վերլուծելու համար օգտակար շրջանակ: Օրենսդրական և ինստիտուցիոնալ շրջանակի ուսումնասիրության և գործողությունների ծրագրի շրջանակներում, սակայն, այս համապարփակ զեկույցի շրջանակի կիրառումը կպահանջեր մեզ ոչ հասանելի ռեսուրսներ և տվյալներ: Հետևաբար որոշում է կայացվել դիտարկում

Հայաստանում հանքարդյունաբերության ոլորտի նպաստը կայուն զարգացման մեջ դիտարկելու համար այնքանով, որքանով առկա են այս գնահատումն իրականացնելու համար անհրաժեշտ տվյալներ: Մեր վերլուծության առաջնային աղբյուրները համաշխարհային բանկի կողմից 2016թ.-ին իրականացված Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի գնահատումն է և ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի կողմից իրականացված հետազոտությունները: Բացի այդ, մենք հղումներ ենք կատարում հանրային առողջության և շրջակա միջավայրի վերաբերյալ կատարված հետազոտությունների, որոնք իրականացվել են Հայաստանում գործող տարբեր գիտական հաստատությունների, այդ թվում՝ Հայաստանի ամերիկյան համալսարանի և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի կողմից: Մենք նաև հղում ենք կատարում ՀՀ բնապահպանության նախարարության՝ «Շրջակա միջավայրի մոնիտորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի (նախկինում՝ Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն) տրամադրած տվյալներին:

Տնտեսական կայունություն

Հանքարդյունաբերությունը և օգտակար հանածոների մշակումը Հայաստանի ՀՆԱ-ում փոքր մասնաբաժին է կազմում (մոտ 3%): Նույնը նաև զբաղվածության ոլորտում է (մոտ 3%): Զբաղվածության թվերը ենթակա են փոփոխության, քանի որ Թեղուտի հանքավայրում դադարեցվել են շահագործման աշխատանքները 2018թ.-ի սկզբին, որի արդյունքում 1200 մարդ այլևս աշխատանք չի ունենա:¹⁸ Մյուս կողմից ակնկալվում է, որ Ամուլսարի հանքը կսկսի շահագործման աշխատանքները 2018-19թթ.-ին՝ ապահովելով 770 աշխատատեղ:¹⁹

Հայաստանի հանքարդյունաբերական ոլորտում դոմինանտ է մեկ խոշոր հանքարդյունաբերական ընկերություն՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը (ԶՊԿ): 2010-2014թթ.-ին այս հանքը ապահովել է Հայաստանում առկա բոլոր ակտիվ հանքերի եկամտի 60%-ը:²⁰ Մեկ ընկերությունից կախվածությունը Հայաստանի բնական պաշարների ոլորտը խոցելի է դարձնում ցնցումների համար (օրինակ՝ գնային տատանումներ, վթարներ կամ այլ արտակարգ պատահարներ)՝ սպառնալով երկրի երկարաժամկետ տնտեսական կայունությանը:

Ոլորտի խնդրահարույց կողմերից մեկն էլ այն է, որ շատ քիչ թվով ընկերություններ են ցույց տվել շահույթ: Վերջին հինգ տարիների տնտեսական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ 14 ակտիվ մետաղական հանքարդյունաբերական ընկերություններից միայն 2-3-ն են այդ ընթացքում քիչ-շատից ապահովել շահույթ: Մնացած ընկերությունները աշխատել են վնասով, որն ակնհայտորեն տնտեսապես ձեռնտու իրավիճակ չէ:

Ավելի մտահոգիչ է այն, որ այդքան մեծ թվով հանքարդյունաբերական ընկերություններ վնասով են աշխատել մի ժամանակահատվածում, երբ ապրանքների գները եղել են համեմատաբար բարձր և այս ընկերությունները շատ փոքր վճարներ են կատարել աղտոտվածության վերահսկման և շրջակա միջավայրի կառավարման համար:²¹ Բացի այդ, ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի «Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման նախաձեռնություն» (ՀՕԲՆ) ծրագրի կողմից իրականացված վերլուծությունը ցույց է տալիս, որ ռոյալթիի և հարկերի ընդհանուր բեռը հանքարդյունաբերական ընկերությունների համար գտնվում է միջին մակարդակի վրա, եթե այն համեմատում ենք համանման հանքարդյունաբերական ոլորտի կառուցվածք ունեցող երկրների հետ:²² Նույն եզրակացությանն է հանգել նաև համաշխարհային բանկի կողմից իրականացված գնահատումը:²³

իրականացնել կայունության երեք ընդգրկուն բաղադրիչների՝ տնտեսական, սոցիալական և բնապահպանական շրջանակներում:

¹⁸ <https://www.azatutyun.am/a/29015274.html>

¹⁹ https://www.lydianarmenia.am/images/Socio-economic_study_Factsheet.pdf

²⁰ ՀԲ, էջ 58

²¹ ՀԲ, էջ 102

²² <http://mlri.crm.aa.am/?q=fiscal-regime-analysis>

²³ ՀԲ, էջ 54

Աշխատավարձերը ոլորտում համեմատաբար բարձր են, թեև ընդհանրապես չկան կամ կան շատ քիչ տեղեկություններ այս ոլորտում եկամուտների բաշխվածության վերաբերյալ: Ըստ որոշ տվյալների, հայաստանյան հանքարդյունաբերական ընկերությունները հետ են մնում տեղական կառավարիչների աշխատանքի ընդունման և նրանց առաջխաղացմանը նպաստելու հարցերում և ծառայություններ ու ապրանքներ գնում են տեղական մակարդակում:²⁴

Ոլորտը նաև երկրից եկամուտների արտահանման խոշոր աղբյուր է հանդիսանում՝ 20-45%՝ կախված տարուց և հաշվարկման մեթոդից (հատկապես, եթե արտահանվող հանածոների հաշվարկները կատարվում են հիմնվելով ընդհանուր արտահանման կամ միայն արտահանվող ապրանքների վրա): Հարկ է հիշել, որ արտահանման մեջ նման բարձր մասնաբաժինը կարող է վկայել այն մասին, որ Հայաստանը արտահանման ենթակա շատ այլ բան չունի: Այս մասնաբաժինը կարող է նվազել, եթե գրանցվի սննդի և խմիչքների, զբոսաշրջության, ՏՏ ոլորտի, առողջապահության, կրթության և այլնի արտահանման աճ:

Եվ, վերջապես, շատ երկրների համար հանքարդյունաբերական ոլորտը տնտեսապես կայուն դարձնելու գլխավոր բաղադրիչը չվերականգնվող ռեսուրսների՝ բնական պաշարների, փոխակերպումն է երկրի համար վերականգնվող ֆինանսական ռեսուրսի: Սա հաճախ կատարվում է ինքնիշխան ֆոնդերի ստեղծման միջոցով: Հայաստանը նման ֆոնդ առայժմ չի ստեղծել: Ներկայումս հանքարդյունաբերական ոլորտից ստացվող ոռոյալիները մուտք են արվում պետական բյուջե և օգտագործվում ընթացիկ ծախսերի համար, որը երկարաժամկետ կայուն զարգացման տեսանկյունից, հավանաբար, լավագույն լուծումը չէ:

Առաջարկում ենք, որ հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականությունը և ռազմավարությունը մշակելիս Հայաստանի կառավարությունը դիտարկի հանքարդյունաբերական ոռոյալիներից ստացվող եկամուտների համար ինքնիշխան ֆոնդի ստեղծման հնարավորությունը: Սա պետք է ծրագրավորվի և կազմակերպվի հաշվի առնելով Հայաստանի բյուջեի ներկա պակասորդը ծածկելու անհրաժեշտությունը: Սակայն նման ֆոնդի նպատակահարմարության գնահատումը, միգուցե, պետք է ուսումնասիրել կարճաժամկետ կամ միջնաժամկետ հեռանկարում: Սա թույլ կտա Հայաստանին քայլ առաջ կատարել հանքարդյունաբերական ոլորտը երկրի տնտեսության կայուն ճյուղը դարձնելու ուղղությամբ:

2018թ.-ի սկզբի դրությամբ աշխարհի ավելի քան 80 ինքնիշխան ֆոնդերում եղել է 7.7 տրիլիոն ԱՄՆ դոլար: Դրանց ճնշող մեծամասնությունը ոչ ապրանքային (օտար արտարժույթով) կամ նավթային և գազային ֆոնդեր են: Սակայն կան 9 ֆոնդեր, որոնք հիմնված են բնական պաշարների հարստության վրա: Սրանցից մի քանիսը կարող են օգտակար լինել Հայաստանի համար:

Երկիր	Ֆոնդի անվանում	Ակտիվներ ԱՄՆ դոլարով/մլրդ	Հիմք	«Linaburg-Maduell» թափանցիկության ինդեքս
Չիլի	Սոցիալական և տնտեսական կայունության հիմնադրամ	14.7	Պղինձ	10
Չիլի	Կենսաթոշակների պահուստային հիմնադրամ	9.4	Պղինձ	10
ԱՄՆ - Վայոմինգ	Վայոմինգի հանածոների մշտական թրասթ ֆոնդ	7.3	Բնական պաշարներ	9
Բոտսվանա	«Պուլա» ֆոնդ	5.5	Ադամանդ և բնական պաշարներ	6
ԱՄՆ - Յուտա	Յուտա-SITFO»	2	Հողի և բնական պաշարների ոռոյալի	-
ԱՄՆ - Այդահո	Այդահոյի հիմնադրամի ներդրումային խորհուրդ	2	Հողի և բնական պաշարների ոռոյալի	-
Կիրիբատի	Եկամուտների հավասարեցման	0.6	Ֆոսֆատներ	1

²⁴ ՀԲ, էջ 77

	պահուստային հիմնադրամ			
Ավստրալիա	Արևմտյան Ավստրալիայի ապագայի հիմնադրամ	0.3	Բնական պաշարներ	–
Մոնղոլիա	Ֆինանսական կայունության հիմնադրամ	0.3	Բնական պաշարներ	–

Աղբյուր՝ Ինքնիշխան հարստության ֆոնդերի ինստիտուտ /Sovereign Wealth Fund Institute/ (<https://www.swfinstitute.org/sovereign-wealth-fund-rankings>)

Բնապահպանական կայունություն

Համաշխարհային բանկի կողմից տրված գնահատականը հստակ կերպով նշում է, որ Հայաստանում ներկայումս շահագործվող հանքավայրերից ոչ մեկը չի ծավալում բնապահպանական առումով ընդունելի գործունեություն:²⁵ Բոլոր հանքավայրերը դեպի շրջակա միջավայր, այդ թվում՝ դեպի ջրեր, մթնոլորտ և հող են արտանետում մեծաքանակ աղտոտիչներ: Հանքերի թթվային դրենաժը շարունակում է խնդիր լինել որոշ շրջաններում, և չկան այս խնդրին արձագանքող որևէ ծրագրեր: Սրա ամենավառ օրինակներից մեկը Սյունիքի մարզի Կավարտ գյուղում գտնվող «լքված» հանքավայրն է:

Բնապահպանության նախարարության ունեցած տվյալները ցույց են տալիս, որ հանքարդյունաբերական համայնքներից ներքև հոսող գետերի ջրի որակը դասակարգվում է որպես «անբավարար» կամ «վատ»:²⁶ Որոշ հանքարդյունաբերական ընկերություններ պոչանքներն ուղղակիորեն լցնում են գետերը: Ալավերդու պղնձածուլարանի պատճառով ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի շաբաթական միջին պարունակությունները 2014թ.-ին գերազանցել են օրինական նորմերը: ՀԱՀ հանրային առողջության ֆակուլտետի կողմից իրականացված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մետաղական հանքարդյունաբերությանը և ծուլարաններին մոտ գտնվող համայնքներում երեխաների արյան մեջ գրանցվել է կապարի բարձր մակարդակ: Այս ցուցանիշը առկա է Ախթալայի երեխաների 84%-ի, Ալավերդիում բնակվող երեխաների 73%-ի և Երևանի Էրեբունու շրջանի երեխաների 53%-ի մոտ և այն գերազանցում է ԱՄՆ հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնի կողմից նշված ընդունելի մակարդակը:²⁷ Սա մտահոգիչ է և այս առումով անհրաժեշտ է ձեռնարկել կոնկրետ գործողություններ:

Թեպետ դեռևս հստակ չէ, թե ինչպես պետք է լուծվեն լքված հանքերի և պոչանքների տեղամասերի խնդիրները, ընդերքի մասին օրենսգրքի՝ հանքարդյունաբերական թափոնների կառավարմանը վերաբերող օրենսդրական փոփոխությունները պահանջում են, որպեսզի հանքը շահագործողը մշակի և հետևի թափոնների կառավարման պլանի իրականացմանը՝ կիրառելով ԵՄ դիրեկտիվներին համապատասխանող հասանելի լավագույն տեխնոլոգիաները: Առկա է օրենսդրության հստակ կիրարկման և ոլորտի ու կառավարության համար կարողությունների նշանակալի զարգացման անհրաժեշտություն: Ավելին, քաղաքականության ուշադրության առարկա պետք է դառնան լքված հանքավայրերը, որոնցից մի քանիսը շարունակում են շրջակա միջավայրի աղտոտման աղբյուր հանդիսանալ և պարունակել զգալի ռիսկեր:

Առ այսօր չեն եղել հանքավայրերի և պոչանքների փակման պատշաճ պլաններ և հանքավայրերի վերականգման աշխատանքներ: Թեև հանքարդյունաբերական թափոններին վերաբերող նոր օրենսդրական փոփոխությունները փորձ են կատարում արձագանքել որոշ մտահոգությունների, տեխնիկական և կիրարկման համար անհրաժեշտ կարողությունների խնդիրը դեռևս շարունակում է մնալ այդպիսին: Բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամագլուխը, որն ակնկալվում է, որ պետք է ֆինանսավորի հանքավայրերի փակման և վերականգման աշխատանքները այն դեպքում, երբ շահագործողի կողմից դրանք չեն իրականացվի, ունի չափազանց սուղ միջոցներ: Նոր օրենսդրությունը պահանջում է, որ շահագործողը ներկայացնի

²⁵ Համաշխարհային բանկ, էջ 103

²⁶ Համաշխարհային բանկ, էջ 72-75

²⁷ «Հայաստանի մետաղական հանքարդյունաբերություն և ծուլարաններ ունեցող համայնքներում երեխաների արյան մեջ կապարի մակարդակի ռիսկային գործոնները. միջոլորտային հետազոտություն», Ռուզաննա Գրիգորյան և այլ հեղինակներ, 2016թ. : <https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC5015252/>

որոշակի ֆինանսական երաշխիքներ, սակայն սա դեռևս ենթակա է կատարման, և ֆինանսական երաշխավորներն իրենք ենթական չեն որևէ գնահատման:

Համաշխարհային բանկի զեկույցը մտահոգություններ է հայտնել Հայաստանում հանքարդյունաբերական թափոնների օբյեկտների կայունության վերաբերյալ: Դրանք բոլորը կառուցված են «վերընթաց բարձրացման մեթոդով», ինչը, ըստ զեկույցի, չի համապատասխանում սեյսմիկ գոտիներին և պարունակում է «թափոնների օբյեկտի փլուզման չափազանց մեծ ռիսկ»: Եթե տեղի ունենա ընդերքօգտագործման թափոնների օբյեկտի փլուզում, ապա դա երկրի համար կլինի բնապահպանական և սոցիալական աղետ:

ՇՄԱԳ-ի բնապահպանական կառավարման առանցքային գործիքները, ստուգումները, մոնիտորինգը և վերահսկողությունը բոլորն էլ ունեն իրենց թույլ կողմերը, ոմանք կապված օրենսդրության հետ, ոմանք՝ տեխնոլոգիաների, կոռուպցիոն ռիսկերի և մարդկային կարողությունների հետ: Այս թույլ կողմերը պետք է շտկվեն, որպեսզի Հայաստանը հնարավորություն ունենա հանքարդյունաբերության ոլորտը կառավարել բնապահպանական կայունության սահմաններում:

Սոցիալական կայունություն

Սոցիալական կայունությունը կարող է ամրապնդվել ի թիվս այլ հարցերի նաև ապահովելով ներառականություն, հարգանք բազմազանության նկատմամբ, մարդու իրավունքների պահպանում, տնտեսական հնարավորությունների արդար և հավասար բաշխում, արդարադատություն և հոգաճություն համայնքի բարեկեցության նկատմամբ: Եթե սոցիալական կայունություն չի ապահովվում, ապա վտանգվում է զարգացման նախաձեռնությունների կենսունակությունը երկարաժամկետ հեռանկարում:

Համաշխարհային բանկի զեկույցը նշում է, որ «որոշ համայնքներում, հատկապես Սյունիքում հանքարդյունաբերական գործունեությանը տեղական համայնքների աջակցությունը համեմատաբար մեծ է. . . , սակայն չի կարելի ասել, որ Հայաստանում հանքարդյունաբերողներն ունեն «սոցիալական թույլտվություն»»:²⁸ Չեկույցը նշում է, որ համընդհանուր աջակցության բացակայությունը կարող է հիմնված լինել արդեն քննարկված տնտեսական և բնապահպանական խնդիրների վրա: Բացի սրանից, «ոլորտում տարածված է գաղտնիության մշակույթ (թե ընկերությունների, թե իշխանությունների կողմից)», որն, անկասկած, նպաստում է վստահության խաթարմանը: Ավելին, որոշ համայնքներում հանքավայրը կամ ձուլարանը գլխավոր կամ միակ գործատուն է՝ այդպիսով ստեղծելով գերկախվածություն և քաղաքացիների կամ տեղական իշխանությունների կողմից բողոքների կամ դժգոհության դեպքում ընկերության կողմից պատժվելու վախ:²⁹ Այս ամենն էլ ավելի է սրվում, երբ ի հայտ է գալիս շահերի բախում այն դեպքերում, երբ ընտրված քաղաքական գործիչները ներգրավվում են հանքարդյունաբերական ծրագրերի զարգացման գործում:

Ավելին, Հայաստանում հանրային մասնակցության և շահագրգիռ կողմերի ներգրավվածության գործընթացները թերի են: Տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-երի) ներկայացուցիչները դժգոհություններ են արտահայտել առ այն, որ առաջարկվող ծրագրերի վերաբերյալ հանրային լսումներից հետո տեղական իշխանությունները և համայնքները դուրս են թողնվում գործընթացից: Նրանք ներգրավված չեն վերջնական որոշումների կայացման և բանակցությունների ընթացքի մեջ: Նրանց հետ չեն խորհրդակցում կառավարության և հանքարդյունաբերող ընկերության միջև համաձայնության կնքման շուրջ, հատկապես հանքարդյունաբերող ընկերությունների կողմից սոցիալական ծախսեր կատարելու մասով: Նշված համաձայնության կնքումից հետո համայնքներն անգամ տեղյակ չեն լինում, թե սոցիալական ծախսերի մասով ինչ պարտավորություններ են ստանձնել հանքարդյունաբերող ընկերությունները:

²⁸ Համաշխարհային բանկ, էջ 103

²⁹ Petrosyan V, Grigoryan R, McCartor D. Initial Site Screenings in Polluted Communities in Armenia. Collegium Ramazzini Annual Ramazzini Days. Abstract Book, page 36. Carpi, Italy, 2014.

Համայնքները ցանկություն հայտնեցին քննարկել ԱՃԹՆ գործընթացում ձևավորված ԲՇԽ կազմում տեղական համայնքներին ներգրավելու հարցը:

Կան նաև մտահոգություններ, որ տեղական համայնքները հանքարդյունաբերությունից չեն ստանում իրենց արդարացիորեն հասանելիք մասնաբաժինը և դրա փոխարեն նրանց մնում են միայն բնապահպանական և հանրային առողջության խնդիրները: Հանքարդյունաբերական տեղամասում գտնվող շենքերի ու շինությունների մի մասը տեղական իշխանություններին անշարժ գույքի հարկ չեն վճարում: Որոշ հանքարդյունաբերական ընկերությունների սարքավորումները գրանցված են Երևանում, և դրանց գույքահարկը վճարվում է Երևանում: Սակայն այդ նույն սարքավորումների թողած հետևանքները մնում են հանքարդյունաբերական համայնքներում, որոնք ստիպված են լինում նաև լուծել չգործող հանքերի տեղամասերի ու թափոնների հարցը՝ առանց ունենալու դա կատարելու համար պատշաճ գործիքներ կամ իրավական միջոցներ, որպեսզի կանխեն դրանց կողմից հետագայում հասցվող վնասները:³⁰

Հանքարդյունաբերական ընկերությունները կառավարությանը վճարում են բնապահպանական վճարներ, որոնք այնուհետև բաշխվում են համայնքների միջև՝ հիմնվելով համայնքների կողմից բնապահպանական վնասները մեղմելու ուղղությամբ ներկայացված առաջարկների վրա: Այս գործընթացը թափանցիկության և ներառականության առումով ունի կատարելագործման անհրաժեշտություն: Շատ համայնքներ պարզապես չգիտեն ինչպես իրականացնել բնապահպանական վնասի հաշվարկ: Բացի այդ, ազդակիր որոշ համայնքներ ներառված չեն համայնքների այն ցանկում, որոնք կարող են դիմել բնապահպանական վնասների վերացմանն ուղղված միջոցներ ստանալու համար:

Սոցիալական կայունության վերաբերյալ վերջին դիտարկումն այն է, որ տեղական համայնքները հանքարդյունաբերական գործունեության մեջ ավելի մեծ շահագրգռություն կունենային, եթե բարձր աշխատավարձով աշխատատեղերը նախատեսված լինեին տեղական համայնքի անդամների համար: Համաշխարհային բանկը գրում է, որ «չնայած այն բանին, որ Հայաստանում կան հանքարդյունաբերության ոլորտի զգալի թվով որակյալ աշխատողներ, կա առավել խորը հմտություններով անձանց պակաս (ինժեներներ, երկրաբաններ, հանքարդյունաբերության ոլորտի տնտեսագետներ և այլն): Տեղական կառավարման կարողությունների պակասը խոչընդոտ է հանդիսանում հանքարդյունաբերական գործունեության սոցիալական կայունության համար»:³¹

9.2. Պատասխանատու հանքարդյունաբերության որոշակի խնդիրներին առնչվող օրենսդրական և ինստիտուցիոնալ բացերը վերլուծություն

Սույն բաժնում վերլուծվելու են ներքոնշյալ ոլորտների օրենսդրական և ինստիտուցիոնալ խոչընդոտները: Ուսումնասիրված ոլորտներն են՝

1. Հանքարդյունաբերական ծրագրերի տնտեսական գնահատումը՝ օգտագործելով ծախս օգուտ վերլուծության (ՇՕՎ) գործիքը,
2. Շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) գործընթացը (ներառյալ՝ սոցիալական ազդեցության գնահատումը), և
3. Շրջակա միջավայրի, համայնքներում հանրային առողջության և աշխատանքային անվտանգության մասին հաշվետվությունների ներկայացում/մշտադիտարկում:

Կան հարցեր, որոնք վերաբերում են պատասխանատու հանքարդյունաբերությանը, բայց չեն ներառվել վերոնշյալ երեք թեմաների մեջ: Այս լրացուցիչ թեմաներից մի քանիսը սահմանվում են սույն գլխի վերջում: Ապագա վերլուծությունները պետք է անդրադառնան այս լրացուցիչ թեմաների ուսումնասիրությանը:

³⁰ ՏԽՄ-երի ներկայացուցիչների կողմից ներկայացված դիտարկումների ծավալուն հավաքագրման համար տես Հավելված 5:

³¹ Համաշխարհային բանկ, էջ 104

9.2.1. Տնտեսական գնահատում. ծախսերի և օգուտների վերլուծություն.

Ծախսերի և օգուտների վերլուծություն՝ միջազգային համադրությամբ

Ծախսերի և օգուտների տնտեսական վերլուծությունը (ԾՕՎ) քաղաքականության և որոշումների կայացման կարևոր գործիք է, որը կիրառվում է շատ երկրներում: Ցանկացած ծրագրի ընդունելի լինելու համար, դրա տնտեսական օգուտները պետք է գերազանցեն տնտեսական ծախսերը: Օգուտները սահմանվում են որպես մարդկանց բարեկեցության մակարդակի աճ, իսկ ծախսերը սահմանվում են որպես մարդկանց բարեկեցության մակարդակի նվազում: Որևէ ծրագրի կամ քաղաքականության ընդունելի համարվելու համար, վերջինիս սոցիալական օգուտները [տնտեսական] պետք է ավելին լինեն, քան դրա սոցիալական ծախսերը [տնտեսական]:³²

Օգուտների և ծախսերի սահմանումից պետք է հստակ լինի, որ վերլուծությունը չի վերաբերում մասնավոր, ներքին ծախսերի և օգուտների, որոնք շատ շուկայական տնտեսություններում կարող են տեղավորվել օգուտների և ծախսերի ֆինանսական վերլուծության մեջ: ԾՕՎ-ի դիտարկում է օգուտների և ծախսերի լայն շրջանակ, ներառյալ շուկայական գործարքներում չերևացող օգուտներն ու ծախսերը (օրինակ՝ ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, հանրային առողջությունը, մշակութային ժառանգությունը, համայնքի բարեկեցությունը և այլն): Տնտեսագիտական լեզվով ասած՝ այս «ոչ շուկայական» ծախսերն ու օգուտները ներառում են արտաքին ազդակները, շուկայում միջամտությունները և այլն:

Սկսած 1930-ականների վերջից՝ ԱՄՆ-ում ենթակառուցվածքներին վերաբերող բոլոր ծրագրերի համար իրականացվել է ԾՕՎ: Իսկ սկսած 1980-ականներից՝ սա ընդգրկել է նաև կանոնակարգումները, որոնք նախքան հաստատվելը ենթարկվում են ծախսերի և օգուտների վերլուծության և դրանից հետո այն իրականացվում է պարբերաբար: Այդ ժամանակից սկսած՝ ԱՄՆ տարբեր նախագահների օրոք ԾՕՎ-ի մանդատը ընդլայնվել է և հստակեցվել:³³ Եվրոպական միությունում (ԵՄ) եվրոպական հանձնաժողովը շարունակաբար խրախուսել է ԾՕՎ-ի կիրառումը 50 մլն եվրոյից բարձր արժեքի մեծ ենթակառուցվածքների ծրագրերի համար: 2014-2020թթ.-ի ընթացքում առաջին անգամ ԾՕՎ իրականացնելու հիմնական կանոնները ներառվել են երկրորդական օրենսդրության մեջ և պարտադիր դարձել ԵՄ բոլոր շահառուների համար:³⁴

ԾՕՎ-ը տարբեր է բնապահպանական կառավարման առանցքային գործիք ՇՄԱԳ-ից, որը փորձում է պարզել որևէ ծրագրի բնապահպանական կամ սոցիալական ազդեցությունը: Նույնիսկ եթե ՇՄԱԳ-երում բնապահպանական և ֆինանսական ազդեցությունները ստանան ֆինանսական տեսք, չի նշվում ստացվող զուտ օգուտի հաշվարկ: ԾՕՎ-ը պահանջում է իրականացնել ծախսերի և օգուտների դրամայնացում և զուտ ներկա արժեքի հաշվարկ՝ կիրառելով պատշաճ զեղչեր:³⁵ ՇՄԱԳ-ները կարող են կարևոր ներդրում ապահովել ԾՕՎ-ների իրականացման համար և պետք է դիտարկվեն որպես որոշումների համար լրացուցիչ գործիքներ:

ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության և քարտուղարության ներկայացուցիչները խնդրել են, որպեսզի այս օրենսդրական և ինստիտուցիոնալ շրջանակի ուսումնասիրության և գործողությունների ծրագրի շրջանակներում ԾՕՎ-ը դիտարկվի որպես հանքարդյունաբերական ծրագրերի գնահատման համար հնարավոր գործիք: Նրանց հիմնավորումն այն է, որ հաստատված շատ հանքարդյունաբերական ծրագրեր հաճախ պարզապես դիտարկում են ծրագրի ֆինանսական

³² Ծախսերի և օգուտների վերլուծությունը և շրջակա միջավայր. վերջին զարգացումներ (ՏՀԶԿ, 2006թ.)

³³ Weimer, D. և Aiden Vining. «Քաղաքականության վերլուծության. հայեցակարգեր և պրակտիկա» /Policy Analysis: Concepts and Practice/ (Taylor & Francis, 2017թ.), տես՝ գլուխ 17:

³⁴ «Ներդրումային ծրագրերի օգուտների և ծախսերի վերլուծության ուղեցույց. քաղաքականության փնտրանքային գնահատման գործիք 2014-2020թթ. (Եվրոպական հանձնաժողով, 2015թ.)

³⁵ ԾՕՎ-ի համար «Ներդրումային ծրագրերի օգուտների և ծախսերի վերլուծության ուղեցույց. փարածաշրջանային քաղաքականության փնտրանքային գնահատման գործիքը շարադրում է, որ կան ֆինանսական զեղչեր և սոցիալական զեղչեր: Սոցիալական զեղչը ընդունում է այն փաստը, որ որոշ օգուտներ և ծախսեր ունեն երկարաժամկետ հեռանկար: 2014-2020թթ.-ի համար Եվրոպական հանձնաժողովը առաջարկում է տարածաշրջանային քաղաքականության երկրներում խոշոր ծրագրերի համար կիրառվի 5% սոցիալական զեղչ, իսկ այլ անդամ երկրներում՝ 3% (տես՝ էջ 55):

կենսունակությունը՝ առանց պատշաճ քննման առարկա դարձնելու ծրագրերի բնապահպանական և սոցիալական ծախսերը: Այս պատճառով հանրային քաղաքականության տեսանկյունից հստակ չէ, թե՛ արդյոք այս հանքարդյունաբերական ծրագրերը երկրի համար զուտ օգուտներ են, թե՛ զուտ ծախսեր: Ավելին, այս ծրագրերից շատերը իրոք դարձել են զուտ ծախսեր՝ ունենալով մարգինալ կամ զրո շահութաբերություն, առաջացնելով շատ փոքր կամ զրո ռոյալթիներ, ցածր կամ զրո շահութահարկ, աննշան թվով աշխատատեղեր և սոցիալական ծախսեր ստեղծելով հաջորդ սերունդների համար (տես նախորդ գլխում ներկայացված կայունության մասին քննարկումը):³⁶

ԾՕՎ-ների գործածումը հանքարդյունաբերական ծրագրերի հարցերով որոշումներ կայացնելու համար համեմատաբար նոր է: ՀԱՀ պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի կողմից իրականացված հետազոտությունը ցույց է տալիս, որ մի քանի երկրներ ուսումնասիրել են այս մոտեցումը և սկսել են ինստիտուցիոնալիզացնել դրա կիրառումը հանքարդյունաբերական ոլորտում: Ստորև ներկայացվում են երկու երկրների օրինակներ (Ավստրալիա և Մոնղոլիա), որտեղ ուսումնասիրվել է ԾՕՎ-ների կիրառումը, իսկ Ավստրալիայի Նոր Հարավային Ուելս (ՆՀՈւ) նահանգում այն արդեն իրականացման փուլում է գտնվում:

ԱՎՍՏՐԱԼԻԱ — Ավստրալիայի ՆՀՈւ նահանգի շրջական միջավայրի և պլանավորման դեպարտամենտը ընդունել է հանքարդյունաբերության ինտեգրված քաղաքականությունը, որն ամբողջապես պետական ծրագիր է՝ ուղղված հետևյալին.

- Բարելավել հիմնական հանքարդյունաբերական ծրագրերի կանոնակարգումն ու գնահատումը
- Հավասարակշռել տնտեսության մեջ հանքարդյունաբերության ընձեռած զգալի օգուտները և դրա պոտենցիալ ազդեցությունը համայնքների և շրջակա միջավայրի վրա
- Օժանդակել հանքարդյունաբերության բնապահպանական և սոցիալական հետևանքների կառավարմանը
- Ապահովել հանքարդյունաբերական ծրագրերի վերաբերյալ ժամանակին մատուցվող համապատասխան տեղեկատվության մատչելիությունը համայնքների համար

Հանքարդյունաբերության ինտեգրված քաղաքականությունը չի թուլացնում բնապահպանական ստանդարտները կամ համայնքների հետ խորհրդակցության մասին պահանջները: Այն մշակել է «Հանքարդյունաբերական և հանքագազի արդյունահանման առաջարկների տնտեսական գնահատման ուղեցույցներ» (դեկտեմբեր, 2015թ.), որը հասանելի է իրենց կայքէջում:^{37, 38} Այս ուղեցույցներում նկարագրվող գնահատման գործիքներից մեկը ծախսերի և օգուտների վերլուծությունն է: Ուղեցույցները կենտրոնանում են երկու առանցքային գործոնների վրա, որոնք իշխանությունները պետք է դիտարկեն որևէ դիմումի մասին որոշում կայացնելիս՝ ՀՆՈւ-ի տնային տնտեսությունների կոլեկտիվ հանրային շահը և ծրագրի հավանական բնապահպանական և սոցիալական ազդեցությունները տեղական շրջանի վրա:

Ուղեցույցները հանքարդյունաբերական և հանքագազի արդյունահանման ծրագրեր ներկայացնողներին օգնում են տրամադրել հետևողական և ամբողջական տեղեկություններ, որոնք կհաստատեն շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ նրանց հավաստիացումները (որը

³⁶ Հանքարդյունաբերական ծրագրերի համար ԾՕՎ-ի դիտարկման կոչեր քաղաքացիական հասարակության կողմից եղել են նաև այլ երկրներում: Տես՝ *Մեքսիկական հանքարդյունաբերությունը և կայուն զարգացումը Կենտրոնական Ամերիկայում. օգուտների և ծախսերի գնահատում* (Oxfam America, 2008թ): Այս գեկույցը Oxfam America-ի համար հեղինակվել է Մոնտանայի համալսարանի տնտեսագիտության պրոֆեսոր Թոմաս Փաուերի կողմից:

³⁷ <http://www.planning.nsw.gov.au/Policy-and-Legislation/Mining-and-Resources/-/media/C34250AF72674275836541CD48CBEC49.ashx>

³⁸ Փիթեր Աբելսոնի վերլուծությունը և դրան հաջորդած աշխատության հրապարակումը (Աբելսոն Փիթեր, «Հանքարդյունաբերական ծրագրերի ծախսերի և օգուտների գնահատում» /Abelson, Peter. “Cost-Benefit Evaluation of Mining Projects.”/ The Australian Economic Review, vol. 48, no. 4, pp. 442–52 (2015)) ցույց տվեց, թե ինչպես կարելի է ԾՕՎ-ը կիրառել հանքարդյունաբերական ծրագրերի դեպքում: Հիմնական օրինակները կապված են քարածխի արդյունահանման հետ, սակայն գնահատման գործընթացն ավելի ընդհանրական է: ՆՀՈւ ֆինանսների դեպարտամենտը որդեգրել է Աբելսոնի աշխատության տեսակետներն ու մոտեցումները, որից հետո ՆՀՈւ շրջակա միջավայրի և պլանավորման դեպարտամենտը մշակել է վերը նշված ուղեցույցը:

հանրային իշխանության կողմից ՇՄԱԳ-ի տրված եզրակացությունն է): ԾՕՎ-ը, որպես այդպիսին, ՆՀՈւ-ում հիմնվում է ՇՄԱԳ-ի բացահայտումների վրա և համարվում է հարակից գնահատում:

ՆՀՈւ կառավարության շրջակա միջավայրի և պլանավորման դեպարտամենտը նաև հրապարակել է Հանքարդյունաբերական և հանքագազի արդյունահանման առաջարկների տնտեսական գնահատման ուղեցույցների տեխնիկական նշումների նախագիծը (սեպտեմբեր, 2017թ.):³⁹

Տեխնիկական նշումները լրացուցիչ տեղեկություններ են տրամադրում ՆՀՈւ-ում հանքարդյունաբերական և հանքագազի արդյունահանման նոր ծրագրերի՝ բնապահպանական, սոցիալական և տրանսպորտին առնչվող ազդեցությունների ամբողջական և համապարփակ տնտեսական գնահատման տարբերակների և մոտեցումների վերաբերյալ: Այս հարցը կարող է լրացուցիչ ուսումնասիրվել հաջորդիվ հետազոտություններում:

ՄՈՆԻՏԻՆԳ — ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) «Շրջակա միջավայրի կառավարման հզորացում Մոնոլիթայում, փուլ 2րդ» ծրագրի (EG Phase II; MON/11/301) միջոցով Մոնոլիթայում իրականացվել է հանքարդյունաբերության ոլորտի օգուտների և ծախսերի վերլուծություն, որը կենտրոնանում է Մոնոլիթայում հանքարդյունաբերական գործունեությունների համար ԾՕՎ-ի մոդելի մշակման վրա: Ծրագրի նպատակն էր ստեղծել ԾՕՎ գործիք, որը թույլ կտա գնահատել հանքարդյունաբերության հետևանքները երկրում թե ամբողջական ոլորտի, թե առանձին հանքերի մակարդակում:

Թեպետ ծախսերի և օգուտների վերլուծությունը կառավարությունների կողմից կիրառվող ստանդարտ գործիք է, այս ծրագրի համար պատրաստված ԾՕՎ գործիքն առաջարկում է եզակի մի գործիք, որը գնահատում է հանքարդյունաբերական ծրագրի զուտ օգուտները: Այն թվարկում է, դրամայնացնում, կիրառում է զեղչեր և համեմատում տնտեսական, սոցիալական և բնապահպանական արտաքին ազդակները թե համայնքի, թե մասնավոր սեկտորի տեսանկյունից՝ նպատակ ունենալով ներկայացնել հանքարդյունաբերական ծախսերի և օգուտների հնարավորինս ամբողջական պատկեր:

Մոդելի կառուցվածքը թույլ է տալիս առանձին կերպով վերլուծել հանքարդյունաբերական ծրագրի շահութաբերությունը, վերջինիս տնտեսական, սոցիալական և բնապահպանական հետևանքները կամ այդ ծրագրից համայնքի համար ապահովվող բոլոր օգուտները: Այն նաև թույլ է տալիս ժամանակային կտրվածքով համեմատություններ իրականացնել՝ կիրառելով զեղչեր և հղում կատարելով ֆինանսական հոսքերի բազային դրույքաչափերին: Այս պարամետրերը կարող են փոխվել տարբեր սցենարների կառուցելու համար, որոնք կօգնեն փորձարկել փոփոխությունները քաղաքականությունների և շրջակա միջավայրի մեջ: Մոդելը կիրառելի է բոլոր տեսակի ապրանքների համար և ՄԱԶԾ ծրագրի ընթացքում օգտագործվել է երկու փորձնական հանքերի գնահատման համար:

Մոնոլիթայում մշակված ԾՕՎ մոդելը հնարավորություն է տալիս ուսումնասիրել տարբեր սցենարներ՝ կախված ներքինացված արտաքին ծախսերի բնույթից ու մակարդակից: Նոր քաղաքականություններ մշակելիս պետք է դիտարկել երկու տարբերակ՝ գործողությունների սովորական ընթացքի սցենար (ԳՍԸՍ) և էկոհամակարգի կայուն կառավարում (ԷԿԿ):

- ԳՍԸՍ սցենարը առկա իրավիճակը դիտարկում է առանց արտաքին գործոնների՝ հաշվի առնելով բնական պաշարները, տվյալ հանքարդյունաբերական գործունեության կապիտալը և տեխնոլոգիաները, և հանքարդյունաբերող ընկերության կողմից վճարվող տարբեր հարկերն ու փոխհատուցումները:

³⁹ <https://majorprojects.accelo.com/public/8537cfb91ab38859ea2f1d6ce8a30416/Draft%20Technical%20Notes.pdf> հասանելի է այս հղումով՝ http://www.planning.nsw.gov.au/Policy-and-Legislation/Mining-and-Resources/Integrated-Mining-Policy?acc_section=the_integrated_mining_policy_part_of_the_nsw_planning_system|guidelines_for_the_economic_assessment_of_mining_and_coal_seam_gas_proposals|indicative_secretary_s_environmental_assessment_requirements_sears_annual_review_guideline|independent_audit_guideline

- ԷԿԿ սցենարը դիտարկում է մի մոդել, որտեղ բավականաչափ արտաքին էֆեկտների ծախսերի ներքինացում է կատարվել՝ նպատակ ունենալով Մոնդոլիայի համար ստեղծել կայուն զուտ շահույթ:

Հատուկ Հայաստանի համար ծախսերի և օգուտների վերլուծության կիրառումներ ուսումնասիրելու և մշակելու ընթացքում կարելի է օգտագործել Մոնդոլիայում ՄԱԶԾ փորձը, եթե, իհարկե, Հայաստանում քաղաքականություն մշակողները որոշեն գնալ այս ուղղությամբ: Հարկ է նշել, որ Հայաստանը կանոնակարգումների, քաղաքականությունների կամ խոշոր ենթակառուցվածքային ծրագրերի շուրջ որոշումների կայացման ընթացքում ներկայումս չի կիրառում ԾՕՎ: Ավելին, ԾՕՎ-ները, ինչպես որոշումների կայացման ժամանակ կիրառվող այլ գործիքները, ունեն իրենց մեթոդաբանական մարտահրավերներն ու բարդությունները: Այդ առումով անհրաժեշտություն կլինի զարգացնել ԾՕՎ-ի իրականացման համար պահանջվող կարողություններն ու ինստիտուտները:

Տնտեսական գնահատում. ծախսերի և օգուտների վերլուծություն. Կարգավորումները ՀՀ օրենսդրության մեջ.

1. **ՀՀ-ում գործող ընթացակարգերը ներդրումային նախագծերի տնտեսական գնահատման վերաբերյալ: Արդյոք օրենսդրությունը սահմանում է կամ թույլ է տալիս ներդրումային նախագծերի ծախսերի և օգուտների վերլուծություն անել, մասնավորապես հանք-արդյունաբերական ծրագրերի դեպքում**
2. **Առկա են արդյոք օրենսդրական խոչընդոտներ տնտեսական գնահատում, մասնավորապես ԾՕՎ իրականացնելու համար, ներդրումային նախագծերի գնահատման և հաստատման գործընթացի մեջ այն ընդգրկելու համար**

ԾՕՎ-ի կիրառումը կարգավորման ազդեցության գնահատման ընթացակարգերում

Ազդեցության գնահատման հիմքերը ՀՀ-ում ներդրվել են դեռևս 2008 թվականին, մասնավորապես հենց նշված թվականին փոփոխություններ կատարվեցին <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքում, որով սահմանվեց, որ կարգավորման ազդեցության գնահատումը նորմատիվ իրավական ակտի ընդունման արդյունքում հնարավոր փոփոխությունների վերլուծությունն է: Սահմանվեց, որ նախագծի կարգավորման ազդեցության գնահատումը կազմակերպող մարմինը նախագիծը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված գործադիր իշխանության հանրապետական համապատասխան մարմիններին (այսուհետ՝ Ազդեցության գնահատող)՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար առաջացող վարչարարության հետ կապված ծախսերի, բնապահպանական, սոցիալական, առողջապահական, տնտեսական, ներառյալ՝ փոքր և միջին ձեռնարկատիրության, մրցակցության, հակակոռուպցիոն, բյուջետային բնագավառներում պարտադիր կարգավորման ազդեցության գնահատումն իրականացնելու նպատակով: Ազդեցության գնահատողը պարտավոր է համապատասխան նախագծի վերաբերյալ տալ կարգավորման ազդեցության գնահատման եզրակացություն, որը ներառում է՝

- 1) կարգավորման արդյունքները.
- 2) նախատեսվող իրավական ակտը չընդունելու դեպքում համապատասխան բնագավառի վրա ազդեցության գնահատման արդյունքները.
- 3) այն դեպքում, երբ ազդեցության գնահատողի կարծիքով և կատարված հաշվարկների ու հետազոտությունների հիման վրա առաջարկվում է կարգավորման այնպիսի տարբերակ, որն ավելի բարենպաստ է համապատասխան բնագավառի համար, նշված տարբերակը համապատասխան հիմնավորումներով.
- 4) նորմատիվ իրավական ակտի կիրարկման արդյունքում կանխատեսվող հետևանքները գնահատելու ժամանակացույցը.
- 5) տվյալ բնագավառի քաղաքականության, ինչպես նաև համեմատական վիճակագրական վերլուծություններ:

Օրենքի նշված դրույթի կիրարկման նպատակով ՀՀ կառավարության կողմից ընդունվել են համապատասխան ոլորտներում կարգավորման ազդեցության գնահատում իրականացնելու կարգեր: 2011 թվականի ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացավ նաև ԿԱԳ համակարգի կատարելագործման համակարգը, որում նշվեց, որ ԿԱԳ-ի հիմնական սկզբունքներն են.

- ա. սոցիալական, տնտեսական, բնապահպանական և, կախված Նախագծի բովանդակությունից, հնարավոր այլ ոլորտների վրա, ազդեցությունների (օգուտների և/կամ ծախսերի) կանոնավոր, պարտադիր և հետևողական գնահատումը,
- բ. բացի պետական շահերից նաև հասարակական շահերի դիտարկումը,
- գ. կարգավորման այլընտրանքային գործիքների և լուծումների դիտարկումը,
- դ. նախքան իրավական ակտի և կարգավորման այլ գործիքների ընդունումը, քաղաքական որոշումների մասին հանրության իրազեկումը,
- ե. նախկինում իրականացված ազդեցության գնահատման արդյունքների հավաստիության գնահատումը:

Այսինքն, ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած ակտով առաջին անգամ խոսվեց կարգավորման ազդեցության գնահատում իրականացնելիս ԾՕՎ գործիքի կիրառման անհրաժեշտության մասին:

Հարկ է նկատել, որ 2018 թվականի մարտի 21-ին ընդունվեց նորմատիվ իրավական ակտերի մասին օրենք, որը սահմանում է, որ Կառավարության սահմանած կարգով և դեպքերում օրենքի կամ Կառավարության որոշման նախագիծը մշակող պետական կառավարման մարմինը կազմակերպում է նախագծի կարգավորման ազդեցության գնահատումը: Ըստ բնագավառների՝ կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը, ժամկետները և դեպքերը, դրա արդյունքում տրվող եզրակացությանը ներկայացվող պահանջները սահմանում է Կառավարությունը: Նոր օրենքը որևէ այլ կարգավորում չի նախատեսում, անգամ ընդհակառակը ավելի հպանցիկ է անդրադառնում ԿԱԳ-ի ինստիտուտին: Ավելին, ներկայումս կարգավորման ազդեցության գնահատում չի իրականացվում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նոր օրենքով նախատեսված կառավարության կողմից սահմանվելիք կարգերը դեռևս բացակայում են: Նոր օրենքի կապակցությամբ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն սույն ուսումնասիրության վերաբերյալ ներկայացված իր նկատառումներում հայտնել է իր մտահոգությունը առ այն, որ ներդրումային ծրագրերի տնտեսական գնահատում իրականացնելու վերաբերյալ որոշում կայացնելու պարագայում անհրաժեշտ է լինելու համապատասխան լրացումներ կատարել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում, քանի որ վերջինիս համաձայն ներկայումս կարգավորման ազդեցության գնահատումը՝ նորմատիվ իրավական ակտի ընդունման արդյունքով հնարավոր փոփոխությունների վերլուծություն է և ՀՀ օրենսդրությամբ, ըստ էության, ներկայումս ներդրումային ծրագրերը ենթակա չեն կարգավորման ազդեցության գնահատման:

Նկատարում 1:

Հարկ է նկատի ունենալ, սակայն, որ հակառակ նման ամրագրումներին, որպես ԿԱԳ գործընթացի հիմնարար քայլ Նախագծողը չի իրականացնում խնդրի լուծման համար այլընտրանքների բացահայտում և ընտրված այլընտրանքի հիման վրա մշակված Նախագծի հնարավոր ազդեցությունների գնահատում օգտագործելով «ծախսեր-օգուտներ վերլուծություն», «Ստանդարտ ծախսերի մոդել» կամ գնահատման այլ գործիքներ և հնարավոր ազդեցության վերաբերյալ տեղեկատվություն պարունակող ստուգաթերթ (check list):

Ըստ էության քաղաքականությունների վերլուծության և գնահատման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում դեռևս բավարար զարգացած չէ, ինստիտուցիոնալ համակարգերը բացակայում են: Քաղաքականությունների վերլուծությունները և գնահատումները կատարվում են առանձնացված կերպով, գոյություն ունի կարողությունների և փորձառության պակաս: Այնուհանդերձ կառավարությունը կարևորություն է տալիս այս գործընթացին:

Այսինքն, կարգավորման ազդեցության գնահատման ոլորտում, ըստ էության, ԾՕՎ չի իրականացվում:

ԾՕՎ-ի կիրառումը ներդրումային ծրագրերի գնահատման ժամանակ.

Մասնավոր ներդրումներ.

Առհասարակ ՀՀ-ում մասնավոր ներդրումների տնտեսական գնահատման հետ կապված կարգավորումները հիմնականում անկանոն և չկենտրոնացված բնույթ ունեն կամ դրանք անդրադառնում են որոշակի կոնկրետ նպատակների /օրինակ՝ հարկային արտոնությունների տրամադրմանը/: Ոլորտի պատասխանատու գերատեսչությունները, որոշ դեպքերում ներկայացնում են կարծիք, կամ եզրակացություն տարբեր ոլորտների ներդրումային ծրագրերի վերաբերյալ, սակայն պնդել, որ վերջիններիս իրականացվում են ներդրումային ծրագրերի օրենսդրությամբ ամրագրված *հստակ* մեթոդաբանությամբ գնահատում, այդ թվում ծախս և օգուտ վերլուծության գործիքի կիրառմամբ հնարավոր չէ:

Ներդրումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են որոշ օրենսդրական ակտերով, որոնք ինչպես նշվեց հիմնականում վերաբերում են որոշակի արտոնությունների տրամադրմանը /օրինակ՝ ներմուծումներ իրականացնելիս մաքսատուրքից ազատում, ԱԱՀ-ի վճարման ժամկետի երկարաձգում և այլն/: Սակայն, կարգավորում են ստացել նաև որոշակի հարաբերություններ կապված ներդրումներ իրականացնողներին պետական սեփականություն հանդիսացող գույքի կամ հողամասի հատկացման հետ կապված: Նշված արտոնությունների տրամադրումը հիմնականում պայմանավորվում է ՀՀ կառավարության կամ որոշակի ոլորտում ստեղծված հանձնաժողովների կողմից ներդրումային որևէ ծրագրի հավանության արժանացմամբ կամ ՀՀ կառավարության կողմից վերջիններիս ընտրությամբ: Ընդ որում, ՀՀ կառավարության որոշումներում սահմանվում են նշված ոլորտներում ներդրումային ծրագրերը հավանության արժանացնելու կարգերը: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ նույնիսկ այդ կարգերում բացակայում են հղումները ներդրումային ծրագրերի գնահատման գործիքակազմին: Վերջիններիս հիմնականում սահմանում են ներդրումների գնահատման չափորոշիչները, կարգավորում ընթացակարգային հարաբերություններ և սակավ դեպքերում նաև վերաբերում մեթոդաբանությանը:

Այսպես, օրինակ՝ ՀՀ Հարկային օրենսգրքի 79-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ընտրված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներդրումային ծրագրերի շրջանակներում ապրանքների ներմուծման մասով հաշվարկված ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետը կարող է հետաձգվել երեք տարի ժամկետով: Ի ապահովումն օրենսգրքի նշված կետի կատարման՝ ՀՀ կառավարության կողմից 05.10.2017թ. ընդունվել է N 1225-Ն որոշումը, որը սահմանում է ներդրումային ծրագրեր իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության կարգը: Թեպետև, կարգը չի հիշատակում ԾՕՎ-ի իրականացման մասին, սակայն դրանցում նախատեսված չափորոշիչների գնահատումը, ըստ էության, անուղղակիորեն իրենից ենթադրում է ԾՕ գնահատման գործիքի կիրառում: Մասնավորապես, գնահատման հիմքում դրվում են այնպիսի արդյունքային ցուցանիշներ, ինչպիսիք են տնտեսության վրա մուլտիպլիկատիվ ազդեցությունը, զբաղվածության ընդլայնումը, արտահանման ուղղվածությունը, ծրագրի իրականացման շրջանակներում տրվող միջին աշխատավարձը և այլն: Պետք է նշել, սակայն, որ համապատասխան գերատեսչությունների կողմից իրականացված գնահատումը իրականացվում է առանց մեկնաբանման և պարզ չէ հաճախ, թե ինչ հիմքով է ծրագիրը ստանում այս կամ այն միավորը: Օրինակ՝ ստորև ներկայացված է «Վանսևան» ՍՊԸ-ի ներդրումային ծրագրի գնահատման վերաբերյալ տեղեկանք՝

ՏԵՂԵԿԱՆՔ					
«Վանական» ՍՊ ընկերության կողմից իրականացվող ներդրումային ծրագրի գնահատման վերաբերյալ					
Գնահատման չափորոշիչներ	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	Ամփոփված արդյունք
Տնտեսության վրա մուլտիպլիկատիվ ազդեցություն (7)	4	4	3	4	3.8
Զբաղվածության ընդլայնում (10)	2	2	2	7	3.3
Նորարարություն և արտադրողականության բարձրացում (10)	4	0	4	0	2.0
Արտահանման ուղղվածություն (10)	9	9	4	7	7.3
Ծրագրի իրականացման շրջանակներում տրվող միջին աշխատավարձ (10)	8	9	5	6	7.0
Անձի համապատասխանությունը «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դասակարգմանը (3)	3	2	3	3	2.8
Ընդամենը	30	26	21	27	26.0

Ըստ կարգի այն ներդրումային ծրագրերը, որոնք ամփոփման արդյունքում ստանում են 26 և ավելի միավորներ, պատրաստվում է արտոնություն տրամադրելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

Նշված օրինակում, սակայն, պարզ չէ, թե ինչ սկզբունքով է օրինակ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից ծրագիրը գնահատվել 30, կամ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից գնահատվել 21:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից ծրագրերի բարձր գնահատումը հիմնականում պայմանավորված է ոչ, թե այս կամ այն ցուցանիշը բարձր գնահատելու անհրաժեշտությամբ, այլ ծրագրի ամփոփ գնահատականը նվազագույնը 26-ի հասցնելու նպատակահարմարությամբ, որը հաճախ վտանգի տակ է դրվում հատկապես ՊԵԿ-ի ցածր գնահատականով պայմանավորված: Ընդ որում, ՊԵԿ-ը ցածր գնահատում է ոչ թե պայմանավորված ներդրումային ծրագրի արդյունքային ցուցանիշների անհրատեսականության կամ չհիմնավորվածության պատճառով, այլ զուտ պետական եկամուտների վրա բացասական ազդեցության կանխման համար: Արդյունքում, առհասարակ անհասկանալի է գնահատման նման համակարգ ունենալու անհրաժեշտությունը, երբ համապատասխան գնահատումը գերատեսչություններն իրականացնում են ելնելով զուտ գերատեսչական շահից: Հարկ է նշել, որ վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ անկախ ներդրումային ծրագրի բովանդակությունից և արդյունքային ցուցանիշներից նշված որոշման շրջանակներում ՀՀ կառավարություն ներկայացված ներդրումային ծրագրերն անխտիր արժանացել են ՀՀ կառավարության հավանության:

Մեկ այլ դեպքում՝ մաքսատուրքից ազատման արտոնության կիրառման ժամանակ, ՀՀ կառավարության համապատասխան որոշման հիմքում դրվում է համապատասխան հանձնաժողովի կողմից տրված եզրակացությունը:

Ստորև ներկայացվում է մաքսատուրքից ազատման արտոնության կիրառման համար համապատասխան հանձնաժողովի տրված եզրակացության պրակտիկ օրինակ՝

ԵՐԱՎԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆՍԵՎԱՆ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 1118-Ն ՈՐՈՇՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԻՑ ԱԶԱՏՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԵՐԿԱՅԱԳՎԱԾ ՀԱՅՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի N1118-Ն որոշմամբ և հաշվի առնելով «ՎԱՆՍԵՎԱՆ» ՍՊԸ կողմից ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի N1118-Ն որոշման շրջանակներում մաքսատուրքերից ազատման արտոնությունից օգտվելու մասին ներկայացված հայտն, ինչպես նաև շահագրգիռ մարմիններից ստացված կարծիքները՝ «ՎԱՆՍԵՎԱՆ» ՍՊԸ կողմից գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և նյութերը ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար ներկայացված հայտի վերաբերյալ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը հայտնում է հետևյալը.

«ՎԱՆՍԵՎԱՆ» ՍՊԸ կողմից ներկայացվել են հետևյալ փաստաթղթերը՝

1. Դիմում
2. Ներդրումային ծրագիր՝ համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի N1118-Ն որոշման Հավելվածի N 1 ձևի, ինչպես նաև լրացուցիչ տեղեկավորություն ծրագրի վերաբերյալ՝ հայտարարի հայեցողությամբ
3. Տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի և (կամ) հումքի ու նյութերի ցանկը և դրանց տեխնիկական բնութագիր՝ համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի N1118-Ն որոշման Հավելվածի N 2 ձևի
4. Հայտարարություն՝ ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը և (կամ) հումքն ու նյութերը բացառապես Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործելու մասին՝ համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի N1118-Ն որոշման Հավելվածի N 3 ձևի:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 27-ի թիվ 442-Ն որոշմամբ հաստատված 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի նիստի N49 արձանագրային որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ գինեգործությունը հանդիսանում է գերակա ոլորտ:

«ՎԱՆՍԵՎԱՆ» սահմանափակ պատասխանարկությամբ ընկերության կողմից ներմուծվող ապրանքներն օգտագործվելու են գինեգործության մեջ:

Ծրագրի ընթացքում նախատեսվում է իրականացնել մոտ 150 մլն. ՀՀ դրամի ներդրում և ստեղծել 7 աշխատատեղ՝ 160 000 ՀՀ դրամ միջին աշխատավարձով:

Արտադրանքի ծավալները ծրագրի իրականացման 3-րդ տարում կկազմեն մոտ 684 մլն. ՀՀ դրամ, որից 17 մլն. ՀՀ դրամի արտադրանքը կիրացվի ՀՀ-ում, 152,6 մլն. ՀՀ դրամի արտադրանքը կարտահանվի ԵԱՏՄ անդամ-երկրներ, իսկ 514,4 մլն. ՀՀ դրամի արտադրանքը կարտահանվի երրորդ երկրներ:

Ներմուծվող ապրանքները չեն ներմուծվում ԵԱՏՄ անդամ-երկրներից, քանի որ չեն բավարարում ընկերությանն անհրաժեշտ տեխնիկական և որակական չափանիշներին:

Հաշվի առնելով վերոգրյալը և ամփոփելով շահագրգիռ մարմիններից ստացված կարծիքները՝ նպատակահարմար ենք գտնում բավարարել «ՎԱՆՍԵՎԱՆ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտը, որը համապատասխանում է ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1118-Ն որոշմամբ սահմանված պահանջներին:

Ինչպես երևում է վերոնշյալ օրինակում ևս հստակ չի երևում հանձնաժողովի վերլուծությունը ԾՕ ծրագրի գնահատման վերաբերյալ, այլ ընդամենը շարադրված է այն տեղեկությունը, որը տնտեսվարող սուբյեկտը ներկայացնում է ներդրումային ծրագրի մեջ: Նշված եզրակացությունները ևս ֆորմալ բնույթ են կրում: Բացի այդ, ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ, ըստ էության, մաքսատուրքից ազատման կամ ԱԱՀ-ի վճարման ժամկետի երկարաձգման արտոնություն տրամադրվել են դիմող բոլոր ընկերություններին, ուստի ակնհայտ է, որ ոլորտում պատշաճ և հանգամանալից վերլուծություն, ներդրումային ծրագրերի ամբողջական և խորը գնահատում չի կատարվում:

Մեկ այլ՝ պետական գույքի օտարման ոլորտում «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 22-րդ հոդվածով սահմանվում է, որ պետական գույքը կարող է ուղղակի եղանակով օտարվել նախօրոք հայտնի գնորդին, եթե վերջինս ներկայացրել է գործարար/ներդրումային/ ծրագիր: Սակայն օրենսդրական որևէ այլ ակտով սահմանված չէ, թե ինչպես է գնահատվելու համապատասխան ներդրումային ծրագիրը:

Ներդրումային ծրագրեր ներկայացնելու պահանջ նախատեսված է նաև մի շարք այլ օրենսդրական ակտերով ևս, մասնավորապես դրանցից են՝ ՀՀ հողային օրենսգիրքը, ՀՀ ջրային օրենսգիրքը, «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքը, «Շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքը և այլն: Թեև, վերոնշյալ օրենքներով ամրագրված՝ ներդրումային ծրագրեր ներկայացնելու պահանջին, այնուամենայնիվ կարելի է փաստել, որ օրենսդրությունում առկա չէ միասնական, հստակ կարգավորում ներդրումային ծրագրերի գնահատման ժամանակ գործիքների կամ մեթոդների կիրառման վերաբերյալ: Սակայն, հարկ է նկատի ունենալ նաև այն, որ ՀՀ օրենսդրությամբ առկա չեն նաև արգելքներ, ներդրումային ծրագրերը, որևէ ստանդարտ գործիքով գնահատելու մասով: Ճիշտ ընդհակառակը, եթե համապատասխան ճյուղային նախարարությունը ներկայացնում է ներդրումային ծրագրերի գնահատում՝ հիմնված ստանդարտ գործիքների, այդ թվում՝ ԾՕ վերլուծության վրա, ապա հաճախ վերլուծության արդյունքները ներառվում են նախագծերին կից ներկայացվող հիմնավորումներին, որպես նախագծի ընդունումը հիմնավորող հավելյալ փաստեր: Սակայն, ինչպես արդեն նշվեց վերոնշյալը պարտադիր և կանոնակարգված բնույթ չի կրում:

Հանրային/պետական ներդրումներ

Քննարկվող հարցի շրջանակներում կարծում ենք նպատակահարմար է ուշադրության արժանացնել նաև այն ներդրումային ծրագրերի գնահատման հետ կապված հարցերը, որոնք այս կամ այն կերպ ազդեցություն են ունենում պետական բյուջեի եկամուտների կամ ծախսերի վրա:

Այսպես, ուշագրավ է, որ դեռևս 2011 թվականին ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել ՀՀ-ում պետական/հանրային ներդրումների գնահատման համակարգի ներդրման ռազմավարությունը: Վերջինս բավականին մանրամասն նկարագրում է ՀՀ-ում պետական ներդրումների գնահատման ոլորտում առկա բացերը, ինստիտուցիոնալ խնդիրները, ինչպես նաև տալիս է միջազգային փորձի մանրամասն ուսումնասիրություն: Փաստաթղթում հիմնավորվում է հանրային ներդրումների գնահատման համակարգի (ՀՆԳ) ներդրման անհրաժեշտությունը: Նման համակարգի ներդրման պահանջը սահմանված էր նաև ՀՀ կառավարության և Համաշխարհային բանկի հետ իրականացվող՝ Զարգացման քաղաքականությունների գործողությունների ծրագրով: Դրա համար ՀՀ կառավարությունը, ի դեմս ՀՀ էկոնոմիկայի նախարարության, Համաշխարհային բանկի աջակցությամբ նախաձեռնել էր Հայաստանում ՀՆԳ-ի ներդրման աշխատանքները: Հարկ է նկատի ունենալ, որ թեպետև ռազմավարությունով բավականին ընդգրկուն անդրադարձ է կատարված նշված համակարգի ներդրմանը, ինչպես նաև ծախս-օգուտ վերլուծության կիրառման անհրաժեշտությանը, այն սակայն սահմանափակվում էր ընդգրկման հետևյալ շրջանակով.

Աղյուսակ 1. ՀՆԳ համակարգի ընդգրկման շրջանակը

Ներդրումների պլանավորման հիմքերը	Ֆինանսավորման աղբյուրը	Ոլորտները	Գումարային սահմանաչափերը
<ul style="list-style-type: none"> • ՀՀ պետական բյուջե • ՀՀ համայնքային բյուջեներ • Արտաբյուջեներ կամ առանձնացված հաշիվներ 	<ul style="list-style-type: none"> • հարկային եկամուտներ • գրանտներ և այլ բյուջետային եկամուտներ • արտաքին և ներքին փոխառություններ և վարկեր • պետական երաշխիքներ • ՊՄԳ-ներ 	<p>Հանրային հատվածի բոլոր ոլորտները՝ բացառությամբ պաշտպանության և ազգային անվտանգության ոլորտները</p>	<ul style="list-style-type: none"> • Կապիտալ ծրագրերի դեպքում 1 մլրդ դրամ և ավելի • Նոր նախաձեռնությունների համար առաջիկա 3 տարիների համար 1 մլրդ դրամ և ավելի • Ոչ նյութական ակտիվների համար, առաջիկա 3 տարիների համար 750 մլն դրամ և ավելի

Այսինքն, ակնհայտ է, որ մասնավոր ներդրումային ծրագրերի դեպքում ռազմավարությամբ առաջնորդվելու պարտադիր պահանջ ևս սահմանված չէ:

Ուսումնասիրության արդյունքները հանգում են այն եզրահանգման, որ ՀՀ գործող օրենսդրությամբ որևէ ոլորտում ներդրումային ծրագրերի գնահատման ժամանակ ծախս-օգուտ գործիքի կիրառման պարտադիր պահանջ ամրագրված չէ: Ինչպես նշվեց, սակայն օրենսդրության տարբեր ոլորտներում առկա են ներդրումային ծրագրերի գնահատման տարբեր չափորոշիչներ, որոնց ամբողջական գնահատման ժամանակ, այնուամենայնիվ անուղակիորեն կարող է կիրառվել քննարկվող գործիքը:

Հարկ է նկատի ունենալ, որ ներկայումս ինստիտուցիոնալ կարողությունների տեսանկյունից ծախս-օգուտի գործիք կիրառում է միայն «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» հիմնադրամը: Վերջինս, իր կողմից իրականացված գնահատումներում մանրամասն անդրադարձ է կատարում այս կամ այն կարգավորման հնարավոր օգուտներին՝ հաշվարկելով նաև ծախսերը: Սակայն, Հիմնադրամը կարգավորման ազդեցության գնահատում իրականացնում է միայն իր տարեկան պլանով նախատեսված նախագծերին, ինչպես նաև ՀՀ վարչապետի հանձնարարությամբ այլ նախագծերին: Այսինքն, պարտադիր պահանջ, որպեսզի հիմնադրամի կողմից գնահատվի մասնավոր ներդրումային ծրագրերը առկա չէ: Վերջինիս վերլուծությունները վերաբերում են հիմնականում օրենսդրական կարգավորումների հնարավոր ազդեցությանը:

Ամփոփելով վերոգրյալը, կարելի է եզրակացնել, որ թեպետև ՀՀ օրենսդրության տարբեր ոլորտներում առկա են ներդրումային ծրագրերի գնահատման որոշակի մեխանիզմներ, սակայն դրանք միասնական, կենտրոնացված և հստակ ամրագրված չեն, առկա չէ ծրագրերը ծախս-օգուտ գործիքով գնահատելու պարտադիր պահանջ և եթե նույնիսկ ծրագրերը գնահատելիս այս կամ այն գերատեսչությունը կիրառում է նշված գործիքը, ապա դրա արդյունքները հրապարակային չեն:

Ծախս-օգուտների գործիքը հստակ և հրապարակային կիրառող միակ կառույցը ՕԿԱԿ-ն է, սակայն վերջինս չի իրականացնում ներդրումային ծրագրերի գնահատում: Ըստ վերջինիս կանոնադրության կենտրոնի հիմնական ֆունկցիան կարգավորումների գնահատումն է, որի ժամանակ կիրառում է քննարկվող գործիքը:

Պետք է նշենք, սակայն, որ թեև օրենսդրությամբ ներդրումային ծրագրերի /այդ թվում՝ հանքարդյունաբերության ոլորտի/ գնահատման ժամանակ ծախս-օգուտ գործիքի կիրառման պարտադիր պահանջ ամրագրված չէ, սակայն չկա նաև որևէ խոչընդոտ կամ արգելք այն կիրառելու և խրախուսվում է վերջինիս կիրառումը նախագծերն առավել հիմնավորված դարձնելու տեսանկյունից:

Այսինքն, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ԾՕՎ իրականացնելու խոչընդոտ առկա է ոչ թե օրենսդրական համակարգում, այլ այն առավելապես ինստիտուցիոնալ կարողությունների խնդիր և խոչընդոտ է:

Առաջարկություն ինստիտուցիոնալ համակարգի և կարողության տեսանկյունից գնահատականներ և վերանայումներ իրականացնելու վերաբերյալ:

Ինչպես արդեն նշվեց, ԾՕՎ իրականացնելու խոչընդոտը առավելապես ինստիտուցիոնալ կարողությունների խնդիր և խոչընդոտ է:

ԾՕՎ-ի իրականացման համակարգի ներդրումը ենթադրում է ինստիտուցիոնալ նոր համակարգի ձևավորում, որը կապահովի գնահատման գործընթացի իրականացումը: Գնահատման գործընթացը կազմակերպելու համար անհրաժեշտ է ձևավորել նոր ինստիտուտ՝ բուն գնահատման գործընթացի իրականացման և եզրակացության տրամադրման համար:

Գնահատման ինստիտուցիոնալ մոդելի ընտրության համար հիմք է ծառայել ներկա համակարգում առկա խնդիրները ներդրումների /այդ թվում՝ հանքարդյունաբերության ոլորտում/ գնահատման անհրաժեշտությունը:

Ամփոփ կերպով կարելի է առանձնացնել այն հիմնական խնդիրները, որոնց պետք է ուղղված է լինի գնահատման նոր համակարգի ներդրումը: Դրանք են.

- Ծրագրերի մշակման ընթացքում կառավարության սոցիալ-տնտեսական գերակայությունների առավելագույն համապատասխանության ապահովում, ռազմավարական ծրագրերի և իրականացվող ծրագրերի միջև կապի ուժեղացում,
- Ծրագրերի ընտրության որոշումներում ծրագրերի հնարավոր ազդեցության ամբողջական գնահատման, դրանց օգտակարության և հանրային ազդեցության գնահատումների կիրառում,
- Ծրագրերի ամբողջական գնահատման համար պատասխանատու մարմինների ինստիտուցիոնալ հստակ պատասխանատվության սահմանում,
- Գնահատման գործընթացում ներգրավված մարմինների անհրաժեշտ զարգացած վերլուծական կարողությունների ապահովում,
- Իրականացվող ծրագրերի մոնիտորինգի և գնահատման համակարգերի ապահովում,
- Ավարտված ծրագրերի վերջնական արդյունքների բովանդակային ստուգման և գնահատման ապահովում.

Ներկայացված այս չափորոշիչների և սկզբունքների պայմաններում ենթադրվում է առանձին ինստիտուտի ստեղծում, որի լավագույն կարգավիճակը, թերևս, անկախ մարմինն է կամ նախարարություններից լիովին առանձնացված մարմնի ձևավորումը: Այնուհանդերձ, այս տարբերակը համարվում է բավականին թանկ և ինստիտուցիոնալ կայացման առումով բավականին դժվար: Մյուս կողմից, հաշվի առնելով դրա գործառնական կապվածությունը կառավարման համակարգի հետ, գործնականում նպատակահարմար չի համարվում: Պետք է դիտարկել նաև այս գործառույթի պատվիրակումը մասնավոր սեկտորին տարբերակը: Ընդ որում, հնարավոր է ինչպես մասնավոր ներդրումային ընկերությունների կողմից այդ վերլուծության իրականացումը, այնպես էլ ընդերքօգտագործողի կողմից ներկայացված վերլուծությանը գնահատական տալը: Այս տարբերակի կիրառման դեպքում մի կողմից պետությունը կխնայի զգալի միջոցներ ուղղված համապատասխան դեպարտամենտի ձևավորմանը, մյուս կողմից կզարգանա պետություն մասնավոր սեկտոր համագործակցությունը և գնահատումը կիրականացնի ներդրումային ընկերությունը, որի ընտրությունը կպահվի գաղտնի ընդերքօգտագործողից:

Քննարկենք գործնականում առավել ընդունելի տարբերակների ուժեղ և թույլ կողմերը (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2. ԾՕՎ իրականացնող մարմնի կազմավորման վերլուծություն

ԾՕՎ իրականացնող մարմնի կարգավիճակը	Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>Տարբերակ 1. ՀՀ բնապահպանության կամ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություններից որևէ մեկի (հանքարդյունաբերության մասով) կամ որևէ այլ նախարարության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանում</p>	<p>Ինստիտուցիոնալ հիմնադրումը հեշտ է,</p> <p>Մեծ է պետություն-մասնավոր հատված համագործակցության նախագծերի հետ ինտեգրման հնարավորությունը,</p> <p>Գործունեության հիմքում դրված են որոշակի արժեքներ</p>	<p>Անկախության և ինքնուրույնության ապահովման ինստիտուցիոնալ մեխանիզմները թույլ են,</p> <p>Ոչ կառավարական հատվածի արդյունավետ մասնակցության մեխանիզմներ գրեթե չկան,</p> <p>Նոր մշակույթի, գիտելիքի, կարողությունների ձևավորման գործընթացը դանդաղ կլինի,</p> <p>Անհրաժեշտ ռեսուրսները և փորձը բացակա են:</p> <p>Հնարավոր շահերի բախման առաջացումը հավանական է:</p>
<p>Տարբերակ 2. ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի համապատասխան</p>	<p>Ինստիտուցիոնալ հիմնադրումը դյուրին է</p> <p>Պրոֆեսիոնալ գնահատման</p>	<p>Ներդրումների ներգրավման առավելագույն շահագրգռվածություն, որը կարող է հանգեցնել ԾՕՎ-ի ոչ</p>

<p>ստորաբաժանում</p>	<p>հնարավորություն,</p> <p>Ներդրումների ոլորտում երկարաժամկետ պլանների, գերակայությունների և ռազմավարական ծրագրերի կապի առավելագույն ապահովման հնարավորություն,</p> <p>Դոնոր հանրության հետ համագործակցության փորձ, խոշոր ներդրումային ծրագրերի համակարգման փորձ,</p> <p>Տնտեսության տարբեր ոլորտների վերաբերյալ լավ պատկերացում,</p> <p>Կազմում նախկինում առկա է եղել Հանքարդյունաբերության վարչություն:</p>	<p>մանրամասն իրականացմանը առավել շատ ներդրումներ ներգրավելու նպատակադրմամբ:</p>
<p>Տարբերակ 3. ՕԿԱԿ</p>	<p>Ինքնուրույնության, շահերի բախման բացառման, հանրային հատվածի մասնակցության և պրոֆեսիոնալ գնահատման հնարավորություն,</p> <p>Հարակից փորձի /ԿԱԳ-ի ոլորտում/փոխանցման հնարավորություն:</p>	<p>Երկարաժամկետ պլանավորման և ռազմավարական ծրագրերի հետ արդյունավետ համապատասխանությունը երաշխավորված չէ,</p> <p>Նոր ինստիտուտի ձևավորման անհրաժեշտություն,</p> <p>Բյուջեից ֆինանսավորման ավելացում:</p>
<p>Տարբերակ 4 Ներդրումային ընկերությունների ներգրավում</p>	<p>Անկախության և ինքնուրույնության ապահովում, ընտրված ընկերության գաղտնիություն</p> <p>Ոչ կառավարման համակարգի հատվածի ներգրավում</p> <p>Շահերի բախման բացառում, անկախ գնահատողի ներգրավում</p> <p>Լավագույն փորձի, մասնագիտացված կառույցների ներգրավում</p> <p>Պետության բեռի թեթևացում</p> <p>Պետություն-մասնավոր սեկտոր համագործակցության զարգացում</p>	<p>Մասնավոր սեկտորում ներդրումային կազմակերպությունների մոտ նման կարողությունների բացակայություն /թեև նման պահանջի դեպքում, մասնավոր սեկտորը լինելով ավելի ճկուն, կփակի այս բացը ավելի արագ, ներգրավելով համապատասխան մասնագետների/</p> <p>Ընդերքօգտագործողների համար լրացուցիչ ծախսերի սահմանում, քանի որ ենթադրվում է գնահատման եզրակացության վճարը պետք է ընկնի ընդերքօգտագործողների վրա</p>

Վերլուծելով դիտարկված տարբերակները, միանշանակ մերժվում է առաջին տարբերակը, քանի որ այն չի ապահովում չափազանց կարևոր այն սկզբունքները, ինչպիսիք են գնահատման անկախությունը և անաչառությունը, ինչպես նաև անհրաժեշտ ռեսուրսներ և փորձ առկա չեն: Մասնավորապես, թեպետև օրինակ՝ միջազգային լավագույն փորձ ցույց է տալիս, որ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման կամ սոցիալական կամ առողջապահության բնագավառում կարգավորման ազդեցության եզրակացությունները ներառում են նաև ԾՕ վերլուծությունը, գտնում ենք, որ ինստիտուցիոնալ կարողությունների տեսանկյունից ՀՀ-ում գործող համապատասխան պատասխանատու լիազոր մարմինները ունակ չեն լինի իրականացել ԾՕ մանրամասն և պրոֆեսիոնալ վերլուծություն:

Եթե ընտրվի կառավարման մարմնի ներգրավումը, ապա ճյուղային նախարարությունները ծրագրային առաջարկները ներկայացնում են ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն: Վերջինս իրականացնում է ներդրումային ծրագրերի տնտեսական գնահատում՝ կիրառելով ԾՕԿ-ը: Միաժամանակ, գնահատման միջանկյալ արդյունքները կարող է ըստ

անհրաժեշտության ուղարկել համապատասխան նախարարություններ՝ համապատասխան կարծիք և դիրքորոշում ստանալու համար: Գնահատման արդյունքների ամփոփման հիման վրա նախարարությունը պատրաստում է եզրակացություն և տրամադրում հայտատու նախարարությանը: Եթե անգամ, գնահատման գործառույթը վերապահվի ներդրումային ընկերություններին, ապա պետական կառավարման մարմնին կարելի է վերապահել հետևյալ հիմնական գործառույթները.

- Ծրագրերի մշակման ձևաչափերի մշակում և սահմանում,
- Ծրագրերի գնահատման ժամանակացույցի կազմում,
- Մեթոդական խորհրդատվության մատուցում ծրագրերի մշակման գործընթացում, և
- Ծրագրերի մոնիտորինգի համակարգի մշակման և ցուցանիշների համակարգի սահմանման հարցերում խորհրդատվություն:

Օրենսդրական և նորմատիվ ակտերը, որոնք առաջարկվում է փոփոխվել, որպեսզի ԾՕՎ-ն ընդգրկի հանքարդյունաբերական նախագծերի վերաբերյալ որոշումներ կայացնելու գործընթացի մեջ:

Ընտրված մոդելի ժամանակ, որպեսզի ԾՕՎ-ն ընդգրկի հանքարդյունաբերական նախագծերի վերաբերյալ որոշումներ կայացնելու գործընթացի մեջ անհրաժեշտություն կառաջանա փոփոխություններ կատարել հետևյալ իրավական ակտերում՝

- ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք. Օրենսգրքում անհրաժեշտ կլինի սահմանել կարգավորումներ, ըստ որի ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտում, բացի ընդերքաբանական, շրջակա միջավայրի վրա ազդեցության և տեխնիկական անվտանգության փորձաքննություններից պարտադիր իրականացվի նաև տնտեսական գնահատում՝ ԾՕՎ կիրառմամբ: Ընդ որում, անհրաժեշտ կլինի նաև Օրենսգրքում տնտեսական գնահատման իրականացման կարգը սահմանելու լիազորությունը վերապահել ՀՀ կառավարությանը.
- ՀՀ կառավարության որոշման ընդունում, որը կսահմանի ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտում ներդրումային ծրագրերի տնտեսական գնահատման կարգը.
- Օրենսգրքում փոփոխության կատարում, որով կամրագրվի, որ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործումը, առանց սահմանված կարգով տնտեսական գնահատման ենթարկված նախագծի, արգելվում է.
- Ըստ անհրաժեշտության ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի հրամանով կամ ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ ԾՕՎ մեթոդական ուղեցույցին հավանություն տալու մասին որոշման/հրամանի ընդունում,
- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կանոնադրական խնդիրների և գործառույթների հստակեցման նպատակով ՀՀ կառավարության համապատասխան որոշման մեջ փոփոխությունների իրականացում, եթե որոշվի այդ գործառույթը վերապահել պետական կառավարման մարմնին կամ ենթօրենսդրական ակտերի մշակում, որով կներգրավվեն ներդրումային ընկերությունները ներկայացված վերլուծության գնահատմանը, սահմանելով ներդրումային ընկերությունների ընտրության, վարձատրության կարգը, մշակվող մեթոդաբանությունը և այլն:

ԾՕՎ-ի հետ կապված ինստիտուցիոնալ կարողությունների խնդիրները, որոնք առաջարկվում է ընդգրկվել պատասխանատու հանքարդյունահանման նախնական ճանապարհային քարտեզում:

Ամփոփելով վերոգրյալը պատասխանատու հանքարդյունահանման նախնական ճանապարհային քարտեզում առաջարկվում է ընդգրկել ԾՕՎ-ի հետ կապված հետևյալ ինստիտուցիոնալ կարողությունների խնդիրները.

NN	Խնդիրը	Ակնկալվող արդյունք
1	Օրենսդրական դաշտի վերանայում, անհրաժեշտ իրավական ակտերի ընդունում	Սահմանված է պարտադիր պահանջ հանքարդյունաբերության ոլորտում, բացի օրենքով նախատեսված փորձաքննություններից, նաև տնտեսական գնահատում իրականացնելու համար
2	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կազմում համապատասխան ստորաբաժանման հենքի վրա տնտեսական գնահատման	Առկա է համապատասխան մարմին, որը պատասխանատու է հանքարդյունաբերության ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրերի

	գործառույթների իրականացում /առանձին ստորաբաժանման ստեղծումը ավելի բարդ պրոցես է՝ հաշվի առնելով պետական ապարատի օպտիմալացման քաղաքականությունը, ուստի առաջարկվում է համապատասխան գործառույթները վերապահել նախարարության Ներդրումների ներգրավման և համակարգման վարչությանը/	տնտեսական գնահատման համար, այնպես ինչպես օրինակ՝ ՀՀ ԷԲԳՆ ընդերքաբանական փորձաքննության դեպքում
3	Համապատասխան վարչության կազմում մասնագետների համալրում կամ վերապատրաստումների իրականացում	Վարչության կարողությունների զարգացում
4	Ներդրումային ընկերությունների գործառույթի վերապահում	Պրոֆեսիոնալներով համալրված խմբի կողմից վերլուծությունների իրականացում, կամ արդեն իսկ ներկայացված վերլուծության գնահատում
5	Տնտեսական գնահատման իրականացման համար անհրաժեշտ ԾՕՎ ուղեցույցների հրապարակում	Առկա է տնտեսական գնահատման իրականացման հստակ հիմնավորված չափորոշիչներ և մեթոդաբանություն

9.2.2. Շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատում և ռազմավարական բնապահպանական գնահատում. օրենսդրական և ինստիտուցիոնալ վերանայում

ՇՄՍԱԳ և ՌԲԳ գործընթացում առկա թերությունները, մասնավորապես՝

- **Հաշվետվությունների պատրաստման գործընթացում**
- **Հաշվետվությունների պետական փորձաքննություն իրականացնելիս**
- **Բնապահպանական աղտոտման նախնական տվյալների բազայի ստեղծման տեսանկյունից**
- **Համայնքի առողջության վրա ազդեցության գնահատման տեսանկյունից**
- **Հասարակության մասնակցության տեսանկյունից:**

ՇՄՍԱԳ և ՌԲԳ իրականացման պարտավորությունները, նշված գործընթացներում առողջության վրա ազդեցության գնահատման պահանջը, քաղհասարակության մասնակցության ապահովման անհրաժեշտությունը բխում են Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորություններից, հատկապես Օրհուսի (1998) և Էսպոյի (1991) Կոնվենցիաներից: Էսպոյի (շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը) և Օրհուսի (շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը, որոշումների կայացման գործընթացներում հասարակայնության մասնակցությունը և արդարադատության մատչելիությունը) կոնվենցիաների շրջանակներում իրականացվել օրենսդրական դաշտի մի շարք փոփոխություններ: Նշվածում հատկապես կարևորելով հանրության մասնակցությունը և իրազեկվածության մակարդակի բարձրացումը, կարևորվում է ազդակիր համայնքի առողջության վրա ծրագրի ազդեցության բացահայտումն ու գնահատումը: ՇՄ վերաբերյալ տեղեկատվության հասանելիության/մատչելիության, որոշումների կայացման գործընթացներում հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին Օրհուսի Կոնվենցիան (1998) ՀՀ վավերացվել է 2001 թ.-ին: Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին Էսպոյի կոնվենցիան (1991) Հայաստանը վավերացրել է 1997-ին: Կոնվենցիայի Ռազմավարական Էկոլոգիական գնահատման արձանագրությամբ սահմանվել է պարտավորություն՝

- ա) ապահովել, որ շրջակա միջավայրին՝ ներառյալ առողջությանն առնչվող նկատառումները լիակատար ձևով հաշվի առնվեն պլաններ և ծրագրեր մշակելիս,
- բ) նպաստել, որ շրջակա միջավայրին՝ ներառյալ առողջությանն առնչվող նկատառումները ընդգրկվեն քաղաքականություն և օրենսդրություն մշակելիս,
- գ) ստեղծել պարզ, թափանցիկ և արդյունավետ ընթացակարգեր ռազմավարական էկոլոգիական գնահատման համար,
- դ) ապահովել ռազմավարական էկոլոգիական գնահատմանը հանրության մասնակցությունը ե) այս միջոցներով շրջակա միջավայրին՝ ներառյալ առողջությանն առնչվող խնդիրներն ընդգրկել կայուն զարգացման համար նախատեսված հետագա միջոցառումներում և գործիքներում:

Նշվածն ընդհանուր առմամբ իր արտացոլումն է ստացել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում: Հարկ է նկատի ունենալ, սակայն, որ թեպետև նշված օրենքը սահմանում է, որ վերջինիս գործողությունը տարածվում է շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հնարավոր ազդեցություն ունեցող հիմնադրությամբ փաստաթուղթ մշակող, ընդունող կամ նախատեսվող գործունեություն իրականացնող սուբյեկտների վրա, որպես գնահատում և փորձաքննություն իրականացնելու սկզբունք հիշատակվում է առողջության, բնականոն ապրելու և ստեղծագործելու համար բարենպաստ շրջակա միջավայր ունենալու մարդու իրավունքը, ամրագրվում է, որ գնահատման և փորձաքննության իրականացման ընթացքում դիտարկվում են նաև ազդեցությունների հետ կապված առողջապահական գործոնները, այնուամենայնիվ Օրենքի 18-րդ հոդվածում, որը սահմանում է շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության գնահատման հաշվետվությունների բովանդակությունը, որևէ խոսք չի գնում հաշվետվության բովանդակության մեջ առողջապահական ազդեցության վերլուծության կամ այդ գործոնները հաշվի առնելու մասին:

Հաշվետվությունների պատրաստման գործընթաց և հաշվետվությունների պետական փորձաքննություն

Ընդերքի օգտագործման և պահպանման ոլորտում ՇՄԱԳ իրականացնելու պահանջ նախատեսված է Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքով և «ՇՄԱԳ և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով: Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքով, մասնավորապես, պարտադիր պահանջ է նախատեսված պոտենցիալ ընդերքօգտագործողների ընդերքօգտագործման թույլտվություն հայցելու ժամանակ ապահովեն իրենց կողմից ներկայացված ծրագրերի ՇՄԱԳ: Պետությունն իր հերթին իրականացնում է ՇՄԱ փորձաքննություն: ՇՄԱ գնահատմանն ու փորձաքննությանը վերաբերող պահանջներն ամրագրվում են «ՇՄԱԳ և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով:

Օրենքի համաձայն գնահատումն իրականացնում է ձեռնարկողը: Ազդեցության գնահատման փուլում՝

- 1) Գնահատվում է հիմնադրությամբ փաստաթղթի դրույթների և նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի վրա.
- 2) Բացահայտվում են հիմնադրությամբ փաստաթղթի մոտեցումների և նախատեսվող գործունեության լուծումների այլընտրանքային տարբերակները և գնահատվում է դրանց ազդեցությունը շրջակա միջավայրի, մարդու առողջության և սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա.
- 3) Կատարվում է նախատեսվող գործունեության այլընտրանքային տարբերակների էկոլոգատնտեսական վերլուծություն և նախընտրելի տարբերակի ընտրության հիմնավորում.
- 4) Մշակվում են բնապահպանական միջոցառումներ, ներառյալ՝ ազդեցության մշտադիտարկման (մոնիթորինգի) ծրագիր՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը կանխարգելելու, նվազեցնելու կամ բացառելու նպատակով.
- 5) Հաշվի են առնվում ազդեցության աստիճանը՝ հիմք ընդունելով ազդեցության ենթակա տարածքի աշխարհագրական դիրքը, բնակչության թիվը, ազդեցության հավանականությունը, բարդությունը, աստիճանը, տևողությունը, հաճախականությունը և տարբեր ազդեցությունների գումարային բնույթը.
- 6) Գնահատման ընթացքում հաշվի է առնվում նախատեսվող գործունեության տարածքում այլ գործունեությունների իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա գումարային ազդեցությունը:

Ըստ օրենքի գնահատման մեթոդիկան պետք է հաստատվեր Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

Սակայն վերջինս չի հաստատվել: Ընդ որում, նշված մեթոդիկան հաստատելու միջոցառումը տեղ չի գտնել նաև «ՇՄԱԳ և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկում /ՀՀ վարչապետի 19.08.2014թ. թիվ 782-Ա որոշում/⁴⁰:

Միաժամանակ առաջարկում ենք, ՇՄԱԳ-ի գործընթացներում ներառել նաև էկոհամակարգային ծառայությունների գնահատումը:

Բարձրացված խնդիրը հատկապես կարևորվում է այն դեպքում, երբ բնապահպանների կողմից մատնանշվում է պրակտիկայում հանդիպող մոտեցում, երբ ընդերքօգտագործման թույլտվություններում էական պայմանների փոփոխությունը, լեռնահատկացման ակտով ամրագրված կորոդինատների փոփոխությունն ու գրանցումը կատարվում են առանց լրացուցիչ ՇՄԱԳ ընթացակարգի պահպանման:

Շրջակա միջավայրի ազդեցության գնահատմանը վերաբերող ընթացակարգային այլ ակտեր ՀՀ օրենսդրությամբ սահմանված չեն: Հիշյալ օրենքով ուղղակի ամրագրված է ծրագիրը ձեռնարկողի կողմից ՇՄԱԳ իրականացման պահանջ, ուստի հիշյալ գործընթացի իրականացման թերությունների վերհանման հնարավորություն առկա չէ: Ըստ էության, տնտեսվարողն ինքն է որոշում ՇՄԱԳ-ի իրականացման մեթոդաբանությունը, չափորոշիչները և ընթացակարգը /Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի կողմից տրամադրված տեխնիկական առաջադրանքին համապատասխան/ և պետական կառավարման մարմիններին ներկայացնում է զուտ դրա արդյունքները՝ ներառյալ նաև հանրային քննարկումների արդյունքները:

Ինչ վերաբերում է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությանը, ապա ՀՀ Կառավարության 09.04.2015թ. թիվ 399-Ն որոշմամբ ամրագրված է հիմնադրությային փաստաթղթի և նախատեսվող գործունեության ՇՄԱ Փորձաքննության իրականացման կարգը: Կարգի համաձայն փորձաքննությունն իրականացվում է երկու փուլով՝ նախնական և հիմնական: Փորձաքննության նախնական և հիմնական փուլերում կարող է պայմանագրային հիմունքներով ներգրավվել համապատասխան ոլորտի իրավաբանական կամ ֆիզիկական անձ հանդիսացող փորձագետ, որի կողմից կազմվում և փորձաքննական կետորոն է ներկայացվում մասնագիտական եզրակացություն: Հիմնադրությային փաստաթղթերի փորձաքննության դեպքում գործընթացում ներգրավվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը, որի կողմից տրվում է եզրակացություն կամ կարծիք:

⁴⁰ ՇՄԱԳ մեթոդիկաների առկայության հետ կապված հարկ է նկատել, որ ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29 N 29 արձանագրային որոշմամբ հավանության են արժանացել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դրույթների կիրարկման հետևյալ ուղեցույցները՝

- օգտակար հանաձոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման իրավունքներ հայցելու համար ներկայացվող շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի կազմման.
- օգտակար հանաձոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման իրավունքներ հայցելու համար ներկայացվող շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական գնահատման հաշվետվության կազմման.
- հանքի փակման ծրագրի կազմման.
- օգտակար հանաձոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման իրավունքներ հայցելու համար ներկայացվող շրջակա միջավայրի վրա գումարային ազդեցության գնահատման հաշվետվության կազմման.
- օգտակար հանաձոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման իրավունքներ հայցելու համար ներկայացվող սոցիալ-տնտեսական ազդեցության գնահատման հաշվետվության կազմման.
- օգտակար հանաձոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման իրավունքներ հայցելու համար ներկայացվող շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական գնահատման հաշվետվության լիարժեքության գնահատման:

Թեպետև կարգը բավական մանրամասն կարգավորում է փորձաքննության իրականացման պրոցեսը, սակայն կարծում ենք, որ այստեղ առկա են որոշակի խնդիրներ: Մասնավորապես, սահմանվում է, որ փորձաքննության նախնական փուլում՝ 10 աշխատանքային օրվա, իսկ հիմնական փուլում՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում պետական կառավարման մարմիններից հիմնադրությային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ կարծիք, եզրակացություն չստանալու դեպքում դրանք համարվում են **դրական**:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այստեղ խոսքը հիմնականում վերաբերում է հանրային առողջությանը, գտնում ենք, որ օրինակ՝ առողջապահության նախարարության կողմից համապատասխան եզրակացությունը սահմանված ժամկետում չտրամադրելու դեպքում անթույլատրելի է այն համարել դրական: Առաջարկվում է եզրակացություն կամ կարծիքը դրական համարելու փոխարեն սահմանված ժամկետում կարծիք կամ եզրակացություն չտրամադրելու դեպքում փորձաքննական եզրակացությունը տրամադրել առանց վերոնշյալ ազդեցությունը հաշվի առնելու: Նշվածը սրվում է հատկապես այն դեպքում, որ առկա չէ պատասխանատվության մեխանիզմ այս կամ այն լիազոր մարմնի /քննարկվող դեպքում առողջապահության բնագավառի լիազոր մարմնի/ կողմից սահմանված ժամկետում կարծիք կամ եզրակացություն չտրամադրելու համար:

Ընդ որում, պետական կառավարման մարմինների՝ փաստաթղթերի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ կարծիքին և եզրակացությանը ներկայացվող չափանիշները բացակայում են, ինչի հետևանքով վերջիններիս դիրքորոշումները կարող են լինել ոչ հստակ կամ հակասական:

Բացի այդ, ուշագրավ է այն հարցը, որ փորձաքննություն իրականացնող մարմինը, ըստ էության, լինելով ընդերքօգտագործման վերաբերյալ որոշումների գործընթացում կարևորագույն գործառույթներով օժտված մարմին, այնուամենայնիվ չունի բավարար ինստիտուցիոնալ և մասնագիտական կարողություններ:

Կարգը նկարագրում է նաև հանրային քննարկումների կազմակերպման պահանջը, տեխնիկական առաջադրանքի և փորձաքննական եզրակացության տրամադրման ժամկետները:

Կարգում կամ առհասարակ ՀՀ օրենսդրության մեջ առկա չէ որևէ դրույթ փորձաքննական եզրակացության իրավական կարգավիճակի վերաբերյալ: Մինչդեռ դատական պրակտիկայում վերջինս ճանաչվել է վարչական ակտ չհանդիսացող փաստաթուղթ, որի դեպքում խնդիրներ են առաջանում վերջինիս օրինականության վիճարկման տեսանկյունից: Անիրաժեշտ է նկատի ունենալ, սակայն, որ ՀՀ բնապահպանության նախարարության նախաձեռնությամբ «ՇՄԱԳ և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում առաջարկվել են փոփոխություններ /նախագիծն արդեն ներկայացված է ԱԺ/, ըստ որի լիազոր մարմնի փորձաքննական եզրակացությունը կհանդիսանա վարչական ակտ և վերջինիս բողոքարկման ժամանակ դրա կարգավիճակին վերաբերող իրավական խնդիրներ չեն առաջանա:

Հասարակության մասնակցություն ՇՄԱԳ/ՌԲԳ գործընթացին

ՇՄԱԳ հասարակության մասնակցության հետ կապված հարաբերություններ կարգավորված են նույն օրենքի 26-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 19.11.2014թ. թիվ 1325-Ն որոշմամբ, որով սահմանվել է հանրային ծանուցումների և քննարկումների իրականացման կարգը: Կարգը, մասնավորապես, սահմանում է, որ հանրային ծանուցում և քննարկումներ իրականացվում են շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական և հիմնական գնահատումների ընթացքում, փորձաքննության նախնական և հիմնական փուլերում: Նշված ակտերով պարտավորություն է սահմանված ծրագիրը ձեռնարկողի, համապատասխան մարզպետարանի, վարչական շրջանների ղեկավարների և պետական կառավարման մարմինների համար ՇՄԱԳ համապատասխան փուլերում իրականացնել հանրային իրազեկումներ և քննարկումների պատշաճ կազմակերպում: Սահմանված է, որ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության փուլերում

փորձաքննական կենտրոնն իր պաշտոնական կայքում տեղադրում է հիմնադրությային փաստաթղթին կամ նախատեսվող գործունեությանն առնչվող փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները և ոչ տեխնիկական լեզվով գրված փաստաթղթերի ամփոփ բովանդակությունը:

Հնարավորություն է ընձեռված նաև ազդակիր բնակչության համար որոշակի ժամկետներում ներկայացնել դիտողություններ, առաջարկություններ կամ հարցադրումներ, որոնց պետք է տրվի պատշաճ պատասխան: Ընդ որում, Օրենքի համաձայն գնահատումն իրականացնելիս հաշվի են առնվում գործընթացի մասնակիցների ներկայացրած դիտողությունները և առաջարկությունները: Դրանք չընդունելու դեպքում հաշվետվությունում ներառվում են համապատասխան հիմնավորումներ: Սահմանվում է, որ ազդեցության գնահատման գործընթացում ձեռնարկողը կարող է խորհրդակցել լիազորված մարմնի, պետական կառավարման մարմինների, ազդակիր համայնքի ղեկավարների, շահագրգիռ հանրության հետ:

Թերությունները առավել հաճախ հանդիպում են գործնական դաշտում հանրային քննարկման համար անհրաժեշտ փաստաթղթերի ոչ ամբողջական տրամադրման, որոշակի տեղեկատվության չիրապարակման, ազդակիր բնակչության կողմից բարձրացված հարցադրումներին ոչ ամբողջական պատասխանների տրամադրման կամ դրանք թերի կերպով ՇՄԱԳ-ում ընդգրկման, հանրային մտահոգություններին անդրադարձ չկատարելու տեսանկյունից:

ՇՄԱԳի անցկացման կարգի իրավական կարգավորման հետ կապված հարկ է նկատել, որ մասնագետների կողմից իբրև սահմանված իրավակարգի թերություն նշվում է հիմնական փուլում սահմանված ժամկետի կասեցման բացակայության հնարավորությունը: Բացի այդ, գործնականում գործընթացին մասնակցում է որպես կանոն մեկ փորձագետ, ինչը ևս կասկածի տակ է դնում է ՇՄԱԳ-ի արժանահավատությունը:

Համայնքի առողջության վրա ազդեցության գնահատման կարգավորումներ

ՀՀ Կառավարության 09.04.2015թ. թիվ 399-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն հիմնադրությային փաստաթղթերի փորձաքննության դեպքում գործընթացում ներգրավվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը, որի կողմից տրվում է եզրակացություն կամ կարծիք: Սակայն, հիմնադրությային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ կարծիք, եզրակացություն չստանալու դեպքում դրանք համարվում են **դրական**: Գտնում ենք, որ առողջապահական ազդեցության տեսանկյունից եզրակացությունը սահմանված ժամկետում չտրամադրելու դեպքում անթույլատրելի է այն համարել դրական:

Միաժամանակ հարկ է նկատի ունենալ, որ ՀՀ օրենսդրության մեջ բացակայում է նշված ծրագրերի առողջապահական ազդեցության գնահատման մեթոդաբանությունը, առկա չէ ազդեցության գնահատման չափորոշիչները, ինչպես նաև հստակ համագործակցություն նախատեսող կառուցակարգերը ՇՄԱՓ իրականացող մարմնի և առողջապահության ազդեցության գնահատում իրականացնող մարմնի միջև, և եթե նույնիսկ համապատասխան գնահատումներն իրականացվում են միջազգային ընդունված չափանիշների կիրառմամբ, ապա դրանք իրապարակային չեն:

Հանքարդյունաբերական ծրագրերի՝ համայնքի առողջության վրա ազդեցության գնահատման վերաբերյալ միջազգային լավագույն փորձը

Հանքարդյունաբերության ոլորտում առողջության վրա ազդեցության գնահատման միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում ոլորտում առանձին առողջության վրա ազդեցության գնահատման ինքնուրույն ինստիտուտ չի հայտնաբերվել: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ առողջության վրա ազդեցության հետ կապված հարցերը ընդգրկված են շրջակա միջավայրի վրա ազդեցության, և հատկապես սոցիալական ազդեցության գնահատման եզրակացություններում:

Հատկանշական է սակայն, որ Հանքարդյունաբերության և մետաղների միջազգային խորհրդի կողմից (ICMM), որին միացել են աշխարհի առաջատար հանքարդյունաբերական ընկերությունները,

մշակվել է առողջության վրա ազդեցության գնահատման ուղեցույց, որն առաջարկում ենք տեղայնացնել ՀՀ օրենսդրական համակարգում և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացում առաջարկել ՀՀ առողջապահության նախարարությանը համապատասխան եզրակացություններ կամ կարծիքներ տրամադրելիս առաջնորդվի վերոնշյալ ուղեցույցով:

Բացի այդ, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի լիարժեք կիրարկման համար դեռևս բացակայում են մի շարք ենթաօրենսդրական ակտեր, ուղեցույցներ, մասնավորապես մարդու առողջության վրա ազդեցության գնահատման, շրջակա միջավայրի վրա գումարային ազդեցության գնահատման մեթոդաբանություններ, ինչպես նաև մարդու առողջությանը հասցված վնասի գնահատման և փոխհատուցման հստակ ձևակերպված պահանջ և գնահատման մեթոդաբանություն:

ՔՀԿ դատական գործընթաց սկսելու հնարավորությունը

Համեմատական վերլուծության ենթարկելով Օրհուսի՝ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիայի 9-րդ հոդվածի /արդարադատության մատչելիություն/ և տվյալ հասարակական հարաբերությունները կարգավորող համապատասխան ներպետական օրենսդրական ակտերի դրույթները /մասնավորապես՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, «Վարչական դատավարության օրենսգիրք», «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենք, կարելի է եզրակացնել, որ ՀՀ-ում լիովին օրենսդրորեն ապահովված չէ արդարադատության մատչելիության իրավունքի իրականացման նպատակով հասարակական համապատասխան ներկայացուցիչների կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների, գործողությունների և անգործության համապատասխան դատական ընթացակարգերի միջոցով վիճարկելու հնարավորությունը:

Արդարադատության մատչելիության իրավունքի իրականացման խոչընդոտները հիմնականում օրենսդրական են: Այսպես, ՀՀ քաղաքացիական և վարչական դատավարության օրենսգրքերով շահագրգիռ ֆիզիկական կամ իրավաբանական անձը կարող է դիմել դատարան իր իրավունքների խախտման դեպքում:

Հայաստանի Հանրապետությունը 2001թ. վավերացրել է «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» (Օրհուսի) կոնվենցիան, որի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

Յուրաքանչյուր Կողմ ազգային օրենսդրության շրջանակներում պարտավոր է ապահովել, որ շահագրգիռ հասարակայնության ներկայացուցիչները, ովքեր՝ ա) ցուցաբերում են բավականաչափ շահագրգռվածություն կամ՝ որպես այլընտրանքային տարբերակ բ) համարում են, որ տեղի է ունեցել այս կամ այն իրավունքի խախտում, եթե դա համապատասխան Կողմի վարչական վարույթի նորմերով սահմանվում է որպես նախապայման, ունենան հնարավորություն, ազգային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և առանց ստորև բերված 3-րդ կետի կամ սույն Կոնվենցիայի այլ համապատասխան դրույթների խախտման, դատարանում և/կամ օրենքին համապատասխան ստեղծված անկախ և անկողմնակալ մարմնում ընդունված որոշումների վերանայման հնարավորություն՝ 6-րդ հոդվածի դրույթների շրջանակներում ընդունված ցանկացած որոշման, կատարված գործողության կամ անգործության օրինականությունը նյութական և ընթացակարգային իրավունքի տեսակետից վիճարկելու նպատակով:

Բավարար շահագրգռվածության առկայությունը և այս կամ այն իրավունքի խախտված լինելը որոշվում է՝ ելնելով ազգային օրենսդրության դրույթներից և Կոնվենցիայի իմաստով

շահագրգիռ հասարակայնությանն արդարադատության լայն մատչելիություն ապահովելու նպատակից:

Եվրոպական միության տնտեսական հանձնաժողովը 2013թ. սահմանելով Օրիուսի կոնվենցիայի կիրարկման ուղեցույցը՝ անդրադարձել է վերոնշյալ դրույթների մեկնաբանությանը՝ նշելով՝ «Այս դրույթը պարտավորեցնում է Կողմերին նախատեսելու հասարակայնության իրավունքը վիճարկելու ընդունված որոշումները, կատարված գործողությունը կամ անգործությունը, ամեն դեպքում Կողմերին վերապահելով իրավունք որոշելու շահագրգիռ լինելու և իրավունքի խախտված լինելու հանգամանքները»:

«Սահմանադրական դատարանը անդրադառնալով այս հիմնախնդրին՝ 2010թ. սեպտեմբերի 7-ի թիվ ՍԴՌ-906 որոշմամբ ամրագրել է հետևյալը՝

Հաշվի առնելով հասարակական կազմակերպությունների դերը պետության և քաղաքացիական հասարակության կյանքում, առաջնորդվելով վերջիններիս գործունեության արդյունավետության բարձրացման նկատառումներով՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը շահագրգիռ (կանոնադրական համապատասխան իրավասությամբ օժտված) հասարակական կազմակերպությունների համար, որպես իրավաբանական անձ, կարող է սահմանել տվյալ ոլորտում անձանց խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը՝ հաշվի առնելով *actio popularis* բողոքների ինստիտուտի առնչությամբ եվրոպական ներկա զարգացումների միտումները: Նման իրավակարգավորումը կնպաստեր ոչ միայն խախտված իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, այդ թվում դատական պաշտպանության արդյունավետությանը, այլև կբարձրացներ քաղաքացիական հասարակության բաղադրատարր հանդիսացող՝ հասարակական կազմակերպությունների դերը: Ընդ որում, ուրիշի խախտված իրավունքների համար դատարան կամ այլ մարմիններին ու պաշտոնատար անձանց դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը սահմանելիս հարկ կլինի հաշվի առնել միայն այն հասարակական կազմակերպություններին, որոնց նպատակներից են կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանությունը: Այս դիրքորոշումը համահունչ է նաև «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին, որի համաձայն՝ կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն իրականացնելու համար իրավունք ունի օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր և իր անդամների իրավունքները և օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում:

Վարչական դատավարությունում այլոց իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմելու իրավունքի (*Actio popularis*) առնչությամբ միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ, որպես կանոն, եվրոպական երկրներում այս ինստիտուտն իր դասական իմաստով և լրիվ ծավալով կիրառում չունի: Միաժամանակ, սահմանադրական դատարանը նման ուսումնասիրության արդյունքներով արձանագրում է, որ մի շարք երկրներում վարչական գործերով հայց ներկայացնելու իրավասության հիմնական չափանիշ է հանդիսանում «իրավական շահագրգռվածությունը»: Վերջինս դատաիրավական պրակտիկայում ստացել է այնքան լայն մեկնաբանություն, որ հասարակական կազմակերպություններին կամ քաղաքացիական նախաձեռնությամբ հանդես եկող և օրենքով սահմանված կարգով գործունեություն իրականացնող այլ միավորումների հնարավորություն է ընձեռվում հանդես գալ որոշակի խմբի կոլեկտիվ իրավունքի պաշտպանությամբ, եթե այդ պաշտպանությունը տվյալ միավորման կոնկրետ նպատակների շրջանակում է»:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 30.10.2009թ. թիվ ՎԴ/3275/05/08 որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Սույն գործով Էկոդար» ՀԿ-ն գրանցված է «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, բավարարում է ազգային օրենսդրությամբ նախատեսված չափանիշներին և, հիմք ընդունելով վերջինիս կանոնադրային նպատակները և խնդիրները, զբաղվում է շրջակա միջավայրի պահպանության հարցերով, ուստի

Օրհուսի կոնվենցիայի իմաստով վերջինիս պետք է դիտարկել որպես շահագրգիռ հասարակայնություն»:

«Սահմանադրական դատարանը թիվ 747 որոշման մեջ արձանագրել է, որ «շահագրգիռ անձ» հասկացությունը գնահատման ենթակա հասկացություն է, և յուրաքանչյուր կոնկրետ գործով, ելնելով տվյալ գործի կոնկրետ հանգամանքներից, գործը քննող դատարանն է իրավասու գնահատելու այս հասկացությունը և պարզելու, թե արդյոք տվյալ անձը գործի ելքում ունի իրավական շահագրգռվածություն:

Վերոգրյալ նորմերի համատեքստում անհրաժեշտ է անդրադառնալ նաև այլոց իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմելու իրավունքի (Actio popularis) առնչությամբ միջազգային փորձին:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2004 թ. դեկտեմբերի 15-ի «Վարչական ակտերի նկատմամբ դատական վերահսկողության մասին» թիվ (2004) 20 հանձնարարականով սահմանված է, որ անդամ պետությունները խրախուսվում են ուսումնասիրելու, թե արդյոք դատական կարգով վերանայման հնարավորությունը չպետք է բաց լինի ընկերակցությունների կամ համայնքային կամ ընդհանուր շահեր պաշտպանելու իրավասությամբ օժտված այլ անձանց կամ կառույցների համար (Սկզբունք 2, կետ 1):

Նույն Հանձնարարականի Բացատրական հուշագրում այս դրույթին կատարված անդրադարձով նշվում է, որ հանձնարարականը քաջալերում է հասարակական կամ համայնքային շահերի պաշտպանության իրավունքով օժտված հասարակական կազմակերպություններին, միավորումներին, այլ անձանց կամ մարմիններին հնարավորություն տալ պաշտպանել այս իրավունքները և դրանց պաշտպանության նպատակով դիմել դատարան: Այստեղ խոսք է գնում այն վարչական ակտերի մասին, որոնք անդրադառնում են ոչ թե անհատի, այլ անձանց խմբերի շահերին: Ընդ որում «վարչական ակտ» հասկացության տակ ենթադրվում է անհատական և նորմատիվ իրավական ակտերը, որոնք ընդունվել են վարչական մարմնի կողմից և որոնք կարող են ազդել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց իրավունքների վրա, գործողության մերժման կամ անգործության դեպքերը, երբ վարչական մարմնի ներկայացուցիչը պարտավոր է դիմումի հիման վրա վարույթ հարուցել:

«Չ դատարանների նախագահների խորհուրդը (այսուհետ՝ ԴՆԽ), «մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա, ընդունեց ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի կիրառման դատական պրակտիկայի մասին N 127 որոշումը, որում, մասնավորապես, նշվում է. «Անձինք չեն կարող դատարանում հայցել անձամբ իրենց չվերաբերող որևէ վարչարարության ստուգում միայն այն պատճառով, որ նրանք ընդհանրապես շահագրգռված են վարչական մարմինների իրավաչափ գործունեության մեջ»: ԴՆԽ որոշմամբ քննարկվում է նաև հետևյալը. «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողովը) խնդրո առարկայի վերաբերյալ ունի հետևյալ դիրքորոշումը. «Առաջնային է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունենա վիճարկելու որոշումն այն հիմքով, որ այն խախտում է իր իրավունքները: Եթե որոշումն անմիջականորեն չի խախտել անձի իրավունքները, ապա վիճարկման հնարավորության ընձեռումը ներպետական օրենսդրության կարգավորման խնդիրն է»:

Actio Popularis սկզբունքը տարբեր երկրներում տարբեր ամրագրում է ստացել: Այսպես, ՌԴ վարչական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած շահագրգիռ անձ, ով համարում է, որ իր իրավունքները խախտվել են կամ կարող են խախտվել, ինչպես նաև իրավունք ունեն դիմելու դատարան այլ անձանց իրավունքների կամ հանրային շահի պաշտպանության համար այն դեպքում, երբ դա նախատեսված է օրենքով և այլ իրավական ակտերով:

Լիտվայի վարչական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածում ևս նմանատիպ լուծում է տրվել, նշելով, որ իրավաբանական անձինք իրավունք ունեն հանրային շահի պաշտպանության հայցով դիմել դատարան, եթե օրենքով նրանց նման իրավասություն տրված է:

«Բնապահպանության և լանդշաֆտների պահպանության մասին» Գերմանիայի դաշնային օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բնապահպանական ճանաչված հասարակական կազմակերպությունը կարող է բողոքարկել 63-րդ հոդվածի 1-ին մասի 2-4-րդ կետերով, 2-րդ մասի 5-7-րդ կետերով սահմանված որոշումները, եթե հասարակական կազմակերպությունը.

- 1) պնդում է, որ այդ որոշումը հակասում է սույն օրենքի դրույթներին, այն իրավական դրույթներին, որոնք ընդունվել են սույն օրենքի հիման վրա կամ շարունակում են կիրառվել, երկրամասերի բնապահպանական իրավունքին կամ այլ իրավական դրույթներին, որոնք պետք է հաշվի առնվեն այդ որոշմամբ և առնվազն պետք է ծառայեն բնապահպանության և լանդշաֆտների պահպանության շահերին,
- 2) շոշափվում են իր կանոնադրությամբ նախատեսված խնդիրներն ու գործունեության ոլորտը, որքանով իր ճանաչումը դրանց է վերաբերում
- 3) իրավունք ունեն մասնակցելու 63-րդ հոդվածի 1-ին մասի 2-4-րդ կետերի կամ 2-րդ մասի 5-7-րդ մասերի համաձայն, և նա, ըստ էության, արտահայտվել է դրա վերաբերյալ կամ նրան չի տրվել արտահայտվելու հնարավորություն:

Այսպիսով, Գերմանիայում բնապահպանական կազմակերպությունները իրավասու են ներկայացնելու հանրային շահի պաշտպանությանն ուղղված հայցեր, որոնք առնչվում են կոնկրետ բնապահպանության օրենքների խախտմանը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային որոշումներում, անդրադառնալով այս հարցին նշել է, որ վեճը պետք է լինի իրական և իր բնույթով՝ որոշակի: Վեճը չի կարող կապված լինել անձի քաղաքացիական իրավունքների և պարտականությունների հետ աննշան կամ հեռակա կերպով, այլ այդ իրավունքները և պարտականությունները պետք է կազմեն հայցի առարկան, և վեճի հնարավոր լուծումը պետք է վճռական և ուղղակի նշանակություն և ազդեցություն ունենա պաշտպանվող իրավունքների և ազատությունների վրա (Le Compte. Van Leuven and De Meyere v. Belgium):

Վերագրյալ իրավական նորմերի ամբողջական վերլուծությունից կարող ենք եզրակացնել, որ Օրիուսի կոնվենցիան պարտավորեցնում է Կողմերին ապահովել հասարակական կազմակերպությունների դատարան դիմելու իրավունքը, և միաժամանակ իրավունք է վերապահում Կողմերին սահմանել կոնկրետ չափանիշներ այդ իրավունքի իրացման համար՝ Կոնվենցիայի 9-րդ հոդվածով ամրագրելով պարտադիր չափանիշ՝ այն է բավարար շահագրգռվածություն:

Բավարար շահագրգռվածության չափանիշը սահմանվել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից, ինչպես նաև տարբեր երկրների կողմից իրենց օրենսդրություններում որպես արդարադատության մատչելիության իրավունքի իրականացման նախապայման: Սակայն Actio popularis-ի առնչությամբ միջազգային փորձի ուսումնասիրությունից կարող ենք եզրակացնել, որ եվրոպական երկրներում այս ինստիտուտն իր դասական իմաստով և լրիվ ծավալով կիրառում չունի:

Հարկ է նկատի ունենալ, որ ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված և ՀՀ ԱԺ-ի կողմից 2018թ. փետրվարին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսվել է նոր ինստիտուտ «Խմբային հայցի հիման վրա քննվող գործերի վարույթ» վերտառությամբ: Այն, մասնավորապես, սահմանում է, որ առնվազն 20 համահայցվորի կողմից համատեղ ներկայացված հայցը համարվում է խմբային, եթե հայցը հարուցված է միևնույն պատասխանողի (համապատասխանողների) դեմ և հայցի առարկան և հիմքը նույնն են: Դատարանում խմբային հայցով ներկայացուցիչ կարող է լինել տվյալ խմբային հայցի ցանկացած հայցվոր, իրավապաշտպան հասարակական կազմակերպություն կամ փաստաբան, որն ունի դատարանում գործը վարելու պատշաճ ձևակերպված լիազորություն:

Նախագիծն ՀՀ Ազգային ժողովի կողմից քննարկվել է երկրորդ ընթերցմամբ փետրվարի 8-ին, քվեարկվել և ընդունվել է երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ փետրվարի 9-ին:

Ուշագրավ է նաև այն, որ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով ևս նախատեսված է հասարակական կազմակերպությունների կողմից շրջակա միջավայրի պահպանության ոլորտում իրենց շահառուների օրինական շահերը դատարանում ներկայացնելու հնարավորություն:

Նույն Օրենքի 17-րդ հոդվածում սահմանվում է կազմակերպության շահառուների հասկացությունը, ըստ որի կազմակերպության շահառուներն են նրա կանոնադրությամբ նախատեսված անձինք կամ անձանց խմբերը, ի շահ որոնց իրականացվում է Կազմակերպության գործունեությունը:

Այս առումով գտնում ենք, որ շահառուների նշված ձևակերպումը հակասական մեկնաբանությունների տեղիք կարող է տալ և խոչընդոտել ՀԿ-ների կողմից դատարաններում ներկայացուցչության իրականացմանը:

Առաջարկություն ՇՄԱԱԳ/ՌԲԳ գործընթացում առկա թերությունները վերացման համար օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումների վերաբերյալ

Սույն բաժնով բարձրացված խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է՝

- 1) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածում, որը սահմանում է շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության գնահատման հաշվետվությունների բովանդակությունը, հստակ ամրագրել, որ հաշվետվության բովանդակության մեջ անդրադարձ պետք է կատարվի նաև առողջապահական ազդեցության վերլուծությանը, ծրագրի հնարավոր բացասական ազդեցությունը, վնասները և այլն.⁴¹
- 2) Ի կատարումն հիշատակված օրենքի ՀՀ կառավարության որոշմամբ սահմանել ՇՄԱԳ մեթոդիկան.
- 3) Փոփոխություններ կատարել ՀՀ Կառավարության 09.04.2015թ. թիվ 399-Ն որոշմամբ ամրագրված հիմնադրությամբ փաստաթղթի և նախատեսվող գործունեության ՇՄԱ Փորձաքննության իրականացման կարգում, որով կամրագրվի, որ սահմանված ժամկետում առողջապահության նախարարության կողմից համապատասխան եզրակացության չտրամադրման դեպքում ՇՄԱ փորձաքննական եզրակացությունը տրվում է առանց առողջապահության վրա ազդեցության եզրակացության կամ առհասարակ չի տրամադրվում

⁴¹Առողջության վրա ազդեցության գնահատումը նոր ինստիտուտ է: Ձարգացած երկրները սկսեցին անդրադառնալ այս հարցին առավել համակարգված կերպով միայն 1990-ների վերջերից: Չնայած սրան, արդեն իսկ առկա է մասնագիտական գրականություն և այս հարցերով մասնագիտացված փորձագետներ: Այս հարցերի ուսումնասիրությունը դուրս է սույն հետազոտության շրջանակից: Առաջարկում ենք Կառավարությանը ներգրավել այս ոլորտի մասնագետներ, քննարկելու թե ինչպես ներառել առողջության վրա ազդեցության գնահատումը ՇՄԱԳ և ՌԲԳ շրջանակներում: Ստորը ներկայացնում են օգտակար աղբյուրներ.

- [World Health Organization \(WHO\)](#) webpage dedicated to Health Impact Assessment (HIA).
- [Gothenburg Consensus Paper: Health Impact Assessment: Main Concepts and Suggested Approach \(1999\)](#). This is one of the first internationally adopted documents attempting to clarify and offer preliminary guidance to this field.
- [WHO Regional Office for Europe. Health in Impact Assessments: Opportunities Not to Be Missed \(2014\)](#). Offers examples of Estonia, Sweden, Norway among other related discussions.
- [Pan American Health Organization and WHO Regional Office for Americas: Health Impact Assessment: Concepts and Guidelines for the Americas \(2013\)](#). Offers discussion of HIA its methodology and tools. Give example of US and Europe.
- [International Finance Corporation \(IFC\). Introduction to Health Impact Assessment \(2009\)](#). This document provides guidance to practioners for conducting a health impact assessment for projects. This guidance supports IFC's Performance Standards on Social and Environmental Sustainability.
- [World Bank. Guidance on Environmental and Social Framework 4: Community Health and Safety \(2018\)](#). Addresses the health, safety, and security risks and impacts on project-affected communities and the corresponding responsibility of Borrowers to avoid or minimize such risks and impacts. Emphasizes the project life-cycle.
- [European Observatory on Health Systems and Policies and WHO, The Effectiveness of Health Impact Assessment: Scope and Limitations of Supporting Decision-Making in Europe \(2007\)](#). Offers critical evaluation of experience with HIA.

և սահմանվում են կարգապահական կամ վարչական պատասխանատվություն իրավասու պաշտոնատար անձի համար նշված եզրակացությունը սահմանված ժամկետում չտրամադրելու համար

- 4) Միջոցառումներ ձեռնարկել Հանքարդյունաբերության և մետաղների միջազգային խորհրդի կողմից (ICMM) մշակված առողջության վրա ազդեցության գնահատման ուղեցույցի ՀՀ օրենսդրական համակարգում տեղայնացման ուղղությամբ՝ առաջարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացում ՀՀ առողջապահության բնագավառի լիազոր մարմնին համապատասխան եզրակացություններ կամ կարծիքներ տրամադրելիս առաջնորդվել վերոնշյալ ուղեցույցով.
- 5) Փոփոխություններ նախատեսել ՀՀ ԱԺ կողմից առաջին ընթերցմամբ ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխում նախ նվազեցնելով 20 համահայցվորի պահանջը և դատարանում խմբային հայցով ներկայացուցիչ լինելու հնարավորություն տալ ոչ միայն իրավապաշտպան հասարակական կազմակերպություններին: Անհրաժեշտ ենք համարում նշել, սակայն, որ խմբային հայցերով դատարան դիմելու ինստիտուտը բավական առաջընթաց է միջազգային ստանձնած պարտավորությունների /Օրհուսի կոնվենցիա/ ապահովման տեսանկյունից և կարելի է անգամ այս ոլորտում փոփոխություններ դեռևս չնախաձեռնել՝ դրանց անդրադառնալով խմբային հայցերով դատարան դիմելու ինստիտուտի կիրառման մոնիթորինգից հետո.
- 6) Քաղհասարակության՝ դատական գործընթացին մասնակցության ապահովման համար առաջարկվում է քննարկել նաև Գերմանիայի օրենսդրությամբ նախատեսված կարգավորումները Հայաստանի Հանրապետության օրենսդրություն ներմուծելու հարցը.
- 7) Փոփոխություն կատարել «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում, դրանից հանելով հասարակական կազմակերպությունների կողմից շրջակա միջավայրի պահպանության ոլորտում միայն իրենց շահառուների օրինական շահերը դատարանում ներկայացնելու արգելքը:

9.2.3. Մոնիթորինգ. Բնապահպանական, համայնքային և հանրային առողջություն Շրջակա միջավայրի, համայնքների և հանրային առողջության մոնիթորինգի վերաբերյալ Հայաստանում գործող կանոնակարգերը և ինստիտուցիոնալ կարողությունները

Բնապահպանական մոնիթորինգ.

ՀՀ օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա է բնապահպանական մոնիթորինգի երկու տեսակ՝

1. իրականացվում է տնտեսվարող սուբյեկտի կողմից, որի արդյունքները ներկայացվում են համապատասխան լիազոր մարմնին.
2. պետության կողմից իրականացվող՝ ի դեմս «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության:

Վերջինս ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 15-ի N 1277-Ն որոշմամբ՝ «Թափոնների ուսումնասիրության կենտրոն, «Հիդրոերկրաբանական մոնիթորինգի կենտրոն», «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն» և «Տեղեկատվական-վերլուծական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների միաձուլման արդյունքում:

Հարկ է նկատի ունենալ, որ ըստ պաշտոնական տեղեկատվության Հանրապետությունում պետական մակարդակով շրջակա միջավայրի աղտոտվածության մոնիթորինգի կանոնակարգված աշխատանքները սկսվել են անցյալ դարի 60-ական թվականներից: Մոնիթորինգային աշխատանքները իրականացվել են բնակավայրերի օդի և մակերևութային ջրերի՝ գետերի, լճերի և ջրամբարների քիմիական աղտոտվածության որոշման բնագավառներում: 80-ականների վերջում իրականացվել են էպիզոդիկ նմուշառումներ հողերի աղտոտվածության որոշման նպատակով, սակայն աշխատանքները չեն շարունակվել, իսկ վերցված նմուշների փորձազննումները կատարվել են հանրապետությունից դուրս:

Վերջին ժամանակներում որոշակի աշխատանքներ են տարվել մոնիթորինգի համակարգի կատարելագործման ուղղությամբ: Մասնավորապես 2006թ մայիս 18-ին ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ հավանության արժանացած ՀՀ-ում շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի հայեցակարգով: Հետագայում նշված հայեցակարգի հենքի վրա ընդունվել է նաև ՀՀ կառավարության 2007թ, փետրվարի 15-ի՝ նշված հայեցակարգից բխող խնդիրների իրականացման միջոցառումների 2007-2011թթ ծրագիրը, ծրագրով նախատեսվում է շրջակա միջավայրի տարբեր ոլորտներում ներդնել մոնիթորինգի իրականացման հստակ մեխանիզմներ:

2016թ. ստեղծված «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի գործունեության հիմնական առարկան Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ընդհանուր համատեքստում էկոլոգիական անվտանգության ապահովման պետական քաղաքականության և ռազմավարությունների մշակման և կենսագործման, բնության պահպանության և բնական ռեսուրսների թույլատրելի օգտագործման ապահովման համար անհրաժեշտ հենքի շրջակա միջավայրի վրա մարդածին ներգործության և դրա հետևանքների մոնիթորինգի (դիտարկումների, կանխատեսման, գնահատման) և ուսումնասիրության կազմակերպումն է այդ բնագավառում իր և այլ կազմակերպությունների կողմից իրականացվող աշխատանքների արդյունքներն ամբողջացնելու, կարգավորելու, համակարգելու և պետական մարմիններին, կազմակերպություններին և բնակչությանը համապատասխան ինֆորմացիա տրամադրելու նպատակով:

ՇՄՄՏԿ ՊՈԱԿ-ը հանրապետության էկոլոգիական վիճակի մասին տեղեկատվությունը ներկայացնում է ամենամսյա և տարեկան տեղեկանքների տեսքով, կազմվում են օրի աղտոտվածության բաշխվածության շաբաթական և ամսական քարտեզներ: Բարձր և արտակարգ բարձր աղտոտվածությունների գրանցման դեպքում ահազանգվում է ՀՀ բնապահպանության նախարարություն՝ հաղորդագրերի տեսքով, համապատասխան լրացուցիչ միջոցառումների անցկացման համար:

Ինչ վերաբերում է տնտեսվարող սուբյեկտի կողմից իրականացվող մշտադիտարկումներին, ապա դրա իրականացման պարտավորությունն ամրագրված է Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքում: Օրենսգրքի համաձայն ընդերքօգտագործման թույլտվություն ստանալու համար տնտեսվարող սուբյեկտը պետք է շրջակա միջավայրի ազդեցության գնահատականը տալուց բացի, ներկայացնի նաև այդ թվում բնապահպանական կառավարման պլանը և մշտադիտարկումների ծրագրերը և յուրաքանչյուր տարվա ավարտից հետո՝ մինչև հաջորդ տարվա փետրվարի 20-ը, ընդերքի օգտագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին ներկայացնել ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորված մշտադիտարկումների հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում գնահատված արդյունքների վերաբերյալ ամփոփ տարեկան հաշվետվությունը:

ՀՀ բնապահպանության նախարարության 2018 թվականի փետրվարի 22-ի N-191 որոշմամբ հաստատվել է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորված մշտադիտարկումների հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում գնահատված արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը Նշված նախագծով, մասնավորապես, ամրագրված է, որ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով մշտադիտարկումների ցուցիչները մշակվում են ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային ծրագրերին զուգընթաց՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագրով, օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային նախագծով, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտով և ազդեցության գնահատման հաշվետվությամբ

ամրագրված ցուցանիշների հիման վրա: Մշտադիտարկումների ծրագրի կազմման համար որպես ելակետային տվյալներ դիտարկվում են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախնական հայտով և հիմնական հաշվետվությամբ ներկայացված տվյալները շրջակա միջավայրի փաստացի աղտոտվածության վերաբերյալ: Մշտադիտարկումների ծրագիրը կազմվում է ըստ շրջակա միջավայրի բոլոր բնական բաղադրիչների՝ հողային ծածկույթ, մթնոլորտային օդ, մակերևութային և ստորերկրյա ջրեր, բուսական ծածկույթ և կենդանական աշխարհ:

Ընդերքօգտագործողները պարտավոր են ընդերքօգտագործման իրավունք հայցելու նպատակով ներկայացվող նախագծային/ծրագրային փաստաթղթերում, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտով և/կամ հիմնական գնահատման հաշվետվությամբ ամրագրված ցուցանիշներից բացասական շեղումների դեպքում նախաձեռնել անհրաժեշտ քայլերը հետևանքները վերացնելու համար: Մշտադիտարկումների արդյունքների վերաբերյալ եռամսյակային կտրվածքով հաղորդումները (մետաղական օգտակար հանածոների դեպքում), տարեկան ամփոփ հաշվետվությունները ընդերքօգտագործողները լիազոր մարմինն են ներկայացնում թղթային կամ էլեկտրոնային եղանակով: Նախագծով նախատեսվում է նաև, որ լիազոր մարմինն եռամսյակային հաղորդումներն ու ամփոփ տարեկան հաշվետվությունները ստանալուց հետո ամփոփում է դրանք և 10 աշխատանքային օրվա ընթացքում տեղադրում նախարարության պաշտոնական կայքում: Ըստ հիշյալ նախագծի՝ յուրաքանչյուր 5 տարին մեկ անգամ ընդերքօգտագործողները պարտավոր են վերանայել և լիազոր մարմնի հետ համաձայնեցնել ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող աշխատանքների ծրագիրը և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչները:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել նաև «Էկոլոգիական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով սահմանվում է բնապահպանական մոնիթորինգի հասկացությունը: Նախագծի համաձայն ՀՀ կառավարությունը պետք է յուրաքանչյուր տարի հաստատի բնապահպանական միասնական պետական մոնիթորինգի տարեկան ծրագիր և մոնիթորինգի հիմնական ցուցանիշների ցանկը:

Նախագծով սկզբունքորեն նոր մոտեցումներ են առաջարկվում բնապահպանական մոնիթորինգի իրականացման համար: Ըստ էության սահմանվում են բնապահպանական մոնիթորինգի տեսակները: Նախագծով բնապահպանական մոնիթորինգին նվիրված է առանձին գլուխ:

«ԳԼՈՒԽ 8

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

Հոդված 41. Բնապահպանական մոնիթորինգի նպատակը, սկզբունքներն ու խնդիրները

1. Բնապահպանական մոնիթորինգի (այսուհետ՝ մոնիթորինգ) նպատակը՝ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության բարձր մակարդակի, էկոլոգիական անվտանգության և բնական ռեսուրսների կայուն օգտագործման ապահովումն է՝ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների նկատմամբ դիտարկումների իրականացման, վիճակի գնահատման վերաբերյալ բավարար տվյալների ստեղծման, դրանց գրանցման, վերլուծման, տրամադրման ու պահման միջոցով:

2. Մոնիթորինգի սկզբունքներն են՝

1) պլանավորված ու միջազգայնորեն ընդունված հիմնական ցուցանիշների կիրառմամբ դիտարկումների իրականացումը:

2) բնածին և մարդածին ազդեցությունների հետևանքով շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վիճակի փոփոխությունների ժամանակին բացահայտումն ու կանխարգելումը:

3) շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վիճակի վերաբերյալ ամբողջական, հավաստի և համադրելի տեղեկատվության ստացումն ու տրամադրումը:

3. Մոնիթորինգի խնդիրներն են՝

1) ստացված տեղեկատվությամբ շրջակա միջավայրի ու բնական ռեսուրսների վիճակի գնահատում իրականացնելու հնարավորության ապահովումը:

2) շրջակա միջավայրի ու բնական ռեսուրսների վիճակի հնարավոր փոփոխությունների կանխարգելումների համար հիմքերի ստեղծման ապահովումը:

3) շրջակա միջավայրի ու բնական ռեսուրսների պահպանության վերաբերյալ քաղաքական որոշումներ կայացնողներին հիմնավորումների ապահովումը:

4) բնապահպանական միջոցառումների իրականացում պահանջող իրավիճակների բացահայտման ապահովումը:

Հոդված 42. Մոնիթորինգի կարգավորման առարկան և մեթոդները

1. Մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների որակական և քանակական հատկությունների և դրա վրա ազդեցություն ունեցող գործոնների գնահատման համար՝ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների հետպլազմային բաղադրիչների նկատմամբ՝

1) մթնոլորտային օդի աղտոտվածության, մթնոլորտային օդի վրա ֆիզիկական ներգործությունների, մթնոլորտում տեղի ունեցող բնական երևույթների, ինչպես նաև կլիմայի փոփոխությունների, օզոնային շերտը քայքայող նյութերի և մարդածին այլ ազդեցությունների ու երևույթների նկատմամբ:

2) մակերևութային ու ստորերկրյա ջրային ռեսուրսների, ջրաէկոհամակարգերի, ջրային ռեսուրսների ծախսի, որակական ու քանակական հատկությունների, բաղադրության, քիմիական ու ռադիոակտիվ նյութերով և թափոններով աղտոտվածության, ինչպես նաև ջրային ռեսուրսների վիճակը վատթարացնող այլ ազդեցությունների ու երևույթների նկատմամբ:

3) հողերի աղտոտվածության վիճակի ու որակական փոփոխությունների և հողերի վրա այլ բացասական ազդեցությունների ու երևույթների նկատմամբ:

4) հանրապետության տարածքի ճառագայթային աղտոտվածության վիճակի նկատմամբ:

5) թափոնների և դրանց հեռացման վայրերի բացասական ազդեցությունների նկատմամբ:

6) բուսական ու կենդանական աշխարհի օբյեկտների, այդ թվում՝ բնության հարույժ պահպանվող տարածքների ու անտառների, տեսակների ու դրանց պոպուլյացիաների, համակենցությունների բազմազանության, ինչպես նաև դրանց տարածվածության, բնակության վայրերի կամ աճելավայրերի և տեսակների գոյության համար առանձնահատուկ դեր խաղացող էկոհամակարգերի նկատմամբ:

2. Մոնիթորինգն իրականացվում է նաև այն բնական աղբյուրների կամ պարտադրության դեպքում, որոնք առաջացնում կամ կարող են առաջացնել շրջակա միջավայրի աղտոտում կամ բնական ռեսուրսների վիճակի վատթարացում (հարույժ մոնիթորինգ):

3. Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների հնարավոր փոփոխությունները բնութագրող ցուցանիշների կայունացմամբ պայմանավորված մոնիթորինգն իրականացվում է կանոնավոր (շարունակական) կամ պարբերաբար (մասնակի) դիտարկումների միջոցով՝ չափումների, տեղում գննությունների ու հետազոտությունների, այդ թվում՝ գիտական հետազոտությունների, հաշվառման ու գույքագրման, վերլուծությունների և օրինակներից ու առկա տվյալներից բխող աճանցյալների հավաքման ու հաշվարկման և այլ մեթոդներով:

4. Մոնիթորինգն իրականացվում է սույն օրենքի, տվյալ ոլորտը կարգավորող իրավական այլ ակտերի պահանջների մոնիթորինգի ծրագրի և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված մոնիթորինգի հիմնական ցուցանիշների ցանկի, ինչպես նաև տվյալ ոլորտի լիազոր մարմնի կողմից որոշված տվյալ բնակավայրին կամ տարածքին բնորոշ առանձնահատուկ ցուցանիշների ցանկի համաձայն:

Հոդված 43. Մոնիթորինգի համակարգը

1. Մոնիթորինգի համակարգը ներառում է՝

1) բնապահպանական միասնական պետական մոնիթորինգը:

2) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց սեփական լիազորությունների շրջանակներում, իրավաբանական ու ֆիզիկական անձանց կամ հասարակական կազմակերպությունների կողմից իրենց նախաձեռնությամբ իրականացվող հասարակական մոնիթորինգը:

3) օրենքով սահմանված կարգով կազմակերպությունների կողմից իրականացվող մոնիթորինգը (ինքնահսկում):

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ստանդարտների և մեթոդների հիման վրա՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված պահանջներով:

3. Մոնիթորինգն իրականացվում է պետական ու համայնքային բյուջեների, իրավաբանական ու ֆիզիկական անձանց, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների միջոցների և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

Հոդված 44. Բնապահպանական միասնական պետական մոնիթորինգը

1. Բնապահպանական միասնական պետական մոնիթորինգը, որպես էկոլոգիական քաղաքականության գործիք իրականացվում է պետական կառավարման մարմինների կողմից:

2. Բնապահպանական միասնական պետական մոնիթորինգի համակարգը ներառում է՝

1) հանրապետական և տարածքային պետական կառավարման մարմինների կողմից իրականացվող պետական մոնիթորինգը:

2) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պետության պատվիրակած լիազորությունների շրջանակներում իրականացվող մոնիթորինգը:

3) համապատասխան պետական կառավարման լիազոր մարմինների կողմից իրականացվող հարույժ մոնիթորինգը, որն իրականացվում է շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վիճակի մասին լրացուցիչ տեղեկություններ պահանջվելու դեպքում, ներառյալ՝ բնական աղբյուրների կամ վթարների դեպքերը, որոնք կարող են առաջացնել գերաղտոտվածություն կամ շրջակա միջավայրի դեգրադացիա:

4) պետական պատվերով մասնագիտացված կազմակերպությունների, գիտական (ակադեմիական) հիմնարկների կողմից իրականացվող մոնիթորինգը:

3. Հասարակական մոնիթորինգը և օրենքով սահմանված ինքնահսկում իրականացնող կազմակերպությունների կողմից իրականացվող մոնիթորինգն օժանդակում են բնապահպանական միասնական պետական մոնիթորինգի համակարգին:

4. Բնապահպանական միասնական պետական մոնիթորինգ իրականացնող սուբյեկտները պարտավոր են համապատասխան մոնիթորինգ իրականացնելու ընթացքում ստացված տեղեկատվությունը փոխանցել բնապահպանական միասնական տեղեկատվական շտեմարան:

5. Բնապահպանական միասնական պետական մոնիթորինգն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հաստատված մոնիթորինգի ծրագրին համապատասխան:

Հոդված 45. Հասարակական մոնիթորինգը

1. Իրենց միջոցների հաշվին հասարակական մոնիթորինգ կարող են իրականացնել այն սուբյեկտները, որոնք՝

1) ունեն շրջակա միջավայրի կամ բնական ռեսուրսների տվյալ բաղադրիչի նկատմամբ մոնիթորինգի իրականացման համապատասխան մասնագիտական աշխատանքային փորձ կամ կարող են ապահովել համապատասխան մասնագիտական աշխատանքային փորձ ունեցողի ներգրավումը:

2) ունեն կամ կարող են ապահովել մոնիթորինգի իրականացմանն անհրաժեշտ հավաքարմագրված լաբորատորիաների, չափաբերված սարքերի ու սարքավորումների կամ այլ անհրաժեշտ միջոցների առկայությունը:

3) կարող են ապահովել տվյալ բաղադրիչի վիճակի վերաբերյալ գիտական ընդունված և հուսալի մեթոդների վրա հիմնված տեղեկատվության ստացումը:

2. Հասարակական մոնիթորինգ իրականացնողը լիազոր մարմինն նախապես հայտնում է իր կողմից մոնիթորինգ իրականացնելու մտադրության մասին: Մոնիթորինգն իրականացվում է համադրելի մեթոդներով:

3. Հասարակական մոնիթորինգ իրականացնողը լիազոր մարմինն տեղեկացնում է մոնիթորինգի արդյունքների մասին հիմնավորելով ստացված տեղեկատվության հավաստիությունը, ներառյալ՝ կիրառված մեթոդների համադրելիությունը (ստուգելի լինելը): Ստացված տեղեկատվությունը մոնիթորինգ իրականացնողը սահմանված կարգով տեղադրում է իր ինտերնետային կայք-էջում:

4. Հասարակական մոնիթորինգ իրականացնողներն իրավասու են իրենց կողմից կատարված մոնիթորինգի արդյունքում ստացված տեղեկատվության հիման վրա կատարել շրջակա միջավայրի կամ բնական ռեսուրսների վիճակի գնահատում և մասնակցել գնահատման ազգային զեկույցների պատրաստման աշխատանքներին:

Հոդված 46. Մոնիթորինգի ծրագրին ներկայացվող պահանջները

1. Մոնիթորինգի ծրագիրը ներառում է՝

1) մոնիթորինգի նպատակը:

2) մոնիթորինգի դիտակետի անվանումը, վայրը և տեղադիրքը (աշխարհագրական կոորդինատները)՝ համաձայն դասակարգման չափանիշների:

3) մոնիթորինգի առարկան:

4) դիտարկման ենթակա ցուցանիշների ցանկը:

5) դիտարկման տեսակը (կանոնավոր կամ պարբերաբար), դիտարկումների ժամանակահատվածն ու հաճախականությունը (նմուշառումների ժամերն ու դրանց միջև ընկած ժամանակահատվածը), փորձանմուշների քանակը:

6) չափման միջոցներն ու չափման մեթոդները:

7) լաբորատոր կամ միայն սարքերի ու սարքավորումների միջոցով մոնիթորինգի իրականացման դեպքում լաբորատորիաների հավաքարմագրման, սերտիֆիկացման, չափիչ սարքերի և սարքավորումների տեսակի, դրանց վիճակի, չափման մեթոդների զգայնության աստիճանի և չափաբերման մասին տեղեկատվությունը:

8) մոնիթորինգի արդյունքում ստացված տեղեկատվության և հաշվետվությունների տրամադրման ժամկետներն ու ձևերը:

9) մոնիթորինգի իրականացման ֆինանսավորման աղբյուրն ու ֆինանսավորման չափը:

2. Օրենքով սահմանված կարգով ինքնահսկում իրականացնող կազմակերպությունները մոնիթորինգն իրականացնում են ինքնահսկման ծրագրին համապատասխան:

Հոդված 47. Մոնիթորինգի կազմակերպման առանձնահատկությունը

1. Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների բաղադրիչների վիճակի ու դրանց վրա ազդող գործոնների նկատմամբ իրականացված միասնական պետական մոնիթորինգի տվյալներից ելնելով լիազոր մարմինն իրավասու է մոնիթորինգ իրականացնող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, գիտական հիմնարկների կամ հասարակական մոնիթորինգ իրականացնող սուբյեկտների կողմից մոնիթորինգի իրականացման համար սահմանել լրացուցիչ պահանջներ, որը վերաբերում է՝

1) աղտոտման մակարդակների չափումների համար մոնիթորինգի տեղամասերի, դիտարկման վայրերի նվազագույն քանակի ընտրությանը, լրացուցիչ ցուցանիշների կիրառմանը, սարքավորումների ու չափման մեթոդների կիրառմանը, նմուշառմանն ու չափումների հաճախականության որոշմանը:

2) աղտոտման մակարդակների մոդելավորմանը, ներառյալ՝ աղտոտիչների ցրվածության ու ակնկալվող աղտոտիչների հաշվառմանը, արտադրողների կամ անշարժ ու շարժական աղբյուրներից արտանետումների սահմանային թույլատրելի չափաքանակների հաշվարկմանը:

3) մոնիթորինգի իրականացման համար ելակետային տվյալների ձեռք բերմանը, ինչպես նաև մոնիթորինգի արդյունքում ստացված տեղեկատվության հիման վրա վիճակի գնահատմանը և այն լիազոր մարմինն ներկայացմանը:

4) մոնիթորինգի տվյալների հավաքմանը, գրանցմանը, պահմանը և տեղեկատվության տրամադրմանը:

5) այլ պահանջներ, որոնք կնպաստեն մոնիթորինգի արդյունքում հավաստի տեղեկատվության ստացմանն ու այդ տեղեկատվության մատչելիության ապահովմանը: >:

Հարկ է նկատի ունենալ, որ նախագծով կարգավորումներ է նախատեսում նաև մոնիթորինգի արդյունքների հետագա կիրառման վերաբերյալ: Նախագծի 23-րդ հոդվածն ամրագրում է, որ մոնիթորինգի արդյունքների հիման վրա իրականացվում են բնական ռեսուրսների համալիր պահպանությանն անհրաժեշտ միջոցառումներ /արգելքների, սահմանափակումների, թույլտվության տրամադրման պահանջների սահմանման, ինչպես նաև տեսչական ստուգումների, ինքնահսկման իրականացման և ռեսուրսախնայողությունն ապահովող լավագույն հասանելի տեխնոլոգիաների կիրառման միջոցով/: Ըստ նախագծի բնական ռեսուրսների կայուն օգտագործումը և կիրականացվի մոնիթորինգի արդյունքում ստացված տվյալների հիման վրա՝ հաշվի առնելով կլիմայական և եղանակային պայմաններն ու տարածքը:

Առողջապահության մոնիթորինգ

Առողջապահության ոլորտում իրականացվող մոնիթորինգին վերաբերող հարաբերությունները կարգավորվում են «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքով, ՀՀ առողջապահության նախարարության կանոնադրությամբ և ՀՀ առողջապահության նախարարի կողմից հաստատված «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ: Մասնավորապես, ըստ Օրենքի այն սահմանում է Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման իրավական, տնտեսական և կազմակերպական հիմքերը, ինչպես նաև պետության կողմից նախատեսվող այն երաշխիքները, որոնք բացառում են մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցությունը և բարենպաստ պայմաններ ապահովում նրա և ապագա սերունդների կենսունակության համար: Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովումը իրականացվում է բնակչության առողջության պահպանման, հիվանդությունների կանխարգելման և շրջակա միջավայրի առողջացման պետական, տեղական նպատակային ծրագրերի իրագործմամբ: 2018թ. Նպատակային ծրագիրը հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2017թ. սեպտեմբերի 28-ի արձանագրային որոշմամբ: Նշված որոշմամբ ամրագրված է, որ պետական բյուջեից ֆինանսավորմամբ նախարարության կողմից իրականացվում է շրջակա միջավայրի գործոնների լաբորատոր հետազոտությունների իրականացում և եզրակացությունների տրամադրում, բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների ազդեցության սոցիալ-հիգիենիկ գնումների (մոնիթորինգի) իրականացում, արդյունքների վերլուծություն ու գնահատում:

Ըստ Օրենքի բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների ազդեցության սոցիալ-հիգիենիկ գնումների կազմակերպումն իրականացնում էր Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայությունը: Հարկ է նկատի ունենալ, սակայն, որ պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայությունը 2002թ. վերակազմակերպվել է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կազմում գործող Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության /թիվ 1316-Ն որոշում/, վերջինս էլ իր հերթին տեսչական բարեփոխումների արդյունքում 27.04.2017 թվականի N 444-Ն որոշմամբ լուծարվել է և ստեղծվել է Առողջապահական տեսչական մարմինը: Հարկ է նշել, որ «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում (այսուհետ՝ Օրենք) արդեն իսկ կատարվել են համապատասխան փոփոխություններ (2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-162-Ն ՀՀ օրենք) և սահմանվել են ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում ՀՀ առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի և Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած՝ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի լիազորությունները: Մասնավորապես՝ Օրենքի 6-րդ հոդվածում սահմանվել են ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում ՀՀ առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի լիազորությունները, որտեղ և ներառվել է բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների ազդեցության սոցիալ-հիգիենիկ դիտարկումների, ուսումնասիրությունների իրականացումը:

Շրջակա միջավայրի և առողջության մոնիթորինգի արդյունքների կապը ոլորտում իրականացվող սրուգումների հետ

Ինչպես ցույց են տալիս շրջակա միջավայրի և առողջապահության մասով ՀՀ օրենսդրության համակարգային վերլուծության արդյունքները, ՀՀ օրենսդրությամբ ամրագրված են համապատասխան մոնիթորինգների իրականացման որոշակի կարգավորումներ: Սակայն, պնդել, որ դրանք ամբողջապես կարգավորված են կամ ստուգումների ընդհանուր շղթայի մաս են հանդիսանում հնարավոր չէ:

Ինչպես արդեն նշվեց, բնապահպանական մոնիթորինգի դերի բարձրացմանն ուղղված կարևոր քայլ կարող է համարվել «Էկոլոգիական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի և դրանից բխող իրավական ակտերի ընդունում: Վերջինս ի տարբերություն ոլորտային օրենսդրությունում առկա գործող կարգավորումների, հստակ նախատեսում է բնապահպանական մոնիթորինգի տեսակները, ամրագրում դրա արդյունքների՝ բնապահպանական շտեմարաններում ներառման պարտավորություն, ինչպես նաև սահմանում, որ մոնիթորինգի արդյունքները հիմք են հանդիսանալու բնապահպանական համալիր միջոցառումների իրականացման համար:

Կարծում ենք, որ օրենքի ընդունումը կարող է էականորեն խթանել բնապահպանական մոնիթորինգի դերի բարձրացումը:

Ինչ վերաբերում է առողջապահական մոնիթորինգին, այստեղ պատկերը մի փոքր այլ է: Չկան հստակ ամրագրված մոնիթորինգի տեսակները, պարզ չէ կապը մոնիթորինգի արդյունքների կիրառման հետագա քայլերի հետ և օրենսդրության վերլուծությունն ընդամենը թույլ է տալիս ենթադրելու, որ առողջապահական մոնիթորինգի արդյունքները օգտագործվում են առողջապահական տեսչական մարմնի կողմից՝ անհրաժեշտ վերահսկողությունների, ստուգումների իրականացման, խախտումների հայտնաբերման կամ պատասխանատվության սահմանման նպատակով:

Բնապահպանական և առողջապահական մոնիթորինգի դերի բարձրացմանն ուղղված առաջարկներ

Բնապահպանական մոնիթորինգ.

Ոլորտում կարևորվում է «Էկոլոգիական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի ընդունում՝ հետագայում դրանից բխող իրավական ակտերի ընդունման պայմանով:

Կարծում ենք, որ վերջինս կարևոր քայլ կարող է հանդիսանալ բնապահպանական մոնիթորինգի կարևորության ընդգծման համար և հետագա քայլերը կարելի է պայմանավորել օրենքի ընդունումից որոշակի ժամանակահատվածի ընթացքում դիտարկումների իրականացմամբ:

«Էկոլոգիական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի նախագծի չընդունման դեպքում առաջարկվում է փոփոխություններ կատարել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում՝ մոնիթորինգի վերաբերյալ դրույթները ներառել վերջինիս մեջ և հստակ ամրագրել մոնիթորինգի և բնապահպանական համալիր միջոցառումների իրականացման միջև կապը:

Կարծում ենք, որ մոնիթորինգի դերի բարձրացմանն ուղղված կարևորագույն քայլ կարող է հանդիսանալ նաև օրենքով՝ բնապահպանական մոնիթորինգի տարեկան ծրագրեր մշակելու և հաստատելու, հանրային վերահսկողության նպատակով մոնիթորինգի արդյունքները հրապարակելու պահանջ սահմանելը:

Առողջապահական մոնիթորինգ.

Առողջապահական մոնիթորինգի հետ կապված հարցերը հիմնականում համակարգված և կանոնակարգված բնույթ չեն կրում: Վերջինիս դերի բարձրացման տեսանկյունից առաջարկվում է՝ «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարել սահմանելով մոնիթորինգի տեսակները, դրանց արդյունքների կիրառման ոլորտները, պարտավորություն առողջապահական տեսչության համար՝ մոնիթորինգի արդյունքների հիման վրա ձեռնարկելու համապատասխան համալիր միջոցառումներ:

Ինչպես բնապահպանական մոնիթորինգի դեպքում, այնպես էլ այստեղ, կարծում ենք, որ մոնիթորինգի դերի բարձրացմանն ուղղված կարևորագույն քայլ կարող է հանդիսանալ նաև

օրենքով՝ մոնիթորինգի տարեկան ծրագրեր մշակելու և հաստատելու, հանրային վերահսկողության նպատակով մոնիթորինգի արդյունքները հրապարակելու պահանջ սահմանելը:

Ստուգումներ և օրենքների գործադրում. Բնապահպանական, հանքարդյունաբերական, աշխատանքային առողջություն և անվտանգություն, հանրային առողջություն

ՀՀ-ում տեսչական բարեփոխումների սկիզբ դրվել է 2009թ.-ին ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած տեսչական բարեփոխումների հայեցակարգով /17.09.2009թ. N 1135-Ն որոշում/: Նշված որոշմամբ հաստատվել է նաև տեսչական բարեփոխումների իրականացման գործողությունների ծրագիրը, ստեղծվել է տեսչական բարեփոխումների համակարգման խորհուրդ: Բարեփոխումների իրականացման առաջին փուլն ամփոփվեց ստուգման նոր ընթացակարգերի մշակմամբ և ամբողջացմամբ, ներդրվեց ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգը, ստուգումների գործընթացներում գործարկվեցին ստուգաթերթերը: Հետագայում 2014թ. սեպտեմբերի 25-ի թիվ 40 արձանագրությամբ հավանության է արժանացել տեսչական համակարգի օպտիմալացման հայեցակարգը: 2015 թվականից մեկնարկեց տեսչական բարեփոխումների երկրորդ փուլը, որի շրջանակներում իրականացվում է տեսչական համակարգի օպտիմիզացիա: 2014թ. դեկտեմբերի 17-ին ընդունվեց և 2015թ. հունվարի 9-ից ուժի մեջ մտավ «Տեսչական մարմինների մասին» նոր օրենքը: Օրենքի անցումային դրույթներով սահմանվեց, որ բոլոր տեսչական մարմինները պետք է ստեղծվեն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք տարվա ընթացքում (2018թ. հունվարի 9): 12.12.2017թ. փոփոխություններ կատարվեցին օրենքում և սահմանվեց, որ գործադիր իշխանության համակարգում գործող վերահսկողություն իրականացնող մարմինների կողմից սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին իրականացվող լիազորությունների իրականացման նպատակով տեսչական մարմիններ կարող են ստեղծվել մինչև նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնը ստանձնելու օրը: Տեսչական բարեփոխումների սահուն իրականացման համար ընդունվեցին նաև ՀՀ կառավարության 29.05.2009թ. «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» թիվ 594-Ա, իսկ այնուհետև նաև 30.07.2015թ. թիվ 839-Ա որոշումները: Նշված որոշումներով արգելվեցին տեսչությունների կողմից ստուգումների իրականացումը, բացառությամբ ՀՀ վարչապետի հանձնարարությամբ իրականացվող ստուգումների և նոր ստեղծված տեսչական մարմինների կողմից իրականացվող ստուգումների, որոնք նախատեսվում է իրականացնել ոլորտային ստուգաթերթերի հիման վրա: 30.07.2015թ. թիվ 839-Ա որոշումը պարբերաբար ենթարկվեց փոփոխությունների, որով անընդհատ երկարաձգվում էր ստուգումների կատարման արգելքի ժամկետը: Վերջին փոփոխությամբ ստուգումներ չիրականացնելու ժամկետ սահմանվել էր 31.12.2017թ.: Նշված ժամկետը փոփոխության չի ենթարկվել: Այսինքն, փաստացիորեն տեսչությունները տարիներ շարունակ չեն իրականացրել ստուգումներ պայմանավորված վերոնշյալ սահմանափակմամբ կամ դրանք իրականացրել են միայն ՀՀ վարչապետի կողմից ստացված կոնկրետ հանձնարարականների հիման վրա:

Տեսչական բարեփոխումների արդյունքում նախատեսված էր 18 տեսչությունների փոխարեն մինչև օրենքով սահմանված ժամկետի ավարտը ձևավորել 7 տեսչական մարմիններ, որոնք կաշխատեն նոր մոտեցումներով և նոր ձևաչափով:

Ներկայումս տեսչական բարեփոխումների ընդհանուր պատկերը հետևյալն է՝

Առողջապահական տեսչական մարմին_ 2017 թվականի ապրիլի 27-ին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է գործող առողջապահական տեսչությունը լուծարելու և նոր տեսչական մարմին ստեղծելու մասին ՀՀ կառավարության որոշումը (27.04.2017 N444-Ն): 2017 թվականի հունիսի 21-ի ՀՀ վարչապետի թիվ 614-Ա որոշմամբ հաստատվել է առողջապահական տեսչական մարմնի կառավարման խորհրդի կազմը, իսկ 2017 թվականի հունիսի 23-ին ՀՀ կառավարության թիվ 718-Ն որոշմամբ հաստատվել է առողջապահական տեսչական մարմնի կառավարման խորհրդի աշխատակարգը: 2017 թվականի հոկտեմբերից հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում գումարվել է առողջապահական տեսչական մարմնի կառավարման խորհրդի թիվ 7 նիստ: 2017 թվականի օգոստոսի 8-ին ՀՀ վարչապետի թիվ 885-Ա հրամանով նշանակվել է տեսչական մարմնի ղեկավար: Վարչապետի հրամանով նշանակվել են նաև

տեսչական մարմնի ղեկավարի երեք տեղակալներ: Խորհրդի կողմից հավանության են արժանացել և հաստատվել են տեսչական մարմնի հաստիքացուցակը, քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը և տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը:

Տեսչական մարմնի բնականոն գործունեությունը ապահովող օրենքների նախագծերի փաթեթը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ ԱԺ:

ՀՀ կառավարության կողմից հաստատվել է ՀՀ կառավարության թվով 21 որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշում, որով կարգավորվում են նորաստեղծ տեսչական մարմնի բնականոն գործունեության հետ առնչվող հարցեր: Այս փուլում իրականացվում են աշխատանքներ տեսչական մարմնի գույքային խնդիրների լուծման, թափուր հաստիքների համալրման, ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության մշակման ուղղություններով:

Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին՝ 2017 թվականի ապրիլի 27-ին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է գործող բնապահպանական պետական տեսչությունը և ընդերքի պետական տեսչությունը լուծարելու և դրանց հիման վրա մեկ նոր տեսչական մարմին ստեղծելու մասին ՀՀ կառավարության որոշումը (27.04.2017 N445-Ն): 2017 թվականի հունիսի 21-ի ՀՀ վարչապետի թիվ 613-Ա որոշմամբ հաստատվել է բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի կազմը, իսկ 2017 թվականի հունիսի 29-ին ՀՀ կառավարության թիվ 754-Ն որոշմամբ հաստատվել է բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի աշխատակարգը: 2017 թվականի հունիսի 30-ին գումարվել է բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի առաջին նիստը: Նիստում քննարկվել է տեսչական մարմնի ղեկավարի թեկնածությանը հավանություն տալու և ՀՀ վարչապետին ներկայացնելու հարցը: Թեկնածությունը սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ վարչապետին: ՀՀ վարչապետի՝ 2017թ. թվականի հուլիսի 7-ի N 700-Ա որոշմամբ նշանակվել է տեսչական մարմնի ղեկավար: 2017 թվականի հուլիսից հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում գումարվել է տեսչական մարմնի կառավարման խորհրդի թվով 3 նիստ: Վարչապետի հրամանով նշանակվել են նաև տեսչական մարմնի ղեկավարի երեք տեղակալներ: Հաստատվել են տեսչական մարմնի հաստիքացուցակը և պաշտոնի անձնագրերը: Տեսչական մարմնի անձնակազմը գրեթե ամբողջությամբ համալրված է:

Տեսչական մարմնի բնականոն գործունեությունը ապահովող օրենքների նախագծերի փաթեթը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ ԱԺ:

ՀՀ կառավարության կողմից հաստատվել է ՀՀ կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշում, որով կարգավորվում են նորաստեղծ տեսչական մարմնի բնականոն գործունեության հետ առնչվող հարցեր: ՀՀ կառավարության կողմից հաստատվել են ռիսկի հիման վրա ստուգումների իրականացման ստուգաթերթերը: ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության նախագիծը՝ որում հաշվի են առնված ինչպես միջազգային լավագույն փորձը, այնպես էլ՝ ՀՀ-ում ոլորտում առկա մարտահրավերները:

Այս փուլում իրականացվում են աշխատանքներ տեսչական մարմնի ներքին ընթացակարգերը կարգավորող ակտերի մշակման ուղղություններով: Տեսչական ստուգման ենթակա հարցերի ցանկը (կոչվում է նաև տեսչական ստուգման հարցաշար) սահմանվել է ՀՀ կառավարության որոշմամբ, նախքան երկու կառույցների միավորվելը: Նոր հարցաշարը ներկայումս մշակման և ՀՀ կառավարության կողմից հաստատման փուլում է: Ակնկալվում է, որ հարցաշարը կներառի այնպիսի հարցեր, ինչպիսիք են.

- Արդյունահանման ծավալների հայտարարագիրը,

- հանքի շահագործման համապատասխանությունը արդյունահանման նախագծում սահմանված եղանակներին, ժամանակացույցին և արդյունահանման ծավալներին,
- հանքավայրի կառուցմանը վերաբերող տեխնիկական ստանդարտների պահանջների կատարումը,
- սոցիալ-տնտեսական ծախսերի իրականացման ընթացքը: Առայսօր ընդերքօգտագործման պայմանագրով, ինչպես նաև երկրաբանական ուսումնասիրության ընթացքում սահմանված սոցիալական ծախսերի կատարման ստուգումը չի կազմել տեսչության իրավասության մաս:

Հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչական մարմին_ Մշակվել է ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որով նախատեսվում է լուծարել գործող հրդեհային և տեխնիկական անվտանգության, քաղաքաշինական, տրանսպորտային և էներգետիկայի 4 տեսչությունները և ստեղծել մեկ տեսչական մարմին: Նախագիծը շրջանառվել է շահագրգիռ գերատեսչություններում, կարծիքները ամփոփվում են: 2018թ. փետրվարի դրությամբ նախագիծը գտնվում է քննարկման փուլում: Տեսչական մարմնի ստեղծման որոշակի հարցեր քննարկվել են նաև ՀՀ վարչապետի նախագահությամբ կայացած տեսչական բարեփոխումների համակարգման խորհրդի 19-րդ և 20-րդ նիստերում:

Օրինականության վերահսկողության տեսչություն _ 2016 թվականի դեկտեմբերի 22-ին ՀՀ կառավարության 1384-Ն որոշմամբ օրինականության վերահսկողության տեսչությունը լուծարվել է և հիմնադրվել է ՀՀ արդարադատության նախարարության վերահսկողական ծառայությունը: 2017 թվականին իրականացվել են որոշմամբ սահմանված պահանջները: Տեսչության լուծարման արդյունքում հստակեցվել են նորաստեղծ մարմնի վերահսկողական գործառույթները, որոնք վերաբերում են հիմնականում նախարարության համակարգում գործող կառույցներին և չեն տարածվում տնտեսավարողների վրա:

ՀՀ ֆինանսների նախարարության աուդիտորական գործունեության հսկողության և լիցենզավորման պայմանների և պահանջների հսկողություններ_ Ներկայումս աուդիտորական գործունեության հսկողության տեսչությունը չի գործում, սակայն վերջինիս որոշակի գործառույթներ իրականացվում են լիցենզավորման պայմանների և պահանջների հսկողության տեսչության կողմից: Աուդիտորական ոլորտում վերահսկողությունը նախատեսվում է իրականացնել աուդիտորական պալատի միջոցով, որի վերաբերյալ մշակվել է օրենքի նախագիծ: Լիցենզավորման պայմանների և պահանջների հսկողության տեսչությունը նախատեսվում է լուծարել «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով նախատեսված ժամկետներում, իսկ որոշակի գործառույթներ անհրաժեշտության դեպքում նախատեսվում է փոխանցել այլ տեսչական մարմինների:

Սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն և ՀՀԿԱ կադաստրի պետական կոմիտեի գեոդեզիայի և հողային պետական տեսչություն_ Աշխատանքներ են տարվում «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Բարեփոխումների ընթացքը ցույց է տալիս, որ նորաստեղծ տեսչական մարմինների գործունեության արդյունավետությունը մեծապես կախված է տվյալ մարմինների անկախությունից (քաղաքականություն մշակող մարմիններից): Վերոնշյալ սկզբունքը կյանքի կոչելու և ներդրված համակարգը փուլային տարբերակով կատարելագործելու նպատակով մշակվել է «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքում «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքում, «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենսդրական փաթեթը, որը քննարկվել է շահագրգիռ մարմինների հետ և արժանացել է ՀՀ վարչապետին կից տեսչական բարեփոխումների համակարգման խորհրդի հավանությանը: Հիմնական նպատակն է տեսչական մարմիններին ներկայիս իրավական կարգավիճակից տարբերվող կարգավիճակ տալը, ինչը բխում է տեսչական մարմինների գործունեության առանձնահատկություններից:

Հարկ է նշել, որ ՀՀ առողջապահական տեսչական մարմնի համար ամրագրվել են հետևյալ գործառույթները՝ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման նորմերի կիրառման նկատմամբ օրենքով սահմանված դեպքերում և կարգով վերահսկողության իրականացումը, որը ներառում է՝

- ա. աշխատատեղում աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջների, այդ թվում՝ աշխատանքի անվտանգության կոլեկտիվ և անհատական պաշտպանիչ միջոցների առկայության, պահպանման և շահագործման նկատմամբ վերահսկողության իրականացումը,
- բ. օրենքով սահմանված դեպքերում և կարգով աշխատանքի վայրում դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների պատճառների ուսումնասիրումը ու վերլուծումը,
- գ. աշխատանքային օրենսդրության և այլ իրավական ակտերի կիրարկման ուղղությամբ գործատուների և արհեստակցական միությունների համար աշխատանքի անվտանգության ապահովման գործում մեթոդական օգնության կազմակերպումը՝ համապատասխան տեղեկատվության և խորհրդատվության տրամադրումը,
- դ. աշխատողների կյանքին կամ առողջությանը սպառնացող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման վերաբերյալ փորձագիտական եզրակացության կամ արձանագրված թերությունների մասին ակտի առկայության դեպքում խախտումների վերացման ժամկետների սահմանում, սահմանված ժամկետում թերությունները չվերացնելու դեպքում՝ օրենքով սահմանված կարգով կազմակերպության կամ դրա առանձին ստորաբաժանման աշխատանքները ժամանակավորապես դադարեցնելը՝ մինչև խախտումների վերացումը:

Գործնականում հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեսչական բարեփոխումները դեռևս ընթացքի մեջ են, մասնավորապես օրինակ՝ Առողջապահական տեսչական մարմնի և Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի բնականոն գործունեությունը ապահովող օրենքների նախագծերի փաթեթները նոր են ներկայացվել ՀՀ ԱԺ և դեռևս ընդունված չեն, բացի այդ դեռևս աշխատանքներ են տարվում ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունների մշակման ուղղություններով, և փաստացիորեն տեսչական մարմինները գործունեություն դեռևս չեն իրականացնում, կարծում ենք, որ այս փուլում հնարավոր չէ վեր հանել և գնահատել նշված տեսչական մարմինների գործունեությանը խոչընդոտող խնդիրները:

Միաժամանակ հնարավոր չէ պարզել, թե որոնք են այն թերությունները, որոնք ազդում են տեսչական մարմինների բնականոն գործունեության վրա: Ոլորտում, անշուշտ, առկա են բազմաթիվ խնդիրներ, սակայն կարծում ենք, որ դրանց լուծման վերաբերյալ առաջարկներ հնարավոր է ներկայացնել տեսչական մարմինների աշխատանքների մեկնարկից հետո:

9.3. Պատասխանատու հանքարդյունաբերության ոլորտին առնչվող այլ խնդիրներ, որոնք ներառված չեն սույն վերլուծության մեջ

Վերլուծված վերոնշյալ երեք թեմաները ներկայացվել են ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամների կողմից: Պատասխանատու հանքարդյունաբերության ոլորտում առաջընթացի հասնելու համար կան մի շարք այլ ոլորտներ, որոնք բարելավման կարիք ունեն: Համառոտ, դրանք ներառում են՝

- Ավելի լավ սակագներ և դրույքներ բնական ռեսուրսների համար (օրինակ՝ ջրի) և շրջակա միջավայրին վնաս հասցնելու համար՝ արդյունավետ տեխնոլոգիաների և էկոլոգիապես պակաս վնասակար պրակտիկայի և տեխնոլոգիաների օգտագործումը խթանելու համար: Անհրաժեշտ է ստեղծել խթաններ «Լավագույն մատչելի տեխնոլոգիաներ»-ի մեջ ներդրումներ կատարելու համար, որոնք առաջարկվում են Հանքային Թափոնների վերաբերյալ ԵՄ դիրեկտիվի կողմից:
- Ֆինանսական ռեժիմի բարելավում ռոյալթիների հաշվարկման ընթացքում ծախսատար սուբսիդիաների վերացման միջոցով:

- Աղտոտման ստանդարտների բարելավում, հատկապես հողի պարագայում, որոնք, ի տարբերություն ջրի և օդի, չեն համապատասխանացվել համաշխարհային փորձի հետ:
- Բարելավել ազդակիր համայնքների սահմանում, որը ավելի պատշաճ կերպով ընկրկում է համայնքներին որոնք ազդվում են հանքարդյունաբերական գործողություններից:
- Հանքարդյունաբերական աշխատանքների ստուգումների կատարելագործում և բնապահպանական և սոցիալական պարտավորությունների խախտումների հայտնաբերում:
- Հանքավայրի թափոնների կառավարման կենտրոնների տեխնիկական անվտանգության բարելավում:
- Ավելի լավ օրենսդրություն և կարողություններ՝ կառավարելու ժառանգված պոչամբարները և հանքերը, և դրանցով պայմանավորված օդի աղտոտվածության հետ կապված հարցերը:
- Հանքարդյունաբերական ընկերությունների կողմից թափանցիկության և համայնքների ներգրավման մակարդակի բարձրացում, որը կփոխի հաճախակի հանդիպող գաղտնիության մշակույթը:
- Վերջերս օրենսդրությամբ ներկայացված՝ հանքավայրերի թափոնների կառավարման և փակման ծրագրերի իրականացման կարողությունների բարձրացում:

Այս լրացուցիչ թեմաներին կարելի է անդրադառնալ ապագա նախագծերում:

9.4. Պատասխանատու հանքարդյունաբերության որոշակի խնդիրների վերաբերյալ նախնական ճանապարհային քարտեզ

1. Տնտեսական գնահատման գործիքների բարելավում. Ծախս օգուտ վերլուծության (ԾՕՎ-ի) ներագրավումը

Հ.	Գործարք	Պատասխանատու գործակալություն	Ժամկետ
1.1	ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգրքը) 4-րդ հոդվածում լրացումների կատարում, որով, որպես ընդերքի օգտագործման և պահպանության հետ կապված հարաբերությունների կարգավորման հիմնադրույթ, բացի ընդերքաբանական, շրջակա միջավայրի վրա ազդեցության և տեխնիկական անվտանգության փորձաքննություններից կսահմանվի նաև տնտեսական գնահատումը՝ ԾՕՎ կիրառմամբ: Այս կապակցությամբ անհրաժեշտություն կառաջանա փոփոխություններ կատարել նաև Օրենսգրքի 7-րդ և 15 հոդվածներում, վերջինում տնտեսական գնահատման իրականացման կարգը սահմանելու լիազորությունը վերապահելով ՀՀ կառավարությանը:	<p>ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն</p> <p>ՀՀ բնապահպանության նախարարություն</p> <p>ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն</p>	Կարճ, որը ենթադրում է 6 ամսից մինչև մեկ տարի, իսկ միջինը՝ 1-2 տարի: Երկարատևը՝ 2-5 տարվա ժամանակահատվածում
1.2	Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 3-րդ հոդվածում՝ «Օրենսգրքում օգտագործվող հիմնական հասկացություններ» վերատույայամբ անհրաժեշտ է բացահայտել «Ծախս օգուտ վերլուծություն» մետաղական հանքարդյունաբերության համատեքստում:	<p>ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն</p> <p>ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն</p>	Կարճ
1.3	Ենթաօրենսդրական ակտի, մասնավորապես կառավարության որոշման ընդունում, որով կսահմանվի ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտում ներդրումային ծրագրերի տնտեսական գնահատման կարգը:	<p>ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն</p> <p>ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և</p>	Կարճ

		բնական պաշարների նախարարություն	
1.4	Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 50-րդ հոդվածում փոփոխության կատարում առ այն, որ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործումը, առանց սահմանված կարգով տնտեսական գնահատման ենթարկված նախագծի, արգելվում է:	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն	Կարճ
1.5	Ըստ անհրաժեշտության ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի հրամանով կամ ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ ԾՕՎ մեթոդական ուղեցույցին հավանություն տալու մասին որոշման/հրամանի ընդունում:	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	Կարճ
1.6	Կապված Ծախս օգուտ վերլուծության կազմակերպման վերջնական մոդելի ընտրությունից անհրաժեշտություն կառաջանա - ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կանոնադրական խնդիրների և գործառույթների հստակեցման նպատակով ՀՀ կառավարության համապատասխան որոշման մեջ փոփոխությունների իրականացում, եթե որոշվի այդ գործառույթը վերապահել պետական կառավարման մարմին - կամ ներդրումային ընկերությունների ներգրավման դեպքում ենթաօրենսդրական ակտերի մշակում, որով կսահմանվեն ներդրումային ընկերությունների ընտրության, վարձատրության կարգը, մշակվող մեթոդաբանությունը:	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	Կարճ/միջին
1.7	Կապված քրեական քաղաքականության առաջնայնություններից, քրեական կամ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում պատասխանատվության ամրագրում առանց սահմանված կարգով տնտեսական գնահատման ենթարկված նախագծի իրականացվող ընդերքօգտագործման համար:Ընդ որում, պետք է նախատեսել նաև համաչափ քաղաքացիական պատասխանատվության միջոցներ իրավաբանական անձանց և կամ վերջինիս ղեկավար կամ որոշումների կայացման նկատմամբ ազդելու հնարավորություն ունեցող անձանց նկատմամբ:	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն	Կարճ
1.8	Բնապահպանական վնասի գույքային գնահատման ուղեցույցի կամ վնասը հաշվարկելիս այլ ուղղորդող համապարտադիր ակտի ընդունում: Ընդ որում, նման չափանիշները կարող են սահմանվել պետական կառավարման մարմնի կողմից և զարգացվել դատական իշխանության մարմինների կողմից կոնկրետ գործերի շրջանակում: Անհրաժեշտ է նաև դատավորների համար կազմակերպել դասընթացներ բնապահպանական վնասները գնահատելու ուղղությամբ:	ՀՀ կառավարություն, Բնապահպանության նախարարություն և դատական մարմիններ	Միջին
1.9	Քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված, սակայն պատժի բնույթ ունեցող սանկցիաների սահմանում բնապահպանական որոշ վնասների կապակցությամբ: Հաշվի առնելով, որ «քաղաքացիական		

	<p>օրենսդրությամբ նախատեսված այդ սանկցիաները» իրենց բնույթով (բարձր գումարային արտահայտությամբ, թույլտվությունների գրկում, արտոնությունների գրկում և այլն) կարող են դիտարկվել անգամ պատժի տարրեր պարունակող, անհրաժեշտ կլինի սահմանել նաև համապատասխան դատավարական կարգ:</p>		
--	--	--	--

2. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին, ներառելով սոցիալական գնահատումը

Հ.	Գործարք	Պատասխանատու գործակալություն	Ժամկետ
2.1	<p>ՀՀ կառավարության առանձին որոշմամբ անհրաժեշտ է սահմանել ՇՄԱԳ մեթոդիկան.</p>	<p>ՀՀ բնապահպանության նախարարություն</p>	Կարճ
2.2	<p>«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով փորձաքննություններ իրականացնելիս նախարարություններից ստացված կարծիքների նկատմամբ պահանջների հստակեցում, որպեսզի բացառվի ոչ հստակ կարծիքների կամ միմյանց հակասող կարծիքների տրամադրումը:</p>	<p>ՀՀ բնապահպանության նախարարություն</p> <p>ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն</p>	Կարճ
2.3	<p>«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների կատարում, սահմանելով լրացուցիչ չափանիշներ, որպիսիք կկանխորոշեն՝ թե որոնք են ընդերքօգտագործման թույլտվության հիմքը հանդիսացող փաստաթղթերում էական փոփոխությունները, որոնց պարագայում անհրաժեշտ է իրականացնել ՇՄԱԳ:</p>	<p>ՀՀ բնապահպանության նախարարություն</p> <p>ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն</p>	Կարճ/միջին
2.4	<p>Շրջակա միջավայրի վրա գումարային ազդեցության գնահատման մեթոդաբանությունը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման ընդունում:</p>	<p>ՀՀ բնապահպանության նախարարություն</p> <p>ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն</p>	Միջին
2.5	<p>Փոփոխությունների կատարում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածում՝ շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության գնահատման հաշվետվությունների բովանդակությանը վերտառությամբ, հստակ ամրագրելով, որ հաշվետվության բովանդակության մեջ պարտադիր պետք է անդրադարձ կատարվի նաև առողջապահական ազդեցության վերլուծությանը, ծրագրի հնարավոր բացասական ազդեցությունը մարդու առողջության վրա, հաշվի առնվեն վնասները և այլն:</p>	<p>ՀՀ բնապահպանության նախարարություն</p> <p>ՀՀ առողջապահության նախարարություն</p>	Կարճ
2.6	<p>Փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության 09.04.2015թ. թիվ 399-Ն որոշմամբ ամրագրված հիմնադրությամբ փաստաթղթի և նախատեսվող գործունեության ՇՄԱ Փորձաքննության իրականացման կարգում, որով կամրագրվի, որ սահմանված ժամկետում առողջապահության նախարարության կողմից</p>	<p>ՀՀ բնապահպանության նախարարություն</p> <p>ՀՀ առողջապահության նախարարություն</p>	Կարճ

	համապատասխան եզրակացության չտրամադրման դեպքում ՇՄԱ փորձաքննական եզրակացությունը տրվում է առանց առողջապահության վրա ազդեցության եզրակացության կամ առհասարակ չի տրամադրվում:		
2.7	Հանքարդյունաբերության և մետաղների միջազգային խորհրդի կողմից (ICMM) մշակված առողջության վրա ազդեցության գնահատման ուղեցույցի ՀՀ օրենսդրական համակարգում տեղայնացում՝ առաջարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացում ՀՀ առողջապահության բնագավառի լիազոր մարմնին եզրակացություններ կամ կարծիքներ տրամադրելիս առաջնորդվել վերոնշյալ ուղեցույցով:	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն	Կարճ
2.9	Մարդու առողջությանը հասցված վնասի գնահատման և փոխհատուցման գնահատման մեթոդաբանությունը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման ընդունում:	ՀՀ առողջապահության նախարարություն	միջին
2.10	Օրենսդրական լծակների նախատեսում, որով կբացառվի հանրային քննարկումների ժամանակ փաստաթղթերը ոչ լիարժեք ներկայացնելու, անհրաժեշտ տեղեկատվությունը թաքցնելու կամ հանրային քննարկումների ժամանակ բարձրացված հարցերին պատշաճ չանդրադառնալու արատավոր պրակտիկան:	ՀՀ էներգետիկն ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն	Կարճ

3. Մոնիթորինգ՝ բնապահպանական, համայնքային և հանրային առողջություն և աշխատանքային անվտանգություն

Հ.	Գործարք	Պատասխանատու գործակալություն	Ժամկետ
3.1	«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների կատարում՝ ներառելով բնապահպանական մոնիթորինգին վերաբերող դրույթներ կամ ՀՀ «Էկոլոգիական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի ընդունում:	ՀՀ էներգետիկն ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն	Կարճ
3.2	ՀՀ կառավարության կողմից բնապահպանական միասնական պետական մոնիթորինգի տարեկան ծրագիր և մոնիթորինգի հիմնական ցուցանիշների ցանկը հաստատելու մասին որոշումների ընդունում:	ՀՀ բնապահպանության նախարարություն	Կարճ/միջին
3.3	«Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարել սահմանելով առողջապահական մոնիթորինգի տեսակները, դրանց արդյունքների կիրառման ոլորտները, պարտավորություն սահմանել առողջապահական տեսչության համար՝ մոնիթորինգի արդյունքների հիման վրա ձեռնարկելու պահանջվող համալիր միջոցառումներ:	ՀՀ առողջապահության նախարարություն	Կարճ

3.4	Սույն ճանապարհային քարտեզի 3.3-րդ կետով նախատեսված փոփոխություն կատարելուց հետո դրա կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկի վերաբերյալ ՀՀ վարչապետի որոշման ընդունում:	ՀՀ առողջապահության նախարարություն	Կարճ/միջին
3.5	Առողջապահական մոնիթորինգի տարեկան ծրագրեր մշակելու և հաստատելու, հանրային վերահսկողության նպատակով մոնիթորինգի արդյունքները հրապարակելու պահանջ սահմանելու վերաբերյալ նորմի նախատեսում «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում:	ՀՀ առողջապահության նախարարություն	Կարճ/միջին
3.6	Մարդու առողջության վրա ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման ընդունում: Այստեղ հարկ է նկատել, որ ՀՀ առողջապահության նախարարության կողմից սույն ուսումնասիրության առնչությամբ ներկայացված նկատառումներում նշվեց, որ նախարարության կողմից մշակման փուլում է գտնվում «Առողջապահության մասին» ՀՀ օրենքը, որը կփոխարինի ոլորտի գործող օրենքներին: Այն կարգավորելու է նաև հանրային առողջապահության ոլորտի հարաբերությունները, որոնց շարքում կներառվի 3.4, 3.5 և 3.6 կետերում նշված գործողությունները:	ՀՀ առողջապահության նախարարություն	Միջին

4. «Քաղաքացիական հասարակության» կարգավիճակը դատարանում որպես պատշաճ հայցվոր

Հ.	Գործարք	Պատասխանատու գործակալություն	Ժամկետ
4.1	Փոփոխություններ նախատեսել ՀՀ ԱԺ կողմից առաջին ընթերցմամբ ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխում՝ նվազեցնելով 20 համահայցվորի առկայության պահանջը և դատարանում խմբային հայցով ներկայացուցիչ լինելու հնարավորությունը չվերապահել բացառապես իրավապաշտպան հասարակական կազմակերպություններին:	ՀՀ արդարադատության նախարարություն	Կարճ
4.2	Քաղհասարակության՝ դատական գործընթացին մասնակցության ապահովման համար առաջարկվում է քննարկել նաև Գերմանիայի օրենսդրությամբ նախատեսված կարգավորումները Հայաստանի Հանրապետության օրենսդրություն ներմուծելու հարցը:	ՀՀ արդարադատության նախարարություն	Կարճ
4.3	Փոփոխություն կատարել «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում, դրանից հանելով հասարակական կազմակերպությունների կողմից շրջակա միջավայրի պահպանության ոլորտում միայն իրենց շահառուների օրինական շահերը դատարանում ներկայացնելու արգելքը:	ՀՀ արդարադատության նախարարություն	Կարճ

Հավելվածներ

Հավելված 1. ՀԱՀ-ի ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ և ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՌՈՅԱԼԹԻ ՀԱՐԿԱՏԵՍԱԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՐ



American University of Armenia
Հայաստանի Ամերիկյան Համալսարան

A US accredited institution
affiliated with the University
of California

10 փետրվար 2017թ.

ՀՀ վարչապետ
պ-րն Կարեն Կարապետյանին,

Հարգելի պ-րն Կարապետյան,

Հաշվի առնելով սույն թվականի փետրվարի 2-ին ՀՀ Կառավարության կողմից հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը և ուսումնասիրելով վերոնշյալ նախագծերով ներկայացված փոփոխությունները՝ Ձեր ուղադրությանն ենք ներկայացնում հարկաբյուջետային ոլորտի միջազգային առաջատար փորձագետ պ-րն Անթու Գենացիի կողմից արված դիտարկումները և հարցերը առաջարկվող փոփոխությունների և դրանց հնարավոր ազդեցության վերաբերյալ՝ հաշվի առնելով Հայաստանում հանքարդյունաբերության ոլորտի հարկաբյուջետային համատեքստը:

Ի գիտություն նշենք, որ Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը իրականացնում է «Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման նախաձեռնություն» ծրագիրը, որի նպատակն է աջակցել Հայաստանում ընդերքօգտագործման ոլորտը կարգավորող օրենսդրության բարելավմանը: Ծրագրի շրջանակներում պատրաստ ենք տրամադրել ոլորտին առնչվող միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություն, հետազոտական և տեխնիկական աջակցություն:

Հարցերի և պարզաբանումների համար խնդրում են դիմել ինձ՝ Ալեն Ամիրխանյան, հեռ. 077 21 50 39, էլ. հասցե՝ alen@aua.am: Անհրաժեշտության դեպքում կարող ենք կազմակերպել տեսազանգ միջազգային փորձագետի հետ:

Հարգանքով՝

Ալեն Ամիրխանյան
ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի տնօրեն

40 Marshal Baghramyan Ave,
Yerevan 0019, Republic of Armenia
Phone: (+374 60) 69 40 40
(+374 10) 32 40 40
Fax: (+374 60) 61 25 12
E-mail: info@aua.am

U.S. Office
1000 Broadway, Suite 280
Oakland, California 94607
Phone: +1(510) 925-4282
Fax: +1(510) 925-4283

Facebook: AUAmerica
Twitter: AUAtweets
Youtube: AUAuploads
Website: aua.am

The American University of Armenia is accredited by the WASC Senior College and University Commission, 985 Atlantic Avenue, #100, Alameda, CA 94501, 510.748.9001.



«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ դիտարկումներ

Ուղայթի հաշվարկման կանոնների վերանայումը հնարավորություն է ընձեռում կառավարությանը ուժեղացնել Հայաստանի հանքարդյունաբերական ոլորտի միջազգային մրցունակությունը՝ միաժամանակ (1) կրճատելով տարբեր պետական գերատեսչությունների վարչական բեռը, (2) բարելավելով հարկերի և ուղայթիների վճարումը և (3) ապահովելով որպեսզի Հայաստանը իր հետագա սերունդների համար կարողանա ստանալ իր արդարացի բաժինը իր արժեքավոր օգտակար հանածոներից: Մեզ համար հուսադրող են կառավարության կողմից ընդունված որոշ որոշումներ, այդ թվում ուղայթի փոփոխական բաղադրիչը պահպանելու մասին որոշումը, սակայն միևնույն ժամանակ մենք կարծում ենք, որ առաջարկվող այլ փոփոխություններն ունեն բացատրության և միգուցե մանր հստակեցումների անհրաժեշտություն:

Փորձելով լինել հնարավորինս կառուցողական և որպեսզի համոզված լինենք, որ մենք ամբողջությամբ ընկալում ենք առաջարկվող համակարգը, մենք պատրաստել ենք սույն հակիրճ հուշագիրը մի շարք հարցերի և դիտարկման ենթակա առաջարկությունների տեսքով:

Առաջարկն ընդլայնում է Լոնդոնի մետաղների բորսայի (LME) գնի և վաճառքի գների (ուղայթի նպատակով) միջև առավելագույն շեղումը 90 տոկոսից մինչև 80%: Ո՞րն է այս փոփոխության դրդապատճառը:

Գործող օրենքի մասին մեր ընկալումն այն է, որ խտանյութի վաճառքից գանձվող ուղայթին հիմնվում է վաճառքի գնի վրա, սակայն, որ այն չի կարող լինել պարունակվող մետաղի LME արժեքի 90%-ից ցածր: Մենք կարծում ենք, որ նման շեմի առկայությունը, հաստատված որպես թափանցիկ գնի ֆիքսված տոկոս, որը ենթակա չէ մանիպուլացման, դրական կողմ է: Ավելի ցածր շեմը կպահպանի ցուցիչների հետ կապված սահմանափակում ուղայթի հիմքի հաշվարկի վրա, որը դրական է, սակայն այն նաև զգալիորեն կնվազեցնի շատ ընկերությունների կողմից հավանական վճարման ենթակա ուղայթի չափը:¹ Մեր հարցն այն է, թե արդյոք շեմի այս նվազեցումը հիմնված է պարզապես ուղայթի չափը նվազեցնելու ցանկության վրա (քանի որ կա կարծիք, որ ուղայթին ուղղակի շատ բարձր է), թե արդյոք այն հիմնված է այն փաստարկի վրա, որ 90% շեմը պատշաճ կերպով չէր ներկայացնում խտանյութում պարունակվող մետաղի հաշվարկված LME գնի և կատարված վաճառքների միջև տարբերությունը:

Եթե 90 տոկոսանոց շեմը որոշվել է, որ աղելվատ չէ, ի՞նչ հիմքեր են բերվել այս փաստարկի համար: Այն մի՞շտ է եղել ոչ աղելվատ, թե՞ Հայաստանի հանքավայրերի տնտեսության մեջ ինչ-որ հիմնարար փոփոխություններ են տեղի ունեցել, որոնք հանգեցրել են նման փոփոխության անհրաժեշտություն: Մենք այսպես ենք հասկանում, որ նախքան մինչև 70% բարձրացումը նախկին շեմը սահմանված էր որպես LME գների 90%-ը: Այս շեմում կրկնվող փոփոխությունը նշանակում է, որ այն կարող է դիտվել որպես ուղայթի բեռի փոփոխության միջոց՝ առանց ուղայթի տոկոսադրույթները փոխելու: Այս վարկածն ունի՞ որևէ հիմք: Եթե այո, ապա մենք կպնդենք, որ այն ուղայթի պարբերական փոփոխության ոչ պատշաճ մեթոդ է և որ ավելի թափանցիկ կլինի ուղայթի բազան հստակ սահմանելը և անհրաժեշտության դեպքում կատարել ուղայթի տոկոսադրույթների փոփոխություն վերջինիս բազայի փոփոխության փոխարեն:

Կառավարությունն արդյո՞ք դիտարկել է ուղայթի բազայի հաշվարկի պարզեցման և դրանում ընդամենը LME գների կիրառման հարցը (կամ նույնիսկ LME գների որոշակի տոկոսը):

¹ Ելում ենք «Գանձանակալ», քանի որ ուղայթի հիմքը մնում է վաճառքի արժեքը: Այսպիսով, այնուհետ, որտեղ վաճառքի գնը LME գնից ունենում է 10%-ից պակաս շեղում, փոփոխությունը պետք է ազդեցություն չունենա ուղայթի տոկոսադրույթի վրա: Սակայն, հիմնվելով մինչ օրս կատարված ուղայթի հաշվարկման մասին մեր ընկալման վրա և ընկերությունների ու պետական վարչարարների համար առաջացող այն խթանների վրա, որոնք ստեղծվում են 90%/80% շեմի շնորհիվ, մենք ակնկալում ենք, որ 90%/80% շեմը մոտ կլինի ուղայթի փաստացի բազային:

Թեև մենք ակնարկում ենք, որ շատ արտադրողներ վերցում պարզապես կկատարեն օդայինների վճարումները LME գների 80%-ի հաշվարկի հիման վրա, սա չի հանդիսանում փաստացի օդայինների բազան: Խտանյութի համար օդայինների բազան վաճառքի գինն է, ինչը նշանակում է, որ կառավարությունը պետք է սուուզի վաճառքի արժեքները: Մենք հասկանում ենք, որ վերանայումները նախատեսում են, որ կառավարությունը նաև առանձին կանոններ կսահմանի առավելագույն վերանշակման մարժայի համար (TC/RC)՝ հիմնվելով միջազգային չափանիշների վրա: Գնի 80% շեղը կգործի միայն այն դեպքում, երբ վաճառքի հայտարարված արժեքները, ավելի ցածր թույլատրելի վերանշակման մարժան և այլ վճարները LME շեմի 80%-ից ցածր են: Արդյո՞ք վերանշակման մարժայի և այլ վճարների հարաբերության և 80% LME գնի մասին մեր ընկալումը ճիշտ է:

Եթե այո, ապա արդյո՞ք արժեք ունենալ այս բազմաբայլ գործընթացն ավելացված վարչարարական բարդության ու բեռի հաշվին: Ընդամենը LME գներին անցնելը (կամ դրանց ֆիքսված տոկոսի) կկարգեցնեն համալստասիանությունն ու վերահսկումը: Լրացումների փաթեթի շարադրանքը թույլ է տալիս ենթադրել, որ կառավարությունը տեղյակ է, որ պայմանագրային արժեքների կիրառումը որպես օդայինների բազա կարող է գործնականում բարդ լինել և որ պրակտիկայում հավանաբար կիրառվելու են գնահատված արժեքներ: Ինչու՞ չվերացնել անիմաստ բարդությունը: Մի շարք երկրներ օգտագործում են հրապարակված գնային ցուցիչներ (ինչպես օրինակ LME գները) օդայինների բազայի հաշվարկման համար, և դա անելու համար կան հզոր փաստարկներ:

LME գների կիրառումը որպես օդայինների բազա կարող է որոշակի ընդդիմության արժանանալ արդյունաբերական ոլորտի կողմից, սակայն մենք կարող ենք պնդել, որ նման մոտեցումը զգալի տարբերություն չունի LME-ի վրա հիմնվող գնային շեմից կախվածություն ունեցող գործող համակարգից, ավելի պարզ ու թափանցիկ է, քան առկա երկբայանի համակարգը: Եթե կառավարությունն ընդունի այս տրամաբանությունը, հաջորդ հարց կլինի այն, թե արդյոք պետք է օգտագործել պարունակվող մետոնի LME գինը (կրկնօրինակելով առկա մոտեցումը), թե՛ LME գնի որոշակի տոկոսը: Երկու մոտեցումն էլ հավասարապես թափանցիկ են և խուսափում են տրանսֆերային գնագոյացումից ու դրանց կիրարկմանն առնչվող այլ մարտահրավերներից և կարող են հավասար դարձնել օդայինների չափի փոփոխության միջոցով:

Ընդունում ենք, որ LME գները և խտանյութի գները կատարյալ կերպով փոխկապակցված չեն, սակայն կարծում ենք, որ սրա ներկայացրած ռիսկերը ավելի քան չեզոքացվում են որպես օդայինների բազա գնային ցուցիչի օգտագործման պարզության ու թափանցիկության շնորհիվ: Եթե խտանյութի և մետաղների գների միջև այս ոչ կատարյալ փոխկապակցվածության մասին կա մտահոգություն, ապա կառավարությունը կարող է օդայինների բազան սահմանել LME գնի՝ հանած սահմանված վերանշակման մարժան: Կան միջազգային ցուցիչներ նման վճարների համար²: Սա ավելի բարդ կլինի, քան զուտ LME գնի կիրառում և արդարևո՞վ երկրորդ լավագույն տարբերակը կարող է հանդիսանալ քայց պատշաճ վերանշակման մարժային ցուցիչի

² Պատշաճ չափանիշների ընտրությունը պահանջում է որոշակի ուսումնասիրություն, սակայն կան այս առումով խոստումնալից տեղեկատվության աղբյուրներ: Որոշ հանածոների համար վերանշակման վճարներն ավանդաբար համաձայնեցվել են հանքարդյունաբերողների և ծուլարանների միջև տարեկան կտրվածքով, և այս չափանիշները հրապարակվել են տարբեր տեղեր: Օրինակ, Միջազգային ցինկ ասոցիացիան *International Zinc Association*՝ տարեկան համաժողով է կազմակերպում, որտեղ սահմանվում են վերանշակման մարժայի գները: Լույս կերպ ամեն տարի Չինաստանում և Տաայրիայում պղնձի վերանշակման մարժան քանակցվում է գիտվող ծուլարանների կողմից: Այնտեղ, որտեղ արդյունաբերական ոլորտում կան և լայնորեն կիրառվում են նման քանակցված տարեկան գներ, դրանք կարող են հիմք ծառայել թույլատրելի ծախսերի համար օդայինների հաշվարկման նպատակով: Դիմնական արտադրողները վերջին տարիներին փորձել տարեկան այս էլակետային գների կիրառումից փորձել են գերը մնալ, որն անող հետաքրքրություն է առաջացրել վերանշակման ծախսերի համար կանոնավոր կերպով հրատարակվող գնային ցուցիչների մշակման հարցում: Metal Bulletin Copper Concentrates Index-ը Ասիայի և խաղաղօվկիանոսյան շուկայի համար ամսական երկու անգամ հրատարակվող մետաղների համար վերանշակման մարժայի ցուցիչն է, Commodities Research Unit-ը ի թիվս այլ տվյալների հրատարակում է վերանշակման մարժան պղնձի, կապարի և ցինկի համար, Baltic Exchange-ը հրատարակում է փոխարդյունների շուկայի մասին տեղեկատվություն, որը կարող է փոփոխության ենթարկվել (օրինակ Գվինեայի հանքարդյունաբերության մասին օրենքը կոնկրետ հղումներ է կատարում «Baltic Exchange Capesize Index Route C3-Tubarao/Qingdao»-ին երկայթի հանքաքարի օդայինի հիմքի սահմանման ժամանակ), Platt's-ը ներկայացնում է գնային հաշվետվություններ չոր բեռների առաքման մասին ինչպես նաև վերանշակման մարժա որոշ մետաղների համար, WoodMac's մետաղների խտանյութի ծառայությունն առաջարկում է վերանշակման մարժայի գներ և կախվածություններ, Shanghai Metals Market-ը նույնպես հրատարակում է վերանշակման մարժաներ որոշ մետաղների համար, Mining Cost Service-ը առաջարկում է ցուցիչներ տարբեր վերանշակումների համար և դրանց վճարների մասին, թեև սրանք կենտրոնանում են անբիկան և կառայական շուկաների վրա:

կիրառման պարագայում այն կլինի նույն կերպ թափանցիկ և մանիպուլյացիաներից պաշտպանված:

Մենք չենք կարծում, որ կառավարությունը շահում է երկփուլյան հաշվարկյան մեթոդի պահպանումից այն պարագայում, երբ օդայթիի բազան վաճառքների եկամուտն է՝ ենթակա թե ընդհանուր շեմի, և թե որոշակի վճարների վրա սահմանափակման: Վաճառքների եկամտի պահը հաշվարկից ընդհանրապես հանելը և պարզապես ներկայումս շեմը (որն որոշակի տոկոս կազմող LME գներ) սահմանելու համար կիրառվող գնային ցուցիչի վրա հիմնվելը, կամ շեմի կիրառումը՝ հանած ցուցիչի վրա հիմնված վերաձայնման մարժան, կլինի ավելի պարզ ու թափանցիկ և տևտեսական ազդեցության առումով էական տարբերություն չունեցող:

Կառավարությունն արդյո՞ք դիտարկել է փոփոխական օդայթիի մեխանիզմում փոփոխություններ կատարելու հարցը:

Մենք այնպես ենք հասկանում, որ օդայթիների վերանայված համակարգը պահպանելու է փոփոխականի բաղադրիչը՝ հաշվարկված շահույթի վրա հիմնվող բանաձևի օգտագործմամբ և օդայթիի բազայի նկատմամբ կիրառվող (վաճառքներ): Մասնավորապես հաշվի առնելով Հայաստանի համեմատաբար ցածր հարկերը, մենք կարծում ենք, որ կարևոր է, որ Ֆինանսական համակարգը պահպանի որևէ տեսակի փոփոխական մեխանիզմ, որն աճում է օգտակար հանաձոնների բարձր գների ժամանակ և ավտոմատ կերպով նվազում է ցածր շահույթի պարագայում: Մակայն կառավարության և ընկերությունների ներկայացուցիչների հետ մեր քննարկումները ցույց են տալիս, որ Հայաստանի՝ շահույթների վրա հիմնվող օդայթիի մեխանիզմը չի գործում այնպես, ինչպես այն նախատեսվել է և թափվում է զգալի վարչական մարտահրավերների հետ: Կան այլ մոտեցումներ, որոնք կարելի է դիտարկել: Օրինակի համար, փոփոխական օդայթի կարելի է կապել գլխավոր հանաձոնների համար գնային ցուցիչներում կատարվող փոփոխությունների հետ: Նման մոտեցումն ավելի ընդունված է վառելիքի ֆինանսական ռեժիմներին, սակայն այն կարելի է օգտագործել օգտակար հանաձոնների համար տեսանելի շուկայական գների հետ միասին: Օրինակ, Զուբնգվեղը և Չամբիան որոշ հանաձոնների համար օգտագործում են փոփոխական այնպիսի օդայթի, որն աճում է, երբ շուկայական գներն անցում են կոնկրետ շեմեր: Նման մոտեցման կիրառումը բազմամետաղական հանքերի պարագայում կարող է լրացուցիչ բարդություններ առաջացնել, սակայն մենք կարող ենք պնդել, որ այս բարդությունները ավելի փոքր մարտահրավերներ կլինեն, քան ներկա համակարգինը, որը հիմնվում է շահույթների հաշվարկների վրա, որն իր հերթին ենթակա է մանիպուլյացիաների և պահանջում է զգալի վերահսկողություն:

Ո՞րն է օդայթիի հետադարձ ներման նպատակը:

Մենք այնպես ենք հասկանում, որ նախագիծը թույլ կտա նախկին օդայթիների հետ կապված վեճերի ու տուգանքների ենթակա ընկերություններին կիրառել նոր 80% կանոնը: Ընդհանրապես մեզ համար մտահոգիչ է, որ ընկերություններին թույլ կտրվի օդայթիի մեղմացում հետադարձ ուժով: Ո՞րն է սրա նպատակը: Ո՞րն է ակնկալվող հետևանքը եկամուտների առումով: Բանի՞ ընկերությունների է սա վերաբերելու: Միայն այն ընկերություններին, որոնք ենթարկվել են տուգանքների ցածր վճարների համար, թե՛ նաև նախկինում տուգանքների չենթարկված ընկերությունները հնարավորություն կունենան վերանայլ նախորդ օդայթիների հաշվարկները: Առաջարկը նշում է վճարման պլանների մասին: Վճարման պլանները ներառելու՝ են ժամկետանց գումարների տոկոսները: Ո՞ր ժամանակահատվածից սկսած է կիրառվելու աստիճանական մարման մոտեցումը (20 տարի առաջ) և, որքա՞ն ժամանակ է տրվելու մարման համար:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ**

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 313, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

02/2-4/7192-17 2017-04-26

ՀԱՀ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԻ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ԱՄԻՐԽԱՆՅԱՆԻՆ
(Խասցի՝ ք. Երևան, Մալաթյա Բաղրամյան 40)

Հարգելի պարոն Ամիրխանյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի ս.թ. մարտի 29-ի թիվ 01/05.1/992-17 հանձնարարականի, ՀՀ ֆինանսների նախարարությունը, շահագրգիռ նախարարությունների հետ համատեղ քննարկել է Ձեր կողմից ներկայացված գրությունը, որի կապակցությամբ հայտնում ենք հետևյալը:

Ընդհանուր առմամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը բարձր է գնահատում Հայաստանի Հանրապետությունում հանքարդյունաբերական ոլորտի հարկման հիմնախնդիրների առնչությամբ Մեթյու Գենացիի տեսակետները:

Ներկայացված գրության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Հայաստանի ամերիկյան համալսարանի կողմից ներկայացված են երկու խումբ նկատառումներ. Առաջին խմբում ներառված են ըստ էության հարցադրումներ, որոնք վերաբերում են «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Բնապահպանական և քնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների հիմնավորումներին, իսկ երկրորդ խմբում ներառված են առաջարկություններ՝ ուղղված մետաղական օգտակար հանածոների բնապահպանական հարկով հարկման մեխանիզմի կատարելագործմանը:

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Բնապահպանական և քնօգտագործման վճարների մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների հիմնավորումների վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված 90 տոկոս շեմը 80-ով փոխարինելը ողյալթիների փաստացի բազայի նվազեցման նպատակ չի ունեցել, որը հիմնավորվում է հետևյալով.

Ինչպես գրության մեջ ճիշտ նկատվել է, Հայաստանի Հանրապետությունում ողյալթիների կիրառության բազան որոշելու առաջին մեթոդը մետաղական խտանյութերի իրացման պայմանագրային արժեքն է: Ինչպես գիտեք, նշված պայմանագրային արժեքը կախված է խտանյութում պարունակվող մետաղների միջազգային գներից, խտանյութում պարունակվող վճարվող մետաղների քանակից (խտանյութի որակական ցուցանիշ) վերամշակման և գտման ծախսերի մակարդակից, փոխադրման ծախսերից և միջազգային պրակտիկայում ընդունված այլ նվազեցումներից (չվճարվող կամ նվազեցվող քանակություն, տեղափոխման ֆրանչիզա և այլն): Համապատասխանաբար, ժամանակային կոնկրետ պահին խտանյութերի իրացման շուկաներում՝ թվարկված փոփոխականների փաստացի արժեքներն են որոշում, թե որքանով է ողյալթիի բազայի նվազագույն շեմը (որը անցյալում սահմանված էր՝ որպես պարունակվող մետաղների արժեքի 90 տոկոս) համարժեք կոնկրետ շուկայական պայմաններում որոշվող՝ խտանյութի իրացման պայմանագրային արժեքին: ՀՀ կառավարության վերլուծությունները վկայում են, որ Հայաստանում արտադրվող խտանյութերից ամենամեծ կշիռն ունեցող պղնձի խտանյութի դեպքում, շուկայական ներկա պայմաններում¹, նվազագույն շեմի որոշման համար 90 տոկոսն անհամարժեք մեծություն էր: Առավել ևս այն անարդարացի էր, երբ պղնձի գները գտնվում էին 1 տոննայի դիմաց 4500-4800 ԱՄՆ դոլար սահմաններում: Համապատասխանաբար, մեր կողմից հաշվարկվել է ներկա պայմաններում համարժեք փոխարինելի շեմը և այն գտնվում է պղնձի խտանյութում պարունակվող մետաղների արժեքի 80 տոկոսը կազմող սահմանում:

Նշվածն ավելի պատկերավոր ներկայացնելու համար կարելի է քննարկել հետևյալ օրինակը (թվերը թեև պայմանական են, սակայն բավական մոտ են իրականությանը).

		90%	80%
1	Պղնձի գին (ԱՄՆ դոլար)	4500	4500
2	Պղնձի պարունակություն	28%	28%
3	Տուգանային նվազեցում	1%	1%
4	TC -Մշակման վճար ԱՄՆ դոլար/տոննա (ներառյալ տրանսպորտի ծախս)	160.4	160.4
5	RC-Ռաֆինացման վճար (1 ֆունտի հաշվով)	0.1	0.1

¹ Պղնձի 1 տոննայի գինը՝ 5800 ԱՄՆ դոլար, խտանյութում միջին պարունակությունը՝ 25%, TC-ն՝ մեկ տոննայի համար մոտ 90 ԱՄՆ դոլար, RC-ն՝ մեկ ֆունտի համար 0,09 ԱՄՆ դոլար, չվճարվող մասը՝ 1 միավոր, փոխադրման հետ կապված ծախսերը՝ մոտ 60 ԱՄՆ դոլար հիմնական ենթադրություններից ելնելով

6	Խտանյութի գին (հաշվի առնված վերոնշյալ նվազեցումները) - 1տ-ի հաշվով	997	997
7	Խտանյութի գին ըստ Օրենքի (ԱՄՆ դոլար) - (28%)*Միջազգ.գին *90% (80%)	1,134	1,008
8	Գնային տարբերություն - (9/8)*100	13.8%	1.1%
9	Ռոյալթիի հաստատուն (ֆիքսված) մաս	4.0%	4.0%
10	Հաշվարկված ռոյալթի - առանց շահութաբերության բաղադրիչի (9+9*8)	4.6%	4.0%
11	Խտանյութի իրացումից հասույթ (ԱՄՆ դոլար) (6)	997	997
12	Ծախսեր 1 տոննայի հաշվով (ԱՄՆ դոլար)	850	850
13	Շահույթ (ԱՄՆ դոլար) (11-12)	147	147
14	Շահութաբերություն (13/11*100)	14.7%	14.7%
15	Իրացումից ճշգրտված հասույթ (ԱՄՆ դոլար)	1,134	1,008
16	Շահութաբերություն ճշգրտված (15-12)/15*100	25.0%	15.7%
17	Ռոյալթի (Ներառած շահութաբերությունը) (9+14*12.5%)	5.8%	5.8%
18	Ռոյալթի հաշվարկված (Ներառած Շահութաբերությունը) (10+16*12.5%)	7.7%	6.0%
19	Ռոյալթիների տարբերություն (19/18*100-100)	31.5%	2.8%

Ինչպես կարելի է եզրակացնել վերոհիշյալ օրինակով ներկայացված տեղեկատվությունից նշյալ օրենսդրական նախաձեռնությունների նպատակը խտանյութի միջազգային գների նվազման պայմաններում արդարացի հարկային բեռի սահմանումն է, որը ոլորտի համար պետք է նաև ստեղծի հետագա աճ, քանի որ ինչպես կատարված հաշվարկներն են ցույց տալիս ներկա օրենսդրական կարգավորումների շրջանակներում սահմանված ռոյալթիի հաշվարկման մեթոդաբանությունը լուրջ վտանգներ է ստեղծում նաև ոլորտում տնտեսական գործունեությունը շարունակելու տեսանկյունից:

Ինչ վերաբերում է վերոնշյալ օրենքներին հետադարձ ուժ տալու հիմնավորումներին, ապա այդ կապակցությամբ կցանկանայինք ընդգծել, որ առաջարկված 80 տոկոս կիրառելու կանոնին հետադարձ ուժ չի տրվել: Նախագծերով հետադարձ ուժ տրվել է միայն հարկային մարմինների կողմից մինչև 2016 թվականը ներառյալ կիրառված վերահաշվարկների դեպքում հաշվարկված տույժերից և տուգանքներից ազատման նորմին: Վերջինս հիմնավորվում է նրանով, որ, ըստ էության, «Բնօգտագործման և բնապահպանական վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համապատասխան դրույթը վերահաշվարկը սահմանել է որպես հարկային մարմնի կողմից իրականացվելիք գործառույթ: Այսինքն, հարկ վճարողը ցանկացած պարագայում, նույնիսկ այն դեպքում, երբ փաստացի պայմանագրային արժեքը ցածր է խտանյութի միջազգային գնի 90 տոկոսից, վերահաշվարկ կատարելու պարտավորություն չունի:

Հարկ ենք համարում ընդգծել նաև, որ նախագծերով առաջարկվող մոտեցումները բավականին մանրամասն քննարկել են ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների կողմից և նախագծերով առաջարկված տարբերակը ընդունելի տարբերակ է համարվել, հետևաբար քիչ հավանական է, որ այն ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների համար խնդրահարույց լինի:

Մեքսիկական օգտակար հանածոների բնապահպանական հարկով հարկման մեխանիզմի կարարելագործմանն ուղղված առաջարկությունների վերաբերյալ

Ռոյալթին միայն ԼՄԻ (LME) հիման վրա հաշվարկելու առաջարկության կապակցությամբ հարկ ենք համարում ընդգծել, որ ՀՀ-ում ռոյալթին վճարվում է ոչ միայն օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացումից ստացվող բարձր շահութաբերության համար, այլ նաև այն մետաղական օգտակար հանածոների օգտագործումը փոխհատուցելու նպատակ է հետապնդում (այսինքն՝ բնօգտագործման վճարին բնորոշ հատկանիշ ունի): Այս առումով, միայն միջազգային գների հիման վրա ռոյալթի հաշվարկելու առաջարկությունը որոշակիորեն կհակադրվի ռոյալթի ընդհանուր նպատակադրումներին:

Նկատենք նաև, որ գործող ռոյալթի հաշվարկման երկաստիճան համակարգը ուղղված է նաև տրանսֆերային գնագոյացման հնարավոր դեպքերը բացառելուն: Այս առումով, չնայած նրան, որ ներկայացված գրության համաձայն, միայն ԼՄԻ հիման վրա ռոյալթի հաշվարկելու մոտեցման դեպքում սահմանափակվում են տրանսֆերային գնագոյացման հնարավորությունները, այդուհանդերձ պետք է ընդունել, որ ԼՄԻ գների կիրառությունը կարող է ստեղծել որոշակի ռիսկեր, որոնք կառավարելու համար ներկայացվել են որոշակի մեխանիզմներ (կիրառել ԼՄԻ-ի որոշակի տոկոս կամ ԼՄԻ-ի և սահմանված վերամշակման մարժայի տարբերություն):

Հետևաբար, գտնում ենք, որ միայն ԼՄԻ-ի գների հիման վրա ռոյալթի հաշվարկելու մոտեցումը լրացուցիչ քննարկման անհրաժեշտություն ունի՝ հաշվի առնելով նաև այն, որ ԼՄԻ գնի որոշակի տոկոս կիրառելու այլընտրանքային մոտեցման վերաբերյալ առաջարկը կամ ԼՄԻ գնով որոշված արժեքից վերամշակման մարժան հանելու մոտեցումն, ըստ էության, ընկած է ներկայում օրենքով սահմանված հաշվարկման մեթոդաբանության հիմքում:

Ինչ վերաբերում է ռոյալթի հաշվարկման մեխանիզմի մեջ փոփոխական բաղադրիչ ներմուծելու առաջարկությանը, ապա հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայացված

առաջարկության նպատակը բարձր շուկայական գների, հետևաբար նաև բարձր շահութաբերության պայմաններում բարձր դրույքաչափով ուղարկի հաշվարկելն է, գտնում ենք, որ ներկայացված առաջարկությունը կարելի է քննարկել, քանի որ առաջարկվող մոդելի կիրառությունը կարող է հնարավորություն ընձեռել հետագայում շուկայական գների անկման պայմաններում լրացուցիչ հավաքագրված ուղարկի հաշվին աջակցել ոլորտի տնտեսավարող սուբյեկտներին:

Ամփոփելով, կցանկանայի շնորհակալություն հայտնել Ձեզ և Ձեր ղեկավարած կենտրոնին՝ Ձեր տեսակետներն ու դիրքորոշումները ի շահ Հայաստանի Հանրապետության մեզ հետ կիսվելու և քննարկելու կառուցողական գործելաճ գուցադրելու համար: Մենք միշտ պատրաստ ենք ոլորտին առնչվող ցանկացած հարցի շուրջ մասնագիտական քննարկումներին մեր մասնակցությունն ապահովելու համար:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

Կառ.՝ եկամուտների քաղաքականության բաժին
Հեռ.՝ 011 800 326



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

0010, ք.Երևան-10, Ա.Ավրադյան 5.
Հեռ. 011-59-72-07, ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№ 05/11.2/2824-12
*23. 03 2017 թ

Ձեռք N:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԻ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ԱՄԻՐԻԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ամիրխանյան

«Հ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը բարձր է գնահատում Հայաստանի Հանրապետությունում հանքարդյունաբերական ոլորտի հարկման հիմնախնդիրների առնչությամբ պրն Մեթյու Գենացիի տեսակետները և ոչ վաղ անցյալում ոլորտում առկա մի շարք կարևոր հարցերի վերաբերյալ նրա արժեքավոր խորհրդատվությունը:

Ստորև ներկայացնում ենք այն պարզաբանումները և հիմնավորումները, որոնք ընկած են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նախաձեռնված՝ ոռոյաթիների կիրառության օրենսդրական վերջին կարգավորումների հիմքում:

1. Ռոյաթիների հաշվարկման բազան՝ որպես խտանյութերում պարունակվող մետաղների արժեքի 80 տոկոս սահմանելու հիմնավորումների վերաբերյալ:

Օրենսգրքով սահմանված 90 տոկոս շեմը 80-ով փոխարինելը ոռոյաթիների փաստացի բազայի նվազեցման նպատակ չի ունեցել: Ինչպես գրության մեջ ճիշտ նկատվել է, Հայաստանի Հանրապետությունում ոռոյաթիների կիրառության բազան որոշելու առաջին մեթոդը մետաղական խտանյութերի իրացման պայմանագրային արժեքն է: Ինչպես գիտեք, նշված պայմանագրային արժեքը կախված է խտանյութում պարունակվող մետաղների միջազգային

Կատարող՝ Արդյունաբերության զարգացման վարչություն Սամվել Պարանյան
011-597-146

գներից, խտանյութում պարունակվող վճարվող մետաղների քանակից (խտանյութի որակ) վերամշակման և զտման ծախսերի մակարդակից (Treatment and refining costs/charges), փոխադրման ծախսերից և միջազգային պրակտիկայում ընդունված այլ նվազեցումներից (չվճարվող կամ նվազեցվող քանակություն, տեղափոխման ֆրանչիզա և այլն): Համապատասխանաբար, ժամանակային կոնկրետ պահին խտանյութերի իրացման շուկաներում՝ թվարկված փոփոխականների փաստացի արժեքներն են որոշում, թե որքանով է ոռոյալթի բազայի նվազագույն շեմը (որը անցյալում սահմանված էր՝ որպես պարունակվող մետաղների արժեքի 90 տոկոս) համարժեք կոնկրետ շուկայական պայմաններում որոշվող՝ խտանյութի իրացման պայմանագրային արժեքին: Մեր վերլուծությունները վկայում են, որ Հայաստանում արտադրվող խտանյութերից ամենամեծ կշիռն ունեցող պղնձի խտանյութի դեպքում, շուկայական ներկա պայմաններում¹, նվազագույն շեմի որոշման համար 90 տոկոսն անհամարժեք մեծություն էր: Առավել ևս այն անարդարացի էր, երբ պղնձի գները գտնվում էին 4500-4800 ԱՄՆ դոլար սահմաններում: Համապատասխանաբար, մեր կողմից հաշվարկվել է ներկա պայմաններում համարժեք փոխարինելի շեմը և այն գտնվում է պղնձի խտանյութում պարունակվող մետաղների արժեքի 80 տոկոսը կազմող սահմանում: Կատարված փոփոխությունը ոռոյալթիների բեռի նվազեցման նպատակ չի ունեցել, այլ՝ վերականգնել է արդարությունը, ինչը վերջին տարիներին խախտված էր պղնձի գների ցածր մակարդակի պատճառով: Հուսով ենք, որ սահմանված նոր շեմը հետագայում նվազեցնելու անհրաժեշտություն չի լինելու, սակայն կարող եք հեշտությամբ հաշվարկել, որ այլ հավասար պայմաններում, պղնձի գինը 4000 ԱՄՆ դոլար կազմելու դեպքում համարժեք և արդարացի շեմը պետք է կազմի 75 տոկոս:

2. Մենք հաստատում ենք պարոն Գենացիի այն ընկալումը, որ խտանյութում պարունակվող մետաղների արժեքի (ԼՄԻ գներով հաշվարկված) նկատմամբ սահմանված 80 տոկոս նվազագույն շեմը կիրառվում է միայն այն դեպքում, եթե պայմանագրով որոշված իրացման արժեքն ավելի ցածր է լինելու նշվածից: Բարձր լինելու դեպքում ոռոյալթի բազան լինելու է խտանյութի իրացման համար պայմանագրի համաձայն ստացված փաստացի արժեքը:

¹ Պղնձի 1 տոննայի գինը՝ 5800 ԱՄՆ դոլար, խտանյութում միջին պարունակությունը՝ 25%, TC-ն՝ մեկ տոննայի համար մոտ 90 ԱՄՆ դոլար, RC-ն՝ մեկ ֆունտի համար 0,09 ԱՄՆ դոլար, չվճարվող մասը՝ 1 միավոր, փոխադրման հետ կապված ծախսերը՝ մոտ 60 ԱՄՆ դոլար հիմնական ենթադրություններից ելնելով

Այստեղ ցանկանում ենք հստակեցնել, որ սա նոր մոտեցում չէ և սահմանված էր նաև գործող հարկային օրենսգրքով: Քննարկման ենթակա է պարոն Գենացիի այն դիտարկումը, որ հարկային վարչարարությունը պարզ պահելու համար կարելի էր քննարկել ընդհանրապես «պայմանագրային իրացման արժեքը՝ որպես ողյալթիի բազա» մոտեցումից հրաժարվելու նպատակահարմարության հարցը: Հարցադրումը այդ տեսանկյունից առայժմ չի քննարկվել: Հասկանալի է նաև պարոն Գենացիի կողմից առաջարկվող՝ ԼՄԻ գնի որոշակի տոկոս կիրառելու այլընտրանքային մոտեցման վերաբերյալ առաջարկը, ինչն էապես չի տարբերվում նվազագույն շեմի ներկայումս սահմանված մոտեցման կիրառությունից:

3. Պարոն Գենացիի կողմից նշվող՝ ԼՄԻ գնով որոշված արժեքից վերամշակման մարժան հանելու մոտեցումն ըստ էության ընկած է ներկայում օրենքով սահմանված հիմնական մեթոդի հիմքում: Թերևս որոշ պարզեցում հնարավոր է կատարել հետագայում՝ «վերամշակման մարժայի» մեկ հանրագումարային արժեք հրապարակելու եղանակով, սակայն անիրագործելի չէ նաև այն մոտեցումը, որը սահմանված է ներկա օրենքի փոփոխությամբ: Հայաստանի Հանրապետությունում մետաղական խտանյութեր արտադրող ձեռնարկությունների թիվը չի գերազանցում մեկ տասնյակը և նշված կազմակերպությունների ֆինանսական պատասխանատուների հետ մի քանի քննարկումների ընթացքում մանրամասնորեն քննարկված են եղել այն մոտեցումները, որոնք պահանջվում են ներկա օրենսդրական փոփոխություններով: Կարծում ենք, որ այն խնդրահարույց չէ: Միաժամանակ, ևս մեկ անգամ ցանկանում ենք հաստատել, որ մեզ համար հասկանալի է պարոն Գենացիի կողմից նկատված՝ երկուսի փոխարեն մեկ մեթոդ կիրառելու առավելությունը՝ իր պարզ ու առավել կանխատեսելի լինելու հիմնավորմամբ:

4. Ռոյալթիի երկրորդ՝ եկամտային հիմքով որոշվող բաղադրիչը շարունակում է գործել: Այն փոփոխություն չի կրել: Չենք կարծում, որ ներկա վարչարարությունն անհնար է դարձնում եկամտային հիմքով ռոյալթիի երկրորդ բաղադրիչի կիրառությունը: Հնարավոր է, որ հիմք ունի պարոն Գենացիի մտահոգությունն այն մասին, որ եկամտային բաղադրիչի կիրառությունը ռիսկային է այն տեսանկյունից, որ շահույթի որոշման դժվարությունները կարող են վեճի առարկա լինել տնտեսվարող սուբյեկտների և հարկային մարմինների միջև: Սակայն անհրաժեշտ է չմոռանալ, որ լեռնահանքային ոլորտի ձեռնարկությունները վճարում են նաև շահութահարկ և միայն այդ պատճառով և նրանք, ինչպես նաև՝ հարկային մարմինները ստիպված են հաշվարկել հարկվող շահույթի մեծությունը: Այդ տեսանկյունից կարելի է

հիմնավորել, որ երկրորդ բաղադրիչը ձևափոխելու հիմնավորումները բացակայում են: Հարկային մարմինները պարտավոր են հզորացնել հսկողական կարողությունները, իսկ ձեռնարկությունները՝ հարկային հաշվառման հմտությունները:

5. 80 տոկոս կիրառելու կանոնին հետադարձ ուժ չի տրվել: Այն կիրառվում է 2007 թվականից (առաջին անգամ այդ կանոնը կկիրառվի 2018 թվականի ապրիլին՝ 2017-ի ոռոյաթին հաշվարկելու համար): 2017-ի համար կիրառելու հիմնավորումները վերևում բերվել են, այդ պատճառով այստեղ դրանք չեն կրկնվի: Հետադարձ ուժ տրվել է միայն հարկային մարմինների կողմից մինչև 2016 թվականը ներառյալ կիրառված վերահաշվարկների դեպքում հաշվարկված տույժերին և տուգանքներին: Վերջինի հիմնավորումը հետևյալն է՝ «Բնօգտագործման և բնապահպանական վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համապատասխան դրույթը վերահաշվարկը սահմանել է որպես հարկային մարմնի գործառույթ: Այսինքն, հարկ վճարողը պարտավոր չէ վերահաշվարկել, եթե անգամ փաստացի պայմանագրային արժեքը ցածր է խտանյութի միջազգային գնի 90 տոկոսից: «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը սահմանում է, որ տուգանքներ կիրառվում են այն դեպքում, երբ հարկ վճարողը, ելնելով «ինքնահայտարարագրման» պարտավորությունից, չի կատարել իր պարտավորությունը և թերահայտարարագրել է հարկերը: Ինչպես նկատելի է, կոնկրետ դեպքում ակնհայտ չէ, որ տուգանքներ պետք է կիրառվեն: «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը սահմանում է նաև, որ երկիմաստություններ լինելու դեպքում՝ դրանք պետք է կիրառվեն հարկ վճարողի օգտին: Այս կանոնը նույնպես պահանջում է, որ նման իրավիճակում տուգանքներ չկիրառվեն: Սակայն, որոշ դեպքերում, «զգուշության» նկատառումներով հարկային մարմինների կողմից հաշվարկվել են նաև տուգանքներ և վեճը այդպիսով տեղափոխել դատական մարմիններ: Հետևաբար, օրենքում ներառված այդ դրույթը ոչ այնքան ներման իմաստ ու նշանակություն ուներ, որքան՝ հստակեցման: Այդպիսով դատական մարմինները ազատված կլինեն նաև նման դեպքերը քննարկելու ծանրաբեռնվածությունից:

Հուսով ենք, որ թվարկված պարզաբանումները անդրադարձել են պարոն Գենացիի կողմից բարձրացված բոլոր հարցերին և հստակեցնում են այն փաստարկները, որոնք ընկած են ՀՀ կառավարության որոշումների հիմքում: Միաժամանակ, պատրաստակա-

մություն ենք հայտնում ներկայացնել լրացուցիչ պարզաբանումներ, եթե դրանք անհրաժեշտ նկատվեն:

Ցանկանում ենք ևս մեկ անգամ հաստատել, որ պարոն Գենացիի կողմից նկատված հարցադրումները հաշվի կառնվեն ոռյաթիների քաղաքականության զարգացման հետագա փուլերում և կնպաստեն ավելի արդյունավետ որոշումների հարցում:

Հարգանքով՝



ՏԻԳՐԱՆ ԽԱՀԱՏՐՅԱՆ

Հ ալ է լ վ ած 2. Ը Ն Դ Ե Բ Ք Ի Ե Վ Հ Ա Ր Կ Ա Յ Ի Ն Օ Ր Ե Ն Ս Գ Բ Ք Ե Բ ՈՒ Մ, Տ Ն Տ Ե Մ Ա Կ Ա Ն Ս Ր Ց Ա Կ Ց ՈՒ Թ Ց Ա Ն Պ Ա Շ Տ Պ Ա Ն ՈՒ Թ Ց Ա Ն Մ Ա Ս Ի Ն Ե Վ Տ Ե Ղ Ա Կ Ա Ն Ի Ն Ք Կ Ա Ռ Ա Վ Ա Ր Մ Ա Ն Մ Ա Ս Ի Ն Օ Ր Ե Ն Ք Ն Ե Բ ՈՒ Մ Լ Ր Ա Ց ՈՒ Մ Կ Ա Տ Ա Ր Ե Լ ՈՒ Մ Ա Ս Ի Ն Հ Ա Ց Ա Ս Ս Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Ց Ա Ն Օ Ր Ե Ն Ք Ն Ե Բ Ի Փ Ո Փ Ո Ւ Ռ Ի Թ Ց ՈՒ Ն Ն Ե Բ Ի Ն Ա Խ Ա Գ Ծ Ե Բ ⁴²

Ն Ա Ւ Ա Գ Ի Ծ

Հ Ա Յ Ա Ս Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Ց Ա Ն Օ Ր Ե Ն Ք Ը

Հ Ա Յ Ա Ս Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Ց Ա Ն Ը Ն Դ Ե Բ Ք Ի Մ Ա Ս Ի Ն Օ Ր Ե Ն Ս Գ Բ Ք ՈՒ Մ Փ Ո Փ Ո Ւ Ռ Ի Թ Ց ՈՒ Ն Ե Վ Լ Ր Ա Ց ՈՒ Մ Ն Ե Բ Կ Ա Տ Ա Բ Ե Լ ՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին 2011 թվականի նոյեմբերի 28-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 48-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«48) **հրապարակային հաշվետվություն**՝ սույն Օրենսգրքի 9-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված ընդերքօգտագործողների և պետական մարմինների կողմից լիազոր մարմին և կառավարության աշխատակազմ ներկայացվող հաշվետվությունը, որը բաց է հրապարակման համար:»

Հոդված 2. Օրենսգրքի 9-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 9. Ընդերքօգտագործման հետ կապված գործունեության հրապարակայնությունը

1. Ընդերքօգտագործման հետ կապված գործունեության վերաբերյալ լիազոր մարմինը իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է օգտակար հանածոյի արդյունահանման և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության մասով գործունեության վերաբերյալ առնվազն հետևյալ տեղեկատվությունը՝

- 1) թույլտվություն ստացած իրավաբանական անձի անվանումը,
- 2) թույլտվության ստացման համար ներկայացված դիմումի տարին, ամիսը, ամսաթիվը,
- 3) թույլտվության հերթական համարը, տրման տարին, ամիսը, ամսաթիվը և ժամկետը,
- 4) թույլտվության երկարաձգման դեպքում համապատասխան փաստաթղթի համարը, տրման տարին, ամիսը, ամսաթիվը, թույլտվության երկարաձգման ժամկետը,
- 5) ընդերքի տեղամասի ծայրակետերի կոորդինատները և ընդհանուր մակերեսը,
- 6) հանքավայրի (տեղամասի) անվանումը,
- 7) օգտակար հանածոյի անվանումը,
- 8) ընդերքօգտագործման պայմանագրի համարը, կնքման տարին, ամիսը, ամսաթիվը, ընդերքօգտագործման պայմանագրում փոփոխություններ կատարելու դեպքում յուրաքանչյուր փոփոխության համար համապատասխան փաստաթղթի համարը, կնքման տարին, ամիսը, ամսաթիվը,
- 9) օգտակար հանածոյի արդյունահանման մասով գործունեության վերաբերյալ նաև՝
ա. տրամադրված օգտակար հանածոյի մարվող պաշարների քանակը՝ ըստ հիմնական և ուղեկից բաղադրիչների.
բ. հանքի տարեկան արտադրողականությունը.

10) օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության մասով գործունեության վերաբերյալ նաև օգտակար հանածոյի երևակման կամ օբյեկտի անվանումը:

2. Լիազոր մարմինը իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է նաև մետաղական օգտակար հանածո արդյունահանող ընդերքօգտագործողների հետ կնքված ընդերքօգտագործման պայմանագրերը և դրանցում կատարվող փոփոխությունները՝ բացառելով «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հրապարակման ոչ ենթակա տեղեկատվության (տվյալների) հրապարակումը:

3. Մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործողը կառավարության որոշմամբ սահմանված կարգով և ժամկետներում պարտավոր է թղթային կամ էլեկտրոնային եղանակով լիազոր մարմին և կառավարության աշխատակազմ ներկայացնել տարեկան հրապարակային հաշվետվություն ընդերքօգտագործման հետ կապված գործունեության վերաբերյալ, որն իր մեջ ներառում է տեղեկատվություն առնվազն՝

- 1) արդյունահանման տարեկան ծավալների վերաբերյալ,
- 2) ընդերքօգտագործողի կողմից Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեներ վճարված բոլոր տեսակի պետական և տեղական հարկերի և վճարների (ներառյալ ոռոգիչին) վերաբերյալ՝ առանձին-առանձին,
- 3) ընդերքօգտագործողի կողմից համայնքային արտաբյուջեներ կատարած վճարների, հողի վարձակալության վճարների, բարեգործական հատկացումների, նվիրատվությունների կամ այլ ձևով համայնքին կատարված անհատույց օտարումների վերաբերյալ,
- 4) Ընդերքօգտագործման հետ կապված գործունեության շրջանակներում ոչ առևտրային իրավաբանական անձանց տրամադրված նվիրատվությունների, նվիրաբերությունների կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումների վերաբերյալ,

⁴² Կենտրոնի ներկայացված առաջարկությունները մեծապես ընդունվեցին և կատարվեցին փոփոխություններ ՀՀ ընդերքի և հարկային օրենսգրքերում, տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենքում:

5) Ընդերքօգտագործման հետ կապված գործունեության շրջանակներում ֆիզիկական անձանց տրամադրված նվիրատվությունների, նվիրաբերությունների կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումների վերաբերյալ՝ նշելով տրամադրված ընդհանուր գումարը և ֆիզիկական անձանց ընդհանուր թիվը:

6) շրջակա միջավայրի պահպանության դրամազխիսին օրենսդրությամբ սահմանված չափով կատարված հատկացումների վերաբերյալ:

7) օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման համար մշտադիտարկումների իրականացման վճարների վերաբերյալ:

8) օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ֆինանսական առաջարկները:

9) համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ընդերքօգտագործման իրավունքները հավաստող փաստաթղթերով սահմանված պարտավորությունների վերաբերյալ:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված տեղեկատվությունը ընդերքօգտագործող ներկայացնում է իր կողմից շահագործվող յուրաքանչյուր հանքավայրի մասին առանձին:

5. Ընդերքօգտագործողը հրապարակային հաշվետվությունը կարող է հրապարակել նաև իր պաշտոնական կայքում (առկայության դեպքում):

6. Մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործողների գործունեության վերաբերյալ լիազոր մարմին և կառավարության աշխատակազմ հրապարակային հաշվետվություններ են ներկայացնում համապատասխան տեղեկության տիրապետող պետական մարմինները, որոնց ցանկը սահմանում է կառավարությունը:

7. Համայնքի ղեկավարը կառավարության սահմանած կարգով տարածքային կառավարման բնագավառի համապատասխան լիազոր մարմին է տրամադրում, ինչպես նաև հրապարակում է համայնքի պաշտոնական կայքում (առկայության դեպքում) կամ համայնքի ավագանու նստավայրում փակցնելու միջոցով, ըստ յուրաքանչյուր մետաղական օգտակար հանածոյի ընդերքօգտագործման իրավունք ստացած ընդերքօգտագործողի կողմից՝

1) համայնքի բյուջե վճարված բոլոր տեղական հարկերի և վճարների վերաբերյալ տեղեկատվությունը՝ յուրաքանչյուր հարկի և վճարի մասով առանձին,

2) համայնքի արտաբյուջեներ կատարած վճարների, ընդերքօգտագործման իրավունքի պայմանագրով նախատեսված համայնքի զարգացման նպատակով հատկացումների, հողի վարձակալության վճարների, բարեգործական հատկացումների, նվիրատվությունների կամ այլ ձևով համայնքին կատարված անհատույց օտարումների վերաբերյալ տեղեկատվությունը:

8. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկատվության հրապարակման և 3-րդ ու 6-րդ մասերով նախատեսված հրապարակային հաշվետվության ներկայացման կարգերը, ժամկետները և ձևերը սահմանում է կառավարությունը:

9. Սույն հոդվածի 7-րդ մասում նշված տեղեկատվության տրամադրման և հրապարակման կարգը սահմանում է կառավարությունը:

10. Սույն հոդվածի իմաստով հրապարակման է ենթակա հետևյալ տեղեկատվությունը, բացառությամբ «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հրապարակման ոչ ենթակա տեղեկատվության՝

1) ընդերքօգտագործողի կողմից օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ֆինանսական առաջարկները:

2) պետական տուրքի և ընդերքօգտագործման վճարների վերաբերյալ տեղեկատվությունը:

3) համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում օրենսդրությամբ և ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը:

Հոդված 3. Օրենսգրքի 13-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել նոր 5-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5) սույն Օրենսգրքի 9-րդ հոդվածով նախատեսված՝ ընդերքօգտագործման հետ կապված գործունեության հրապարակայնության շրջանակներում:»:

Հոդված 4. Օրենսգրքի 69-րդ հոդվածը լրացնել 6-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6. Ընդերքի օգտագործման հետ կապված շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը իր պաշտոնական կայքում յուրաքանչյուր տարի՝ մինչև հաշվետու տարվա ավարտին հաջորդող ամսվա 30-ը հրապարակում է ընդերքօգտագործողների կողմից շրջակա միջավայրի պահպանության դրամազխիսին վճարված և վերջիններիս վերադարձված գումարների վերաբերյալ տեղեկատվություն:»

Հոդված 5. Անցումային և եզրափակիչ դրույթներ

1. Սույն Օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Ընդերքօգտագործողները Օրենսգրքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ առաջին հաշվետվությունը պարտավոր են լիազոր մարմին և կառավարության աշխատակազմ ներկայացնել կառավարության որոշմամբ սահմանված կարգով ոչ ուշ, քան մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը:

3. Առաջին հաշվետու տարվան նախորդող տարվա համար Օրենսգրքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված տեղեկատվությունը լիազոր մարմին և կառավարության աշխատակազմ կարող է ներկայացնել Ընդերքօգտագործողի և լիազոր մարմնի հետ համաձայնեցված կարգով և ժամկետներում:

4. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հաշվետվությունների հրապարակումը չի կարող հիմք հանդիսանալ հարկային մարմնի կողմից ընկերություններում ստուգումներ իրականացնելու և լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրելու համար:»

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել 60.2-րդ և 60.3-րդ հոդվածներով՝ հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 60.2.** Ընդերքօգտագործման հետ կապված գործունեության հրապարակայնության կանոնները խախտելը

1. Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքին համապատասխան ընդերքօգտագործման հետ կապված գործունեության վերաբերյալ լիազոր մարմին և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ հրապարակային հաշվետվություն ներկայացնելու պարտավորություն ունեցող իրավաբանական անձանց կողմից համապատասխան հաշվետվությունը սահմանված ժամկետում չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում կազմակերպության պաշտոնատար անձանց նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հարյուրիսնապատիկի չափով:

Հոդված 60.3. Ընդերքօգտագործման հետ կապված գործունեության հրապարակայնության կանոնների խախտումները չվերացնելը

1. Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքին համապատասխան ընդերքօգտագործման հետ կապված գործունեության վերաբերյալ լիազոր մարմին և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ հրապարակային հաշվետվություն ներկայացնելու պարտավորություն ունեցող իրավաբանական անձանց կողմից համապատասխան հաշվետվությունը սահմանված ժամկետում չներկայացնելու համար սույն օրենքի 60.2-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվությունը կիրառելուց հետո լիազոր պետական կառավարման մարմնի՝ հաշվետվությունը ներկայացնելու գրավոր պահանջը ստանալուց հետո 10 աշխատանքային օրյա ընթացքում չկատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում կազմակերպության պաշտոնատար անձանց նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

2. Նույն արարքը, եթե կատարվել է կրկին կամ յուրաքանչյուր հաջորդ անգամ, վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում կազմակերպության պաշտոնատար անձանց նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 242³-րդ հոդվածով.

«**Հոդված 242³.**

Ընդերքօգտագործման հետ կապված գործունեության հրապարակայնության ապահովումն իրականացնող լիազոր մարմինը

Ընդերքօգտագործման հետ կապված գործունեության հրապարակայնության ապահովումն իրականացնող Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը քննում է վարչական գործեր և նշանակում վարչական տույժեր սույն օրենսգրքի 60.2-րդ և 60.3-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ:»:

Հոդված 3. Սույն Օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 308-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում լրացնել նոր «ե.1.» ենթակետ հետևյալ բովանդակությամբ.

«ե.1. մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործող հարկ վճարողների տարվա արդյունքներով վճարած հարկերի և վճարների ցանկերը.»:

Հոդված 2. Սույն Օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հավելված 3. ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ ԸՆԴԵՐՔԻ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԵՐՈՒՄ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՅԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Ա. Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 4-րդ հոդվածով սահմանվում են ընդերքի օգտագործման և պահպանության հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորման հիմնադրույթները: Ընդ որում, նույն հոդվածով որպես հիմնադրույթ է հռչակված ընդերքօգտագործման հետ կապված գործունեության հրապարակայնությունը: Օրենսգրքում առկա է հրապարակայնությանը վերաբերող միայն մեկ հոդված՝ 9-րդ հոդվածը, որի համաձայն ընդերքօգտագործման հետ կապված գործունեության վերաբերյալ տեղեկատվության տրամադրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կանոնադրությամբ (15.22.2008թ. թիվ 654-Ն որոշում) որպես նախարարության գործառույթ է նախատեսված քննարկվող ոլորտի հրապարակայնության ապահովումը: Հարկ է նկատի ունենալ սակայն, որ ընդերքօգտագործման ոլորտում հրապարակայնության կարգավորմանն ուղղված որևէ այլ դրույթ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ: Ուստի, պարզ չէ, թե կոնկրետ որ տեղեկատվությունն է ենթակա հրապարակման, ինչ սկզբունքով է իրականացվում նշված հրապարակումը: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ թեպետև ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման գործընթացում որոշակի առումով առկա է տվյալների հրապարակայնություն, սակայն դրանց իրավական հիմքերը հասկանալի չեն, ինչպես նաև առկա չէ համապատասխան տեղեկատվության հրապարակման համակարգվածություն կամ սկզբունքայնություն: Բացի այդ, չի հրապարակվում տրամադրված պաշարների քանակի, արդյունահանման ծավալների վերաբերյալ տեղեկատվությունը: Հաճախ որպես նշված տեղեկատվության չհրապարակման հիմնավորում բերվում է համապատասխան տեղեկատվության՝ առևտրային գաղտնիք հանդիսանալու հանգամանքը: Նշված մոտեցման համար հիմք է հանդիսանում այն, որ ՀՀ օրենսդրությամբ հստակ և սպառիչ ամրագրված չեն առևտրային գաղտնիք համարվող տեղեկատվության շրջանակները:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այս կամ այն տեղեկատվությունը առևտրային գաղտնիք համարելու իրավասությունը՝ որպես կանոն վերապահված է տնտեսվարող սուբյեկտին, այսինքն տեղեկատվությանը տիրապետողն ինքն է որոշում ինչպիսի տեղեկատվությունը համարել առևտրային գաղտնիք և ինքն էլ սահմանում է դրա պահպանության կանոնները: Սակայն, քննարկվող իրավագործությունը անսահմանափակ չէ: Ցանկացած պետություն իրավունք ունի պետական և հանրային շահերի պաշտպանության նպատակով պետական և ռազմական անվտանգության ապահովման համար, ինչպես նաև անբարեխիղճ մրցակցությունը կանխելու և սպառողների շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով սահմանել տեղեկատվության այն տեսակները, որոնք առևտրային կամ այլ գաղտնիք համարվել չեն կարող: Սակայն, քանի որ ՀՀ օրենսդրությամբ ընդերքօգտագործման ոլորտում հրապարակայնության շրջանակներ նախատեսված չեն, անհրաժեշտություն է առաջացել վերոնշյալ փաթեթով կարգավորել նաև այն տեղեկատվության հետ կապված հարցերը, որոնք փաթեթի իմաստով չբացահայտվող տեղեկատվություն կամ առևտրային գաղտնիք հանդիսանալ չեն կարող:

Այս առումով, նախագծի մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (այսուհետ նաև՝ ԱՃԹՆ) ստանդարտով հստակ սահմանված են ընդերքօգտագործման ոլորտում հրապարակման ենթակա տեղեկատվության շրջանակին առնչվող մի շարք հարցեր: Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությունը բնական պաշարների բաց և հաշվետու կառավարումը խթանող միջազգային կազմակերպություն է, որին 2017 թվականի դրությամբ անդամակցում են 51 երկրներ: 2015 թվականից Հայաստանի Հանրապետությունը նախաձեռնել է ԱՃԹՆ-ին անդամակցության գործընթաց: 2016 թվականի դեկտեմբերի 28-ի գրությամբ՝ ՀՀ կառավարությունը պաշտոնապես ներկայացրել է թեկնածության հայտը և 2017 թվականի մարտի 9-ի դրությամբ հանդիսանում է ԱՃԹՆ-ի թեկնածու երկիր: ԱՃԹՆ-ի ստանդարտի իրականացման նպատակն է հանքարդյունահանող ոլորտին վերաբերող ամբողջական տեղեկատվության հրապարակային դարձնելը՝ ապահովելով ոլորտի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, խթանելով մրցակցային կառավարումն ու վերահսկողությունը: ԱՃԹՆ-ին անդամակցող երկրները պարտավորվում են հրապարակել ամենամյա զեկույցներ, որոնք պետք է ներառեն ամբողջական տեղեկատվություն պետության կողմից տրված թույլտվությունների, արդյունահանման ծավալների, պետությանը վճարված հարկերի և վճարների, ոլորտից ստացված եկամուտների տեղաբաշխման, սոցիալական ծրագրերի իրականացման վերաբերյալ: Անդամակցության համար անհրաժեշտ քայլերի իրականացման համար կառավարությունը համագործակցել է միջազգային գործընկերների՝ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության, Համաշխարհային բանկի, Հայաստանի Հանրապետությունում Միացյալ Թագավորության դեսպանատան, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հետ:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտություն է առաջացել ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված մի շարք դրույթներ համապատասխանեցնել ԱՃԹՆ-ի ստանդարտներին:

Վերոնշյալ օրենսդրական նախաձեռնությունների փաթեթի մշակումը պայմանավորված է հենց այդ հանգամանքով:

ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջներից է հանդիսանում նաև հարկային մարմնի կողմից ընդերքօգտագործողների կողմից հարկերի վճարման վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը (ընդ որում՝ տեղեկատվությունը պետք է հրապարակվի ապագաբեզգացված, այսինքն՝ յուրաքանչյուր հարկատեսակի մասով առանձին): Հաշվի առնելով նշվածը՝ փաթեթում ներառվել է նաև Հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու վերաբերյալ նախագիծը:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը.

Օրենսդրական նախաձեռնության փաթեթով առաջարկվում է՝

Ա. ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքում առաջարկվող փոփոխություն և լրացումները.

1) Փոփոխություն կատարել ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքում՝ սահմանելով ընդերքօգտագործման ոլորտում լիազոր մարմնի կողմից հրապարակման ենթակա տեղեկատվության շրջանակները.

2) Օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործողների համար պարտավորություն սահմանել իրենց պաշտոնական կայքում, մամուլում կամ էլեկտրոնային այլ եղանակով հրապարակել արդյունահանման տարեկան ծավալների վերաբերյալ տեղեկատվություն:

3) Մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործողների և համապատասխան տեղեկության տիրապետող պետական մարմինների (մասնավորապես, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների, ՀՀ բնապահպանության, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունների և ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի) համար պարտավորություն սահմանել մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործողների գործունեության և նրանց կողմից ըստ յուրաքանչյուր հարկատեսակի պետությանը վճարված գումարների վերաբերյալ լիազոր մարմին և ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել հրապարակային հաշվետվություններ, որոնց ներկայացման կարգերը, ժամկետները և ձևերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4) ԱՃԹՆ-ի ստանդարտի համաձայն պարտադիր հրապարակման է ենթակա նաև ընդերքօգտագործողների կողմից այս կամ այն համայնքի արտաբյուջե կատարված վճարումների վերաբերյալ տեղեկատվությունը: Համայնքների արտաբյուջեների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «ՀՀ բյուջետային համակարգի մասին» և «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքներով: «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի համաձայն համայնքի ավագանու որոշմամբ արտաբյուջետային միջոցները ենթակա են ներառման համապատասխանաբար պետական կամ համայնքի բյուջե, իսկ այդ միջոցների շրջանառությունը և բյուջեների կատարման հաշվետվություններում արտադրումն իրականացվում է «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքով: Նույն Օրենքի համաձայն համայնքային հիմնարկների անվամբ բացված արտաբյուջետային հաշիվները տնօրինում են տեղական ինքնակառավարման մարմինները: Հայաստանի Հանրապետության և համայնքների ակտիվների ու պասիվների հաշվառման նպատակով գանձապետարանն ապահովում է Հայաստանի Հանրապետության բյուջետային հատվածի վերաբերյալ պետական մարմիններից պետական հիմնարկների հաշվեկշիռների (ակտիվների ու պասիվների), ֆինանսական հոսքերի (ներառյալ արտաբյուջետային միջոցների գոյացման ու տնօրինման) մասին հաշվետվությունների ստացումը, ամփոփումը, վերլուծությունը: Չնայած ՀՀ օրենսդրության վերոնշյալ կարգավորումներին՝ ՀՀ օրենսդրությամբ համայնքների արտաբյուջեների թափանցիկության վերաբերյալ որևէ դրույթ առկա չէ: Մասնավորապես, եթե օրինակ պետական մարմինների անվամբ բացված արտաբյուջեների և դրանց նախահաշիվների հաստատման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումներն ընդունվում են նորմատիվ իրավական ակտի տեսքով և պարտադիր ենթակա են հրապարակման, ապա պարզ չէ համայնքի արտաբյուջեների դեպքում համայնքի ավագանու որոշումների բնույթը և հրապարակման աստիճանը:

5) Նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունների հրապարակման արդյունքում ընկերությունների համար հնարավոր բացասական հետևանքներից խուսափելու համար նույն օրենքի նախագծով նախատեսվում է սահմանել, որ նախորդ տարվա հաշվետվությունների հրապարակումը չի կարող հիմք հանդիսանալ հարկային մարմնի կողմից ընկերություններում ստուգումներ իրականացնելու և լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրելու համար:»:

Բ. ՀՀ Հարկային օրենսգրքում առաջարկվող լրացումը.

Հարկային օրենսգրքով հարկային մարմնի կողմից հարկ վճարողների վերաբերյալ տեղեկությունների հրապարակման պարտավորությունը և տեսակները նախատեսված են Օրենսգրքի 308-րդ հոդվածով:

Այս հոդվածի համաձայն հարկային մարմինը իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է՝

3) մինչև հարկային տարվան հաջորդող հարկային տարվա հուլիսի 1-ը ներառյալ՝

ա. հարկային տարվա արդյունքներով հարկային վնասներ հայտարարագրած և ապառքներ կուտակած հարկ վճարողների ցանկերը,

բ. աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցած հարկ վճարողների ցանկերը,

գ. հարկային տարվա արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 50 միլիոն դրամ և ավելի շահութահարկ վճարած հարկ վճարողների ցանկերը,

դ. հարկային տարվա արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 10 միլիոն դրամ և ավելի եկամտային հարկ վճարած հարկային գործակալների ցանկերը,

ե. Օրենսգրքի 384-րդ հոդվածի համաձայն՝ գործունեությունը կասեցված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ցանկը,

զ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ տեղեկություններ.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը ներառյալ՝ առաջին 1000 խոշոր հարկ վճարողների ցանկերը և հարկային տարվա սկզբից նրանց վճարած հարկերի մեծությունները՝ հաշվարկված աճողական կարգով:

Այսինքն, եթե ընդերքօգտագործող հանդիսացող ընկերությունը չի բավարարում վերոնշյալ ցանկերում ընդգրկվելու որևէ պայմանի, ապա հարկային մարմինը վերջինիս մասով տեղեկատվություն հրապարակելու որևէ պարտավորություն չունի:

Մինչդեռ ԱՃԹՆ-ի ստանդարտով, ինչպես արդեն նշվեց, պահանջվում է ընդերքօգտագործողների վերաբերյալ հարկերի մասով տեղեկատվության հրապարակման պարտադիր պահանջ: Ուստի, նախագծով առաջարկվում է հարկային մարմնի կողմից հրապարակման ենթակա վերոնշյալ ցանկում լրացնել նաև ընդերքօգտագործող հանդիսացող հարկ վճարողների ցանկերի հրապարակման պարտադիր պահանջ: Ընդ որում, հրապարակումը կիրականացվի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ձևով և կարգով, ինչը ամրագրված է նաև Հարկային օրենսգրքով:

Դ. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքում առաջարկվող լրացում:

Այս օրենսգրքում լրացում կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ իրավաբանական անձանց նկատմամբ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով սահմանվել է ընդերքօգտագործման հետ կապված գործունեության վերաբերյալ լիազոր մարմին և ՀՀ կառավարության աշխատակազմ հրապարակային հաշվետվություն ներկայացնելու պարտավորություն: Վերոնշյալ պարտավորությունը՝ համապատասխան հաշվետվությունը սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում կազմակերպության պաշտոնատար անձը կենթարկվի պատասխանատվության:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները.

Նախագիծը մշակվել է Հայաստանի ամերիկյան համալսարանի պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի կողմից՝ Հայաստանի Հանրապետության Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության բազմաշահառու խմբի և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ԱՃԹՆ-ի պատասխանատուների մասնակցությամբ:

4. Ակնկալվող արդյունքը.

Նախագծերի ընդունման արդյունքում նախատեսվում է ապահովել ՀՀ օրենսդրության համապատասխանեցում ԱՃԹՆ-ի ստանդարտին Հայաստանի Հանրապետությունում ԱՃԹՆ-ի ստանդարտի սահուն իրականացման նպատակով: Մասնավորապես, հանքարդյունահանող ընկերությունների և համապատասխան լիազոր մարմինների կողմից կտրվեն ոլորտում ծավալված գործունեության ընթացքում իրականացրած ֆինանսական հոսքերի և այլ տվյալների մասին հրապարակային հաշվետվություններ: Դրանք հետագայում կհամադրվեն կառավարության կողմից վարձվող անկախ աուդիտորական կազմակերպության կողմից, որն այդ վերլուծության արդյունքում հանրային զեկույց: Սա թույլ կտա հանքարդյունաբերության ոլորտի տեղեկատվությունը հանրության համար դարձնել առավել բաց և հասանելի, ինչն էլ կնպաստի ոլորտի շարունակական բարելավմանը: Այս նախագծերով սահմանված փոփոխությունների իրականացումը անհրաժեշտ է, որպեսզի Հայաստանի Հանրապետությունը կարողանա ներդնել թափանցիկության բարելավման հաշվետվողականության մեխանիզմներ, որի արդյունքում միայն, 2019 թվականին անցնելով միջազգային վավերացման գործընթաց, կկարողանա ճանաչվել ԱՃԹՆ-ի ստանդարտին համապատասխանող երկիր:

Հավելված 4. ԱՃԹՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Ամփոփ նկարագիր

ԱՃԹՆ օրենսդրական և ինստիտուցիոնալ վերլուծության ծավալն ու բովանդակությունը հիմնված է ԱՃԹՆ ստանդարտի վրա, որը պահանջում է արդյունահանող ոլորտի կառավարման կանոնների վերաբերյալ տեղեկատվության բացահայտում՝ շահագրգիռ կողմերին ընձեռելով երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման իրավունքների շնորհման մասին օրենքներն ու ընթացակարգերը, արդյունահանող հատվածին վերաբերող օրենսդրական, ենթաօրենսդրական և պայմանագրային շրջանակը և ոլորտի կառավարման գործում պետության ունեցած ինստիտուցիոնալ պարտականությունները հասկանալու հնարավորություն: Իրավական շրջանակի և ընդերքօգտագործման իրավունքների շնորհման թափանցիկության վերաբերյալ ԱՃԹՆ պահանջները ներառում են՝

- Իրավական դաշտը և ֆիսկալ ռեժիմը,
- Թույլտվությունների տրամադրումը,
- Թույլտվությունների գրանցումը,
- Պայմանագրերը,
- Իրական սեփականատերերի բացահայտում (համագործակցելով և համաձայնեցնելով ՎՋԲ-ի տրամադրած փորձագետի հետ, ով կղեկավարի միջազգային լավագույն փորձի տեսանկյունից իրական սեփականատերերի մասին օրենսդրության և ինստիտուցիոնալ շրջանակի վերլուծության և իրական սեփականատերերի ճանապարհային քարտեզի պատրաստման աշխատանքները):

Վերը նշված բոլոր ուղղություններին վերաբերող ՀՀ օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտը կուսումնասիրվի՝ առկա այն բացերն ու խնդիրները բացահայտելու նպատակով, որոնք կարող են խոչընդոտներ ստեղծել ԱՃԹՆ պահանջների գործնական կատարման համար:

Այս ուսումնասիրության շրջանակում կընդգրկվի նաև հանքարդյունաբերության ոլորտի օրենսդրության և ինստիտուցիոնալ դաշտի ավելի լայն վերլուծությունն ու գնահատումը **պատասխանատու հանքարդյունաբերության** տեսանկյունից, ԱՃԹՆ պահանջների և **ԲՇԽ-ի 2017-2018 թթ. աշխատանքային ծրագրում** սահմանված հիմնական առաջնահերթությունների համաձայն:

Մեթոդաբանություն

ԱՃԹՆ օրենսդրական և ինստիտուցիոնալ շրջանակի ուսումնասիրության և գործողությունների ծրագրի պատրաստման համար կիրառվելու է հետևյալ մեթոդաբանությունը.

- ԱՃԹՆ պահանջներին վերաբերող ՀՀ օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի բոլոր բաղադրիչների ուսումնասիրություն, բացթողումների, թերությունների, հակասությունների վերհանում և այլն.
- ՀՀ օրենսդրության և լավագույն կամ գործուն միջազգային փորձի համադրում, որը հենք կհանդիսանա առաջարկությունների համար.
- Խորհրդատվական կարծիքներ ԲՇԽ անդամների և այլ շահառուների կողմից.
- Ընդերքօգտագործման հարցերին առնչվող դատական նախադեպերի ուսումնասիրություն:

Վերլուծությունը ներառելու է վեց հիմնական ուղղություններ, որոնք մանրամասնված են ստորև և գործողությունների ծրագիր:

1. Իրավական դաշտ և ֆիսկալ ռեժիմ

ԱՃԹՆ անդամակցող պետությունները պետք է տրամադրեն արդյունահանող ճյուղերի ոլորտը կարգավորող իրավական և ֆիսկալ ռեժիմի նկարագրությունը: Այս տեղեկությունները պետք է ներառեն ֆիսկալ ռեժիմի համառոտ նկարագրությունը, այդ թվում՝ ֆիսկալ ռեժիմի ապակենտրոնացման աստիճանը, համապատասխան օրենքների և կանոնակարգերի ընդհանուր նկարագրությունը և տեղեկատվություն կառավարության համապատասխան գերատեսչությունների դերերի և պարտականությունների վերաբերյալ: Այս առնչությամբ՝ օրենսդրական և ինստիտուցիոնալ ուսումնասիրության շրջանակներում ուսումնասիրվում է ազգային իրավական և ինստիտուցիոնալ շրջանակը՝ բացահայտելու՝ արդյոք ԱՃԹՆ պահանջները կարող են կիրարկվել կամ արդյոք պետք է փոփոխություններ կատարել այդ պահանջների կիրարկումն ապահովելու համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալների բացահայտումը Հայաստանի համար վերաբերում է 2016 թվականի և, ամենայն հավանականությամբ, 2017 թվականի ֆիսկալ տարիներին⁴³ վերլուծության մեջ անդրադարձ կկատարվի տվյալների բացահայտման պահանջի հետադարձ ուժին: Կքարտեզագրվեն և կգնահատվեն ինստիտուցիոնալ դաշտն ու առկա կարողությունները՝ հավաստիանալու համար, որ ակնկալվող փոփոխությունների կիրարկումը հայաստանյան իրականության մեջ իրագործելի է:

Կուսումնասիրվեն **եկամոտների հավաքագրման** ազգային իրավական և ինստիտուցիոնալ մեխանիզմները՝ հարկային/եկամոտային տվյալների հասանելիությանը խոչընդոտող գործոնները վեր հանելու և գնահատելու համար: Վերլուծության գլխավոր առանցքը լինելու է նաև տվյալների գաղտնիությունը և ժամկետները: Այդ տվյալները ներառելու են հետևյալը՝

⁴³ Նկատենք, որ Նախնական ուսումնասիրության մեջ առաջարկություններ են ներկայացվելու առ այն՝ արդյոք ԲՇԽ-ն պետք է ներառի երկու տարվա, թե միայն մեկ տարվա տվյալները՝ կախված առկա տվյալների որակից, երբ անկախ ադմինիստրատորը պատրաստելիս կլինի 2018 թվականի զեկույցը, որն ակնկալվում է 2018 թվականի առաջին կեսին:

- Ռոյալթիներ
- Եկամտահարկ
- Շահութահարկ
- Արտաբյուջետային միջոցներ/ եկամուտներ
- Տեղական կառավարման մարմիններ փոխանցվող եկամուտներ (մարզային և համայնքային փոխանցումներ)
- Ենթակառուցվածքների տրամադրում և բնափրային համաձայնագրեր
- Եկամուտներ փոխադրումներից
- Եկամտային տվյալների ապագրեզագման մակարդակը (ըստ մարզերի, ըստ ընկերությունների)
- Պետական եկամուտների և մասնավոր ընկերությունների վճարումների վերաբերյալ տվյալների աղբյուրներ:

Ուսումնասիրվելու և գնահատվելու են տվյալների բացահայտմանը վերաբերող հետևյալ բաղադրիչները.

- Տվյալների արդիականությունը, որակը և հավաստիությունը.
- Կառավարության և մասնավոր ընկերության տվյալների հաշվետվությունների (հավաքագրման) մեթոդը (առցանց, էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացում՝ համապատասխան անվտանգության դրույթների ապահովմամբ).
- Կառավարության և մասնավոր ընկերությունների տվյալների համադրման մեթոդաբանություն, և
- Տվյալների մատչելիությունը՝ բաց տվյալների ձևաչափով (xls կամ csv) և դրանց առկայությունը (պահանջ 7.1գ, որին պետք է անդրադարձնալ նաև Հանրային հաղորդակցության ռազմավարության մեջ):

Իրավական ուսումնասիրության շրջանակներում ուսումնասիրվելու է 2018 թվականի ԱՃԹՆ գեկույցում 2017 թվականի տվյալները ներառելու հնարավորությունը՝ հաշվի առնելով ամենամյա տեղեկատվության տրամադրման ժամկետներն ու անհրաժեշտ իրավական ակտերը, ինչպես նաև հետադարձ ուժի կիրառման սահմանափակումները:

Եկամուտների բաշխմանը վերաբերող տվյալների բացահայտման առնչությամբ կատարվելու է իրավական և ինստիտուցիոնալ դաշտի հետևյալ բաղադրիչների ուսումնասիրությունը և վերլուծությունը՝

- Հանքարդյունաբերության ոլորտի եկամուտների բաշխում (դրամական կամ բնափրային), եթե չի արտացոլվում պետական բյուջեում, ապա բաշխումը պետք է բացատրվի համապատասխան ֆինանսական հաշվետվությունների միջոցով.
- Մարզային և համայնքային փոխանցումներ (միջոցների աղբյուրը, քանակը և գործընթացը), մասնավորապես ուսումնասիրել ազդակիր համայնքներին փոխհատուցելու պահանջ սահմանող օրենսդրությունը, գնահատել ազդակիր համայնքների՝ օրենսդրությամբ սահմանված ցանկը և ուսումնասիրել այլընտրանքային մեթոդներ՝ սահմանելու ազդակիր համայնքների ցանկը (օրինակ՝ հաշվի առնել հանքից գտնվելու հեռավորություն և այլն),
- Հանքարդյունաբերության ոլորտից տեղական եկամուտների բաշխումը (հատկապես հողի և գույքի հարկերի)
- Հանքարդյունաբերության ոլորտում եկամուտների կառավարման քննարկում՝ ուշադրություն դարձնելով թափանցիկության, հաշվետվողականության, կայունության և ռեսուրսներից կախվածության հարցերի վրա:

Ուսումնասիրման ենթակա իրավական ակտերի ցանկը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով՝

- ՀՀ Սահմանադրություն
- Արժեթղթերի շուկայի մասին ՀՀ օրենք
- Բանկային գաղտնիքի մասին ՀՀ օրենք
- Բանկերի և բանկային գործունեության մասին ՀՀ օրենք
- ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք
- Թափոնների մասին ՀՀ օրենք
- Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին ՀՀ օրենք
- Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին ՀՀ օրենք
- Ստուգումների մասին ՀՀ օրենք
- ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք
- Տեղական ինքնակառավարման մարմինների մասին ՀՀ օրենք
- Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ օրենք
- Իրավաբանական անձանց և իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հաստատությունների և ձեռնարկությունների պետական հաշվառման մասին ՀՀ օրենք
- ՀՀ հարկային օրենսգիրք
- Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենք
- Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենք

Շահագրգիռ կառույցների ցանկը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով՝

- ՀՀ Արդարադատության նախարարություն (իրավաբանական անձանց պետական գրանցման գործակալություն),
- ՀՀ Բնապահպանության նախարարություն,
- ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն,
- ՀՀ Ֆինանսների նախարարություն (Պետական եկամուտների կոմիտե),
- Բարձրատիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով,
- ՀՀ Կենտրոնական բանկ,
- ՀՀ Պետական եկամուտների կոմիտե,
- Օրենսդրական հարցերով զբաղվող ՀԿ-ներ և մասնավոր հաստիք:

Վերոնշյալ օրենսդրությունից բխող բոլոր ենթաօրենսդրական ակտերը, ինչպես նաև խորհրդատվական հանդիպումների ընթացքում առաջարկված ենթաօրենսդրական ակտերը կուսումնասիրվեն սույն վերլուծության շրջանակներում:

Ուսումնասիրման ենթակա են հետևյալ միջազգային կոնվենցիաներն ու գլոբալ նախաձեռնությունները.

- Վերլուծության ողջ ընթացքում հաշվի է առնվելու Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) հարկային թափանցիկության գլոբալ ֆորումը,
- Հաշվարկման բազայի քայքայման և եկամուտների փոխանցման մասին ՏՀԶԿ-ի կոնվենցիան,
- Կողմերի բացահայտմանը վերաբերող՝ 24-րդ միջազգային հաշվապահական ստանդարտը (IAS),
- Հարկային հարցերում վարչարարական փոխօգնության մասին կոնվենցիան
- Հաշվարկման բազայի քայքայման և եկամուտների փոխանցման դեմ պայքարի միջոցառումներին վերաբերող հարկային համաձայնագրերի կիրարկման մասին բազմակողմ կոնվենցիան:

II. Ընդերքօգտագործման իրավունքների (թույլտվությունների տրամադրում)

Իրականացնող պետությունները պարտավոր են բացահայտել ԱՃԹՆ զեկույցի հաշվետու ժամանակաշրջանի ԱՃԹՆ-ի զեկույցում ներառված ընկերությունների առնչությամբ թույլտվությունների շնորհման կամ փոխանցման հետ կապված հետևյալ տեղեկությունները՝

- թույլտվության փոխանցման կամ շնորհման գործընթացի նկարագրությունը,
- կիրառվող տեխնիկական և ֆինանսական չափանիշները,
- թույլտվություն ունեցող անձի (անձանց), այդ թվում՝ կոնսորցիումի անդամների (կիրառելիության դեպքում) մասին տեղեկություններ, և
- թույլտվությունների փոխանցումը կամ տրամադրումը կարգավորող օրենսդրական և ենթաօրենսդրական կարգավորումներից բոլոր էական շեղումները:

Վերլուծության շրջանակներում կուսումնասիրվի ազգային օրենսդրական դաշտը՝ պարզելու համար, թե որքանով են գործող իրավական մեխանիզմները ընձեռում վերը նշված տեղեկատվության բացահայտման հնարավորությունը՝ ԱՃԹՆ զեկույցում ներկայացման ենթակա 2016 և 2017 ֆիսկալ տարիների ընթացքում թույլտվությունների տրամադրման և փոխանցման բոլոր դեպքերի մասով: Վերլուծության շրջանակներում նախանշվելու են այն էական իրավական կամ գործնական խոչընդոտները, այդ թվում՝ ինստիտուցիոնալ կառույցների կարողությունների բացերը, որոնք թույլ չեն տալիս այդ էական բացահայտումները փաստաթղթավորել և հիմնավորված ներկայացնել ԱՃԹՆ զեկույցում՝ ներառելով տեղեկատվություն այդպիսի խոչընդոտները հաղթահարելուն ուղղված կառավարության ծրագրերի և ցանկալի արդյունքներին հասնելու կանխատեսվող ժամանակացույցի մասին:

ԲԸԽ-ը կարող է լրացուցիչ տեղեկատվություն ներառել ԱՃԹՆ զեկույցում թույլտվությունների հատկացման վերաբերյալ, այդ թվում՝ թույլտվությունների տրամադրման ընթացակարգերի արդյունավետ և գործնականում կիրառելի լինելու վերաբերյալ դիտողություններ, որոնք հաշվի կառնվեն վերլուծության ընթացքում:

Ուսումնասիրության ենթակա օրենսդրությունը ներառում է, սակայն չի սահմանափակվում հետևյալով.

- ՀՀ Սահմանադրություն
- ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք
- Թափոնների մասին ՀՀ օրենք
- Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք
- Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենք
- Տեխնիկական անվտանգության պետական կարգավորման մասին ՀՀ օրենք
- Բնօգտագործման և բնօգտագործման վճարների մասին ՀՀ օրենք
- ՀՀ Հողային օրենսգիրք
- Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենք
- Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքը

Վերոնշյալ օրենսդրությունից բխող բոլոր ենթաօրենսդրական ակտերը, ինչպես նաև խորհրդատվական հանդիպումների ընթացքում առաջարկված ենթաօրենսդրական ակտերը կուսումնասիրվեն սույն վերլուծության շրջանակներում:

Շահագրգիռ կառույցների ցանկը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով՝

- ՀՀ Արդարադատության նախարարություն (իրավաբանական անձանց պետական գրանցման գործակալություն),
- ՀՀ բնապահպանության նախարարություն,
- ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն,
- ՀՀ Ֆինանսների նախարարություն (Պետական եկամուտների կոմիտե),
- ՀՀ Կենտրոնական բանկ (Կենտրոնական դեպոզիտարիա),
- Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե,
- Օրենսդրական հարցերով զբաղվող ՀԿ-ներ և մասնավոր հատված:

III. Թույլտվությունների գրանցում

ԱՃԹՆ-ի շրջանակներում «լիցենզիա» եզրը նշանակում է ցանկացած լիցենզիա, լիզինգ, իրավական հիմք, թույլտվություն, պայմանագիր կամ կոնցեսիա, որով կառավարությունը ընկերությանը (ընկերություններին) կամ անհատին (անհատներին)

տալիս է նավթի, գազի և (կամ) օգտակար հանածոների պաշարներ հետախուզելու կամ շահագործելու իրավունքներ: Վերլուծության շրջանակներում ուսումնասիրվելու են համապատասխան ազգային օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը՝ նպատակ ունենալով վեր հանել այն խոչընդոտները, որոնք թույլ չեն տալիս, որպեսզի երկիրը վարի հանրությանը հասանելի գրանցամատյան կամ կադաստրի համակարգ (համակարգեր), որը (որոնք) կպարունակի հետևյալ արդիական և համակողմանի տեղեկություններ ընկերություններին տրամադրված թույլտվություններից յուրաքանչյուրի վերաբերյալ, որը պետք է ներառվի ԱՃԹՆ զեկույցում:

- Թույլտվություն ունեցող իրավաբանական անձ
- Որոշված լինելու դեպքում՝ թույլտվությամբ սահմանված տարածքի կոորդինատները: Այն դեպքում, երբ կոորդինատները որոշված չեն, կառավարությունը պարտավոր է ապահովել, որ թույլտվությամբ սահմանված տարածքի չափերի և տեղադիրքի մասին տվյալները բացահայտվեն թույլտվությունների գրանցամատյանում և կոորդինատները կառավարության համապատասխան գործակալությունից հանրության համար հասանելի լինեն առանց անհիմն վճարների և սահմանափակումների: ԱՃԹՆ զեկույցը պետք է պարունակի ցուցում այն մասին, թե ինչպես կարող են այդ կոորդինատները հասանելի դառնալ, ինչպես նաև, առկայության դեպքում, դրանք ձեռք բերելու արժեքը: ԱՃԹՆ զեկույցում պետք է նաև արձանագրվեն այն ծրագրերը և ժամանակացույցը, որոնց համաձայն այս տեղեկատվությունը կարող է ազատ և էլեկտրոնային եղանակով հասանելի դառնալ թույլտվությունների գրանցամատյանի միջոցով:
- Հայտի ներկայացման ամսաթիվը, թույլտվության շնորհման ամսաթիվը և տևողությունը:
- Արդյունահանման թույլտվությունների դեպքում՝ արդյունահանվող մետաղի տեսակը:

Անկախվում է, որ թույլտվությունների գրանցամատյանը կամ կադաստրը կպարունակի տեղեկություններ բոլոր միավորներին տրված թույլտվությունների մասին, այդ թվում՝ ԱՃԹՆ-ի զեկույցում չներառված ընկերություններին և անհատներին կամ խմբերին, ում վճարումները համաձայնեցված էականության շեմից ցածր են (մանրամասն տեղեկությունների համար տե՛ս Իրական սեփականության մասին Գլուխ V-ը): Վերլուծության շրջանակներում ուսումնասիրվելու են ազգային դաշտում առկա այն էական կամ գործնական խոչընդոտները, որոնք թույլ չեն տալիս նման համակողմանի բացահայտման արձանագրումը, ներառյալ տեղեկատվություն այդպիսի խոչընդոտները հաղթահարելուն ուղղված կառավարության ծրագրերի և ցանկալի արդյունքներին հասնելու կանխատեսվող ժամանակացույցի մասին:

Այն դեպքերում, երբ այդպիսի գրանցամատյան կամ կադաստր չկա կամ լիարժեք չէ, վերլուծությամբ վեր կհանվեն և կբացահայտվեն հրապարակային տեղեկությունների մասով առկա բացերը և կփաստաթղթավորվեն այդ համակարգերի հզորացմանն ուղղված ջանքերը:

Ուսումնասիրության ենթակա օրենսդրությունը ներառում է, սակայն չի սահմանափակվում հետևյալով.

- ՀՀ Սահմանադրություն
- ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք
- Թափոնների մասին ՀՀ օրենք
- Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք
- Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենք
- Տեխնիկական անվտանգության պետական կարգավորման մասին ՀՀ օրենք
- Բնօգտագործման և բնօգտագործման վճարների մասին ՀՀ օրենք
- ՀՀ Հողային օրենսգիրք

Վերոնշյալ օրենսդրությունից բխող բոլոր ենթաօրենսդրական ակտերը, ինչպես նաև խորհրդատվական հանդիպումների ընթացքում առաջարկված ենթաօրենսդրական ակտերը կուսումնասիրվեն սույն վերլուծության շրջանակներում:

Շահագրգիռ կառույցների ցանկը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով՝

- ՀՀ Արդարադատության նախարարություն (իրավաբանական անձանց պետական գրանցակալություն),
- ՀՀ Բնապահպանության նախարարություն,
- ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն,
- ՀՀ Ֆինանսների նախարարություն (Պետական եկամուտների կոմիտե),
- ՀՀ Կենտրոնական բանկ (Կենտրոնական դեպոզիտարիա),
- Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե,
- Օրենսդրական հարցերով զբաղվող ՀԿ-ներ և մասնավոր հատված:

IV. Պայմանագրեր

ԱՃԹՆ ստանդարտի համաձայն՝ խրախուսվում է իրականացնող պետությունների կողմից այն բոլոր պայմանագրերի և թույլտվությունների մասին տեղեկատվության հրապարակային բացահայտումը, որոնցով սահմանվում են օգտակար հանածոների շահագործմանն առնչվող պայմանները: Վերլուծության շրջանակներում ուսումնասիրվելու են համապատասխան ազգային օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը՝ պարզելու՝ արդյոք կան պայմանագրերի և թույլտվությունների բացահայտմանն առնչվող դրույթներ, որոնք կարգավորում են օգտակար հանածոների երկրաբանական ուսումնասիրությունը և արդյունահանումը: Սա պետք է ներառի համապատասխան իրավական դրույթներ, բացահայտման փաստացի աշխատակարգը և ծրագրված կամ իրականացման փուլում գտնվող բարեփոխումները:

ԱՃԹՆ համատեքստում «պայմանագիր» եզրույթը նշանակում է.

1. Ցանկացած պայմանագրի, կոնցեսիայի, արտադրանքի բաշխման համաձայնագրի կամ որևէ այլ համաձայնագրի ամբողջական տեքստը, որը շնորհվել է կառավարության կողմից կամ որին միացել է կառավարությունը, որով սահմանվում են օգտակար հանածոների պաշարների արդյունահանմանն առնչվող պայմանները:
2. Ցանկացած կից նյութի, հավելվածի, կամ լրացման ամբողջական տեքստը, որով սահմանվում են շահագործման իրավունքների վերաբերյալ մանրամասները:
3. Կետ 1-ում և 2-ում նկարագրված փաստաթղթերում կատարված ցանկացած փոփոխության կամ լրացման ամբողջական տեքստը:

ԱՃԹՆ համատեքստում «լիցենզիա» եզրույթը նշանակում է.

1. Ցանկացած լիցենզիայի, վարձակալության պայմանագրի, իրավական հիմք հանդիսացող փաստաթղթի կամ թույլտվության ամբողջական տեքստը, որի համաձայն՝ կառավարությունն ընկերությանը (ընկերություններին) կամ անհատին (անհատներին) տալիս է օգտակար հանածոների պաշարներ շահագործելու իրավունքներ:
2. Ցանկացած հավելվածի, հավելման կամ լրացման ամբողջական տեքստը, որով սահմանվում են շահագործման իրավունքների վերաբերյալ մանրամասները կամ դրանց իրացումը:
3. Կետ 1-ում և 2-ում նկարագրված փաստաթղթերում կատարված ցանկացած փոփոխության կամ լրացման ամբողջական տեքստը:

Ուսումնասիրության ենթակա օրենսդրությունը ներառում է, սակայն չի սահմանափակվում հետևյալով.

- ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք
- ՀՀ քաղաքացիական օրենսգիրք
- ՀՀ Վարչական դատավարության օրենսգիրք
- Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենք:

Վերոնշյալ օրենսդրությունից բխող բոլոր ենթաօրենսդրական ակտերը, ինչպես նաև խորհրդատվական հանդիպումների ընթացքում առաջարկված ենթաօրենսդրական ակտերը կուսումնասիրվեն սույն վերլուծության շրջանակներում:

Շահագրգիռ կառույցների ցանկը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով՝

- ՀՀ Արդարադատության նախարարություն (իրավաբանական անձանց պետական գրանցման գործակալություն),
- ՀՀ Բնապահպանության նախարարություն,
- ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն,
- Օրենսդրական հարցերով զբաղվող ՀԿ-ներ և մասնավոր հատված:

V. Իրական սեփականություն

Ըստ ԱՃԹՆ-ի՝ «իրական սեփականատեր» այն ֆիզիկական անձն (անձինք) է, ում փաստացի ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում է կամ ում հսկողության ներքո գտնվում է տվյալ իրավաբանական անձը: Բոլոր դեպքերում, տեղական համատեքստում պետք է առաջարկվի այս եզրույթի պատշաճ սահմանումը, որը պետք է համահունչ լինի ԱՃԹՆ սահմանմանը և հաշվի առնի միջազգային նորմերն ու համապատասխան ազգային օրենսդրությունը, ինչպես նաև ազգային իրավական և ինստիտուցիոնալ այն հնարավորությունները, որոնք թույլ կտան բացահայտել իրական սեփականատերերի մասին տեղեկությունները:

Սեփականության շեմը ևս պետք է որոշվի երկրի ներսում և ամրագրվի համապատասխան իրավական դրույթներով: Այս երկու հարցերի առնչությամբ ծրագրի տեղացի և միջազգային փորձագետները կվերլուծեն առկա ազգային օրենսդրությունն ու ինստիտուցիոնալ դաշտը, միջազգային այն կոնվենցիաները և համաձայնագրերը, որոնց միացել է Հայաստանը, ինչպես նաև իրական սեփականությանը վերաբերող ընթացիկ նախաձեռնություններն ու համապատասխան տվյալների բացահայտումը՝ ԱՃԹՆ-ի իրական սեփականության ստանդարտի պահանջների ապահովմանը խոչընդոտող բացթողումները վեր հանելու նպատակով:

ԱՃԹՆ-ն խորհուրդ է տալիս, որ իրականացնող պետությունները վարեն հանրությանը հասանելի՝ արդյունահանող ոլորտում գործունեություն իրականացնելու հայտ ներկայացրած, այդ ոլորտում գործող կամ ներդրում կատարած իրավաբանական անձի (անձանց) իրական սեփականատերերի ռեգիստր՝ ներառյալ իրենց իրական սեփականատիրոջ (սեփականատերերի) ինքնությունը (ինքնությունները), սեփականության պատկանելության աստիճանը և մանրամասներ այն մասին, թե ինչպես է իրացվում սեփականության իրավունքը կամ իրականացվում հսկողությունը: Սա վերաբերում է այն իրավաբանական անձանց, որոնք ունեն ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքներ կամ դիմել են դրանց ստացման համար: Վերլուծության շրջանակներում ուսումնասիրվելու են ազգային օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտը՝ պարզելու՝ արդյոք իրական սեփականության վերաբերյալ տեղեկություններն ընդգրկված են ընկերությունների կողմից՝ արդյունահանող ճյուղերը կանոնակարգող մարմիններին, ֆոնդային բորսաներին և թույլատվությունների տրամադրման գործընթացում լիազոր գործակալություններին ներկայացվող փաստաթղթերում: Ուսումնասիրման ենթակա հաստատությունների շարքում են նաև Պետական ռեգիստրը և Կենտրոնական դեպոզիտարիան:

Ծրագրի փորձագետների թիմը կհամաձայնեցնի ազգային օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի ուսումնասիրման աշխատանքները՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից վարձված միջազգային փորձագետի աշխատանքների հետ. այս փորձագետը գնահատելու է իրական սեփականության մասով ՀՀ օրենսդրությունն ու ինստիտուցիոնալ կարողությունները միջազգային լավագույն փորձի տեսանկյունից և մշակելու է ճանապարհային քարտեզ 2016թ. ԱՃԹՆ ստանդարտի պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

Ուսումնասիրության ենթակա օրենսդրությունը ներառում է, սակայն չի սահմանափակվում հետևյալով.

- ՀՀ Սահմանադրություն
- Արժեթղթերի շուկայի մասին ՀՀ օրենք
- Բանկային գաղտնիքի մասին ՀՀ օրենք
- Բանկերի և բանկային գործունեության մասին ՀՀ օրենք
- ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք
- Թափոնների մասին ՀՀ օրենք
- Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին ՀՀ օրենք
- Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին ՀՀ օրենք
- Ստուգումների մասին ՀՀ օրենք
- ՀՀ Վարչական դատավարության օրենսգիրք
- Տեղական ինքնակառավարման մարմինների մասին ՀՀ օրենք
- Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ օրենք
- Իրավաբանական անձանց և իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հաստատությունների և ձեռնարկությունների պետական հաշվառման մասին ՀՀ օրենք
- ՀՀ Հարկային օրենսգիրք
- Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենք

Շահագրգիռ կառույցների ցանկը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով՝

- ՀՀ Արդարադատության նախարարություն (իրավաբանական անձանց պետական գրանցման գործակալություն),
- ՀՀ Բնապահպանության նախարարություն,
- ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն,
- ՀՀ Ֆինանսների նախարարություն (Պետական եկամուտների կոմիտե),
- Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով,
- ՀՀ Կենտրոնական բանկ,
- Անշարժ գույքի պետական կադաստր
- ՀՀ Պետական եկամուտների կոմիտե,
- Օրենսդրական հարցերով զբաղվող ՀԿ-ներ և մասնավոր հատված:

Վերոնշյալ օրենսդրությունից բխող բոլոր ենթաօրենսդրական ակտերը, ինչպես նաև խորհրդատվական հանդիպումների ընթացքում առաջարկված ենթաօրենսդրական ակտերը կուսումնասիրվեն սույն վերլուծության շրջանակներում:

Ուսումնասիրման ենթակա են հետևյալ միջազգային կոնվենցիաներն ու զլոբալ նախաձեռնությունները.

- Վերլուծության ողջ ընթացքում հաշվի է առնվելու ՏՀԶԿ-ի հարկային թափանցիկության զլոբալ պլատֆորմը,
- Հաշվարկման բազայի քայքայման և եկամուտների փոխանցման մասին ՏՀԶԿ-ի բազմազգ կոնվենցիան,
- Կողմերի բացահայտմանը վերաբերող՝ 24-րդ միջազգային հաշվապահական ստանդարտը (IAS),
- Հարկային հարցերում վարչարարական փոխօգնության մասին կոնվենցիան
- Հաշվարկման բազայի քայքայման և եկամուտների փոխանցման դեմ պայքարի միջոցառումներին վերաբերող հարկային համաձայնագրերի կիրարկման մասին բազմակողմ կոնվենցիան,
- Կլիմայի փոփոխության վերաբերյալ փարիզյան համաձայնագիր:

VI. Սոցիալական ծախսեր

Ծրագրի տեղացի և միջազգային փորձագետները ԲՇԽ անդամների հետ համատեղ նաև ուսումնասիրելու են առկա տվյալներն ու սոցիալական ոլորտի հատկացումներն ու ծախսերը, ինչպես նաև հետևյալ կետերին վերաբերող իրավական և ինստիտուցիոնալ դաշտը.

- Հանքարդյունաբերական ընկերությունների կողմից սոցիալական ոլորտին հատկացվող գումարների գույքագրում (այդ թվում՝ բարեգործական նպատակներով կատարվող հատկացումներ)
- Հնարավորության դեպքում՝ տարանջատված ներկայացնել, թե ինչ է պահանջվում օրենքով, ինչը՝ պայմանագրով, ինչ է բխում ընկերությունների կամավոր և հանրային գործունեությունից և այն:
- Առաջարկել ընկերությունների կողմից սոցիալական ոլորտի համար կատարվող հատկացումների վերաբերյալ ստանդարտ մոտեցման ու հաշվետվողականության մշակման ուղի. սա ներառում է նաև հանքարդյունաբերության ոլորտի բարեգործական հատկացումներ ստացողների բացահայտումը:

VI. Պատասխանատու հանքարդյունաբերության մշակույթի զարգացում

Օրենսդրական և ինստիտուցիոնալ շրջանակի ուսումնասիրության և գործողությունների ծրագրի շրջանակներում ծրագրի փորձագետները՝ ԲՇԽ-ի աշխատանքային խմբերի հետ համատեղ, կմշակեն պատասխանատու հանքարդյունաբերության նախնական ճանապարհային քարտեզ, որը կներկայացվի ԲՇԽ-ի հաստատմանը: Ծրագրի փորձագետները քննարկելով և ընդունելի մասերով հաշվի առնելով ԲՇԽ-ի անդամների, աշխատանքային խմբերի և այլ շահառուների խորհրդատվական կարծիքները՝ կուսումնասիրեն և կվերլուծեն ընդերքօգտագործման գործընթացը կանոնակարգող օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտը հետևյալ նպատակներով՝

- Քննարկել ոլորտի ազդեցությունը կայուն զարգացման վրա և թե որքանով են առկա դա գնահատելու համար անհրաժեշտ տվյալներ.
- Ուսումնասիրել հետևյալ ոլորտները էական խոչընդոտների բացահայտման նպատակով.
 - ա) հանքարդյունաբերական ծրագրերի ծախսարդյունավետություն

- բ) շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատման գործընթաց (ինչպես հաշվետվությունների պատրաստման որակի, այնպես էլ դրանց փորձաքննության առումով)
- գ) բնապահպանական, համայնքներում հանրային առողջության և աշխատանքային անվտանգության վերահսկողություն/մշտադիտարկում:

Նախնական ճանապարհային քարտեզում կառանձնացվեն օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի այն ոլորտները և իրավական այն ակտերը (Չեչտելով բացերը և անհրաժեշտ փոփոխությունները), որոնց ուղղությամբ հետագայում անհրաժեշտ կլինի իրականացնել առավել մանրակրկիտ ուսումնասիրություն և մշակել իրավական ակտերի փոփոխություններ: Այս աշխատանքը հիմք կհանդիսանա հետագայում այդ ոլորտներում բարեփոխումներ իրականացնելու համար մշակել իրավական ակտերի նախագծեր, ինչպես նաև վերլուծել ինստիտուցիոնալ կառուցվածքը և առաջարկել բարեփոխման ուղիներ:

Ուսումնասիրության ենթակա օրենսդրությունը ներառում է, սակայն չի սահմանափակվում հետևյալով.

- ՀՀ Սահմանադրություն
- ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք
- ՀՀ Հողային օրենսգիրք
- ՀՀ Ջրային օրենսգիրք
- Բուսական աշխարհի մասին ՀՀ օրենք
- Կենդանական աշխարհի մասին ՀՀ օրենք
- ՀՀ Անտառային օրենսգիրք
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին ՀՀ օրենք
- Թափոնների մասին ՀՀ օրենք
- Տեսչական մարմինների մասին ՀՀ օրենք
- Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք
- Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին ՀՀ օրենք
- Հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենք
- Տեխնիկական անվտանգության պետական կարգավորման մասին ՀՀ օրենք
- ՀՀ Վարչական դատավարության օրենսգիրք
- Տեղական ինքնակառավարման մարմինների մասին ՀՀ օրենք
- ՀՀ Հարկային օրենսգիրք
- Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենք:

Վերոնշյալ օրենսդրությունից բխող բոլոր ենթաօրենսդրական ակտերը, ինչպես նաև խորհրդատվական հանդիպումների ընթացքում առաջարկված ենթաօրենսդրական ակտերը կուսումնասիրվեն սույն վերլուծության շրջանակներում:

Շահագրգիռ կառույցների ցանկը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով՝

- ՀՀ Արդարադատության նախարարություն (իրավաբանական անձանց պետական գրանցման գործակալություն),
- ՀՀ բնապահպանության նախարարություն,
- ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն,
- ՀՀ Ֆինանսների նախարարություն (Պետական եկամուտների կոմիտե),
- ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
- ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն
- ՀՀ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
- ՀՀ Առողջապահության նախարարություն
- Օրենսդրական հարցերով զբաղվող ՀԿ-ներ և մասնավոր հատված:

Հավելված 5. ՏԻՄ-ԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ԿԱՐԾԻՔՆԵՐ ԵՎ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՃԹՆ-Ի և ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Media Initiative Training Center-ի կողմից կազմված արձանագրություն

2018 թվականի ապրիլի 27-ին Հայաստանի ամերիկյան համալսարանում տեղի ունեցավ աշխատանքային քննարկում ՏԻՄ ներկայացուցիչների հետ: Օրակարգում հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկության ապահովման քայլերն էին՝ նախատեսված ԱՃԹՆ ստանդարտին միանալու հայաստանյան գործընթացով:

Աշխատանքային քննարկմանը մասնակցում էին 7 մարզերի շուրջ 30 ներկայացուցիչներ: Ներգրավված էին հիմնականում այն համայնքները, որտեղ գործում են հանքարդյունաբերող ընկերություններ:

ԱՃԹՆ քարտուղարությունից Դավիթ Շինդյանն ու Լուսինե Թովմայանը ծանոթացրեցին համայնքների ներկայացուցիչներին ԱՃԹՆ-ից բխող պահանջներին, օրենսդրական փոփոխությունների և տեղեկությունների հասանելիության նպատակով նախատեսված այն աշխատանքներին, որոնց մասնակցությունն են ունենալու նաև տեղական իշխանությունները: Մասնավորապես մինչև 2018թ-ի հունիսի 15-ը համայնքները պետք է հաշվետվություններ ներկայացնեն հանքարդյունաբերող ընկերությունների գործունեությունից ստացած տեղական հարկերի, բնապահպանական վճարներից հատկացումների և սոցիալ-տնտեսական ներդրումների մասին:

Այս նոր պարտավորությունները ՏԻՄ ներկայացուցիչները ընկալեցին որպես լրացուցիչ աշխատանք, ինչ սակայն չի ապահովում համայնքների բավարար մասնակցությունը ԱՃԹՆ հայաստանյան գործընթացում:

Նրանք դժգոհ էին, որ իրենց համար շատ կարևոր ոլորտին վերաբերող խնդիրների քննարկման, որոշումների կայացման գործում իրենք սովորաբար քիչ են ներգրավված լինում, «մինչդեռ հենց իրենք են շահագործվող հանքերին մոտ ապրում և իրենք են անմիջապես իրենց կյանքի վրա զգում հանքարդյունաբերության օգուտներն էլ, վնասներն էլ»:

«Հանրային լուսման վերջին փուլից սկսած համայնքը դուրս է գալիս պրոցեսից- ասում է Արջուտ համայնքի ղեկավար Վարդան Մկրտչյանը:,- Հետո տեղյակ չենք լինում ո՛չ պայմանագրերից, ո՛չ համայնքի նկատմամբ սոցիալական պարտավորություններից: Նորից դիմում են համայնքին այն ժամանակ, երբ հողհատկացման խնդիր է լինում:»

Նրա կարծիքով՝ համայնքները շահագրգռված կլինեն տեղերում հանքարդյունաբերության զարգացմամբ, եթե հանքերը նորմալ շահագործվեն, բնապահպանական/առողջական ռիսկերը ճիշտ հաշվարկվեն, ներկայացվեն, հնարավորություններ/լիազորություններ տան համայնքին որոշակի պարտավորություններ սահմանել հանքարդյունաբերողների համար՝ կապված սոցիալական ծրագրերի, հանքերում տեղացի աշխատուժի ներգրավման, թափոնների, պոչամբարների կառավարման հետ:

«Պոչամբարը կամ շահագործվող հանքը ինչքա՞ն հեռու պետք է լինի բնակավայրից, քչերը գիտեն այստեղ- ասում է Լոռի Բերդ համայնքի ղեկավար Արայիկ Ներսիսյանը,- Թույլ տվեք մենք որոշենք, թե մեզ ինչ հանք, ինչպիսի շահագործում է պետք, հասկանանք՝ ինչ է շահելու այս ամենից մեր բնակիչը: ԱՃԹՆ-ին միանալուց հետո համայնքի կարծիքը որքանո՞վ է լսելի լինելու այս որոշումների կայացման ընթացքում, սա է կարևոր մեզ համար:»

Հարցեր/խնդիրներ, որոնք բացահայտվեցին համայնքների ներկայացուցիչների հետ աշխատանքային քննարկման ընթացքում.

- Համայնքների մեծ մասը տեղյակ չէ հանքարդյունաբերողների հետ Հայաստանի կառավարության կնքած պայմանագրերի մանրամասներից: Դրանք հանրային քննարկումների փուլում չեն քննարկվում, իսկ հետո չեն տրամադրվում համայնքներին: Մասնավորապես չգիտեին, որ դրանցում սոցիալական ծրագրերին վերաբերող պարտավորություններ կարող են լինել: Կուզեին նախապես տեղյակ լինել պայմանագրերի մանրամասներին և որոշակի առաջարկներ էլ ներկայացնել նաև համայնքների կողմից:
- Հանքարդյունաբերողների կողմից կատարվող սոցիալական ներդրումների չափն ու բնույթը համայնքների հետ, հիմնականում չի համաձայնեցվում: Հանքարդյունաբերողը ինքն է որոշում ինչ ծրագրեր կատարի, ում օգնի: Որևէ ձևով կարգավորվում է սա, թե՞ ոչ:

«Իրենք ասում են՝ մենք վճարում ենք բոլոր հարկերը, պետական տուրքերը, մնացածը՝ համայնքին սոցիալական ծրագրերի համար գումար վճարել, մեր բարի կամքն է՝ կուզենք կանենք, կուզենք՝ չենք անի: , - ասում է Կապան համայնքի ղեկավար Արմեն Սարգսյանը, - ես առաջին անգամ եմ լսում, որ պայմանագրերում սոցիալական ծրագրերի համար նախատեսված պարտավորություններ կարող են լինել, Պոլիմետաղին մենք ներկայացրել ենք քառամյա ծրագիր, թե ինչ հարցեր կուզեինք լուծել իրենց օգնությամբ: Քաջարանի կոմբինատը ինքն է որոշում՝ ինչպես սոցիալական օգնության գումարները տնօրինի՝ օրինակ, մեկին սրտի վիրահատության գումար է տալիս. , մի ՀԿ-ին աջակցում է, մյուսին՝ ոչ՝ պարզ չի, թե ոնց է որոշում:»
- Համայնքների մի մասը ներառված են բնապահպանական վճարներից մասնահանումների ծրագրում, մյուսները՝ ոչ: Ինչպե՞ս է դա որոշվում: Ինչո՞ւ է այդպես: Ինչո՞ւ համայնքները չգիտեն, թե որքան բնապահպանական վճարներ են կատարում իրենց մոտ գործող հանքարդյունաբերող ընկերությունները:
- Համայնքների մեծ մասը տեղյակ չէ, թե ինչպես է հաշվարկվում բնապահպանական վնասը: Ուզում են հստակ մեխանիզմը պատկերացնեն և որոշակի առաջարկներ ունեն այստեղ:
- Հանքարդյունաբերող ընկերությունների մեծ մասը Երևանում է գրանցված, իսկ հանքերը գտնվում են համայնքներում: Երևանում են գրանցված նաև նրանց տեխնիկական տրանսպորտային միջոցները, զույքը: Սա նշանակում է, որ համապատասխան հարկային վճարումներն էլ համայնքների բյուջե չեն մտնում:
- Համայնքային իշխանությունները ոչ մի լծակ և հնարավորություն չունեն լուծելու չշահագործվող, լքված հանքերի խնդիրը, որը մեծ գլխացավանք է դարձել տեղացիների համար:
- Համայնքների ներկայացուցիչները առաջարկում են հանքարդյունաբերողների հետ պայմանագրերով շահույթից հստակ տոկոս նշել, որը ոչ թե կենտրոնական բյուջե կզնա, այլ՝ տեղական, համայնքային: Նրանց կարծիքով, քննարկված հարցերից շատերը այս տարբերակով կլուծվեն:
- ԱՃԹՆ բազմաշահառու խմբում համայնքների ներկայացուցիչ ընդգրկել: Համայնքների ներկայացուցիչները դժգոհ էին, որ այստեղ նույնպես տեղական իշխանությունը կենտրոնականի կցորդ է համարվել և առանձին ներկայացված չէ:

Վերապատրաստողների կողմից լրացուցիչ արձանագրված նյութ

Ստորև ներկայացնում եմ համայնքների ներկայացուցիչների հետ ապրիլի 27-ին կայացած հանդիպումից որոշ դիտարկումներ.

- ՇՄԱԳՓ հանրային լսումներից հետո համայնքը դուրս է մնում գործընթացից
- Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության և հանքարդյունահանող ընկերությունների կնքվող պայմանագրերում համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորությունները չեն քննարկվում համայնքների հետ
- Հանքերի տարածքներում կան շենք-շինություններ, որոնք կադաստրում գրանցված չեն և գույքահարկ չեն վճարում համայնքային բյուջե
- Հարց բարձրացվեց, թե ինչու «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքը ինչու՞ չի թարմացվում՝ ներառելով նոր հանքարդյունահանող ընկերություններ և նոր ազդակիր համայնքներ:
- Առաջարկություն հնչեց՝ հանքարդյունահանողների արտադրանքի իրացումից կամ շահույթից որոշակի տոկոս տրամադրել ազդակիր համայնքներին
- Առաջարկություն հնչեց՝ համայնքներին ներգրավել ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի կազմում
- Առաջարկություն հնչեց՝ բնապահպանության նախարարությանը ներկայացուցիչ ունենալ յուրաքանչյուր ազդակիր համայնքում՝ բնապահպանական ստուգումների իրականացման համար